

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Н. О. ОГАНЕСЯН

**НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ
БОРЬБА В ЛИВАНИ
(1939—1958 гг.)**

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1967

Հ Ա Յ Ո Ւ Թ Յ Ա Ռ Ո Ւ Ն Ե Ր Ի Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա
Ա Ր Ե Վ Ե Լ Ա Դ Ի Տ Ա Պ Ո Ւ Յ Ա Ն Ս Ե Կ Ա Ր

Ն. Հ. Հ Ո Վ Հ Ա Ն Ի Ս Ա Ա Ն

Ա Զ Գ Ա Ց Ի Ն - Ա Զ Ա Տ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Պ Ա Յ Ք Ա Ր Ը
Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ո Ւ Մ
(1939—1958 թթ.)

A Կ Ե Ս 8 Կ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԻ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ
Կ Ր Ե Վ Ա Ն

1967

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Աշխատությունը նվիրված է Լիբանանի պատմության մի կարևոր ժամանակաշրջանի ուսումնասիրյանը: 1943 թվականին պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց անկախությունը և առաջին լիբանանի հանրապետությունը: Դա արդյունք էր լիբանանի աշխատավորական մասսաների և դժմոկրատական բոլոր ուժերի երկարատև պայքարի և ուժերի այն նոր փոխարարելության, որ ստեղծվեց միջազգային մասշտաբով՝ 40-ական թվականներին:

Գաղութային սիստեմը Արաբական արևելքում առաջին լուրջ պարտությունը կրեց լիբանանում և Սիրիայում: Նրանք առաջինը թոթափեցին այդ լուծը և դուրս եկան ինքնուրույն քաղաքական զարգացման ուղի, Մանդատային սիստեմի վերացումը և ֆրանսիական զաղութարարների պարտությունը լիբանանում հանդիսանում է համաշխարհային զաղութային սիստեմի ճգնաժամի արտահայտություններից մեկը և այդ սիստեմի փլուզման պրոցեսի բաղկացուցիչ մասը:

Աղքային-աղատագրական, հակաիմպերիալիստական պայքարը չի ավարտվում քաղաքական անկախություն ձեռքբերելով: Քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո ևս ժողովրդական մասսաները և հակաիմպերիալիստական բոլոր ուժերը հարկադրված են երկարատև ու համառ պայքար մղել այդ անկախության ամրապնդման, տնտեսական ինքնուրույնություն ձեռք բերելու, երկիրն ընդհանրապես իմպերիալիզմի

աղդեցությունից ազատագրելու և ազգային վերածննդի կին-սական խնդիրները լուծելու համար:

Այս ճշմարտությունը հաստատվում է նաև կիրանանի փորձով, որի առաջադիմական ուժերը կիրանանի հանրապետության հոչակումից հետո անդուլ պայքար են մղում օտարերկրյա իմպերիալիզմի դեմ իրենց երկրի անկախության պահպանման ու ամրապնդման և տնտեսական ինքնուրույնություն ձեռք բերելու համար:

Մեր նպատակն է այս աշխատության մեջ լուսաբանել մանդատային սիստեմի վերացման ու կիրանանի անկախ հանրապետության ստեղծման, այդ անկախության ամրապնդման համար մշկած հակաիմպերիալիստական պայքարի, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մի շարք հարցերը: Միաժամանակ ցույց կտրվի տարրեր դասակարգերի ու քաղաքական կուտակցությունների դերը, ազգային փոքրամասնությունների, հատկապես, հայերի մասնակցությունը կիրանանի սոցիալ-տնտեսական կյանքին ու հակաիմպերիալիստական պայքարին: Բացի այդ մենք կանգրադառնանք մենք հետաքրքրող հարցի լուսաբանմանը բուրժուական պատմագրության մեջ, շանելով ցույց տալ, որ բուրժուական պատմագիրները հեռու են հակաիմպերիալիստական պայքարի խնդիրները օրյեկտիվորեն լուսաբանելուց, իսկ նրանցից ոմանք նույնիսկ դիմում են փաստերի և դեպքերի բացահայտ կեղծման:

* * *

Քննարկման առարկա հանդիսացող «Ազգային-ազատագրական պայքարը կիրանանում 1939—1958 թթ.» թեման պատմագրության մեջ բավարար շափով շի լուսաբանված ու մշակված: Թե՛ ավելին, կան մի շարք հարցեր, որոնք ուսումնասիրողների տեսադաշտից դուրս են մնացել: Թե՛ սովետական, թե՛ արաբական, և թե՛ արևմտյան բուրժուական գրականության մեջ այդ թեմային նվիրված առանձին կամ հա-

տուկ ուսումնասիրություն չկա, Կան միայն առանձին հոգ-վածներ ու աշխատություններ, որտեղ այս կամ այն առիթով անդրադառնում են նաև հակաիմպերիալիստական պայքարի խնդրին: Հասկանալի է, որ այդ բնույթի ուսումնասիրություններում հնարավոր չէ հարցին սպառիչ պատասխան տալ և նրանք հեռու են խնդիրը ամբողջականորեն ու բազմակողմանիրեն լուսաբանելուց: Էլ չենք խոսում այն մասին, որ բուրժուական պատմաբանները և տնտեսագետները շատ հարցեր երբեմն գլուխվայր շուր են տալիս, ծուռ հայելու մեջ են ներկայացնում ազատագրական պայքարի խնդիրները և ամենայն կերպ ձգտում են սրողել իմպերիալիզմի և գաղութարանների կեղեքիչ ու թալանշական դերը:

Կանդ առնենք այդ հեղինակներից մի քանիսի աշխատությունների վերջուժման վրա:

Մի շարք ելքոպական և ամերիկյան պատմաբաններ, ինչպես նաև որոշ արար հեղինակներ, շոշափելով մանդատային սիստեմի վերացման, կիրանանի անկախություն ձեռք բերելու, և ընդհանրապես արևմտյան իմպերիալիստական տերությունների դեմ մղվող պայքարի հարցը, իրենց ուսումնասիրությունների տեսադաշտից անտեսում են ժողովրդական մասսաներին և կամ նրանց հատկացնում երկրորդական, պասիվ դեր: Այդ հեղինակները հարցին էմպիրիկ, ոչ քննական մոտեցում են ցուցաբերում և փաստորեն ամբողջ խնդիրը հանգեցնում են բանակցությունների երկու կողմերի միջև, որոնք ճիշտ է, վիճաբանում են, երբեմն նույնիսկ սպառնում միմյանց, սակայն, աճուամբնայնիվ հաշտ ու խաղաղ հանում են հարցի լուծմանը: Այդ տեսակետի արտացոլումը մենք գտնում ենք: Լինցովսկու «Միջին արևելքը համաշխարհային գործերում»¹, Զ. Հաղաղի «Ժամանակակիցից Սիրիայի և կիրանանի հիսում տարին»², Ն. Զիադեհի «Միջան և

¹ G. Lenczowski, The Middle East in world affairs, New York, 1957, p. 277.

² G. Hadad, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950, p. 101.

Լիբանանը¹, Ս. Լոնգրիգի «Միրիան և Լիբանանը ֆրանսիական մանդատի ներքում»², Վ. Ելի «Մերձավոր արևելքի ժամանակակից պատմությունը»³ և այլ աշխատություններում։ Այս տեսակետը չի համապատասխանում պատմական իրողությանը, Պատմական փաստերն անհերքելիորեն գալիս են ապացուցելու (ինչպես դա ցուց կտրվի, աշխատության համապատասխան մասերում), որ վճռական ուժը, որ ստիպեց ֆրանսիական զաղութարարներին հրաժարվել մանդատից և ճանաչել Լիբանանի անկախությունը, ստիպեց հրաժարվել անդիական և ամերիկյան իմպերիալիստներին իրենց զանազան զաղութատիրական ծրագրերից, դա Լիբանանի ժողովուրդն էր, աշխատավորական մասսաները, որոնք թիւ արյուն շթափեցին Լիբանանի ազատության համար մղված պայքարում։

Վերոհիշյալ տեսակետի մեջ մենք տեսնում ենք ոչ միտյն մասսաների դերի թերազնահատում և անտեսում, ոչ լին արևմտառում լայն տարածում զտած իմպերիալիստական պետություններին բարի, նախկին զաղութների նկատմամբ «Հոգատար» վերաբերմունք ունեցող երկրներ ներկայացնելու տեհնդենց։

Լիբանանի պատմության մի շարք հարցեր անհնար է բացատրել և հասկանալ, եթե լրացահայտվի իմպերիալիզմի դերը, նրա թալանշիական գործունեությունը։ Չնայած այդ հանդամանքին, որոշ պատմաբաններ անտեսում են իմպերիալիզմի բացասական դերը Լիբանանի պատմության մեջ, նրա բաղաքական ու տնտեսական կյանքում։ Այդ բանը պարզ ու որոշակի երևում է Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Յուսուֆ Սայիդի⁴. Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռ. Էմերսոնի⁵, Բոստոնի համալսարանի պրոֆեսոր

¹ N. Ziadeh, Syria and Lebanon, London, 1957, p. 71.

² S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, London, 1958.

³ W. Yale, The Near East. A modern history, Michigan, 1958.

⁴ Yusif Sayigh, Lebanon: special economic problems arising from special structure, „Middle East Economic Papers”, Beirut 1957.

⁵ R. Emerson, From empire to nation, Cambridge, 1960.

ւ. Ելի¹, Թեյրութի համալսարանի պրոֆեսոր Ա. Միլլսի², և այլոց աշխատություններում: Դեռ ավելին. նրանցից ոմանք փառարանում են իմակերիալիստական այս կամ այն տեսությանը, նրան վերագրում մարդասիրական ձգտումներ և թույլ զարգացած երկրներին, այդ թվում նաև կիրանանին տնտեսապես ուղղվածության անկեղծ ձգտումներ: Այսպես, Վ. Ելը գրում է:

«Միացյալ Նահանգները համակրում են արարական նացիոնալիզմը և արարական տրմատականների ցանկությանը՝ բարձրացնելու ժողովրդի կենսամակարդակը, բարեփոխել ազգարային սիստեմը և մոդերնիզացիայի ենթարկել գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը»³:

Սա, անշուշտ, այսպես չէ, որովհետև Ամերիկայի Միացյալ Նահանգները Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին հանդիսանում են այն երկրները, որոնք անխնա շահագործում ու թալանում են արարական երկրների ազգային հարստությունները, արգելակելով նրանց տնտեսական զարգացումը: Եթե Միացյալ Նահանգները իրոք համակրում են կիրանանի արմատականներին և ցանկանում նրա արդյունաբերական զարգացումը, ապա նրանք լիբանանյան շուկան չէին ողողի ամերիկյան ապրանքներով, ծանր դրության մեջ դնելով կիրանանի երիտասարդ և թույլ զարգացած արդյունաբերությունը: Պարզ է, որ պրոֆ. Ելը շափազանց գունազարդել է իրական պատկերը՝ փորձելով քողարկել ամերիկյան իմակերիալիզմի գիշատիչ էությունը: Այդ գությունը փորձում է քողարկել նաև Զ. Մառլուն, որն «Արարական նացիոնալիզմը և բրիտանական իմակերիալիզմը» գրքում անդրադառնալով՝ «էյզենհաու և երի դրկտրինային»: Փորձում է սքողել նրա իմակերիալիստական նպատակները: Նա այդ սղոկտրինային միայն մի կողմն է տեսնում, այն, որ նա ուղղված էր կոմունիզմի դեմք: Դա, հնարկել ճիշտ է: Սակայն, նա «մոռանում» է, որ «էյզենհառւ-

¹ W. Yale, The Near East. A modern history.

² A. Millis, Private enterprise in Lebanon, Beirut, 1959.

³ W. Yale... p. 431.

⁴ J. Marlowe, Arab nationalism and British imperialism, London, 1961, p. 147.

երի դոկտրինան» միայն կռմունիզմի դեմ ուղղված չէր: «Ելքեն հասւերի դոկտրինան» լույս աշխարհ եկավ նգիպտուսում Անգլիայի և Ֆրանսիայի պարտություն կրելուց հետո: Նրա օգնությամբ ամերիկյան իմպերիալիզմը ցանկանում էր զրավել Անգլիայի և Ֆրանսիայի տեղը և է՛լ ավելի ուժեղացնել իր դիրքերը Արարական արևելքում:

Մի շարք հեղինակների մոտ սխալ տեսակետ գոյություն ունի կիրանանի ազգային տնտեսության զարգացման հեռանկարների, ինչպես նաև նրա այժմյան վիճակի պատճառների բացատրման հարցում: Այսպես, Ա. Մայերը կիրանանի տրնտեսական զարգացման ողջ հեռանկարը կապում է օտարերկրյա կապիտալի հետ: Նա նշում է, որ եթե կապիտալ ներդրումները շարունակվեն և օտարերկրյա կապիտալի հոսքը մնա բարձր, ապա հեռանկարները շատ փայլում կլինեն¹, Ա. Մայերը փաստորեն բացահայտ պաշտպանում է օտարերկրյա իմպերիալիզմի շահերը:

Կիրանանի տնտեսության կապակցությամբ արժե անդրագառնալ երկու հեղինակի ևս: Դրանցից մեկը արաբ տնտեսագետ Ալբերտ Բաղրըն է, մյուսը ֆրանսիական տնտեսագետ Միշել Կապլենը: Երկուսն էլ ընդգծում են այն փաստը, որ կիրանանի տնտեսության մեջ գլխավոր դերը պատկանում է առևտրին, իսկ արդյունաբերությունը, թույլ զարգացած լինելու պատճառով, երկրորդական դեր է խաղում: Թվում էր, թե այդ ճիշտ միտքն ընդգծելուց հետո նրանք կփորձնն բացատրել դրա պատճառները և հատկապես կնշեն օտարերկրյա իմպերիալիզմի արիապետության հետևանքները այդ փոքրիկ երկրի էկոնոմիկայի վրա: Սակայն նրանք այդ ուղիով շեն ընթանում: Դրա փոխարեն նրանք տուրք են տալիս զանազան ոչ դիտական և իդեալիստական տեսակետների: Այսպես, որինուկ, Ա. Բաղրը իր «Դասախրություններ կիրանանի էկոնոմիկայի մասին» աշխատության մեջ դրում է: «Եթե ընդհանրապես արարական երկրները բնութագրում ենք որպես զյուղատնտեսական երկրներ, պետք է տարբերենք կիրանանը և նշենք, որ

¹ A. Meyer, Middle Eastern Capitalism, Cambridge, 1959, p. 16.

առաջին հերթին նա առևտորի երկիր է: Սա էլ երկրորդ առանձ-նահատկությունն է, որ Լիբանանի տերիտորիայի ընությունը պարտադրել է նրա տնտեսական զործունեությանը¹: Ա. Բադրի այս տեսակենտր հանդիսանում է աշխարհագրական մա-տերիալիզմի տեսության արձագանքը: Իսկ Մ. Կապլենը վերոհիշյալ հարցը փորձում է սրացատրել լիբանանցիների աղջային բնավորությամբ և ինչ-որ ժառանգական հատկություններով: Տիբանանի բնակչությունը, — նշում է նա, — աշխատասեր է և ճարապիկ: Նրանք նախկին փյունիկցիների ժա-ռանգներն են, (Լիբանանի տերիտորիայում են գտնվում փյունիկցան մեծ քաղաքներ Սիդոն ու Տյուրոսը) և նրանք չեն կորցրել իրենց նախնիների առևտրական ընդունակություն-ներն ու ունակությունները²: Սա իդեալիստական բացատրություն է, թե՛ Ա. Բադրի և թե՛ Մ. Կապլենի համար ընդհանուր է այն, որ նրանք երկուան էլ չեն տեսնում այն կապը, որ կա լիբանանի տնտեսության ներկա վիճակի ու իմպերիալիզմի երկարատև տիրապետության միջն, որի հետևանքով տասնյակ տարիներ արգելակվում էր լիբանանի տնտեսական զարգա-ցումը և գլխավորապես արդյունաբերական զարգացումը՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական միջոցներով: Ահա այդ է, որ մոռացության են մատնել վերոհիշյալ հեղինակները:

Մի շարք բուրժուական հեղինակներ սխալ տեսակետներ ունեն կիրանանի ազգային զարթունքի, ազատագրական պայքարի պատճեռութեան և անկախություն ձեռք բերած կիրանանի կարևոր ազգային խնդիրների վերաբերյալ։ Պրինսունի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Հիթթին այն կարծիքին է, որ Սիրիայի և կիրանանի ազգային զարթունքն արդյունք էր Արևմբայան Եվրոպայի աղդեցության, որը նրանց հանեց միջնադարյան սիրհից՝ Եփումը Արևմտյան Եվրոպայի հետ, նրա

^١ الدكتور البرت بدر، محاضرات في الاقتصاد اللبناني، القاهرة ر ١٩٥٥، ص ١٥.

³ Michel Caplain, *Le Moyen-Orient, Paris, 1955-1956*, p. 163.

³ Ph. Hitti, History of Syria including Lebanon and Palestine, London, 1951, p. 706.

առաջավոր դեմոկրատական գաղափարների տարածումը Հիրանանում, անշուշտ, իր դրական դերը խաղացել և նպաստել է ազգային զարթոնքին: Սակայն դա չէ գլխավոր գործունը: Ազգային զարթոնքի արմատները պետք է փնտրել կիրանանի սոցիալ-տնտեսական վիճակի և քաղաքական դրության մեջ: Նրա, ինչպես նաև արարական մյուս երկրների տնտեսական ու քաղաքական ժանր կացությունը ստիպում էր այդ երկրներին ելք փնտրել, ոտքի ելնել ու պայքարել հենց այդ նույն Արևմտյան Եվրոպայի դեմ: Հարցի այս որոշիչ կողմն է, որ միշտ պետք է ի նկատի ոմանաւու:

Գալով այն հարցին, թե որն է անկախություն ձեռք բերած կիրանանի առջև կանգնած կարևոր պրոբլեմը, վերևում արդեն հիշատակված ք. Մառլուն գտնում է, որ «երբ 1943 թ. կիրանանը նվաճեց իր ազգային անկախությունը, նրա կարևոր պրոբլեմն էր՝ թե՝ ներքին և թե՝ արտաքին գործերում, հավասարակշռություն պահպանել իր քրիստոնյա և մուսուլման քաղաքացիների շահերի և գատումների միջև»¹: Զ. Մառլուն այստեղ միանգամայն սխալվում է, կիրանանը գաղութարարներից ժառանգել էր թույլ զարգացած տնտեսություն: Ներքին քաղաքականության բնագավառում նրա առջև ծառացած ամենալուրջ և ամենաբարդ խնդիրը իր տնտեսական հետամնացությունը հաղթահարելը և ազգային էկոնոմիկան ու հատկապես արդյունաբերությունը զարգացնելն էր: Ինչ վերաբերում է արտաքին գործերին, ապա կիրանանի առջև կանգնած էր իր նոր ձեռք բերած ազգային անկախությունը պահպանելու նույնքան բարդ խնդիրը: Ինչպես տեսնում ենք Զ. Մառլուն հեռու է կիրանանի առջև կանգնած կենսական կարևոր պրոբլեմների ճիշտ մեկնաբանումից:

Կիրանանի ազգային-ազատագրական, հակահմակերթական պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1958 թ. ապստամբությունը: Դա կիրանանի ժողովարդի խոր ընդդուռումն էր ուղղված կիրանանի կառավարության պրոամերիկյան քաղաքականության և օտարերկրյա իմ-

¹ J. Marlowe... p. 168.

պերիալիստների դիմ: Ուստի պատահականություն չէ, որ այդ հարցի շուրջը ստեղծվել է բավականին հարուստ գրականություն: Պատմաբանների մի մասը ձգուում է անաշառ կերպով լուսաբանել այդ ապստամբության հետ կապված հարցերը և ընդգծել նրա հակաիմպերիալիստական բնույթը: Սակայն դրանց կողքին կան նաև մի շարք բոլորուական հեղինակներ, որոնք կիբանանի ժողովրդական մասսաների և առաջադիմ ուժերի այդ հոյակապ ելույթը շշեն ուզում դիտել որպես հակաիմպերիալիստական պայքար: Արևմտյան որոշ շրջաններում տիրապետող է հանդիսանում այն կարծիքը, որ դա համայնքային՝ քրիստոնյաների և մուսուլմանների միջև մղվող սղայքար էր: Անգլիական «Թայմս»-ը գրում է. «1958 թ. ավելի քան վեց ամիս երկիրը կատաղիորեն բղիկ-բղիկ էր լինում կրոնական հողի վրա¹, իսկ ոչյուսուիկ»-ը այդ ապստամբությունն ուղղակիորեն անվանում է «քրիստոնյա-մուսուլմանական կոփիվ»²: Այդ նույն տեսակետն են ըստ էության պաշտպանում Զ. Մառլոուն, Զ. Բաներջին³ և ուրիշներ:

Դժբախտաբար այդ սխալ տեսակետին որոշ շափով տուրք ևն տալիս նաև առանձին արաբ հեղինակներ և նույնիսկ պետական ու քաղաքական գործիչներ, ինչպես Ֆահիմ Քուրեյյինը՝ «Ճշգնաժամ» կիրանանումը⁴, Քամալ Ջունրլատը՝ «Ճշգնաժամ» կիրանանի հեղափոխության մասին» գրքերում⁵ և այլն: Իհարկե սրանք այլբողջովին վերոհիշյալ տեսակետը չեն պաշտպանում: Ընդհակառակը, նրանք ընդունում են այդ ապստամբության հակաիմպերիալիստական բնույթը, դտնում, որ նա ուներ ներքին և արտաքին պատճառներ: Այդ տեսակետից նրանք սկզբում քորեն տարբերվում են Արևմտյան բուրժուական հեղինակներից: Մակայն դրա հետ միասին,

¹ „The Times”, London, 23 June 1960.

² „Newsweek”, Paris, 18 July 1960.

³ J. Banerji, The Middle East in world politics, Calcutta 1960, p. 124.

⁴ Fahim Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961, p. 30.

⁵ كمال جنبلاط، حقائق الثورة اللبنانية، بيروت ١٩٥٩.

Նրանք ոչ ճիշտ կերպով ընդունում են նաև կրոնական հակամարտության մոմենտը։ Մինչդեռ իրականում 1958 թ. ապրաւամբությունը հստակ ու որոշակի հակախմակերիալիստական ընույթ ուներ և իմպերիալիզմի ու նրա գործակալների դեմ մզվող պայքարում ուս-ուսի տված ընթանում էին բոլոր ընդդիմադիր ուժերը, թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական։

Արժեքավոր և շահեկան ուսումնասիրություն է լիբանանցի հասարակական գործիշ, դոկտոր Մուհամեդ Մաջզուրի «Դեմոկրատիայի և արարական նացիոնալիզմի ողբերգությունը» Լիբանանում աշխատությունը¹: Դա խոր հայրենասիրական պաթոսով գրված մի գործ է և հեղինակը եռում է ցամամբ ընդդեմ լիբանանի հաստահարիչների, նա իրավացիութեն այդ ողբերգության պատճառը համարում է լիբանանի կառավարող շրջանների հակաազգային և հակաարարական քաղաքականությունը և իմպերիալիստների գործունեությունը, որոնց համար լիբանանը, ինչպես նշում է Հեղինակը, գործունեության լայն ասպարեզ է ներկայացնում։ Իր այդ տեսակետը հաստատելու համար Մ. Մաջզուրը բազմաթիվ հետաքրքիր փաստեր է բերում։ Սակայն Մ. Մաջզուրի այդ զբրգում տեղ են գտնել նաև ոչ ճիշտ, հակասական ու երրեմն նաև իրարամերժ տեսակետներ։ Նա փաստորեն շի տեսնում այն իսկական ուժերին, որոնք կարող են լիբանանը գուրս բերել ծանր կացությունից։ Ուստի և նա շի համեզում, երբ առում է, թե ելքը լիբանանում միակուսակցական սիստեմ հաստատելու մեջ է։ Այնուհետև, նա զանազան առիթներով խոսում է հեղափոխության անհրաժեշտության մասին, որը պետք է նոր հասարակարգ կառուցի լիբանանում²։ Սակայն նա շի բացահայտում, թե դա ինչ ընույթի հեղափոխություն է և նոր հասարակարգ ասելով դրա տակ ի՞նչ է հասկանում, Ընդհանրապես այդ հարցերում հեղինակի դատողություններն ու պատկերացումները մշուշապատ են։

¹ Мухаммед Маджзуб, Трагедия демократии и арабского национализма в Ливане, перев. с араб. М., 1959.

² Նույն տեղում, է, 148:

Ուշադրավ աշխատություն է նաև Մոմիր Բակի էղ-Դինի «Անկախության ծնունդը զիրքը¹, Այն նվիրված է ֆրանսիական մանդատի թոթափման և քաղաքական անկախություն ձեռք բերելու հարցերի լուսաբանմանը: Հեղինակը մերկացնում է ֆրանսիական իմպերիալիզմի քաղաքականությունը, որը զանազան պատրվակներով փորձում էր երկարաձգել իր տիրապետությունը Լիբանանում: Սակայն նա չի անդրադարձել տարրեր գասակարդերի և քաղաքական կուսակցությունների նպատակներին ու դերին այն պայքարում, որ մղվում էր ֆրանսիական մանդատի վերացման համար: Այդ թերությունը հատուկ է նաև Աղիր Ֆարիճաթին, որի «Լիբանանը և Սիրիան» աշխատության մեջ ոչ մի խոսք չկա ժողովրդական զանգվածների դերի ու պայքարի մասին²:

Մեր կողմից լուսաբանվող թեման, ինչպես նշեցինք, դուրս չի մնացել նաև սովետական պատմաբանների տեսադաշտից: Սակայն հատուկ ուսումնասիրություն մինչև այժմ չի դրվել: Նրանք հիմնականում սահմանափակվել են ամսագրերում և զանազան ժողովածումներում առանձին հոդվածներ զետեղնով, որտեղ լուսաբանվում են մասնակի հարցեր միայն կամ համառոտակի շարադրվում է Լիբանանի ընդհանուր պատմությունը: Այդպիսի բնույթ ունի օրինակ Վ. Լուցկու «Արարական երկրները»³, որի մի բաժինն նվիրված է Սիրիային և Լիբանանին: Այստեղ ընդհանուր տեղեկություններ են հաղորդվում Լիբանանի տնտեսության ու պատմության վերաբերյալ, որը հասցվում է մինչև 1946 թ.: Ուշադրության արժանի է «ԱՄՆ-ի քաղաքականությունն Արարական արևելքում» ժողովածուն⁴, որտեղ խոսվում է նաև ամերիկյան իմպերիալիզմի քաղաքականության մասին Լիբանանում:

1963 թ. լույս տեսավ «Ժամանակակից Լիբանանը» տեղեկատուն⁵: Նրա հեղինակային կոլեկտիվը հիմնականում ճիշտ

¹ منبر نفى الدين، ولادة الاستقلال، بيروت، 1953.

² اديب فرحت، لبنان و سوريا، بيروت.

³ В. Луцкий, Арабские страны, М., 1947.

⁴ Политика США на Арабском Востоке, М., 1961.

⁵ «Современный Ливан» (Справочник), М., 1963.

է լուծել իր առջև դրված խնդիրը և ամփոփ շարադրել է կիրանանի պատմության կարևոր էտապները, տվել տնտեսության ընութագիրը և այլն։ Սակայն նրանում տեղ են գտել մի շարք թերություններ։ Ոչ մի խոսք չի ասված 1943 թ. Ազգային պակտի մասին, որը ուրվագծեց Լիբանանի ներքին և արտաքին քաղաքականության կարևոր մոմենտները։ Բոլորովին անտեսված է ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հայերի դերն ու մասնակցությունը Լիբանանի քաղաքական ու տնտեսական կյանքում և այլն։

Ընդհանուր առմամբ այսպիսին է հարցի ուսումնասիրման վիճակը օտարերկրյա և սովետական պատմադրության մեջ։

Աշխատությունը շարադրել ենք արարական, անդիրական, ֆրանսիական, ռուսական և հայկական բազմաթիվ աղբյուրների հիման վրա, օգտագործելով առանձին ուսումնասիրություններ, ամսագրեր, մամուլ, տարրեր բյուզետներ և տեղեկատուններ, Լիբանանի կառավարության պաշտոնական վիճակագրական տվյալներ և այլն։ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնուած Միավորված Ազգերի կազմակերպության նյութերը՝ ՄԱԿ-ի տարեգրքերը, Միջին արևելքի տնտեսական զարգացմանը նվիրված բյուզետնեները և այլն, որոնք արժեքավոր տվյալներ են պարունակում Լիբանանի տնտեսության տարրեր հարցերի վերաբերյալ։ Բացի այդ օգտվել ենք Հոկտեմբերյան հեղափոխության Կենտրոնական պետական արխիվի (Մոսկվա) նյութերից, որոնք հարուստ տեղեկություններ են հաղորդում Լիբանանի հետպատերազմյան շրջանի պատմության մասին։ Ուսումնասիրության մեջ լայնորեն օգտագործել ենք լիբանանահաճայ առաջադիմ մամուլը, որը հետաքրքիր և հավաստի տեղեկություններ է հաղորդում ոչ միայն Լիբանանում թնակվող հայերի և արարական ազգային ազատագրական շարժումներին նրանց մասնակցության մասին, այլև ընդհանրապես Լիբանանի սոցիալ-տնտեսական վիճակի և հակաիմպերիալիստական պայքարի մասին։

H 42584

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԼԻԲԱՆԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏԻՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
(1946—1958 թթ.)

Լիբանանը Միջերկրական ծովի ափին ընկած մի գործը արարական երկիր է, նրա տարածությունն է 10,4 հազ. քառ. կմ², իսկ բնակչությունը՝ ըստ 1963 թ. տվյալների, է մըն. 750 հազար մարդ¹: Լիբանանի բնակչության ճնշող մեծամասնությունը, մոտ 90%-ը, կազմում են արաբները: Բացի արաբներից լիբանանում բնակվում են նաև Հայեր, թուրքեր, Հնդիկներ, հրեաներ, քրդեր, պարսիկներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Հայերը կազմում են ամենամեծ ազգային փոքրամասնություններից մեկը: Նրանց թիվը հասնում է 85 հազ. 633 մարդու²: Հայերը հիմնականում կենտրոնացված են քաղաքներում, նրանց կեսից ավելին բնակվում է Բեյրութում:

Լիբանանը, ինչպես Մերձավոր և Միջին արևելքի մյուս երկրները, տնտեսական տեսակետից թույլ զարգացած երկիր է: Սակայն նրա տնտեսությունն ունի իր բնորոշ առանձնահատկությունները, որոնցով նա տարրերվում է իր հարևան

¹ „The Middle East and North Africa, 1964-1965”, London, p. 345.

² Ս. Դ ա ս պ ա ր լ ա ն, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Օրեան, 1960, էջ 113, 1968 թ. սկզբներին մենք եղանք լիբանանում & մենք Հայողվեց պարզել, որ լիբանանում հայերի թիվը այժմ մոտ 190 հազար է:

մյուս երկրներից, թթե արաբական բոլոր երկրները գյուղատնտեսական երկրներ են, այն առումով, որ գյուղատնտեսությունը հանդիսանում է նրանց տնտեսության հիմնական ճյուղը, ապա նույնը չենք կարող ասել կիրանանի վերաբերյալ: Մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե արաբական մյուս երկրներում ազգային եկամտը հիմնականում ստեղծվում է արտադրության ոլորտում, ապա կիրանանում դրությունն այդպես չէ: Խնձում նշում է կիրանանցի տնտեսագետ թուառության աշխարհար ալ-Հելուն, կիրանանի տնտեսությունը հիմնված է չորս սյուների վրա՝ առևտրի, գյուղատնտեսության, արդյունաբերության և տուրիզմի վրա: Առևտրը այս կամ այն շափով մեծ դեր է խաղում, իհարկե, աշխարհի բոլոր երկրների տնտեսության մեջ, կիրանանի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ազգային եկամտի մեջ առևտրի բաժինը կազմում է 35 %, գյուղատնտեսությանը՝ 19 %, իսկ արդյունաբերությանը՝ 16 %¹, այլ կերպ ասած, առևտրից ստացվող եկամուտները հավասար են գյուղատնտեսությունից և արդյունաբերությունից ստացվող եկամուտներին՝ միասին վերցրած: Պոլ Կլատը վերլուծելով կիրանանի 1961 թ. տնտեսական արդյունքները, գալիս է այն եզրակացության, որ «առևտրությը, թե՛ միշազգային և թե՛ տեղական, թե՛ մեծաքանակ և մասնածախ», մնում է երկրի եկամտի գլխավոր աղբյուրը², իսկ եթե առևտրի հետ միասին վերցնենք ամբողջ սպասարկությունների սխատեմը, որի մեջ մտնում են բանկերը, հաղորդակցության միջոցները և տուրիզմը, ապա դատ տնտեսագետների հաշվումների նրանք տալիս են կիրանանի ազգային եկամտի ^{2/3-ը³}

կիրանանի տնտեսությունը հաստատուեն հիմքերի վրա չի գտնվում: Այդ բոլոր սպասարկությունները (service) ենթակա են արտաքին և հատկապես միշազգային գործուների աղ-

¹ Юсуп Хаттар аль-Хилю, Экономика Ливана, сокращен. пер. с арабского, М., 1959, стр. 19.

² "Le Commerce du Levant", Beyrouth, 27 juin 1962.

³ Yusif Sayigh, Entrepreneurs of Lebanon, Cambridge, 192, p. XIII.

դեցության։ Թե՛ առևտուրը, թե՛ տուրիզմը և թե՛ բանկային գործունեությունը մշտապես կախված են միջազգային դրությունից և միջազգային հարաբերությունների ամեն մի փոփոխում իր անդրադարձն է ունենալ կիրանանի տնտեսության վրա։

Կիրանանի տնտեսության այս լուրահատուկ քնույթը արդյունք է իմաստիալիստների գաղութարարական քաղաքականության։

Կիրանանում աիրավետող է հանդիսանում ֆրանսիական կապիտալը։ Նրա դիրքերն ուժեղ են հատկապես բանկային սիստեմում, առևտրական ընկերություններում և այլն։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ուժեղանում է նաև տնօլիխական և հատկապես ամերիկյան կապիտալի ներթափանցումը։ Բացի այդ կիրանանում լայն գործունեություն է ծավալել արևմտագերմանական, ճապոնական և իտալական կապիտալը։ Ֆրանսիական մանդատի տիրապետության ժամանակ ֆրանսիական իշխանությունները ամեն կերպ, թերաղաքական և թե տնտեսական միջոցներով, արգելակում էին կիրանանի արդյունաբերական զարգացումը։ 1943 թ. անկախություն ձեռք բերած կիրանը որպես ժառանգություն ստացավ վերին աստիճանի թույլ զարգացած տնտեսություն։ Բայց որում, զրանից հետո արևմտյան իմաստիալիստները շղաղաբեցրին իրենց շանթերը արգելակերու կիրանանի տնտեսության և հատկապես արդյունաբերության զարգացումը։ Դրան մեծապես օգնում է նաև կոմպրադորական-առևտրական բուրժուազիայի քաղաքականությունը։ Անկախություն ձեռք բերելուց հետո իշխանության ղեկի մոտ կանգնեցառերական բուրժուազիան և կիրանանի կառավարության քաղաքականությունը հիմնականում արտահայտում է կոմպրադորական բուրժուազիայի, ինչպես նաև կալվածատերերի շահերը։ Այս բոլորից լավետք է եղրակացնել, որ անկախությունից հետո կիրանանի տնտեսության մեջ տեղաշարժեր չեն եղել կամ արդյունաբերական բուրժուազիայի, ինչպես նաև կալվածատերերի շահերը։ Այս բոլորից լավետք է եղրակացնել, որ անկախությունից հետո կիրանանի տնտեսության մեջ տեղաշարժեր չեն եղել կամ արդյունաբերական բուրժուազիայի, շահերը լրիվ անտեսվել են, Տեղաշարժեր, անշուշտ, եղել են և կիրանանի կառավարությունը հարկադրված է այս կամ այն շափով հաշ-

վի նստել արդյունաբերական բուրժուազիայի հետ։ Միայն թե այդ բոլորը տեղի է ունենում դանդաղ, Անբերին կատաղի պայքարի, ներքին և արտաքին բնույթի բազմաթիվ խոշընգույն գոտոներ հաղթահարելու ուղիով։

Անկախության նվաճումից հետո Լիբանանի առաջին պրեմյեր-մինիստրը Ռիադ Սուլիմ հանդես եկավ կառավարական հայտարարությամբ, որտեղ ուրվագծեց Լիբանանի ներքին և արտաքին քաղաքականության կարևոր խնդիրները։ Իանդ առնելով տնտեսության բնագավառում կիրանանի առջև կանգնած խնդիրների վրա, նա նշեց, որ էկառավարությունը հոգ է տանելու քաջալիրելու ազգային արդյունաբերությունը¹, նըման հայտարարությամբ Ռիադ Սուլիմից հետո հանդես են եկել համարյա բոլոր կառավարությունները և սակայն նրանք իրենց բարձր խոստումը չեն կատարել ու հետեղակատոնորեն չեն պայքարել այդ բնագավառում իրենց առջև դրված խնդիրների կենսագործման համար։ Այդ պատճառով էլ այսօր այդ խնդիրն իր ամբողջությամբ կանգնած է Լիբանանի տոշ։

1955 թ. առաջին անգամ Լիբանանում անցկացվեց արդյունաբերական վիճակագրություն, Ըստ այդ վիճակագրության Լիբանանում այդ ժամանակ կար 1861 արդյունաբերական ձեռնարկություն², Սակայն հաշվառման մեջ չեն մտցված բոլոր վերանորոգ ձեռնարկությունները, ինչպես նաև այն ձեռնարկությունները, որոնք դրադված են միայն արտադրական վերջին պրոցեսները կատարելով։ Բացի այդ հաշվի չեն առնվաժ նաև այն ձեռնարկությունները, որտեղ աշխատում էին 5 հոգուց պակաս մարդք։

Լիբանանի արդյունաբերության ավելի լրիվ պատկերը տալիս են 1962 թ. տվյալները, Ըստ այդ տվյալների 1961 թ. Լիբանանում կային 3744 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցում զբաղված էր 43355 բանվոր։ Նրանցում ներդրված կապիտալը կազմում էր 521 միլիոն 643 հազար լիբա-

¹ «لبنان في عهد الاستقلال»، بيروت، ١٩٤٧، ص ١٣.

² «Industrial census of Lebanon, 1955», Beirut, 1958, vol. II, p. 5.

նանյան լիրա¹: Սակայն դրանք բոլորը չեն, որ ժամանակականից իմաստով արդյունաբերական ձեռնարկություններ են: Լիրանանում միայն 50 ձեռնարկություն կա, որտեղ բարարանշուրում աշխատում են 100 և ավել բանվոր: Փոքր է նաև կապիտալ ներդրումների ծավալը: Միայն 30 ձեռնարկություն կա, որոնցից յուրաքանչյուրի կապիտալը համեմում է 1 մլն. լիրայի²: Այս թվերը խոսում են այն մասին, որ արդյունաբերական բուրժուազիան կիրանանում թույլ է զարգացած:

Լիրանանում, իհարկե, կան ֆարբիկա-գործարանային ձեռնարկություններ: Սակայն նրանք չեն պատկանում լիրանանյան ազգային կապիտալին: Նրանք պատկանում են օտարերկրյա՝ ամերիկյան, անգլիական և ֆրանսիական կապիտալին և վերջին հաշվով չեն փոխում կիրանանի արդյունաբերության ընդհանուր դեմքը:

Լիրանանում համարյա լրիվ բացակարաւմ է ծանր արդյունաբերությունը: Կան միայն պողպատաձևվան և մետաղամշակման մի քանի մանր ձեռնարկություններ:

Բուրժուական գրականության մեջ տարբեր տեսակետներ գոյություն ունեն կիրանանի արդյունաբերական զարգացման համարյա դիտվում է որպես ինդուստրիալ երկիր: Այդ տեսակետն ակնհայտ կերպով անց է կացված «Միջազգային նոր տարեգրքում»³: Մի շաբթ հեղինակներ ընկնում են մի այլ ժայռաշեղության մեջ և փորձում ժխտել արդյունաբերության գոյությունը կիրանանուամ: Այդ տեսակետն ամենից պարզ արտահայտել է Ժ. Բոյյո-Գարնիյեն: Նա ուղղակի գրում է, որ կիրանանում տարդյունաբերություն գրեթե գոյություն չունի⁴: Ժ. Բոյյո-Գարնիյեն, անշուշտ, սիսավում է, որովհետեւ արդյունաբերության թույլ զարգացած լինելը դեռևս հիմք չի:

¹ Бюллетень иностранной коммерческой информации (БИКИ) научно-исслед. конъюнктурного института Мин. внеш. торговли СССР, 9 июня 1962 г.

² «Современный Ливан», стр. 48.

³ «The new international yearbook. For the year 1960», New York, 1961.

⁴ «L'Economie du Moyen-Orient», Paris, 1951, p. 77.

տալիս ժխտելու նրա գոյությունն ընդհանրապես, կան նաև բոլորուական հեղինակներ, որոնք ժխտում են ծանր արդյունաբերության անհրաժեշտությունը: Նրանք մի տեսակ, արհամարհական են արտահայտվում նրա վերաբերյալ: Այդպես է վարվում Ֆ. Հիթթին, նշելով, որ Լիբանանում ռայսապես կոչված ծանր արդյունաբերություն չկազ¹:

Ծշմարտությունը կայանում է նրանում, որ Լիբանանը արդյունաբերական տեսակետից թույլ զարգացած երկիր է և նա կարիք է զգում հետագա ինքուստրացման, այդ թվում նաև ծանր արդյունաբերության զարգացման: Արդյունաբերական ճյուղերից առավել զարգացած է թեթև արդյունաբերությունը: Լիբանանում կան տեքստիլ, սննդի, փայտամշակման, կաշվի, կոշկեղենի, պատրաստի հագուստեղեննի, ծխախոտի, ցեմենտի գործարաններ: Տեքստիլ արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացված է Բեյրութում և Տրիպոլիում: Բեյրութում է գտնվում երկրի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություն՝ «Ասելլիս-ն», որտեղ աշխատում է մոտ 2 հազար մարդ: Իսկ ընդհանրապես տեքստիլ արդյունաբերության մեջ զրադշված է 16 հազ. մարդ: Սննդարդյունաբերության ձեռնարկությունները մշակում են տեղական, ինչպես նաև ներմուծվող հումքը: Սննդարդյունաբերության հիմնական արտադրանքներն են: շաքար, ծխախոտ, խմիչքներ, հորոշակեղեն և այլն: Շաքար Լիբանանում 1961 թ. արտադրվել է 30 հազ. տոննա², զարեցուր 1953 թ.—18 հազար հեկտոլիտր, 1958 թ.—31 հազար հեկտոլիտր, 1959 թ.—33 հազ. հեկտոլիտր, ծխախոտ՝ 1953 թ.—320 հազ. տոննա, 1958 թ.—379 հազ. տոննա³, ձիթայուղ՝ 1955 թ.—2 հազ. տ., 1958 թ.—10 հազ. տ., 1959 թ.—3 հազ. տ., 1960 թ.—6 հազ. տ.⁴: Սննդարդյունաբերության կարևոր կենտրոններն են Բեյրութը, Տրիպոլին և Սայդան: 1961 թ. տվյալներով սննդարդյունաբերության ձեռնարկություններում աշխատում էր 8 հազար մարդ:

¹ Ph. Hitti, Lebanon in history, p. 505.

² «Современный Ливан», стр. 54.

³ United Nations. Economic developments in the Middle East 1959-1961*, New York, 1962, p. 125-126.

⁴ United Nations. Statistical yearbook*, New York, 1961, p. 198.

Լիբանանում, թեև թույլ զարգացած, բայց գոյություն ունի լեռնահանքային և մետաղամշակման արտադրություն։ Լիբանանում կան ածխի, երկաթի, կապարի և պղնձի հանքեր։ Դրանցից հատկապես օգտագործվում են երկաթահանքերը, որի տարեկան հանույթը հասնում է 50—100 հազ. տ., Լիբանանում տարեկան ծովագում է մոտ 10 հազ. տոննա մետաղ¹։ Այդ մետաղը հիմնականում օգտագործվում է շինարարության և տնային գործածության դանական իրեր արտադրելու համար։

Լիբանանի արդյունաբերության կարևոր ճյուղերից է շինանյութերի արդյունաբերությունը և գիսավորապես ցեմենտի արտադրությունը։ Երկրում կա ցեմենտի գործարան՝ Ռասաշ-Շաբում և Անֆայում։ Այդ երկու գործարաններն էլ պատկանում են Լիբանանի ցեմենտի ընկերությանը, որի ակցիաների 51%-ը պատկանում է օտարերկրյա կապիտալին²։ Ցեմենտի արտադրությունը հարածուն կերպով աճում է։ Դարացարվում է ճանապարհների, կամուրջների, հասարակական և կառավարական շենքերի, հյուրանոցների կառուցմամբ, Ցեմենտ արտադրվել է 1948 թ. 209 հազար տ., 1955 թ.—453 հազ. տ., 1958 թ.—507 հազ. տ., 1959 թ.—743 հազ. տ. և 1960 թ.—854 հազ. տ.³։ Լիբանանը ոչ միայն լրիվ բավարարում է իր պահանջները ցեմենտի բնագավառում, այլև արտահանում է Սառույան Արարիա, Հորդանան և Պարսից ծոցի իշխանությունները։

Բնշպես նշեցինք, Լիբանանում կան նաև արդյունաբերական ժամանակակից ձեռնարկություններ։ Դրանք նաև գտնվագործ գործարաններ են, որոնցից մեկը գտնվում է Տրիպոլիում, իսկ մյուսը՝ Սայդայում։ Դրանք երկուան էլ պատկանում են օտարերկրյա կապիտալին, Լիբանանում գործում են երկու նավթային ընկերություններ՝ «Իրաք Պետրոլիում»-ը և «Թափլայնը», որը հանդիսանում է ամերիկյան «Արամկո» ընկերության դուստր ընկերությունը, «Իրաք պետրոլիում»-ը, որտեղ գերակշռում է անգլիական կապիտալը, Լիբանանում

¹ Նույն տեղում, էլ 161։

² «Современный Ливан», стр. 50.

³ „United Nations Statistical yearbook“, 1961, p. 245.

ումի երկու նավթամուղ Նրանք իրաքի նավթը միացնում են Տրիպոլիի հետ, որտեղ և գտնվում է այդ նույն ընկերությանը պատկանող նավթազտիլ գործարանը: Այդ գործարանի տարեկան կարողությունը կազմում է 500 հազար տոննա:

Մյուս նավթամուղը պատկանում է «Թափլայն»-ին, որը Սաուդյան Արաբիայի նավթը Սայդայի միջոցով կապում է Միջերկրական ծովի հետ: Սայդայում գտնվող նավթազտիլ գործարանը պատկանում է ամերիկա-լիբանանյան «Մեդրեկո» ընկերությանը: Այդ գործարանը տարեկան մշակում է 600 հազ. տ. նավթ¹:

Լիբանանում տարեց տարի աճում է էլեկտրաէներգիայի արտադրությունը: Այսպես, կենական էլեկտրաէներգիա լիբանանում արտադրվել է (միլիոն կիլովատ ժամ), 1953 թ.—164, 1956 թ.—258, 1958 թ.—297, 1959 թ.—310, 1960 թ.—350²: Այս աճը տեղի է ունեցել ինչպես Հին էլեկտրակայանների կարողություններն ընդլայնելու (Բարիդ, Իբրահիմ և Ռաշմիկ), այնպես էլ նորերը կառուցելու միջոցով, ինչպես օրինակ, «Եամում» շերմաէլեկտրակայանը Զուկ Միքայելում:

Լիբանանի տնտեսության և հատկապես էներգետիկ բաւանսի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունի լիթանիի ծրագրի իրագործումը, որը սկսվել է 1956 թ.: Այդ ծրագրը իրենից ներկայացնում է մի բարդ հիդրոտեխնիկական կառուցվածք: Այն իրագործվելու է Էտապ առ էտապ, Նախատեսվում է կառուցել 8 ամբարտակներ, 210 կմ. նոր ջրանցքներ և 12 կմ. բարձր լարման գծեր և 4 հիդրոէլեկտրակայաններ³: Բացի այդ նա կնապաստի, հատկապես, Բերայի դաշտավայրում ոռոգելի Հողերի ընդարձակմանը: Առու 25000 քկմ: Նախատեսվում է վերջնականապես այս ծրագրին ավարտել 20—25 տարում, որից հետո նա տարեկան կտա 300 միլիոն կվ. էներգիա:

Սրագրի իրագործման համար նախատեսվում է մոտ 341,9 միլիոն լիբանանյան լիրա, որից՝ 117 միլիոնը առաջին էտա-

1 «Современный Ливан», стр. 57.

2 UN. Economic developments in the Middle East 1959-1961*, p. 123.

3 Michel Caplain, Le Moyen-Orient, Paris, 1955-1956, Fascicule II, p. 167.

ոյի համար¹: Սակայն այդ աշխատանքները ձգձգվում են: ՄԱԿ-ի բյուլետենում, որը նվիրված է Միջին արևելքի 1959—1961 թթ. տնտեսական զարգացմանը այդ առթիվ ասված է, որ աշխատանքները «դանդաղեցին, չնախատեսած դժվարությունների պատճառով»²: Այստեղ շատ մեզմ է ասված: Իրականությունն այն է, որ ծրագրի նախագիծը կազմել էին Տրումենի գոկտրինայի «Ք-րդ կետի» մասնագետները և նրանք նախագծումների ժամանակ կոպիտ սխալներ էին թույլ տալիք: Այդպիսի կոպիտ սխալներ էին թույլ տվել նաև երկրաբանական հետախուզություն կատարած ֆրանսիական և խոալական կոմպանիաները, որի հետևանքով կառուցված թումեններից մեկը փլվեց³:

Լիբանանի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության մեջ, զգալի դեր է խաղում հայ բուրժուազիան: Այդ հանգամանքը տարբեր առիթներով ընդգծել են լիբանանի քաղաքական ու պետական գործիչները, ինչպես նաև տնտեսագետները: Լիբանանի պրեմյեր-մինիստր Ռիադ Սոլիմանը 1947 թ. հունվարին մի հանդիպում ունեցավ եգիպտական գլուխաց թերթի թղթակցի հետ: Վերջինս նրան հետեւյալ հարցն է տալիս: «Հայկական զաղութը մեծ տեղ կզբակե Լիբանանի տնտեսության մեջ: Անոնց ներգաղթը պիտի լվնասե՞ այդ տնտեսության»: Պատասխանելով նրան, պրեմյեր-մինիստրն ասում է: «Ատիկա ճիշտ է: Հայերի մեկնումով շատ լավ տարբեր պիտի կորսնցնենք»⁴: Բուրժուական տնտեսագեանները անդրագառնալով լիբանանի տնտեսական կյանքում հայերի խաղացած գերին նշում են, որ նրանք մեծ ժառայություն են մատուցել ժամանակակից իմաստով արդյունաբերություն ստեղծելու գործում: Թեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Ա. Մեյերը արաբական երկրներում արդյունաբերական հին ձևերի փոխարինումը նորերով կապում է եվրոպացիների և հայերի անվան հետ: Նա գտնում է, որ

¹ „UN Economic developments in the Middle East 1959-1961”, p. 20-21.

² Նույն տեղում, էջ 21.

³ «Современный Ливан», стр. 49.

⁴ «Ժողովուրդի Զայն», Թեյրութ, 8 հունվարի 1947 թ.:

այդ երկրներում հայ փոքրամասնությունը այսօր նույն դերն է կատարում, ինչ որ հրեաները Եվրոպայում միշտն դարերում¹, իսկ Յաւառության մեջ Հատկապես ընդգծում է Հայերի տեխնիկական ունակությունները և մեծ փորձառությունը², կիրանանում Հայերին են պատկանում տեքստիլ, երկաթագործական ու ընդհանրապես մետաղագործական, կաշեգործական, կառուցուկի, փայտամշակման և սննդարդունաբերության բազմաթիվ գործարաններ, ֆաբրիկաներ, արհեստանոցներ, ինչպես նաև առևտրական ընկերություններ: Անուրանալի իրողությունն է, զրում է Հովհաննեսը, — որ Հայկական բուրժուազիան կիրանանի առևտրական, խոշոր և մանր արդյունաբերական կյանքին մեջ կդրավեա աշքառու տեղաքա՞ն:

Պաշտոնական վիճակագրական տվյալներ չկան, որոնք ցույց տային, թե կապիտալի և կամ ձեռնարկությունների ո՞ր տոկոսն է պատկանում հայ բուրժուազիային: Սակայն, ինչպես նշում է Հովհաննեսը, նրա ձեռքի տակ եղած տվյալները բավարար են գեթ մոտավոր գաղափար տալու կիրանանի տնտեսական կյանքում հայ բուրժուազիայի դերի մասին: Նրա հաշվումներով կիրանանի հայ բուրժուազիային է պատկանում երկրի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18%-ը, մանր արհեստավորական ձեռնարկությունների 43%-ը, իսկ խոշոր ներածումների մեջ հայ բուրժուազիայի բաժինը կազմում է 10%: Կիրանանի խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 միլիոն լիրանանյան լիրայից ավելի քան 125 միլիոնը պատկանում էր հայ արդյունաբերական բուրժուազիային⁴: Ինչպես ցույց են տալիս այս թվերը, հայ բուրժուազիան և նրան պատկանող կապիտալը զգալի դեր են խաղում կիրանանի արդյունաբերության մեջ: Ամբողջ կիրանանում և նրանից դուրս հայտնի են կասար-

¹ A. Meyer, Enterpreneurship: the missing link in areb states?, "Middle East Economic Papers", Beirut, 1954, p. 124-125.

² Yusif Sayigh, Enterpreneurs of Lebanon, p. 71.

³ «Մ. Ն. Հառաջը, Բեյրութ, 21 օգոստոսի 1960 թ.»

⁴ Նույն տեղում:

յանի, Թարսումյանի և Փոլադյանի մետաղաձուկարանները և մետաղյա իրերի արտադրանքը¹. Ժ. Պաշլանի զանազան մեթենաներ արտադրող գործարանը, Ա. Ապրոյանի հագուստեղնի, Սարհադյան եղբայրների տեքստիլ, Ի. Մանուկյանի ալյումինի իրերի, Գ. Գասպարյանի երկաթյա աթոռների, Նամարյանի և այլ գործարանները². Այդ գործարաններից շատերը բավականին խոշոր ձեռնարկություններ են, լրիվ հիմնված մեթենայական արտադրության վրա. Այսպես օրինակ, Թարսումյանին և Փոլադյանին պատկանող գործարանում աշխատում են մոտ 600 բանվորներ. Հայ բուրժուազիային պատկանող ձեռնարկությունների արտադրանքը լայն սպառում է զանում ոչ միայն Լիբանանում, այլև նրա սահմաններից դուրս, հատկապես արարական երկրներում. Լիբանանի արտահանումների անբաժանելի մասն է կազմում այդ ձեռնարկությունների արտադրանքը. Այդ ձեռնարկությունները շատ հաճախ մասնակցում են զանազան արդյունաբերական տոռնավաճառներին. Այսպես, նրանք 1963 թ. մասնակցեցին Դամասկոսի արդյունաբերական տոռնավաճառին և, ինչպես նշում է «Արարատ» թերթը, մեծ հաջողություն ունեցան³:

1961 թ. օգոստոսի 7-ին Լիբանանի կառավարությունը հաստատեց Լիբանանի տնտեսական զարգացման Հնդկամյա պլանը (1962—1967 թթ.), Նախատեսվում է հինգ տարվա ընթացքում տնտեսության մեջ ներդնել 450 մլն. լիբանանյան լիրա. Բայց այդ պլանի արդյունաբերության համար նախատեսվում է ընդամենը 72 մլն. լիրա. Սակայն այդ ամբողջ դումարը ծախսվելու է միայն և միայն էլեկտրականության վրա⁴. Հինգ տարվա ընթացքում այդ 450 մլն. լիրայից և ոչ մի պիաստր լի նախատեսված արդյունաբերական որևէ ձեռնարկության համար. Մնացած ողջ գումարը հատկացվում է ոսոգմանը (64 մլն.), ճանապարհների շինարարությանը

¹ «Մ. Ն. Հառաջ», Թերթութ, 7 ապրիլի 1957 թ.,

² «Արարատ», Թերթութ, 24 սեպտեմբերի 1963 թ..

³ Նոյն անգամ:

⁴ «UN. Economic developments in the Middle East, 1959-1961», p. 176.

(124 մլն.), շենքերի կառուցմանը (20 մլն.), վերակառուցմանը (75 մլն.) և այլն¹. Այս թվերը պերճախոս վկայում են, թե ազգային շահերը անտեսող ինչպիսի տնտեսական քաղաքականություն է վարում կիրանանի կառավարությունը և թե ինչպես է նա վերաբերվում արդյունաբերության զարգացմանը:

Կիրանանի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման առջև կանգնած են մի շարք դժվարություններ: Դրանցից առաջինը կիրանանի կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականությունն է, որը սովորաբ անվանում են «տնտեսական լիբերալիզմի» կամ «բաց դռների» քաղաքականություն, «կիրանանի այսօրվա քաղաքականությունը», — զրում է Թամալ Զունըրատը, — մերկանտելիստական է»²: Այդ քաղաքականությունն արտահայտում է առևտորական, կոմպրագորական բուրժուազիայի շահերը, որը շահագրգոված է օտար ապրանքների ներմուծման մեջ: Նրա բարեկեցությունը, շահույթների ավելացումը կապված է առևտորի զարգացումից, օտար ապրանքների ներմուծումից: Այդ պատճառով էլ նա ստիպում է կիրանանի կառավարությանը երկրի դռները լայնորեն բացել օտար ապրանքների, օտար մոնոպոլիստական ընկերությունների առջև Հարվարդի Միջին արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի դիրքեկտոր Ա. Մեյերը իրավացիորեն նշում է, որ «կիրանանը... աշխարհիս բիլ մնացած իսկական laissez-faire կապիտալիզմի միջնաբերդերից է»³, իսկ է. Ասֆուրը զուգահեռ անցկացնելով Միջինարդական քաղաքականության միջն, նշում է, որ «կիրանանը, ի տարրերություն Միջիայի, շի փորձում ստեղծել բարձր մաքսային պատճշ արգյունաբերության նոր ճյուղերի համար»⁴:

Կիրանանի կառավարության այս քաղաքականությունը

¹ Նույն տեղում,

² كمال جنبلاط...، ص ۱۶۳

³ A. Meyer, Middle Eastern capitalism, p. 103.

⁴ E. Asfour, Industrial development in Lebanon, „Middle East Economic Papers”, 1955, p. 3.

իործանարար կերպով է ազգում Արքանանի արդյունաբերության վրա: Երկրի արդյունաբերական ձեռնարկությունները չեն կարողանում դիմադրել ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ճապոնական, արևմտագերմանական ապրանքների մրցակցությանը և ստիպված փակվում են, փողոց շպրտելով ու անգործության դատապարտելով հազարավոր բանվորների թերենք մի քանի փաստեր:

1946 թ. Արքանանի պատրաստի հագուստեղենի ձեռնարկության բանվորների միությունը հանդես եկավ հայտարարությամբ, պահանջելով արգելել պատրաստի հագուստեղենի ներմուծումը, քանի որ նա սպառնում էր Արքանանի ազգային արդյունաբերությանը և մեծ վտանգ ստեղծում գործադրությունը գերծակ բանվորների շրջանում տարածվելու համար¹: Արքանանի արդյունաբերության կարևոր նյուղերից է Կաշվի-Լոշիկեղենի արդյունաբերությունը: Նա նույնպես գտնվում էր ժանր կացության մեջ, «Ժողովուրդի Զայն» թերթը գրում էր, որ «բազմաթիվ մեքենագործ կոշկակարներ, պայտականագործներ և կոշկակար գործավորներ անգործության գատապարտված են, որովհետև կաշեղեն առարկաները առատորեն կներածվին արտասահմանեն, իսկ տեղական կաշիի արդյունաբերության անհրաժեշտ եղող հում նյութերը շատ սուղ են և հաճախ անտանելի»²: Հետաքրքիր է նշել, որ Արքանանի կոշկի արդյունաբերությունը ոչ միայն կարող էր երկրի ներքին պահանջները լիովին բավարարել, այլև չկրնաիր մատավոր դրացի գրեթե բոլոր երկրներուն կոշիկին պահանջներուն գոհացում տալզ, եզ շնայած այդ հանգամանքին կիրանանի կառավարությունը թույլատրում էր, որ երկրի շուկաները ողողին օտարերկրյա կոշկեղենով: Նույնպիսի ժանր վիճակում են գտնվում նաև փայտամշակման, ներկի և արդյունաբերության մյուս ճյուղերը: «Արարատա թերթը հաղորդում էր, որ «շորս լիբանանյան ներկի գործարաններու բանվորները խնդրագիր մը հղած են հանրապետության նախագահին, որում մեջ իր ուշադրությունը կհրամիրեն այն

1 «Ժողովուրդի Զայն», 17 ապրիլի 1946 թ.

2 Նույն տեղում, 1 մայիսի 1946 թ..

3 Նույն տեղում, 6 մարտի 1947 թ..

իրողության վրա, որ օտար ներկերու սանձարձակ մուտքը պատճառ կդառնա, որ իրենք անգործության դատապարտ վիճակ՝ Նրանք պահանջում էին սահմանափակել օտար ներկերի ներմուծումը և բաշալերել ազգային արդյունաբերությունը:

Իմպերիալիստական պետությունները և մոնոպոլիստական ընկերությունները կիրանան էին արտահանում այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը գոյություն ուներ կիրանանում։ Դա պատահականարեն չէր արդում, իմպերիալիստները դրանով փորձում էին խեղդել կիրանանի ազգային արդյունաբերությունը, որպեսզի նա չկարողանար զարգանալ և իրենց մրցակից դառնալ։ Անդրադառնալով այդ հարցին «Ալ-Ախրար»-ը գրում էր. «Իմպերիալիզմը պայքարում է ինդուստրացման դեմ, այսինքն խիստ դեմ է մեր երկրում գործարանների կառուցման, հատկապես այնպիսի գործարանների, որոնք արտադրում են իր երկրում արտադրվող ապրանքներ։ Օրինակ, երբ ֆրանսիական իմպերիալիզմի ազգեցությունն էր ուժեղ, նա դեմ դուրս եկավ պարֆյումներիա, մետաքսեղին և այլ ապրանքներ արտադրող գործարաններին կառուցման, երբ անգլիական իմպերիալիզմի ազգեցությունն ուժեղացավ, նա դիմադրում էր քիմիական պարարտանյութերի, գործվածքեղինի գործարանների կառուցմանը և այլն։ Նույնին է անում նաև ամերիկյան իմպերիալիզմը²: Վերևում բերված օրինակները լրիվ կերպով հաստատում են տրված դնահատականը։ Եվ այդ օրինակները եզակի չեն։ Ամերիկյան իմպերիալիստները կիրանանում կառուցեցին «Կոկա-կոլայի» գործարան, Դրա հետևանքը եղավ այն, որ մրգաշուր արտադրող տեղական գործարանները փակվեցին և մոտ 300 մարդ մնաց անգործ³, 1950 թ. օտարերկրյա մրցության պատճառով «Տրիպոլիս» փակվեց օճառի գործարանը և փողոց նետվեցին մոտ 200 մարդ։ Այդ նույն տարին Բեյրութում փակ-

¹ «Արարատ», 10 ապրիլի 1949 թ.։

² 2.III.1963. «الأخبار»

³ 7.IV.1950. «الشرق»، بيروت»

վեց շոկոլադի գործարանը, քանի որ արտասահմանից ներ-
մուծվող շոկոլադն ավելի էժան էր վաճառվում։

Լիբանանի կառավարության բաց դռներից քաղաքա-
կանությունն առանձնապես ծանր էր անդրադառնում երկրի
ամենազարգացած արդյունաբերական ճյուղի՝ տեքստիլ
արդյունաբերության վրա։ Օտար մրցակցության հետևանքով
անկախությունը ձեռք բերելուց հետո լիբանանում բազմաթիվ
են եղել տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների
փակվելու դեպքերը։ 1947 թ. լիբանանի մետաքսագործները
դիմեցին կառավարությանը պահանջելով միջոցներ ձեռք
առնել մետաքսի արդյունաբերությունը պաշտպանելու հա-
մար²։ 1949 թ. փակվեց «Ալսելլի» տեքստիլ գործարանը, «որ-
տեղ աշխատում էր մոտ 1500 բանվոր»։ Ինչպես հայտարարեց
գործարանատերը, գործարանի փակման և ընդհանրապես լի-
բանանի տեքստիլ արդյունաբերության ճնշաժամի պատճառը
նրանումն է, «որ օտար երկրների ներածվող ճյուսքը շատ
ավելի աժան կծախվի», քան մեր արտադրածը։ լիբանանի
ազգային ճարտարվեստը շկրնար մրցակցին միջազգային
առևտրական սակերուն հետեւ³, նույն պատճառներով 1950 թ.
փակվեց մեկ այլ տեքստիլ ձեռնարկություն՝ «Զարը» և աշ-
խատանքից ազատվեց 800 մարդ⁴։ Տեքստիլ արդյունաբերու-
թյան մեջ ստեղծված ծանր կացությունը ստիպեց ձեռնարկա-
տերներին 1958 թ. դիմել կառավարությանը և զգուշացնել, «որ
իրենք աշխատանքից կազատեն ավելի քան 7 հազար բան-
վորի, եթե կառավարությունը միջոցներ ձեռք շառնի ազգս-
յին արդյունաբերությունը պաշտպանելու համար⁵։

լիբանանի տնտեսական քաղաքականության հարցի շուր-
ջը ուժեղ պայքար է գնում առևտրական-կոմպրադրական
բուրժուազիայի և արդյունաբերական բուրժուազիայի միջև։
Արևտրական բուրժուազիան ձգտում է նախկինի պես լիբա-
նանի դռները լայն բաց անել օտար ապրանքների և կապի-

1. 4.IV.1950 «البلد»، دمشق⁶

2. «Արարատ», 7 մայիսի 1949 թ.։

3. նույն տեղում, 19 մայիսի 1949 թ.։

4. ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 11425, л. 257.

5. 18.7.1958 «النـد»، بيروت⁷

տուալի առջև: Մինչդեռ արդյունաբերական բուրժուազիան, ընդհակառակը, ձգտում է բարձրացնել մաքսերը և նպաստավոր պարմաներ ստեղծել աղքային արդյունաբերության զարգացման համար: «Այդ պատճառով էլ, — նշում է Յուսուֆ Խաթթար Հելուն, — անհասկացողությունն է տիրում աղքային առևտրականների և արդյունաբերողների միջև: Առաջինները միշտ պահանջում են իշեցնել մաքսային տարիֆները, մինչդեռ արդյունաբերողները հակառակն են պահանջում՝ լիբանանյան աղքային արդյունաբերությունը պաշտպանելու համար»¹: Լիբանանի Հյուսիսի արդյունաբերողների ընկերությունը իր նիստերից մեկում՝ 1950 թ. մարտի 17-ին քննարկելով երկրի տնտեսական վիճակը և արդյունաբերության ծանր զրությունը, նշում էր, որ Բեյրութի խոշոր առևտրական ներմուծողները իրնեց անձնական հարստության համար մեջում են գործազրում կառավարության վրա և ազատ թույլատվություն ստանում արտասահմանից ապրանքներ ներմուծելու համար, որը տանում է դեպի աղքային տնտեսության կործանում², 1952 թ. լիբանանի Արդյունաբերողների ընկերությունը կառավարությանը հանձնեց մի զեկուցագիր երկրի տնտեսական վիճակի և արդյունաբերության զարգացման վերաբերյալ: Այդ զեկուցագրում ի թիվս այլ պահանջների լիբանանի արդյունաբերողները պահանջում էին լիբանանի ներածումը կրօնատել առևվազն 50 տոկոսով³:

Լիբանանի կառավարությունը ստիպված էր հաշվի առնել արդյունաբերական բուրժուազիայի ցանկությունը և թեկուզ որոշ շափով բավարարել նրա պահանջները: Նա անշանչափով բարձրացրեց որոշ ապրանքների ներածման մաքսերը: Սակայն դա, հասկանալի է, հարցի լուծումը չէ և չի կարող բավարարել աղքային բուրժուազիային, նվազ օտար մրցակցությունից լիբանանի աղքային արդյունաբերության պաշտպանումը մնում է օրակարգի մեջ որպես հրամայական պահանջ:

Բուրժուազան գրականության մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն լիբանանի աղքային արդյունաբերության

¹ 2.III.1963 «Ալլա»

² ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2 с., ед. хр. 1313, л. 73.

³ «Արարատ», 20 Հունիսի 1952 թ.:

դարձացման և մասնավորապես մաքսային պաշտպանական պատճեն ստեղծելու հարցում։ Հեղինակների մեծ մասը, օրինակ Ցուառի, Ա. Բաղրը և ուրիշներ, գտնում է, որ կրանանի ազգային արդյունաբերությունը զարգացնելու պայմաններից մեկը մաքսային բարձր տարիֆներ հաստատելն ու ներածումները սահմանափակելն է, Ա. Բաղրը իր «Դասախոսություններ կիրանանի տնտեսության մասին» գրքում նշում է, որ երկրի արդյունաբերությունը զարգացնելու համար անհրաժեշտ է «սահմանափակել ներածումը այնպիսի ռազմա ապրանքների, որ կիրանանի արդյունաբերությունը կարող է արտադրել և որակով մրցել դրանց հետ ու լիովին բավարարել տնտեսական կարիքները»¹։

Իսկ Քամալ Զունքլատը ուղղակի նշում է, որ «Laissez-faire, laissez passer»-ի լիբերալ տեսությունը կամ քաղաքականության մեջ բացարձակ ազատությունը, սխալ է կիրանանի համար²։

Սակայն կան նաև հեղինակներ, որոնք պաշտպանում են կիրանանի ներկայիս, տանտեսական լիբերալիզմի քաղաքականությունը, գտնելով, որ նա առավել կերպով է համապատասխանում կիրանանի ընույթին։ Այդ տեսակետը ցայտուն կերպով դրսեռընել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի դասախոս Արթուր Միլլսի «Մասնավոր ձեռներեցությունը կիրանանում» աշխատության մեջ, նա այն կարծիքին է, որ պրոտեկցիան կարող է արդյունաբերություններին օգնել միայն այն դեպքում, եթե նրանք հասկացել են իրենց թուլության պատճառները³։ Նա գտնում է, որ կիրանանի արդյունաբերական բուրժուազիան չի հասկացել, թե որն է իր թուլության պատճառը։ Ա. Միլլսը փաստորեն անտեսում է այն կապը, որ կա կիրանանի արդյունաբերության թույլ զարգացած լինելու և օտար մրցակցության ու ցածր տարիֆների գոյության միջև։ Եղ նա գրում է. «Միգրուցե դա բախտավորություն է, որ

الدكتور البرت بدر، محضرات في الاقتصاد اللبناني،¹

ص ٤٠—٣٩

² كمال جنبلاط... ص ١٦١.

³ A. Mills, Private enterprise in Lebanon, p. 134.

առևտրական շահի քաղաքական ազգեցությունը բավականին ուժեղ է եղել՝ դիմագրավելու բարձր պրոտեկցիա հաստատելու արդյունաբերողների ճնշմանը¹, Ա. Միլլսը փաստորեն պաշտպանում է օտարերկրյա մոնոպոլիաների և կիրանանի կոմպրադորական բուրժուազիայի շահերը:

Կիրանանի արդյունաբերության զարգացմանը մեծապես խանգարում է երկրում գոյություն ունեցող բանկային սիստեմը: Հայտնի է, որ արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ են կապիտալներ: Կապիտալներ կիրանանում կան բավարար չափով և երկիրը որոշ իմաստով դրակարիքը չի դում: Սակայն ամբողջ հարցի էությունը կայանում է նրանում, թե այդ կապիտալները ովքեր են տնօրինում և թե նրանք ուր են հոսում: Ահա այստեղ է, որ երևան է գալիս կիրանանում գոյություն ունեցող բանկային սիստեմի բացասական դերը:

1962 թ. սկզբներին կիրանանում կար մոտ 60 բանկ: Դրանցից միայն 33-ում էր, որ, ըստ պաշտոնական տվյալների, գերակշռում էր աղքային լիրանանյան կապիտալը: Մնացածը օտարերկրյա բանկերի մասնաճյուղերն են: 1966 թ. սկզբներին կիրանանում գործող բանկերի թիվը հասնում է մոտ 130-ի, Բանկային կապիտալը կիրանանում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հատկապես 1948 թ. սկսած մեծ չափերով լայնացրեց իր գործունեության ասպարեզը: Լիրանանում իրենց մասնաճյուղերը բացեցին աշխարհի համարյա բոլոր կարևոր բանկերը: «Էլը կոմմերս դյու լեվանտի» տվյալներով 1962 թ. կիրանանում կար վեց ֆրանսիական, երեք ամերիկյան, երեք անգլիական, հռոմեական, բելգիական, ճապոնական և այլ բանկեր², թեյրութը գարձավ Մերձավոր և Միջին արևելքի խոշոր ֆինանսական կենտրոննը և դրամական շուկան, որտեղ տեղի է ունենում աշխարհի ամեն տեսակի վայլուտայի փոխանակություն: Կառավարությունը բանկային բոլոր գործողությունները դիտում է որպես առևտրական գործողություն և օրենքը ամեն մարդու, անկախ այն բանից լիրանանցի է, թե օտարերկրացի, որպես

1 Նույն տեղում:

2 „Le Commerce du Levant“, 27. juin 1962.

առևտրականի, իրավունք է տալիս կիրանանում հիմնել իր բանկը: Կիրանանում գոյություն չունի օրենք, որ հսկողություն սահմանի բանկային սիստեմի վրա և բանկի տերերից հաշվեավություն պահանջի: Դա նրանց գործունեությանը մեծ ազատություն է տալիս:

Լիրանանում գործող բանկերը, որոնց տիրապետող է օտարենրկրյա կապիտալը, իրենց հսկողությունն են սահմանել կիրանանի տնտեսության, այդ թվում առևտրի, դրամի և շուկայի վրա: Նրանց մեջ ամենակարևորը և ամենաազգեցիկը «Սիրիայի և կիրանանի բանկն» է, որ հիմնվել է 1919 թ.: Նա համարվում է «բանկերի բանկը», դա որոշ իմաստով պետական բանկի ֆունկցիաներ է կատարում և միակ բանկն է, որ էմիսիայի իրավունք ունի: Նրանում տիրապետողը ֆրանսիական կապիտալն է: «Սիրիայի և կիրանանի բանկը» վերահսկում է բազմաթիվ մոնոպոլիստական ընկերությունների գործունեությանը, այդ թվում, Բեյրութի նավահանգստի բնեկրության, գյուղատնտեսական վարկի բանկի, ազգային միության ընկերության (ապահովագրական բնակչություն), երկաթուղային ընկերության, Արևելքի հյուրանոցների ընկերության, «Ռազմիկ օրիսն», «Սիրիակ» և այլ ընկերությունների գործունեությանը¹: Բացի այդ նա գլխավորում է բազմաթիվ ֆրանսիական բանկեր: Նրա գերը շատ մեծ էր մինչև 1950 թ., նա այդ ժամանակ բավարարում էր մասնավոր կապիտալ պահանջների մոտ կեսը, իսկ այժմ՝ միայն 10—15 տոկոսը²: Այդ անկումը պետք է բացատրել նրանով, որ 1950-ից սկսած աճում է օտար բանկերի թիվը: Կիրանանում այժմ գործում են անզիփական՝ «Էստերն բնեկ», «Բրիտիշ բենկ օֆ Սիրի հստ», ամերիկյան՝ «Ֆյունտ նեյշնլ սիտի բենկ», «Բենկ օֆ Ամերիկա», «Չենդ մանհեթֆին բենկ», իտալական՝ «Բանկո դի Ռոմա» և այլ բանկերի մասնաճյուղերը: Այդ, ինչպես նաև այսպես կոչված ազգային լիրանանին բանկերը, որոնք օտարերկրյա կապիտալը դարձյալ տիրապետող դիրք է գրավում, իրենց ձեռքում են կենտրոնաց-

¹ Аль-Хилю..., стр. 67.

² Talha Yaffi, A case for central banking reform in Lebanon, «Middle East Economic Papers», 1958, p. 104.

բել ողջ կապիտալը և ֆինանսավորում են հիմնականում առևտրական գործառնությունը, դիտավորյալ կերպով անտեսելով արդյունաբերության ֆինանսավորումը: «Օտարերկրյա բանկերի գործունեությունը կիրանանում, — գրում է ալ-Հելուն, — ուղղված է այն բանին, որպեսզի արգելակի ազգային արտադրության զարգացումը և օտարերկրյա մոնոպոլիաների իշխանությունը տարածի երկրի բոլոր կարևոր ճյուղերի վրա»¹: Լիրանանում գործող բանկերի կողմից տրվող վարկերի ժամկետը 3—6 ամիս է, ամենաշատը մեկ տարի: Հասկանալի է, որ այդ ժամկետը նպաստավոր ու ձեռնտու է միայն առևտրական ընկերություններին և այդ վարկերից օգտվում է առևտրական բուրժուազիան: Իսկ արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ են երկարատև, երկարաժամկետ վարկեր: Զենքարկատերերը չեն կարող վերցրած վարկը վերադարձնել 3—6 ամսում: Այդ ժամկետը միանդամայն անբավարար է նրանց համար: Եվ առաջվում է յուրօրինակ վիճակ: Երկրում կան կապիտալներ և սակայն արդյունաբերության համար չկան կապիտալներ: Բանկերը, որպեսզի խեղդին լիրանանյան ազգային արդյունաբերությունը, նրանց չեն վարկավորում: «Ալ-Ախրար» թերթը «Արդյունաբերությունը վտանգի տակ է, փրկեցեք նրանց հոգիածում, նշելով, որ լիրանանի արդյունաբերությունը կանգնած է մեծ դժվարությունների առջև, իրավացիորեն գտնում է, որ դրանք չեն առաջացել դուրսների և այլ դրամների պակասից: Թերթը «Սիրիայի և լիրանանի բանկի» հիման վրա հետաքրքիր հաշվումներ է կատարում: Նա նշում է, որ այդ բանկում լիրանանցիների ավանդները անցնում են 450 մլն. լիրանանյան լիրայից, որը բավարար է ծածկելու տնտեսության բացը և ապահովել արդյունաբերության կարիքները: «Մակայն այս ավանդները տնօրինում է օտար բանկը ու նրանց միջոցով տիրապետում է մեր առևտրական շուկային և իշխում մեր էկոնոմիկայի վրա, մերք դարձնում ազգային արդյունաբերությանը և արդյունաբերողներին վար-

1 Аль-Хилю... стр. 66.

կեր շի տալիս, որպեսզի պատեցնեն իրենց արդյունաբերության անիվները¹:

Լիբանանի արդյունաբերությունը կարիք է զգում երկարաժամկետ վարկերի: Լիբանանի արդյունաբերողները պահանջում են կառավարությունից ստեղծել մի բանկ, որ Պատուի զբաղվեր երկրի արդյունաբերության, ինչպես նաև գույղատնտեսության ֆինանսավորմամբ: Հաշվի առնելով այդ պահանջը և զիջելով դեմոկրատական ուժերի ճնշմանը, կառավարությունը 1955 թ. հռնկարին հիմնեց Արդյունաբերական, գյուղատնտեսական և հիպոթեքային բանկ, որի կապիտալը կազմում է 5 մլն. լիբ. լիբա: Դրանցից 2 մլն. լիբ. լիբան տվեց կառավարությունը, իսկ 3 միլիոնը՝ մասնավոր ներդրումներ են², իսկ մինչ այդ, 1954 թ. հռնկարին լիբանանի կառավարությունն ընդունեց օրենք նոր հիմնվող արդյունաբերական ձեռնարկությունները և ընկերությունները 6 տարի ժամանակով ազատել եկամտահարկից: Օրենքը տարածվում էր այն ձեռնարկությունների վրա, որոնք կստեղծվեին օրենքը հրատարակելուց հետո 5 տարվա ընթացքում, որոնց կապիտալը կազմում էր ոչ պակաս քան 1 միլիոն լիբ. լիբա և տարեկան տալիս են առնվազն 100000 լիբ. լիբա աշխատավարձ լիբանանցի բանվորներին և ծառայողներին: Օրենքում կար նաև մեկ այլ կետ. նա տարածվում էր այն ձեռնարկությունների և ընկերությունների վրա, որոնց շնորհատակն էր նոր ծրագրի ստեղծումը և իրագործումը՝ տարեր նրանցից, որոնք այժմ կան, և որոնք ի վիճակի են ավելացնել ազգային արտադրությունը և զարգացնել երկրի տնտեսությունը³:

Այս բոլոր միջոցառումները, անշուշտ, առաջադիմական բնույթ ունեն, որոնք որոշ չափով բարենպաստ պայմաններ են ստեղծում ազգային արդյունաբերության զարգացման համար: Սակայն մյուս կողմից դժվար չէ տեսնել այդ միջո-

¹ 16.III.1958 «بار خلا»

² „UN. Economic development in the Middle East 1945 to 1954”, New York, 1955, p. 177.

³ Նոյն տեղում:

ցառումների սահմանափակ բնույթը, որ նրանք ի վիճակի շնչ արմատականորեն բաւծել արդյունաբերության զարգացման խնդիրները: Ինչպես նշեցինք, արդյունաբերական, գրուղատնտեսական և հիպոթեքային բանկի կապիտալը կազմում էր 5 մլն. լիր. Ինչու Դա փոքր գումար է և բանկն ի վիճակի շէ բավարարել գյուղատնտեսպետական ու արդյունաբերության պահանջները: Նրա հիմնվելուց հետո անցած ժամանակաշրջանը ցույց է տալիս, որ նրա խաղացած դերը սահմանափակ է և ազգային արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը առաջվա պես վարկավորման կարիք են զգում:

Խոշ վերաբերում է 1954 թ. օրենքին, ապա նա նույնպես սահմանափակ բնույթ ունի: Նա տարածվում է այն ձեռնարկությունների վրա, որոնք պետք է ունենան գոնե 1 մլն. կոմպիտալ: Այդ թիվը կիրանանի համար փոքր թիվ շէ և նոր ստեղծվող շատ ձեռնարկություններ այդ չափի կապիտալ չունեին և հետևաբար շէին օգտվում 1954 թ. օրենքով արշած արտոնություններից:

Բայց այդ օրենքը կյանքում հետևողականորեն չկիրառվեց: Ինչպես նշվեց, այդ օրենքը տարածվում էր այն ձեռնարկությունների վրա, որոնք պետք է արդյունաբերական նոր ճյուղ հանդիսանային և լմրցեին որյություն ունեցող ֆիրմաների հետ: Մինչև 1958 թ. այդ օրենքը տարածվել էր 16 ընկերությունների վրա, այդ թվում 3 հիպոթեքային ընկերությունների, Թեյրութի 1 հյուրանոցի, 1 ավիասպասարկող ընկերության, 1 նավթի բաժանման ընկերության, 1 էլեկտրական ընկերության և 1 շաքարի գործարանի վրա¹: Սրանցից և ոչ մեկը նորություն չէր հանդիսանում կիրանանի համար: Եվ շաքարի գործարան, և հյուրանոց և այլն, բոլորն էլ մինչ այդ գոյություն ունեին և փաստողներ նրանք հանդես են գալիս որպես գոյություն ունեցող ձեռնարկությունների և ընկերությունների մրցակիցներ: Ուստի կարելի է ասել, որ կիրանանի կառավարությունը խախտում է իր իսկ հրատարակած օրենքի երկու կարևոր պայմանները՝ նորությունն և մրցակցության բացակայություն: Դա, անշուշտ, կատարվում

¹ A. Mills, Private enterprise in Lebanon, p. 125-126.

է քաղաքական ու տնտեսական շարժառիթներով։ Այդ իմաստով միանգամայն իրավացի է Ա. Միլլսը, նշելով, որ օրենքի տարածումը և արտօնության շնորհումը կատարվում է քաղաքական ֆավորիտիզմի սկզբունքով¹։

Լիբանանի տնտեսության մյուս կարևոր ճյուղը գյուղատնտեսությունն է։ Ծիշտ է, զյուղատնտեսությունից ստացվող աղբային եկամտի բաժինը փոքր է՝ 1957 թ. այն կազմել է 15,8%, 1958 թ.՝ 16,5%, իսկ 1960 թ.՝ 18,4%², սակայն նըրանում զրագլած է ընակության մոտ կեսը և նա է հանդիսանում նրա ապրուստի հայթայթման միակ աղբյուրը։ Ուստի իրավացի է ալ-Բադրը, երբ նա նշում է, որ գյուղատնտեսական սեկտորը լիբանանում ունի ավելի մեծ նշանակություն, քան ցույց են տալիս ազգային եկամտի թվերը³։

Լիբանանի տարածությունը կազմում է մոտ 1 մլն. 17 հազ. հեկտար, Դրանցից մշակվում է ընդամենը 280 հազ. հեկտար, որից միայն 48 հազ. հեկտարն է ոռոգվող⁴, Ավելի քան 575 հազ. հեկտար ժայռոտ հողեր են, 75 հազ. հեկտար անտառներ և այլն։ Ինչպես տեսնում ենք, լիբանանի հողային տարածությունները սահմանափակ են։ Սակայն դա չի նշանակում, որ մշակելի տարածությունները լի կարելի ավելացնել, Ալ-Բադրը գոյնում է, որ գոյություն ունեցող տեխնիկայի պայմաններում մշակելի տարածությունները կարելի է ավելացնել մինչև 390 հազ. հեկտարի⁵, իսկ որոշ հաշվումներով նույնիսկ 500 հազ. հեկտարի, այդ թվում ոռոգվող հողերի տարածությունը՝ մինչև 73 հազար հեկտարի, Դա մեծ շափով կրարելավեր երկրի տնտեսական վիճակը, որովհետև լիբանանի գյուղատնտեսությունը միայն 1/3-ով է ապահո-

¹ A. Mills... p. 125.

² „UN. Economic developments in the Middle East 1959-1961”, p. 8.

³ الدكتور البرت بدر،.. من ١٦.

⁴ «Современный Ливан», стр. 35.

⁵ الدكتور البرت بدر... من ١٧

վում բնակչության պահանջները։ Մինչդեռ մշակելի տարածությունների ընդարձակումը հնարավորություն կտար բազարել բնակչության պահանջները և հոմքային ուժեղ ու հուսալի բազա ստեղծել ազգային արդյունաբերության համար։

Լիբանանում հողը հիմնականում կենտրոնացված է խոշոր և որոշ շափով միջակ հողատերերի ձեռքում։ Խնձուս նշվեց, լիբանանի մշակելի տարածությունը կազմում է մոտ 280 հազ. հեկտար։ Դրանից 135 հազար հեկտար կամ ամբողջ մշակելի տարածության մոտ կեսը պատկանում է 300 կալվածատերերի¹։ Խոշոր կալվածատերի դերում է հանդես գալիս հոգևորականությունը՝ թե քրիստոնյա և թե մահմեդական։

Հողային հսկայական տարածություններ են պատկանում կեռնալին լիբանանի Ալ-Կաթար և Միաադ վանքերին, Հյուսիսային լիբանանի Ֆազախիյա վանքին և այլն։ Թեսրվանի շրջանի հողերի մոտ 75%-ը նույնպես գտնվում է հոգևորականության ձեռքում², Վանքերի և եկեղեցիների ձեռքում կենտրոնացված է մշակելի տարածության մեկ քառորդը, Այսպիսով, լիբանանի խոշոր կալվածատերերի և հոգևորականության ձեռքում է կենտրոնացված երկրի մշակելի տարածության ավելի քան 75%-ը³. Սա մի պատկառելի թիվ է, որը միանգամայն հերթում է Փ. Բոյյո-Գարնիեի այն սխալ տեսակետը, թե «...ֆեոդալ գոմենները, որոնք գտնվում են Սիրիայում և Իրաքում, այստեղ (լիբանանում—Ն. Հ.) գոյություն լուսնենք»⁴.

Հողային տարածության այսպիսի խոշոր կենտրոնացման կողքին մենք տեսնում ենք նաև մանր հողատերերի առկայությունը, լիբանանի գյուղատնտեսության մինհարության տվյալներով 1949 թ. 85172 հողատերերից 84111-ի հո-

1 «Аграрный вопрос и национально-освободительное движение», М., 1963, стр. 129.

2 В. Е м е л ь я н о в, Арендные отношения в современном Ливане, «Ученые записки института народов Азии АН СССР», М., 1960, т. XXII, стр. 15.

3 «Аграрный вопрос и национально-освободительное движение», стр. 128.

4 J. Beaujeu-Garnie, L'Economie du Moyen-Orient, Paris, 1951, p. 78.

ղակտորները ընդամենը կես հեկտարից մինչև հինգ հեկտար էին կազմում: Բեն, ինչպես նշում է ալ-Հելում, 1949 թ. հետո Լիբանանի գյուղատնտեսության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, սակայն հողային սեփականության այս ընդհանուր պատկերը հիմնականում մնում է նույնը:

Լիբանանում շափազանց մեծ թիվ են կազմում հողազուրկ գյուղացիները: Մոտ 600 հազար գյուղացի կամ երկրի գյուղական բնակչության 75%-ը բոլորովին զորկ է հողից¹: Դյուղացիական հիմնական մասսայի հողազրկումը և հողային տարածությունների մեծ մասի կենտրոնացումը խոշոր ֆեռդալ-կալվածատերների ձեռքում արդյունք էր մի կողմից այն բանի, որ ֆեոդալները տարիներ շարունակ բռնի խլում էին դյուղացուց իր հողակտորը, իսկ մյուս կողմից յուրացնուամ պետական ու համայնքային հողերը:

Լիբանանի գյուղատնտեսության մեջ գեռմա ուժեղ են ֆեոդալական հարաբերությունները, հատկապես թեքաայի, Ակկարի շրջաններում և Հարավային Լիբանանում: Սակայն Լիբանանի գյուղատնտեսության մեջ զարգանում են, մասնավորապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, նաև կապիտալիստական արտադրական հարաբերությունները: Այդ հարաբերություններն առանձնապես զարգացել են այն տնտեսություններում, որոնք զբաղված են այգեգործությամբ և բանջարեղենի արտադրությամբ, և համեմատաբար մոտ են գտնվում քաղաքներին: Եվ եթե բնութագրելու լինենք ժամանակակից լիբանանի գյուղատնտեսության մեջ տիրապետող արտադրական հարաբերությունները, ապա այն պետք է բնութագրել որպես կիսաֆեոդալական, կիսակապիտալիստական, Ֆեոդալական ու կապիտալիստական հարաբերությունները միահյուսվել են և դրա արտահայտությունն է մի կողմից վարձակալման սիստեմի կիրառումը և նատուրալ ռենտայի առկայությունը, իսկ մյուս կողմից վարձու աշխատանքի կիրառումը (1960 թ. լիբանանում կար մոտ 40 հազ. գյուղատնտեսական բանվոր), դրամական ռենտայի:

¹ Аль-Хилю..., стр. 28.

² «Современный Ливан», стр. 29—30.

առկայությունը, կապիտալ ներդրումները, գյուղատնտեսական մեքենաների օգտագործումը և այլն:

Կալվածատեր-ֆեոդալները հողը սովորաբար տալիս են վարձակալման Կալվածատերը ինքը իր կյանքի մեծ մասը անց է կացնում քաղաքներում։ Այդ պատճառով էլ, ինչպիս նշում է ֆրանսիացի տնտեսագետ Ժակ Վելերոց կրանանում ուղղված մշակում է հողը, այն նրան չի պատկանում, իսկ ում պատկանում է հողը, նա այն չի մշակում։ Վարձակալման շափերը, այսինքն, ինչքան է կազմում գյուղացու բաժինը բերքից, ինչպիս իրավացիորեն նշում է լիբանանցի տնտեսագետ U. Սավայան, կախված է ֆեոդալական հարաբերությունների տիրապետության աստիճանից և գյուղացիական շարժումների թափից, սակայն բոլոր գեղքերում գյուղատնտեսական հարաբերությունների տիրապետող ձևը հանդիսանում է ֆեոդալական շահագործումը²:

Վարձակալման տրվող հողակտորները չեն անցնում 5 հա-ից և սովորաբար դրանք 1—2 հա են լինում։ Վարձակալող գյուղացու բաժինը կազմում է 25—50%։ Այն գեղքում, երբ գյուղացին տրամադրում է միայն իր և իր ընտանիքի անդամների աշխատություն, իսկ կալվածատերը հողը, սերմացուն, քաշող ուժը և գյուղատնտեսական ինվենտարը, ազան ստանում է բերքի $\frac{1}{4}$ -ը, իսկ կալվածատերը $\frac{3}{4}$ -ը։ Վարձակալման այդ սիստեմը կոչվում է մուրաբաա՝ քառորդային³։

Վարձակալման մյուս սիստեմը կոչվում է՝ մունասաֆա, այսինքն կիսրաբար Այս գեղքում գյուղացին ստանում է բերքի կեսը։ Մունասաֆայի համար անհրաժեշտ է, որ կալվածատերը տա հողը, սերմացուի կեսը և հողային հարկի կեսը։ Իսկ գյուղացին տալիս է իր և իր ընտանիքի բանվորական ուժը՝ քա-

¹ Ж. Велерс, Крестьяне Сирии и Ливана, сокращ. пер. с французского, М., 1952, стр. 146.

² «Аграрный вопрос и национально-освободительное движение», стр. 130.

³ Ж. Велерс... стр. 148.

շող անասունը, սերմացուի կեսը և հողային հարկի կեսը¹ ։ Մունասաֆան հատկապես կիրառվում է կեռնային կիրանանում, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաների մշակման շրջաններում։

Կիրանանում կիրառվում է նաև վարձակալման մի այլ սխառամ՝ մուգարասա, որը բառացի նշանակում է ժառանիկում։ Մուգարասայի էությունը կայանում է հետևյալում։ Կալվածատերը գրուղացուն է տալիս մերկ հողը պատղատու ծառերի և ալզիների տնկման համար։ Առաջին բերքը ստանուրուց հետո այդ հողատարածությունը հավասար շափով կիսվում է կալվածատիրոջ և գյուղացու միջև։ Հստ որում նրանցից յուրաքանչյուրը դառնում է իր հողակտորի սեփականատեր²։ Առաջին հայացքից թվում է, թե դա գյուղացու համար ձևանառ գործարք է։ Այդ կարծիքին է հենց ինքը՝ Ժակ Վելիրուր Սակայն դա այդպես չէ։ Եվ ահա թե ինչու ինչպես նշեցինք, կալվածատերը վարձակալին է տալիս միայն մերկ հողը, իսկ ծառատնկումը կատարում է ինքը՝ գյուղացին։ Սակայն ամեն մի ծառի տնկումը և աճեցումը բավականին թանկ է նստում գյուղացու վրա։ Օրինակ, բանանի մեկ ծառի աճեցումը պահանջում է 6 լիրանանյան լիրա։ Սառատնկման համար անհրաժեշտ գումարը գտնելու համար վարձակալը հարկադրված է վաշխառուից պարտք վերցնել, որը և գյուղացուն կապալային կախման մեջ է գցում նրանից։ Պաղատու այդիներից բերք ստանալու համար պահանջվում է մի քանի տարի, օրինակ, թթենու համար 3—5 տարի, խաղողի համար՝ 4—6 տարի, ձիթենու համար՝ 10—12 տարի և այլն։ Ուրեմն այդ ամրող տարիների ընթացքում վարձակալը ոչ մի նկատուած չի ստանում, մինչդեռ և՛ ինքը և՛ իր ընտանիքը այդ տարիներին պետք է ապրուատի միջոցներ գտնեն, Ուստի գյուղացին ստիպված է դիմել վաշխառուին, որը շատ հաճախ հենց նույն ինքը կալվածատերն է լինում։ Գյուղացին խրվում է պարտքերի մեջ և վերջ ի վերջո այդ պարտքերից ազատվե-

1 В. Е м е л յ а н о в, Арендные отношения в современном Ливане, стр. 20.

2 Ж. В е л е р с . . . стр. 155.

3 В. Е м е л յ а н о в, Арендные отношения... стр. 22.

լու համար նա շատ հաճախ իր հողակտորը զիջում է կալվածատիրոջը կամ վաճառում վաշխառուին:

Թացի այդ, ծառատնկումից հետո կալվածատիրոջը մնացած հողակտորի կեսը ավելի թանկ արժեք, քան նախկին ամբողջ հողակտորը մինչ ծառատնկումը և բերքի ստացումը: Խնձուս տեսնում ենք, մուգարասայի պայմանները ձեռնուուն կալվածատիրոջը և եթե գյուղացին դիմում է վարձակալման այդ սիստեմին, ապա դա պետք է բացատրել նրանով, որ նախ, գյուղացին այլ ելք չունի, և, երկրորդ, նա հույս ունի, թե երրեցիցն իրեն կհաջողվի իր հողակտորը ձեռք բերել և դառնալ նրա սեփականատերը:

Ընդհանրապես վաշխառումները կործանարար ազդեցություն են ունենում գյուղացու տնտեսության վրա: Հայտնի է, որ խալամն արգելում է տոկոսներով փոխատվությունը: Սակայն, ինչպես նշում է Ժ. Վելերը, այդ օրինքը Մերձավոր արևելքում, այդ թվում նաև Լիբանանում հեշտությամբ շրջանցում են: Դա կատարվում է հետևյալ կերպ: Երբ գյուղացին վաշխառուց պարտք է վերցնում, նա նշում է, որ ինքը պարտք է 100, այն դեպքում, երբ ինքը վերցրել է ասենք միայն 60 կամ 70 լիբրա¹: Ընդհանրապես պարտքը տրվում է շատ բարձր տոկոսներով, 40-ից մինչև 100%:

Հարկ է նաև նշել, որ վարձակալման պայմանների համար ոչ մի գրավոր օրենք գոյություն չունի: Լիբանանի գյուղատնտեսության նախկին մինիստր Զ. Հաքիմը նշում է, որ վարձակալման ամբողջ սիստեմը հիմնված է սովորությունների վրա և նրա ժամկետը սովորաբար մեկ տարի է, որից հետո նա նորոգվում է²:

Լիբանանում տակավին պահպանվել են մի շարք ֆեոդալական պարհակներ: Թեև տասանորդը պաշտոնապես վերացվել է, սակայն մի շարք շրջաններում, ինչպես Ակկորի շրջանում, այն հավաքում են: Ըստ որում տասանորդի շափը այստեղ հասնում է 12%-ի: Մի շարք շրջաններում գյուղացին անհատույց մշակում է կալվածատիրոջ սեփական տնտեսու-

¹ Ж. Велер с ... стр. 139.

² G. Hakim Land tenure reform, „Middle East Economic Papers”, 1954, p. 83.

թյան մեջ մտնող հողերը: Գյուղացին խոտի դեղի բաժանման համար ֆեռգալին որպես նվեր մատուցում է 4—10 հազի Հուտ, 4—5 պարկ ցորեն: Գյուղացին պարտավոր է զանազան նվիրատվություններ կատարել ֆեռգալին տոների և Հանդիսությունների ժամանակ: Բացի այդ կալվածատերը իրեն է զերցնում Հնձած խոտի $\frac{1}{4}$ -ը և այլն¹:

Լիբանանի գյուղատնտեսության մեջ մշակում են ցորեն, գարի, ծխախոտ, ցիտրուններ, ձիթենի և այլն:

	1948—53 թթ.	1957—58 թթ.	1960—61 թթ.
Ցորեն արտադրվել է	70 հազ. տ.	70 հազ. տ.	54 հազ. տ.
Դարի	20 հազ. տ.	21 հազ. տ.	12 հազ. տ.
Սխախոտ	2 հազ. տ.	3 հազ. տ.	4 հազ. տ.
Խաղող	21 հազ. տ.	22 հազ. տ.	23 հազ. տ.

Սակայն Լիբանանի հողագործության հիմնական ճյուղը ցիտրունների մշակույթն է, 1960 թ. ցիտրունների արտադրությունը կազմեց գյուղատնտեսության համախառն արտադրանքի 11%-ը, մինչդեռ խնձորի բերքը կազմում էր 8, խաղողինը՝ 7, իսկ հացահատիկային կուլտուրաններինը՝ 6%-ը²: Ցիտրունային կուլտուրաններից Լիբանանում աճեցվում են նարինչ, կիտրոն, մանդարին և գրեյպֆրուտ: 1961 թ. ցիտրունների բերքը կազմեց 180 հազ. տոննա³:

Լիբանանի գյուղատնտեսության ամենահետամնաց ճյուղը անասնապահությունն է, որը վի բավարարում բնակչության պահանջները: 1960 թ. երկրում կար 70 հազ. խոշոր հղություրավոր անասուն, 75 հազ. ոչխար և 500 հազ. այծ⁴: Ժողովրդի պահանջները բավարարելու համար Լիբանանը ստիպված ներմուծում է մեծ քանակությամբ միս և կաթնամթերքներ:

1 «Аграрный вопрос и национально-освободительное движение», стр. 131—132.

2 „UN. Economic developments in the Middle East 1959-1961”, р. 100, 103.

3 «Современный Ливан», стр. 37.

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ 46:

Երկրի գյուղատնտեսությունը թույլ է զարգացած նաև մեքենայացման և արհեստական պարարտանյութերի օգտագործման տեսանկյունով։ Գյուղատնտեսական գործիքների մեծ մասը հին պատճենական գործիքներն են։ Ամբողջ Լիբանանի գյուղատնտեսության մեջ 1959 թ. ընդամենը 540 տրակտոր կար¹։

Այս բոլորը խոսում է այն մասին, որ Լիբանանի գյուղատնտեսության առջև լուրջ խնդիրներ են կանգնած և լիբանանի կառավարությունը շատ մեծ անելիքներ ունի այդ ուղղությամբ։ Լիբանանի կառավարությունը բազմիցս նշել է, որ գյուղատնտեսության զարգացումը նա համարում է իր կարևորագույն խնդիրներից մեկը։ Այսպես, Ռիազ Սոլհը իր կառավարական հայտարարության մեջ 1948 թ. նշում էր, որ ռկառավարությունը աշխատելու է ձեռք առնել այն բոլոր միջոցառումները, որոնք կբարձրացնեն գյուղատնտեսության արտադրանքը, ինչպես մշակելի հողատարածությունների ընդարձակումը, գյուղատնտեսական մեքենաների մատակարարումը, ոռոգման միջոցների ամրապնդումը²։ Սակայն Լիբանանի կառավարությունը հետևողական չէ իր իսկ առաջ քաշոծ խնդիրների կիսագործման մեջ։ Դրա ապացույցն է հանդիսանում այն փաստը, որ 11 տարվա ընթացքում՝ 1949—1960 թթ. մշակելի հողատարածություններն ընդարձակվել են ընդամենը 68 հազար համ, Կամ վերցնենք այնպիսի մի հարց, ինչպես գյուղատնտեսության ֆինանսավորման, հողագործներին փոխատվություն տալու հարցն է։ Այս հարցում մեծ դեր ունի կատարելու Լիբանանի գյուղատնտեսական, արդյունաբերական և հիմնադրման վարկի բանկը։ Այդ բանկը իր հիմնադրման օրից՝ 1955 թ. թիվ փոխատվություններ շի տվել 1955 թվականից մինչև 1960 թվականը բանկը տվել է 5388 փոխատվություն 41,4 մլն. լիր. լիրա գումարով³։ Սակայն արդյոք դրանից օգտվել են մանր ու

¹ „UN. Economic developments in the Middle East 1959-1961“ p. 105.

² «لبنان في عهد الاستقلال»، ص ۱۴.

³ «Современный Ливан», стр. 35.

⁴ Նոյն տեղում, էջ 36.

միջակ հողատերերը, գյուղացիական մասսաները: Ա. Սավայան նշում է, որ այդ բանի ովարկերը գյուղատնտեսության բնագավառում բացառապես նախատեսվում են ֆեռդալ հողատերերի, խոշոր հողային սեփականատերերի և նրանց համար, ովքեր օգտվում են իշխանության գլուխ կանգնած մարդկանց հովանավորությունից¹: Բանելը վարկ է տալիս այն պայմանով, որ այն օգտագործվի գյուղատնտեսության մեջ: Սակայն ֆեռդալ հողատերերը ստանալով այդ վարկը՝ այն դյուդատնտեսության մեջ չեն օգտագործում, այլ իրենց հերթին վարկ են տալիս մանր ու միջակ հողատերերին, որի դիմաց ստանում են բարձր տոկոսներ:

Բացասական դեր են խաղում նաև կիրանանում գտնվող բաղմաթիվ բանկերը՝ թե օտարերկրյա և թե խառը, նրանք գյուղացիներին վարկ են տալիս բարձր տոկոսով՝ 24—36%: Գյուղացին չի կարողանում այդ պարտքի տակից դուրս գալ և վերջ ի վերջո ստիպված իր հողակտորը զիշում է բանկին: Բանելը մասնակցում են հողային սպեცիալիզացիաներին և նրանք արդեն ձեռք են բերել հակայական քանակությամբ հողային տարածություններ, որոնք նրանց համար հանդիսանում են շահույթների լրացուցիչ աղբյուրներ: Կիրանանի կառավարությունը մշակել է մի շարք նախագծեր, այդ թվում նաև գյուղատնտեսության բնագավառում: Այսպես, կիրանին ծրագրի իրագործումից հետո նախատեսվում է, որ ոռոգելի հողերը կավելանան 26000 հա²: Կամ կիրանանի զարգացման հնգամյա պլանով (1962—1966) նախատեսվում է տնտեսության մեջ ներդնել 450 մլն. լիր. լիրա, որից գյուղատնտեսության մեջ՝ 64 մլն., կամ ամրագլ ներդրումների 14,2%—ը², Այս բոլորը լավ է, անշուշտ, սակայն, անբավարար է: Նախ դրանք մեծ միջոցառումներ չեն: Երկրորդ, կիրանանի կառավարությունը չի նախատեսնում որևէ միջոցառում, որ շոշափի գոյություն ունեցող ազարային հարաբերությունները:

¹ «Аграрный вопрос и национально-освободительное движение», стр. 133.

² «UN. Economic developments in the Middle East 1959-1961», p. 21.

³ Նոյեմբեր, էջ 17.

Այլ կերպ ասած նա չի դնում ագրարային ռեֆորմի հարցը, որը վերջնականապես արմատախիլ աներ ֆեոդալիզմը երկրի ներսում, բռնագրավեր ֆեոդալ-կալվածատերերից նրանց հողերը և բաժաներ հողագուրկ գյուղացիներին։ Այդ պահանջն են առաջ թաշում կիրանանի գեմոկրատական ուժերը։ Ազդարային ռեֆորմի կիրառման համար է պայքարում կիրանանի կոմունիստական կուսակցությունը, որի պահանջներն այդ բնագավառում հանգում են հետեւալին։ Ֆեոդալիզմի մնացուկների վերացումը և ֆեոդալների, խոշոր հողատերերի ու վանքապատկան հողերի անհատույց բաժանումը հողագուրկ գյուղացիներին, դյուղատնաեսական բանվորներին, ինչպես նաև փոքր հողակտոր ունեցող դյուղացիներին։ Խույն կերպ նրանց հանձնել պետական հողերը, լուժել հողերի ոսողման պրոբլեմը, գյուղացիներին ապահովել սերմացուով, քիմիական պարարտանյութով, դյուղում հաստատել գեմոկրատական ազատություններ՝, թացի դրանից կիրանանի կոմունիստական կուսակցությունը պայքարում է ընթացիկ պահանջների բավարարման համար, ինչպես վարձակալ գյուղացու բաժնի ավելացում, վարկը առաջին հերթին տալ մանր ու միջակ գյուղացիներին և դրա դիմաց վերցնել ոչ ավել քան 3%, տասանորդի վերջնական վերացում, գյուղերն ապահովել ջրով, կառուցել դպրոցներ, ճանապարհներ, հիմնել ձրի հիվանդանոցներ, ապահովել արտաքին շուկաներ, արգելել օտարերկրյա բանկերին (ամերիկյան, ֆրանսիական, անգլիական) զրադարձել հողային սպեկուլյացիայով և այլն։

Սակայն ազգարային ռեֆորմի պահանջը դեմ է առնում ֆեոդալների, կոմպրագորական բուրժուազիայի, որոնց ձեռքում է գտնվում իշխանությունը, և օտարերկրյա մոնոպոլիաների դիմադրությանը, որոնք շահագրգուված են գոյութքուն ունեցող ազգարային հարաբերությունների պահպանման մեջ։

Ուստի պայքարը ազգարային ռեֆորմի անցկացման համար, պայքար է հանուն կիրանանի տնտեսական վերածննդի

1 «Аграрный вопрос и национально-освободительное движение», стр. 139—140.

2 Նույն աեղում, էջ 140—141.

և զեմովը կրատական իշխանության հաստատման համար։ Այդ պայքարը միանյուավում է հակաիմպերիալիստական պայքարի հետ, օտարերկրյա կապիտալի և մոնոպոլիաների աղդեցությունը կիրանանում վիրացնելու պայքարի հետ։

Լիբանանի տնտեսության մեջ մեծ դեր է խաղում առևտուրը։ Նրա այդ դերը մեծ է ոչ միայն այն իմաստով, որ նա տալիս է ազգային եկամտի 35%-ը, այսինքն որքան որ տալիս են արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը միասին վերցրած, այլ նաև նրանով, որ արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացումը կախված է արտաքին առևտուրից։

Լիբանանի առևտուրն առանձնապես սկսեց զարգանալ մանդատի վերացումից հետո։ Մանդատի գոյության ժամանակ լիբանանի առևտուրը ամբողջովին կախված էր Ֆրանսիայից։ Անկախություն ձեռք բերելուց հետո լիբանանի կառավարությունը ձգուում է ամեն կերպ ազատվել միակողմանի կողմնորոշումից դեպի Ֆրանսիան և ընդլայնել առևտուրական կապերը։ Այդ քաղաքականության շնորհիվ լիբանանն այժմ առևտուրական կապեր ունի 80 երկրների հետ։ Դրա արդյունքը եղավ այն, որ խիստ նվազեց Ֆրանսիայի տեսակարար կշիռը լիբանանի առևտուրի մեջ։ Եթե գետ 1950 թ. Ֆրանսիայի տեսակարար կշիռը լիբանանի ներածումների մեջ կազմում էր 20%, ապա 1960 թ. նա իշխավ մինչև 7,4%-ի¹, Սակայն դրա փոխարքն բարձրացավ մյուս իմպերիալիստական պետությունների՝ Անգլիայի, Արևմտյան Գերմանիայի, Շապոնիայի և Հատկապես ԱՄՆ-ի տեսակարար կշիռը։ Դրան մեծապես նպաստում է նաև լիբանանի կառավարության արատավոր «բաց դռների» քաղաքականությունը, որը լայն հնարավորություններ է տալիս օտարերկրյա մոնոպոլիաներին ազատ գործունեություն ծավալել և լիբանանի շուկան ողողել իրենց ապրանքներով։

Լիբանանի ներածումների 1/3-ը բաղկացած է սննդա-

¹ «Современный Ливан», стр. 72.

մթերքներից՝ ցորեն (ներմուծում է ԱՄՆ-ից և Սիրիայից), ալյուր, միս և կաթնամթերքներ, բրինձ, շաքար և այլն: Բացի այդ նա ներմուծում է երկարի գլանվածք, ավտոմեքենաներ, գործվածքներ (ԱՄՆ-ից, Շապոնիայից), կաշվի հումք, ըիմիական նյութեր, մեքենաներ և սարքավորումներ¹: Լիբանանի ներածումների կարևոր հատվածն է կազմում սուկու ներածումը: 1952 թ. ներածվել է 11 տոննա սուկի², 1959 թ. 37 տոննա, իսկ 1961 թ. 71 տոննա, որը կազմում է 136,9 մլն. լիր: Ոսկին ներածվում է հիմնականում Անգլիայից, իսկ ինչ վերաբերում է արտահանումին, ապա Լիբանանը հիմնականում արտահանում է գյուղատնտեսական մթերքներ՝ մրգեր, գինավորապես ցիտրուսներ և խնձոր, բանջարեղեն, բուսական յուղեր, ծխախոտ, ինչպես նաև բամբակի թել, ցեմենտ, բուրդ, կաշի և կաշվեղեններ: Լիբանանի արտածումների մեջ գյուղատնտեսական մթերքների բաժինը կազմում է 60—65%, իսկ արդյունաբերական արտադրանքը՝ 10%³: Լիբանանի արտաքին առևտուրի մեջ, ինչպես հայելու մեջ երևում է Լիբանանի տնտեսապես թույլ զարգացած լինելը:

Լիբանանի արտաքին առևտուրը խրոնիկ կերպով դեֆիցիտային բնույթ է կրում: Նրա ներածումները մոտ շորս-հինգ անդամ գերազանցում են արտածումները: Դա պարզ երևում է հետևյալ տվյալներից:

	1956	1957	1958	1959	1960
Արտահանում (մլն.					
լիր. լիրա)	145,8	152,2	110,5	139,1	218
Ներածում (մլն. լիր.					
լիրա)	825	910	745	1007	1201 ⁴
Սալդո	. . .	-679,2	-757,8	-634,5	-867,9
					-983

¹ الدكتور البرت بدر...، ص 46.

² Նույն տեղում, էջ 61.

³ «Современный Ливан», стр. 70.

⁴ الدكتور البرت بدر...، ص 61.

⁵ «Современный Ливан», стр. 68.

* «UN. Economic developments in the Middle East 1959-1961», p. 149, 152.

Ինչպես տեսնում ենք կիրանանի առևտուրը բացասական ազգությունի Սա արդյունք է այն անիրավահավասար առևտուրական համաձայնագրերի, որ կիրանանն ունի արևմտյան տերությունների հետ: ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Արևմտյան Դիմանիան և մյուս իմպերիալիստական պետությունները ամփելի շատ արտահանում են, քան ներածում: Այսպես, 1960 թ. ԱՄՆ-ը կիրանան է արտահանել 88,2 մլն. լիր. լիրայի ապրանք, իսկ ներածել է 8,2 մլն. լիրայի ապրանք, Անգլիան՝ համապատասխանաբար 184,1 մլն. լիր. լիրա և 6,2 մլն. լիր. լիրա, Արևմտյան Դիմանիան՝ 73,3 մլն. լիր. լիրա, և 1,7 մլն. լիր. լիրա, Ֆրանսիան՝ համապատասխանաբար 64,7 մլն. լիր. լիրա և 2,2 մլն. լիր. լիրա և այլն¹: Այս սկզբունքների վրա հիմնված առևտուրը փաստորեն իմպերիալիստների համար գործիք է ծառայում կիրանանի ազգային հարստությունը կողովատելու համար: Իմպերիալիստական պետությունների մտահոգության միակ առարկան է ինչքան հնարավոր է շատ ապրանքներ արտահանել կիրանան և խեղզել տեղական արդյունաբերությունը: Ալ-Հելուն իրավացիորեն նշում է. «մեր շուկան կամաց-կամաց կախման մեջ ընկալի ամերիկյան տրեստներից և Արևմտյան ծվառապայի երկրների արտահանող մոնոպոլիստական ընկերություններից: Օգտվելով պրոտեկցիոնիստական մաքսային տարիքների բացակայությունից, նրանք ձգտում են ինչքան հնարավոր է շատ ապրանքներ իրացնել կիրանանում: Դրան նպաստել է նաև երաց գնների քաղաքականությունը, անսահմանափակ շափերով օտարերկրյա ապրանքներ ներածելու բաղաքականությունը, որ վարում է կիրանանյան կառավարությունը²: Կիրանանյան կառավարության այս քաղաքականությունը ծանր դրության մեջ է դնում երկրի տնտեսությունը և հատկապես արդյունաբերությունը, որը օտարերկրյա մրցության հետևանքով չի կարողանում ազատ զարգանալ և հարկադրված է հաղթահարել բազմաթիվ դժվարություններ: Ուստի երկրի դեմոկրատական ուժերը կիրանանի

¹ «Современный Ливан», стр. 72.

² Аль-Хилю... стр. 22.

կառավարությունից պահանջում են հրաժարվել որաց դռներից քաղաքականությունից, սահմանել բարձր մաքսային տարիքներ և կնքել միայն ու միայն իրավահակասար ու փոխադարձար շահավետ առևտրական պայմանագրեր:

Հավասարության և փոխադարձարար շահավետության սկզբունքների վրա են հիմնված Սովետական Միության, ԳԴՀ, Զեխոսլովակիայի, Ռումինիայի և սոցիալիստական մյուս երկրների առևտրական հարաբերությունները կիրանակի հետ: Նրանք գնում են կիրանանի տրադիցիոն արտահանության ապրանքները և արտահանում այնպիսի ապրանքներ, որոնք անհրաժեշտ են կիրանանի տնտեսության զարգացման համար:

Սովետական Միության և կիրանանի առևտրական հարաբերությունները հիմնված են 1954 թ. ապրիլի 30-ի առևտրական համաձայնագրի վրա: Սովետական Միությունը, առևտուրը զարգացնելու և կիրանանի տնտեսական շահերը հաշվի առնելու նպատակով համաձայնվել է վճարումները կատարել ազգային վայրուտայով՝ լիրանանյան լիրայով¹: Սովետա-լիրանանյան առևտրական հարաբերությունները մի կարևոր կողմ էլ ունեն: Դա այն է, որ նրանց արտաժման և ներածման շափերը հավասար են և վճարումների մեջ ընդհանուր առմամբ բացասական սալդո չի առաջանում: Դա երևում է հետեւյալ թվերից: կիրանանը Սովետական Միությունից ներմուծել է՝ 1959 թ. 10,6 մլն. լիրայի և 1961 թ.՝ 14 մլն. լիրայի ապրանք, իսկ արտահանել է 1959 թ.՝ 12,6 մլն. լիրայի և 1961 թ. 11,3 մլն. լիրայի ապրանք²:

կիրանանը ՍՍՀՄ է արտահանում նարինչ, կիտրոն, խնձոր, չոր մրգեր, ծխախոտ, բուրդ, կաշվի հումք, բրդյակտորեղեն և այլն, իսկ ներմուծում է մեքենաներ և սարքավորումներ, ուկ մետաղներ, անտառանյութ, քիմիական նյութեր, հախճապակի, կուլտուր-կենցաղային ապրանքներ և այլն³, Սոցիալիստական երկրների այդ քաղաքականություն-

1 Տե՛ս «Современный Ливан», стр. 74.

2 Նույն տեղում, էջ 74—75:

3 Նույն տեղում:

նը մեծապես ոգնում է կիրանանի դեմոկրատական ուժերին նրանց այն պայքարում, որ նրանք մղում են երկրի առևտրական բաղարականությունը վերանայելու և արևմտյան իմաստիական տերությունների հետ հավասարության սկզբունքի վրա հիմնված առևտրական համաձայնագրեր կնքելու համար:

Կիրանանն իր առևտրական հաշվեկշռում եղած դեֆիցիտը ծածկում է այլ աղբյուրներից ստացվող շահույթներից. ուկու և վայրուտայի առևտրից ստացվող եկամուտներից, օտարերկրյա նավթային ընկերությունների մուծումներից, արանդիտային առևտրից ստացվող շահույթներից: Միշել Կազինը և աղջեկի օդանավակայանը և Բեյրութի նավահանդիսը համարում է Մերձավոր արևելքի իսկական թոքերը¹: Այդ բացը ծածկվում է նաև տուրիզմից ստացվող եկամուտներից: Տուրիզմը մեծ դեր է խաղում կիրանանի տնտեսության մեջ: Ալ-Հելում տուրիզմը համարում է կիրանանի տընտեսության չորս սյուներից մեկը: Տուրիզմի զարգացման համար կիրանանում շատ նպաստավոր պայմաններ կան: Դա, նախ և առաջ նրա հարմար աշխարհագրական դիրքն է, Եվրոպայից, Ասիայից և Աֆրիկայից եկող ծովային ու օդային ուղիներն այսուեղ են հատվում: Բացի այդ կիրանանն ունի հիանալի ծովափ և մեղմ կլիմա: Երկրում առատ են միրգն ու բանջարեղենը: Այս բոլորը աշխարհի տարբեր մասերից և դիխավորապես արարական հարևան երկրներից ամեն տարի հարյուր հազարավոր տուրիստներ են գրավում դեպի կիրանան, նրանք գտնին են նաև դիտելու կիրանանի տերիտորիայում գտնվող ու մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ պատմական հուշարձաններ, ինչպես Բաալբեկի և Բիբլոսի ավերակները, Բեյթ Էդ-Դինը, Հինավուրց քաղաքներ Սալտայի (Սիդոն) և Տիրի (Տյուրոս) հոյակապ ճարտարապետական կառուցվածքները, կիրանանի աշխարհահռչակ մայրիների անտառը և այլն:

Տուրիզմն առանձնապես սկսեց զարգանալ 1948 թ. հետո, երբ այն դրվեց պետական հիմքերի վրա: Այդ թվակա-

¹ M. Captain... p. 165.

նին Լիբանանի կառավարությունը ստեղծեց Տուրիզմի, ամառային ու ձմեռային հանգստի զվարարություն։ Դրանից հետո տեղական, ինչպես նաև օտարերկրյա կապիտալը սկսեց հոսել դեպի տուրիստական գործը։ Լիբանանում արագ թափով կառուցում էն հյուրանոցներ, պանսիոնատներ, ռեստորաններ, կաֆեներ, գիշերային կարարեներ, կապինոններ, շրավագաններ, ծովեղբներ և տուրիստներին սպասարկող այլ օժանդակ ձեռնարկություններ։ 1961 թ. Լիբանանում կար 635 հյուրանոց, 2784 ռեստորան ու կաֆե և 62 գիշերային կարարեն։ Ըստ 1957 թ. տվյալների միայն հյուրանոցային գործում ներդրված կապիտալի գումարը հասնում էր 200 մլն. լիբայի¹. Երկրի աշխատուժի մի զգալի մասը՝ մոտ 40 հազար մարդ զբաղված է տուրիստական սպասարկման գործում². Այդ թիվը մոտավորապես հավասար է արդյունարերության մեջ զբաղված բանվորների թվին։

Լիբանան այցելող տուրիստների թիվը հաստատուն չէ. մեկ քարձրանում և մեկ էլ խիստ ընկնում է։ Դա պարզ երևում է ՄԱԿ-ի հետևյալ տվյալներից. տուրիստների թիվը կազմել է 1948 թ. — 37,3 հազ. մարդ, 1955 թ. — 902,4 հազ. մարդ, 1956 թ. — 854,6 հազ. մարդ, 1957 թ. 541,8 հազ. մարդ³. Այս տատանումները մեծ մասամբ արդյունք են Արարական արևելքում տիրող քաղաքական իրազրության և այն փոխհարաբերությունների, որ գոյություն ունեն Լիբանանի և Հարևան արարական երկրների՝ հատկապես Սիրիայի և Եգիպտոսի միջև։ Թիվ շեն դեպքերը, երբ այդ երկրները քաղաքական ու տնտեսական պատճառներով արգելում են իրենց բնակիչներին որպես տուրիստներ այցելել լիբանան։ Տուրիզմից լիբանանի ստացած նկամուտները կազմել են 1951 թ.՝ 60 մլն. լիբա, 1952 թ.՝ 70—80 մլն. լիբան, իսկ 1961 թ.՝ 110 մլն. լիբա⁴. Այս թիվների մասին պատկերացում ունենալու համար

¹ «Современный Ливан», стр. 59.

² в аль-Х и лю... стр. 57.

³ «Современный Ливан», стр. 59.

⁴ „UN. Statistical yearbook“, 1961, p. 372.

⁵ الدكتور البرت بدر...، من

⁶ „Le Commerce du Levant“, 27 juin 1962.

նշենք, որ ալդ 110 մէն. լիրան կազմում է Լիբանանի 1960 թ. տմբողջ պետական բյուջեի մոտ կեսը. Ուստի հասկանալի է, թի ինչու են Լիբանանի տիրապետող գասակարգերը և կառավարությունը շահագրգռված զարգացնելու տուրիզմը Սակայն դրա համար, ինչպես իրավացիորեն նշում է ալ-Հելլում, բավարար չէ միայն դեղեցիկ բնանկար ու լավ խմբու ջուր ունենալ, այլ «անհրաժեշտ է... ընթանալ արարական ազատադրական շարժման ուղիով (վարել իմասերիալիզմի դեմ ուղղված քաղաքականություն) և ապահովիկ երկրի տնտեսական վերելքը, բարելավել ժողովրդի կյանքը»¹.

* * *

Բուրժուական պատմական գրականության մեջ այն տեսակետն է տարածված, որ Լիբանանում կյանքի մակարդակը շատ բարձր է, որ աշխատավորական մասսաների վիճակը միանգամայն բարվոք է և համարյա դրախտն է թագավորում այդ երկրում։ Երենց այդ ոչ ճիշտ տեսակետը բուրժուական մի շարք հեղինակներ փորձում են «հիմնավորել» երկու փաստի օգնությամբ։ Առաջինը, դա այն է, որ շինարարության ծավալը աճել է և ավտոմոբիլների թիվը ավելացել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Լիբանանում իրոք մեծ թափ ստացավ շինարարությունը։ Կառուցվեցին բազմաթիվ հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ և ուրախ ժամանցի այլ վայրեր, Մ. Կապլենը մեծ գոհումակությամբ մատնանշում է, որ «մայրաքաղաքի ռեսուրս մի քանի տարվա ընթացքում փոխվեց։ Ամրողովին նոր թաղամասեր են կառուցել, Կառուցել են փոքր երկնաքերծեր կակտուսի դաշտերում»²։ Մի շարք հեղինակներ մեծ հաճույքով նկարագրում են թեյրութիւն և Լիբանանի մյուս քաղաքների գիշերային պատկերը, բազմաթիվ էջեր հատկացնելով ռեստորանային ու սրճարանային կյանքի պատկերը և նշելով Լիբանանում ավտոմոբիլների քանակի ավելացումը նրանք այն տպակորությունն են

1 аль-Хилю..., стр. 58.

2 „Le Commerce du Levant“, 27 juin 1962.

ուզում ստեղծել, որ կյանքի այդ բարիքներից օգտվողը կիրանանի բոլոր խավերն են, այդ թվում նաև աշխատավորական մասսաները: Մինչդեռ դա չի համապատասխանում իրականությանը: Բանվորներին, գյուղացիներին և միջին ժառայող-, ներին բոլորովին անմատչելի է օգտվել այդ «զրախտային բարիքներից»: Կյանքի բարիքներից օգտվողը՝ բուրժուազիան, ֆեոդալ-կալվածատերերը և բարձրաստիճան պաշտոնյաներն են:

Մյուս փաստը, որ օգտագործում են բուրժուական հեղինակները, դա այն է, որ մեկ շնչին ընկնող միջին եկամուտը կիրանանում ավելի բարձր է, քան արաբական որևէ երկրում: Ելնելով դրանից մի շարք հեղինակներ՝ Ցու. Սայրզը, է. Մասոնը, է. Լենդիելը, Ֆ. Քուրեյնը և ուրիշներ, նշում են, որ կիրանանի ժողովուրդն ունի կյանքի ամենաբարձր մակարդակներից մեկը¹: Սակայն այս հեղինակները չեն ուզում տեսնել, որ եթե կիրանանում մեկ շնչին ընկնող միջին եկամուտն ավելի բարձր է, քան արաբական մյուս երկրներում, դա դեռևս չի խոսում կիրանանում ընդհանրապես կյանքի բարձր մակարդակի մասին: Մանավանդ չպետք է մոռանալ, որ արաբական երկրների մեծ մասսամ կյանքի մակարդակը շատ ցածր է և ամեն մի անվերապահ համեմատություն կարող է շփոթության մեջ զցել և սխալ եղրակացությունների հանգեցնել: Սա մի կողմից:

Մյուս կողմից, միջին թվերը մեծ վտանգ են ներկայացնում: Նրանք չեն բացահայտում իսկական պատկերը և հարավորություն չեն տալիս իմանալու տարրեր դասակարգերի, սոցիալական տարրեր շերտերի եկամուտների իսկական չափերը: Զէ՝ որ բուրժուազիայի և բանվոր դասակարգի կամ ֆեոդալ-կալվածատերերի և գյուղացիների տարեկան միջին եկամուտը իրար հավասար չէ: Մի՞թե կապիտալիստներ ֆարաոնի, էղդեի, Արիդայի, Ասելիի, Կասարճյանի, Ապրոյանի, կալվածատերեր Արալանի և մյուսների եկամուտները

¹ Yusif Sayigh, Entrepreneurs of Lebanon, p. XI. Fahim Qubain, Crisis in Lebanon, p. 3; E. Lengyel, The Changing Middle East, p. 182; Albert Badr, The National Income of Lebanon, «Middle East Economic Papers», 1956, p. 13 և այլն.

Համասար են բանվորների և գյուղացիների եկամուտինու իշարեն, ոչ, իրական պատկերը բացահայտելու համար անհրաժեշտ է դուրս գալ միջին թվերի շրջանակներից, մի բան, որ չեն կատարում վերոհիշյալ, ինչպես նաև այլ հեղինակներու խոկ երբ այդ տեսանկյունից ենք մոտենում խնդրի քննարկմանը, ապա պատկերը միանգամայն փոխվում է, Մենք տեսնում ենք, որ մի բնեուում կենտրոնացված են կիրանանի հարստաները, կապիտալիստները, առևտրականները, բանկիրները, խոշոր հոգատերերը, որոնց տարեկան եկամուտները հասնում են հարյուր հազարավոր, նույնիսկ միլիոնավոր լիրաների, իսկ մյուս բնեուում գտնվում են բանվորները, գյուղացիները և մանր ու միջին ծառայողները, որոնք ամենօրյա գծվարին պայքար են մղում իրենց ապրուատը հայթայթելու համար, ի դեպ այդ բանը նկատել է Ֆ. Հիթթին, որը նշում է հետեւալ ճշմարտացի միտքը. «Չնայած, որ աշխատավարձերն ավելի բարձր են (կիրանանում — Ն. Հ.) քան Մերձավոր արևելքի երկրների մեծ մասում, այնուամենայնիվ չի կարելի ասել, թե սովորական աշխատավորը գործարանում կամ դաշտում ստանում է ընդհանուր վերելքի (prosperity) իր օրինական բաժինը¹, Անդրադառնալով այդ նույն հարցին Ա. Միլլսը գրում է. «ստեղծվող հարստության հիմնական մասը զնում է առևտրականների և ֆինանսիստների գրպանը, մինչդեռ գյուղացիները և բանվոր ժողովուրդը մնում է համեմատաբար աղքատը², Լիրանանում ազգային եկամտի առյուծի բաժինը յուրացնում են շահագործող դասակարգերը, աշխատավորական մասսաներին դատապարտելով աղքատ ու ծանր կյանքի»:

Լիրանանի վիճակագրական բյուրոյի տվյալներով 1964 թ. լիրանանում աշխատավորական մասսաների միջին եկամուտը կազմել է 268 լիրա³, Դա նշանակում է, որ նրանց տարեկան եկամուտը կազմում է 3216 լիրա: Մինչդեռ տնտեսագետների հաշվումները ցույց են տալիս, որ 4 հոգուց բաղկա-

¹ Ph. Hitti, Lebanon in history, p. 505.

² A. Mills, Economic change in Lebanon, „Middle East Economic Papers“, 1956, p. 81.

³ «Ազգական բելություն, 17 Հունիսի 1965 թ.»

ցած ընտանիքը բավարար սնվելու, հագուստի, բնակարանի և կրթության համար տարեկան պետք է ունենա 5897 լիրա¹, ինչպես երևում է վերտիշյալ թվերից, տարբերությունը ստացած նկամուտի և իրական պահանջները բավարարելու մեջ, բավականին մեծ է: Այդ բացը ժամկելու համար ժողովրդական մասսաները այլ ելք չունեն, բացի իրենց տարրական պահանջները սահմանափակելուց և շատ անհրաժեշտ բաներից հրաժարվելուց:

Աշխատավարձի ցածը լինելը հարցի մի կողմն է: Հարցի մյուս կողմն այն է, որ ապրուստը տարեցտարի թանկանում է: Դա սպառզ երևում է ՄԱԿ-ի հետեւյալ տվյալներից.

1953 թ.-100	1956	1958	1959	1960	1961
Կյանքի արժեքը, բոլոր հոգվածները	102	114	118	122	121
Կյանքի արժեքը, սննդամբերներ	105	118	121	126	1222

Խըպես տեսնում ենք, միայն 6 տարվա ընթացքում կյանքի արժեքը թանկացել է 19%, իսկ նախապատերազմյան տարիների հետ համեմատած կյանքի արժեքը 1960 թ. բարձրացել է 9 անգամ³: «Ալ-Ախրար»-ը նշելով, որ թանկությունը երկրում անշեղորեն աճում է, գրում է. «Թանկությունից ամենից շատ տուժում են բանվորները, գյուղացիները և ցածը վարձատրվող ծառայողները»⁴:

Գների բարձր և աշխատավարձի ցածը լինելու պատճառով աշխատավորների ընտանիքների մեծ մասը նորմալ չի սնվում և ապրում: Լերբեի գիտական միսիան 1959 թ. ստուգելով Լիբանանի տնտեսությունը, արձանագրում է, որ ուկիրանանի բնակչության 70%-ը զրկանքներ է կրում ըստ շնչին ընկնող եկամտի և կյանքի արժեքի միջև եղած անհամապատասխանության պատճառով⁵: «Բեյրութ ու իջլի» բուրժուական թերթը Լիբանանում գոլություն ունեցող գները համարում է «խելագար գներ», թերթը 1959 թ. սեպտեմբերի 30-ին

¹ «Մ. Ն. Հառաջ», 28 Հունիսի 1964 թ.

² «UN. Economic developments in the Middle East 1959-1961», p. 183.

³ «Современный Ливан», стр. 161.

⁴ 10.XI.1957 «الأخبار»

⁵ «Современный Ливан», стр. 161.

«Ինչպես են լիրանանցիներն ապրում խելագար զների պայմաններում» հոդվածում նշելով, որ Թեյրութի միջին ընտանիքի ամենամսյա եկամուտը կազմում է 400 լիրա, գրում է. «Այդպիսի ընտանիքը չունի ու լվացքի մեքենա, ու ռադիոբանդինի, ու սառցարան, ու տնային ծառայող, ու ամառանց և շատ ուրիշ բաներ, որոնք բնակլության ապահովման խավերը համարում են անհրաժեշտ: Նա չունի նաև իր սեփական տունը և հարկադրված է բնակարանի վրա ծախսել ոչ պակաս, քան 125 լիրա»¹: Թերթը նշում է, որ այդպիսի ընտանիքը, եթե նույնիսկ սննդի էժանադին սննդամթերքներով, ապա նա ստիպված է յուրաքանչյուր ամիս սննդի վրա ծախսել 300 լիրա: Դա արգելն բնակարանի վարձի հետ միասին ամսեկան պահանջում է 425 լիրա: Մենք էլ չենք խոսում նրանց մյուս պահանջների բավարարման մասին:

Այս թվերը պերմախոս կերպով մերկացնում են նրանց, ովքեր թաքնվելով միջին թվերի հետևում, փորձում են սրոդել տնտեսական այն ժամանք վիճակը, որի մեջ գտնվում են աշխատավորական մասսաները:

Խոսելով կիրանանի աշխատավորական մասսաների վիճակի մասին չի կարելի հաշվից դուրս դցել գործազուրկներին: Խակ դրանց բանակը բավականին ստվար է: 1948 թ. երկրում կար 50000², 1951 թ. 40000³, 1953 թ. կրկին 50000⁴, իսկ 1957 թ. 57000 գործազուրկների հատ որում սա բացահայտ գործադրությունների թիվն է: Ինչպես նշում է է. Ասֆուրը, թե քաղաքներում և թե գյուղերում կա նաև թաքնված գործազրկություններ: Այսպիսի մի փոքր երկրի համար, ինչպիսին կիրանան է այսքան գործազուրկների առկայությունը փոքր թիվ չէ: Ինչպես իրոնիկ կերպով նկատում է Ն. Զիադենը, 57000 գործազուրկների գործազուրկները սույց է տալիս, որ «գրությունը վարդագույն չէ»⁵: Այս գործազուրկները և նրանց ընտանիքի

¹ Մեջբերումը ըստ Վ. Կատին, Պո Լիվանу, Մ., 1961, стр. 14.

² «Ժողովուրդի ձայն», 12 մարտի 1948 թ.:

³ «Արարատ», 18 հունվարի 1951 թ.:

⁴ Նույն տեղում, 12 սեպտեմբերի 1953 թ.:

⁵ N. Ziaadeh, Syria and Lebanon, p. 111.

⁶ Նույն տեղում:

անդամները թողնված են բախտի քմահանույթին։ Նրանք պետական որևէ օժանդակություն չեն ստանում։

Աշխատավորների վիճակը ծանրանում է նաև նրանով, որ հարկերն իրենց ողջ ծանրությամբ ընկած են նրանց ուսերին, Կառավարության քաղաքականությունը հարկերի հարցում բացահայտ դասակարգային բնույթ է կրում։ Կոմպրագորական բուրժուազիան, ֆինանսիստները և խոշոր կալվածատերերը, որոնց ձեռքում է կենտրոնացված իշխանությունը, մի շարք օրենսդրական ակտերի օգնությամբ հարկերի ողջ բեռը ցցել են բանվորների, գյուղացիների և արհեստավորների վրա։ Շահագործողական դասակարգերը շատ փոքր հարկ են վճարում, իսկ օտարերկրյա ընկերություններն ընդհանրապես ազատված են հարկ վճարելուց։ Լիբանանում երկու տեսակի հարկ կա։ ուղղակի և անուղղակի։ Ուղղակի հարկի մեջ մտնում է եկամտաշարկը։ Այդ հարկը դրվում է արդյունաբերական, առևտրական և ոչ առևտրական գործունեությունից ստացվող շահույթների, աշխատավարձերի և կենսաթոշակների վրա։ Ուղղակի հարկի մեջ մտնում է նաև հողային, բնակարանային, անտառային, մաքսային և այլ հարկեր¹։ Ուղղակի հարկերից ստացվող եկամուտները մեծ չեն, նրանք կազմում են ընդհանուր եկամուտների $\frac{1}{5} - \frac{1}{4} - \frac{2}{3}$, Դա բացատրվում է նրանով, որ արդյունաբերական և առևտրական գործունեությունից ստացվող շահույթների վրա դրվող, ինչպես նաև հողային հարկը, բարձր չէ։ Տիրապետող դասակարգերը իրենց իրենց ազատել են բարձր հարկեր վճարելու, այսինքն իրենց շահույթները որոշ շափով կրճատելու տհաճությունից։ Բացի այդ, նրանցից շատերը թաքցնում են իրենց եկամուտների իսկական շափերը։ Հայտնի է, որ կիրանանում գոյություն ունի բանկային գործի գաղտնիքը պահելու պետական օրենք։ Ինչպես նշում է կիրանանի ֆինանսների մինիստրության ֆինանսական ուսումնասիրությունների բաժնի ղեկավար Ռաջա Հիմադեհ, շատ ֆինանսիստներ օգտվում են

¹ Raja Himadeh, The Fiscal system of Lebanon, Beirut, 1961, p. 23.

այդ օրենքից և թարցնում ֆինանսական և բանկային գործունեությունից սահացվող շահույթների խոկական շափերը¹:

Դրա կողքին մեծ չափերի են համուռմ անուղղակի հարկերը, որոնք դրվում են սննդամթերքների, ծխախոտի, խմիլթեների, ցեմենտի, աղի, վառելանյութի և այլնի վրա: Անուղղակի հարկերը սովորաբար կազմում են հարկերի $\frac{3}{4}$ -ը և բյուջեային եկամուտների $\frac{2}{3}$ -ը²: Այս թվերն այնքան պերճախոս են, որ ոչ մի մեկնարանության կարիք չեն զգում: Ամեն մի լիրանանցի որպես անուղղակի հարկ պետությանն է վճարում շաբարի յուրաքանչյուր կիլոյի համար 20 դուրուշ (100 դուրուշը = 1 լիրայի), մի կիլո աղի համար՝ 5 դուրուշ, մեկ լիտր գարեջրի համար՝ 1 դուրուշ, մեկ լիտր գինու համար՝ 2 դուրուշ, մեկ լիտր օղու համար՝ 5 դուրուշ: Բացի այդ, տարրական դպրոցի յուրաքանչյուր աշակերտ քննության համար հարկ է վճարում 3 լիրա, իսկ միջնակարգ դպրոցում՝ 10 լիրա³: Ուղղակի հարկերը 1959 թ. կազմել են 55 մլն. լիրա, իսկ 1960 թ. 58,2 մլն. լիրա: Մինչդեռ անուղղակի հարկերը այդ տարիներին համապատասխանարար կազմել են 105 մլն. լիրա և 117 մլն. լիրա:⁴ Իսկ մի տարի անց, 1961 թ. անուղղակի հարկերի գումարը հասակ արդեն 151 մլն. լիրայի: Անուղղակի հարկերի այսպիսի արագ աճը տագնապալի վիճակ է ստեղծում, որը ստիպված են խոստովանել նույնիսկ կիրանանի պաշտոնական ներկայացուցիչները: Լիրանանի դեմքերատական դորժիչները, կազմակերպությունները և մամուլը հանգես են զալիս կառավարության հարկային քաղաքականության մեջ փոփոխություն մտցնելու պահանջով: «Ադ-Դունիյա ալ-Զարիֆա» թերթը քննադատելով կառավարությանը և պահանջելով լիրանանում կիրառել հարկերի գանձման պրոցեսիվ, համեմատական սիստեմը, գրում էր. «Համեմատական տուրքի դրությունն ավելի լավ է, քան անուղղակի տուրքի դրությունը», որ ոչ մեկ տարրերություն կդնե հարուստին և

¹ Raja Himadeh... p. 23.

² الدكتور البرت بدر... ص 8.

³ з а л ь -Х и л ю ... стр. 74.

⁴ „The Middle East”, London, 1961, p. 225.

աղքատին միջև Անուղղակի տուրքի դրությամբ հինգ հարյուր սակի ունեցաղը կվճարե նույնքան, որքան հինգ հարյուր միլիոն ունեցողը Անուղղակի տուրքի այս դրությունն է, որ այսօր ի զորու է Լիբանանի մեջ, անարդար է այդ դրությունը, ավելին՝ պետությունը և իր օրենքները կդնեն խոշոր դրամագլուխներու և հարկապես մեծ մոնուպիներու ծառայության մեջ։¹

Սակայն հարկային քաղաքականության մեջ փոփոխություն մտցնելը և անուղղակի հարկերը կրճատենելը շի մտնում Լիբանանի հառավարության և շահագործող դասակարգների պլանների մեջ, Ընդհակառակը, նրանք ամեն կերպ ձգտում են պահպանել գոյություն ունեցող սիստեմը, Լիբանանի ֆինանսների գլխավոր զիրեկտորը պատասխանելով նրանց, ովքեր պահանջում են կրճատել անուղղակի հարկերը, նշում է, որ այդ դեպքում կառավարությունը ստիպված կլիներ բարձրացնել եկամտահարկը, այսինքն արդյունաբերողներից, առևտրականներից, ֆինանսիստներից և հողագործներից գանձվող հարկը, Այսուհետեւ նա նշում է, որ «կառավարությունն այդ ժաման չէ ունենալ, որպեսի նա հոգածարվում է զերծարկադրել սեփականատիներին և ավելացնել առևտրի մեջ զրադշած մարդկանց բեռը, որը (առևտրութը — Ն. Հ.) հանդիսանում է Լիբանանի տնտեսության սյումը², ինչպես տեսնում ենք, այստեղ ամեն ինչ ասված է պարզ ու հստակ նվ հարցին ալսպիսի մոտեցում ունենալով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հարկերը Լիբանանում 1939 թվականից մինչև 1961 թվականը աճել են 30 անգամ, մինչդեռ պետական բյուջեի հասույթները արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից ավելացել են 8 անգամ³. Ահա թե ինչու Լիբանանի տնտեսագետ ալ-Ճելում լրիվ իրավումը ունի գրելու, որ «հարկադրման սիստեմը Լիբանանում ունի հստակ ընդգծված դասակարգային բնույթ և արտացոլում է ժամանակակից կարգի առանձնահատկությունները, որը ժխտում է

1 Մեջբերումը ըստ, «Մ. Ն. Հառաջ», 8 սեպտեմբերի 1963 թ.,

2 Raja Hima deh, p. 67.

3 «Современный Ливан», стр. 82.

դեմք կրատիայի և սոցիալական արդարության տարրական հիմքները¹:

1943 թ. Լիբանանց նվաճեց իր անկախությունը, Երկրամասատավինց հանրապետական վարչաձևը՝ Լիբանանի սահմանադրության 16-րդ հոդվածը նշում է, որ օրենսդիր իշխանությունը պատկանում է պառլամենտին, որը բազկացած է մեկ պալատից՝ դեպուտատների պալատից²: Գործադիր իշխանությունը պատկանում է պրեզիդենտին և մինիստրների խորհրդին: Պրեզիդենտն ունի նաև օրենսդրական նախաձեռնության իրավունք, Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն մինիստրներին նշանակում և ազատում է պրեզիդենտը: Հենց նա էլ նրանց կազմից որևէ մեկին ընտրում է որպես մինիստրների խորհրդի նախագահ³:

Այսպիսի պրակտիկայի պատճառով պառլամենտի ղերը նույնանում է և կառավարությունն իրեն ավելի շատ կախված դգում է պրեզիդենտից, քան թե պառլամենտից: Շիբանանի պառլամենտը, — գրում է Զորջթառումի համարաբանի պրոֆեսոր Հ. Շարաբին, — միշտ էլ թույլ և անարդյունավետ է եղել ֆրանսիական կոմիսարի, իսկ հետագայում պրեզիդենտի տիրապետող դիրքի, ինչպես նաև համայնքային կառուցվածքի պատճառով⁴, Լիբանանի պրեզիդենտը, ինչպես նշում է Լիբանանի հասարակական գործիչ, փաստաբան Մուհամեդ Մաջզուրը, օգտվում է համարյա անսահմանափակ իշխանությամբ: Նա նշում է, որ «1947 թ. Լիբանանում իշխանության գլուխ կանգնած կառավարությունների մեծ մասը հարկադրված է եղել հրաժարական տալ ոչ թե դեպուտատների վստահությունը լունենալու պատճառով, այլ, որովհետեւ

1 առ. X և յու, стр. 72.

2 «Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East», Durham, 1953, p. 293.

3 «Современный Ливан», стр. 138—139.

4 H. Sharabi, Governments and politics of the Middle East in the 20-th century, New York, 1962, p. 140.

Նրանք պարզապես կորցրել էին Հանրապետության պրեզիդենտի վստահությունը։ Իրենք դեպուտատները սովորաբար իրենց մեջ ուժ չեն գտնում պաշտպանել որևէ կառավարության, որը չի վայելում Հանրապետության պրեզիդենտի վստահությունն ու Հանրությունը¹։ Լիբանանի պրեզիդենտն իրավունք ունի ցրել պառլամենտը, Հաստատել կամ մերժել իրեն ներկայացրած օրինագծերը։ Նա վարում է միջազգային բանակցություններ և վավերացնում պայմանագրեր։ Փաստութեան Լիբանանում շնայած սահմանադրությունուց արձանագրված բազմաթիվ դեմոկրատական հոգվածներին, գոյություն ունի յուրահատուկ, այսպես կոչված պրեզիդենտական-դիկտատորական կառավարման սիստեմ։ Այդ Հանդամանքները վրա ուշադրություն է դարձրել նաև Լիբանանի պետական և քաղաքական գործիչ Համբիդ Ֆրանժիեն, որը 1957 թ. «Աւ-Ահ-Րամ»-ին տրված ինտերվյուէի ժամանակ ասել է Հետևյալը։ Այսպիսական իսկապես ունի պառլամենտ և սահմանադրություն... բայց այդ բոլորով Հանդերձ, իշխանությունն այնուղ համարյա դիկտատորական է, նա կենտրոնացված է նրանց ձեռքը, ովքեր կառավարության թուլությունը դարձրել են իրենց ուժի գործիքը²։ Ուստի չի կարելի Համաձայնվել Խալիլ Տոտահի հետ, որը նշում էր, որ Լիբանանի պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին ձևականորեն շվինելով թագավոր, թագավորի դեր էր կատարում³։

Լիբանանի պետական կառուցվածքի մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա հիմքում, Լիբանանում տիրապետող բուրժուական դեմոկրատիայի, ընտրական սիստեմի հիմքում բնկած է Համայնքային-կրոնական սկզբունքը։ Լիբանանը բազկացած է բազմաթիվ քրիստոնեական և մահմեդական համայնքներից, ինչպես օրինակ, մարոնիթների, ուղղափառների, կաթոլիկների, Հույն-կաթոլիկների, Հայ-լուսավորչականների, Հայ-կաթոլիկների, սիրիական-կաթոլիկների, բողոքականների, հրեաների, սուննինե-

¹ Мұхаммед Маджзүб..., стр. 28—29.

² Նոյեն տեղում, էջ 29:

³ Khalil Totah, Dynamite in the Middle East, New York, 1955, p. 229.

րի, շիների, դրուզների և այլ համայնքներից: Հստ որում բնակչության կեսը դավանում է քրիստոնեություն, իսկ մյուս կեսը՝ մահմեդականություն: Կրոնական տարրեր դավանանքներ այս կամ այն շափով գոյություն ունեն համարյա բոլոր երկրներում: Սակայն այնտեղ դա սկզբունքային դեր չի խաղում այն իմաստով, որ պետական ապարատի և ներկայացուցական հիմնարկների կառուցման հիմքում չի դրվում կրոնական հատկանիշը: Մինչդեռ այդ հատկանիշը մեծ և այն էլ բացասական դեր է խաղում կիրանանի սոցիալ-քաղաքական կյանքում: Համաձայն կիրանանում գործող մի շղթած օրենքի հանրապետության պրեզիդենտը պետք է լինի քրիստոնյա մարոնիթ, պրեմյեր-մինիստրը՝ սունի մահմեդական, պառլամենտի նախագահը՝ շիի մահմեդական, արտաքին գործերի մինիստրը՝ հուն-ուղղափառ, պաշտպանության մինիստրը՝ դրուզ և այլն: Այդ սկզբունքը ի նկատի է առնվում նաև սովորական վարչական ապարատում պաշտոնների բաժանման և պառլամենտում դեպուտատական տեղերի բաժանման ժամանակի: Դա արձանագրված է հանրապետության սահմանադրության մեջ: Նրա 95 հոդվածում ասված է, որպես ժամանակավոր միջոցառում և հանուն արդարության և համերաշխության, համայնքները պիտի հավասարապես ներկայացվեն հասարակական ծառայության և կարինետի կազմման մեջ²: Ընտրություններից առաջ որոշվում է, թե պառլամենտը քանի հոգուց է կազմված լինելու և լուրացանշուր համայնք քանի դեպուտատ է ուղարկելու պարագաներ: Հստ այնմ էլ կազմվում են ընտրական ցուցակներ:

Կիրանանի սահմանադրության համաձայն ընտրել կարող են 21, իսկ ընտրվել՝ 25 տարեկան և ավելի բարձր տարիքի լիրանանյան քաղաքացիները: Ընտրվելու համար թեկնածուն պետք է նախօրոք կանխավճար մուծի 3000 լիրա-

¹ „Who's who in Egypt and Near East”, Cairo 1953, p. 109; E. M. Lengyel, The changing Middle East, New York, 1960, p. 186.

² „Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East”, p. 304.

նանյան լիրա: Ստկայն ընտրապայքարում հաղթելու համար ավելի մեծ դումար է հարկավոր Այսպես, որպեսզի թեկնածուի ազգանումը մտցվի այն ցուցակի մեջ, որն հաղթելու ավելի մեծ շանսեր ունի, նա պետք է մուծի 100 հազարից 300 հազար լիբանանյան լիրա¹: Այսուհետև, նրանք իրենց հաղթանակն ապահովելու համար հսկայական դումարներ են ծախսում ձայներ գնելու համար: Այսպես, 1957 թ. պառկամենտական ընտրությունների ժամանակ «...շուկաները և կարգ մը տուներ վերածված էին հրապարակալիին անուրդի կենտրոններու: յուրաքանչյուր ձայնի համար կվճարեին 70, 80, 90 մինչև 100 լիր. տակիւ²: Հասկանալի է, որ այսպիսի ֆինանսական մեծ ծախսումներ աշխատավորական մասսաների ներկայացուցիչները ի վիճակի շեն կատարել, դրա հնարավորությունն ունեն միայն բուրժուազիայի ներկայացուցիչները և ֆեոդալները: Եվ հենց նրանց տարրեր խավերի միջեւ էլ հիմնականում ընթանում է ընտրական պայքարը այն հարցի շուրջը, թե նրանցից ով տիրապետող դառնա պառկամենտում:

Ֆինանսական հարցը հանդիսանում է պառկամենտի դռները բանվոր դասակարգի և դրուղացիության ներկայացուցիչների առջև փակելու միջոցներից մեկը:

Ընտրություններն ըստ կրոնական-համայնքային սիստեմի անցկացնելն ունի նաև այն բացասական դերը, որ առերևույթ տպավորություն է ստեղծում դասակարգային համերաշխության մասին: Դեռ ավելին, կարծեք թե ընդհանրապես դասակարգեր էլ գոյություն չունեն, քանի որ տվյալ թեկնածում համարվում է տվյալ ամբողջ համայնքի ներկայացուցիչը: Այսպես օրինակ, Լիբանանի խոշոր կալվածատերներից մեկը՝ Ազմեդ ալ-Ասադը, ռեներկայացնում է Հարավային Լիբանանի ողջ շիհ համայնքը, եվ այնպիսի տպավորություն է ստացվում, որ լիբանանում և նրա համայնքների ներսում դասակարգային բաժանում գոյություն չունի, թեև քաջ հայտնի է, որ հենց այդ նույն Ազմեդ ալ-Ասադը ամենա-

¹ W. Laqueur, Communism and nationalism in the Middle East, London, 1957, p. 19.

² «Մեր հշանաբանն է Հառաջք, Բնյութ, 16 հունվարի 1957 թ.:

դաժան կերպով շահագործում է ոիր համայնքի գյուղացիներին, ինդհանրապես կերանանի գասակարգերի բաժանման, ինչպես նաև պետության բնույթի հարցում որոշ ուսումնասիրողների մոտ ոչ նիշտ պատկերացումներ գոյություն ունեն։ Դեռ ավելին, նրանցից ումանք, ինչպես օրինակ, Յուսուֆ Սալիզը, գասակարգային կապը և հարարերությունները փորձում են փոխարինել համայնքային կապերով և հարարերություններով¹։

Այդ տեսակետը չի համապատասխանում իրականությանը, կերանանյան հասարակարգը որոշակիորեն բաժանված է շահագործող և շահագործվող գասակարգերի։ Նրաներսում ձևավորվել և գոյություն ունեն ֆեոդալ-կալվածատերի, բուրժուազիայի (իր բոլոր թևերով), գյուղացի և բանվոր գասակարգը, որոնք միմյանցից տարբերվում են թե՛ սոցիալական և թե՛ քաղաքական ու տնտեսական առումով։

Իսկ ինչ վերաբերում է կերանանում իշխանության և շահույթների համար մզվող պայքարին, ապա դրա պատճառը ոչ թե կրոնական-համայնքային բաժանումն է, ինչպես սխալ ներկայացնում է Յուլ Սալլը², այլ զա ունի տնտեսական ու քաղաքական շարժադիմեր։ Պայքարը գնում է ոչ թե այն պատճառով, որ այս բուրժուան պատկանում է մարոնիթ համայնքին, մյուսը սսմնի, իսկ երրորդը հայ-լուսավորչական, այլ զա սովորական պայքար է բուրժուազիայի տարբեր թևերի միջև։ Եվ եթե կերանանի համայնքային բաժանումը վիճակը, միևնույն է պայքարը բուրժուազիայի տարբեր թևերի կամ շերտերի միջև։ Հանում իշխանության դարձյալ կլիներ, ինչպես որ զա տեղի ունի բոլոր կապիտալիստական երկրներում, այդ թվում նաև այն երկրներում, որոնք կրոնա-համայնքային բաժանում բնավ գոյություն չունի։ Յուլ Սալլը շի տեսնում մի բան, որ բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե ուվագ մումենառում, ո՞ր համայնքին պատկանող կապիտալիստները և կալվածատերներն են տիրապետող քաղա-

¹ Yusif Sayigh, Lebanon: Special economic problems arising from a special structure, „Middle East Economic Papers“, Beirut, 1957, p. 62.

² Yusif Sayigh... p. 62.

քական իշխանության բնագավառում, բոլոր գեղթերում դա
 հանդիսանում է շահագործող դասակարգերի քաղաքական
 իշխանությունը, որը կոչված է ննշելու և շահագործելու ժո-
 ղովրդական մասսաներին։ Եվ նրանք, այդ շահագործողական
 դասակարգերը, ամեն կերպ ձգտում են աշխատավորական
 մասսաներին հեռու պահել քաղաքական իշխանությանը
 մասնակցելուց, ձգտում են պետական ապարատում և բոլոր
 ներկայացուցչական հիմնարկներում իրենց մարդկանց նըս-
 տեցնել։ Դրա պերճախոռ վկայությունն է, թեկուզ և կիրանա-
 նի պառակենատի կազմը, Նրա կազմում չկա և չի եղել որևէ
 բանվոր կամ գյուղացի 1951 թ. ընտրություններից հետո
 պառամենութ հետևյալ պատկերն էր ներկայացնում։ Նրա
 կազմում կային 19 կապիտալիստ-արդյունաբերողներ, այդ
 թվում էմիլ Բուատանին, Միշել Դումիտը, Ֆուադ ալ-Խուրին,
 Քամիլ Աքլը և ուրիշներ, 14 խոշոր ֆեոդալներ, ինչպես օրի-
 նակ, Սարրի Համադեն, Իբրահիմ Հայդարը, Ահմեդ ալ-Ասա-
 դը, Մաշիդ Արսլանը և ուրիշներ, 14 խոշոր տնատերեր՝ Փորձ
 Քարամեն, Պյեր Էդեն և այլն, 3 բանկիր՝ Հերի Ֆարաոնը,
 Ժան Սքաֆը, Քամիլ Աբու-Ջասիդն, 3 բժիշկ, 3 ժուռնալիստ,
 խոշոր աստիճանավորներ, փաստաբաններ, առևտրականներ
 և ոչ մի բանվոր կամ գյուղացի, կիրանանի պառականնութը
 նույն պատկերն էր ներկայացնում նաև 1960 թ. պառականնեն-
 տական ընտրություններից հետո։ Նա բաղկացած էր 22 խո-
 շոր հողատերերից, 10 բանկիրներից, 12 առևտրականներից
 և այլ գործարար մարդկանցից¹։ Եվ դարձյալ բացակայում են
 աշխատավորական մասսաների ներկայացուցիչները, ինչպես
 իրավացիորեն նշել է «Սառւթ ալ-Ֆայխաա» թերթը «կիրանա-
 նում տիրապետում է ֆինանսիստների բանդանք², թերթը
 նշում է, որ մի բուռն հարուստներ շահագործում են երկրի
 բոլոր ռեսուրսները։ «Մի բուռն կապիտալիստներ,—գրում էր
 «Սառւթ ալ-Ֆայխաա»-ն, հարստանում են աղքատների հաշ-
 վին, նրանց հանապազօրյա հացի և հագուստի հաշվին։ Այդ
 մի բուռն կապիտալիստների խումբը ամեն տեսակի գոր-

¹ «Современный Ливан», стр. 139.

² 12.VIII.1948 «صوت الفيحاء» طرابلس»

ժարբներ է կնքում, նա ուղղություն է տալիս պետության քաղաքականությանը՝ իր ցանկություններին և շահերին համապատասխանել:

Երբ սովորաբար, խոսք է գնում կիրանանում տիրապետող դեմոկրատիայի և գոյություն ունեցող բուրժուական ազատությունների մասին, ապա որոշ ուասման սիրողներ փորձում են կիրանանը ներկայացնել մի երկիր, որտեղ թագավորում է բացարձակ ազատությունը և ժողովուրդը ըմբռշխնում է այդ ազատությունը, կարծեք թե գոյություն չունի բռնության ու ճնշման ազարատը և առաջադեմ ուժերը ճնշման կամ սահմանափակման չեն ենթարկվում: Նրանք չեն ցանկանում տեսնել այդ դեմոկրատիայի դասակարգային բնույթը, որը լիակատար ազատություններ է ընձեռում բուրժուազիային, կալվածատերերին, առևտրականներին և շահագործողական մյուս տարրերին: Այդ տեսակետից բնորոշ է Ֆահմ Քուրեյխի կարծիքը, նա գրում է հետևյալը. «կիրանանի կառավարությունը համեմատած այդ շրջանի (Մերձավոր և Միջին արևելքի—Ն. Հ.) մյուս կառավարությունների հետ, ստվերային կառավարության նման բան է»², և որ կիրանանի ժողովուրդը մեծ ազատություններից է օգտվում: Ֆահմ Քուրեյխը շարաշար սխալվում է: Կիրանանում ստվերային, այսինքն մի այնպիսի կառավարություն, որը չի սահմանափակում դեմոկրատական ազատությունները, չի հետապնդում կոմունիստական գործունեությունը և առաջադեմ գործիչներին, չի դիմում ուղղեսկաների և կամ չի գնդակոծում ցույցերը ու ձերբակալում առաջադեմ տարրերին, այդպիսի կառավարություն գոյություն չունի: Անկախության նվաճումից հետո անցել է 20 տարուց ավելի և այդ ժամանակաշրջանում թիւ կառավարություններ կիրանանում չեն փոխվել եվ անկախ այն բանից, թե ովքեր են դեկավարել այդ կառավարությունները, բռնոր դեպքերում էլ նրանք հետևողականորեն կիրառել են իրենց վրա դրված ֆունկցիաները, պաշտպանել են կիրանանյան բուրժուազիայի ու ֆեոդալ-կալվածատերերի:

¹ 12.VIII.1948 «صوت الفيضا»

² Fahim Qubain, Crisis in Lebanon, p. 19.

շահերը և սահմանափակել դեմոկրատական ազատությունները, Այդ է հաստատում վերջին քսան տարիների փորձը, Վերցնենք թեկուզ մի այնպիսի հարց, ինչպիսին պառամենտական ընտրություններն են: Հենց այդ հարցում պետք է դրսեռովեր դեմոկրատիզմի սկզբումքների կիրառման աստիճանը և դեմոկրատական ազատությունների ապահովումը: Միա մի պառամենտական ընտրություն, որի ժամանակ իշխանությունները կոպիտ կերպով շմիջամտեն ընտրություններին, նպատակ ունենալով ապահովել ազգեցիկ քաղաքական խմբի, կառավարական ցուցակի հաղթանակը: Ընտրությունների ժամանակ թույլ են տրվում զեղծարարություններ, սպառնալիքներ և շատ հաճախ է հոսում աշխատավորների արյունը: Շնորով վորդի Զայն առաջադիմ թերթը խոսելով 1947 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած պառամենտական ընտրությունների մասին գրում էր. «Թեյրութի ժողովուրդը շեղյալ կնկատե մայիսի 25-ի ընտրությունները, Ամենուրեք ընտրությունները տեղի ունեցան սարսափի, զեղծարարության և ընտրողներու կամքի բացահայտ կաշկանդումի պայմաններու տակ»¹, Թերթն այնուհետև նշում է, որ ոստիկանությունը բացահայտ միջամտում էր ընտրություններին, շատ հաճախ դիմելով ծեծի ու շարդի, որի ժամանակ տեղի են ունենում զոհեր²: Ոստիկանությունը այդ միջոցառումներին դիմում էր կառավարական ցանկի հաղթանակին ապահովելու համար:

Այդպիսի իրազրության պայմաններում էին ընթանում համարյա բոլոր պառամենտական ընտրությունները: Այսպես, 1957 թ. տեղի ունեցած պառամենտական ընտրությունների ժամանակ «Ենտրարացուցակներեն», — նշում էր «Մեր նշանաբանն է Հառաջը թերթը, — զնշված և անհետացած էին հազարավոր և հազարավոր անուններ, որոնք իննույն տոկոսով ընդդիմադիր ճակատի քվեարկողներ էին: Անհետացած որևէ անունը կգտնվեր, եթե ենթական խոստանար քվեարկել և կտուալարական ցանկին»³: «Աս-Սիլյասա թերթի պկայու-

1 «Ժողովուրդի Զայն», Թերթ, 27 մայիսի 1947 թ.,

2 Նույն տեղում:

3 «Մեր նշանաբանն է Հառաջը, 16 հունիսի 1957 թ.»

թյամբ 1957 թ. ընտրությունների ժամանակ ստեղծվել էր սարսափի մթնոլորտ։ Քամալ Զունքալատը նշում է, որ «1957 թ. ընտրություններն իրենց բոլոր փուլերում և մասերում վերածվեցին ողբերգության»¹։

Մեպրեսիաներն առանձնապես ուժեղ բնույթ էին կրում բանվոր դասակարգի ներկայացուցիչների նկատմամբ, կիրանանի կառավարությունն ամեն քայլի դիմում էր բանվոր դասակարգի և պրոգրեսիվ մրտւ ուժերի ներկայացուցիչների համար գործունեության անտանելի պայմաններ ստեղծելու համար։ Նա նույնիսկ խախտում էր այն սահմանափակ ազատությունները, որոնք ձևականորեն տրվում էին կիրանանի բուրժուական սահմանադրությամբ։ Այսպես, 1951 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ բանվոր դասակարգի և պրոգրեսիվ ուժերի թեկնածուները միավորվեցին և հանդես եկան մեկ միասնական ցուցակով, որի մեջ մտնում էին կիրանանի արհմիութենական հայտնի ղեկավար գործիչ, Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի գործադիր կոմիտեի անդամ Մուսատաֆա Արիսը, կիրանանի խաղաղության կողմնակիցների ղեկավար Ամսուան Թարեթը, Էլիաս Խուրին, Ռադվան Շագալը, Արու Մուրթադ Հուսեյնը և Արթին Մահեյանը, Արդ խումբը առաջադրում էր միշտ կարևոր պահանջներ, ինչպես, պայքար հանուն խաղաղության, ղեմոկրատիայի և ազգային անկախության, պարքար ամերիկան, անզինական և ֆրանսիական իմպերիալիստների դեմ, ազգային տնտեսության պաշտպանում, օտարերկրյա մոնոպոլիստական ընկերությունների ազգայնացում և այլն։ Սակայն կիրանանի կառավարությունը հնարավորություններ շատեղծեց այդ խմբի գործունեության համար։ Դեռ ավելին, նա ընտրություններից առաջ ձերբակալեց Մուսատաֆա Արիսին և Բեքաայի բանվորների թեկնածու Արու Մուրթադ Հուսեյնին։ Կառավարությունը դրանով ձգտում էր թույլ շտար, որ բանվորական դեմոկրատիայի ներկայացուցիչները հանդիպեն իրենց ընտրողների հետ և բացատրեն

¹ كمال جنبلاط حقيقة، الثورة اللبنانية، ص ١٢١

նրանց իրենց քաղաքական նպատակները: Նա վախենում էր, որ նորմալ պայմաններում կիրանանի պրոգրեսիվ ուժերը կարող են որոշակի հաջողության հասնել: Իսկ դա չէր մտնում կիրանանի տիրապետող դասակարգերի պլանների մեջ:

Կիրանանում շատ հաճախ են ոտնահարվում նաև մյուս դեմոկրատական ազատությունները, ինչպես օրինակ, մամուլի, կուսակցությունների, ժողովներ գումարելու և այլ աղատություններ: Անկախություն ձեռք բերելուց հետո բազմից փակվել են լիրանանյան առաջադեմ թերթերը, ինչպես, «Սառը աշ-Շաար», «Ժողովուրդի Զայն», «Ան-Նիդա» և այլն: Լիրանանյան իշխանությունները հետապնդում են դեմոկրատական կազմակերպություններն ու կուսակցությունները: 1946 թ. փետրվարի 24-ին Թեյրութում տեղի ունեցավ Սիրիայի և լիրանանի կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողովը: Այստեղ քննարկվեցին մի շարք կարմոր հարցեր, այդ թվում նաև դեմոկրատական ազատությունների հարցը: Այդ առթիվ ընդունված որոշման մեջ ասված էր. «Լիրանանի մեջ հակում մը ցույց կտրվի քաշակերելու ֆաշիստական կազմակերպություններու մնացորդները (ինչպես Հըզը էլ Գովմիներու ումակը) և սահմանափակելու դեմոկրատական ընդհանուր ազատությունները, (ինչպես լիրանանի Ապահովության Գերագույն Խորհրդի Կազմությունը)»¹: 1947 թ. վերջերին արդելվեց լիրանանի կոմունիստական կուսակցությունը, որը հարկադրված է դործելու ընդհատակի պայմաններում: 1949 թ. արգելվեցին նաև մի շարք այլ կուսակցություններ²: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ լիրանանյան իշխանությունները արգելում են առաջադեմ կազմակերպություններին գումարելու ժողովներ և ցույցեր, կամ երբ ոստիկանությունը գնդակոծում է այդ ցույցերը, ձերբակալում պրոգրեսիվ գործիչներին և այլն:

Այսպես, նրանք Տրիպոլիում 1950 թ. ձերբակալեցին մայիսմեկյան ցույցերին մասնակցած բազմաթիվ բանվորների, որոնք, այնուհետև, մոտ երկու ամիս առանց դատական

1 «Ժողովուրդի Զայն», 5 մարտի 1946 թ.

2 «Արարատ», Թեյրութ, 23 Հունիսի 1949 թ.

քննության ու դատարանի որոշման, գտնվում էին բանտում¹: Այդ նույն թվականի հունիսի 27-ին մեծ ցույց տեղի ունեցավ Թիվրություն՝ ուղղված արարական երկրները զինելու վերաբերյալ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեկլարացիայի, առողմային զենքի օգտագործման և Կորեայում ամերիկյան խնտերվենցիայի դեմ: Լիբանանի ոստիկանությունը գնդակուծեց այդ ցույցը և ցուցարարներից շատերին էլ ձերքակալեց², Ցույցերը ցրելու և ժողովներն արգելելու համար Լիբանանի կառավարությունը անգլիացի Թելիենի առաջարկությամբ կաղմակերպեց հատուկ ոստիկանական բրիգադ:

Այս փաստերը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Լիբանանի կառավարությունը ինչ-որ շատվերային կառավարություն» չէ և Լիբանանում տիրապետող դեմոկրատիան դարսւրուական դեմոկրատիա է, որն ապահովում է տիրապետող դասակարգերի շահերը և սահմանափակում է աշխատավորական մասսաների ու պրոգրեսիվ ուժերի իրավունքներն ու ազատությունները: «Եթե մենք, — գրում է Մուհամեդ Մաշգուրը, — ուշադիր ուսումնասիրենք սահմանադրությունը և պառամենտական թերիայի կիրառումը կիրանանում, ապա կտեսնենք, որ դեմոկրատիան այստեղ կիրապում է միայն ձեւականորեն, իսկ լիբանանցիները միայն հանդիսատեսներ են, երբեմն նաև դերասանները խառնաշփոթ և մտացածին կատակերգությունների, որոնք կարող են ծիծաղեցնել նաև լաց լինողին»³:

Լիբանանի առաջադեմ գործիչները երկրում տիրող կառավարման սիստեմն իրավացիորեն անվանում են «քաղաքական ֆեոդալիզմի» սիստեմ: Նրանք մատնացույց են անում, որ կառավարությունը մեծ տեղ է տալիս ֆավորիտիզմի քաղաքականությանը, որ երկրում ծաղկում է կաշառակերությունն ու կամայականությունը: Ֆ. Հիթթին նշում է, որ թիշարա ալ-Խուրիի ռեժիմը (1943—1952 թթ.) դարձել էր

¹ 15.VI.1950. «الشرق».

² 3.VII.1950. «التلفزيون». بيروت».

³ Мухаммед Маджзуб ... стр. 20.

Քավորիտիզմի և կաշառակերության ռեժիմ¹, Սակայն այդպիսին էր ոչ միայն Բիշարա ալ-Խուրիի պրեզիդենտության ժամանակաշրջանում, Պատկերը համարյա նույնն էր նաև Քամիլ Շամունի ժամանակ (1952—1958 թթ.), Այդ տեսակետից հետաքրքիր փաստեր է բերում Լիբանանի պետական ու քաղաքական գործիչ Քամալ Զունըլատը: Նա նշում է, որ «Շամունն ու աղմինիստրացիան և երկիրը կառավարող իր օգնականները ապականության, կաշառակերության, հովանավորության, ապօրինի հարստացման, ազդեցության, ընկերությունների ու երկրի բարիքների աննկարագրելի շահագործման երկրաբանական մի նոր շերտ» ավելացրինք²:

Նա այնուհետև գրում է, որ Շամունի պրեզիդենտության ժամանակաշրջանում համարյա ոշխնչ չէր արվում առանց կաշառքի: Նույնիսկ որևէ պաշտոնյայից կամ մինիստրից որևէ ստորագրություն ստանալու համար պետք էր կաշառք վճարել: «Շամունը, — գրում է Ք. Զունըլատը, — իրեն շրջապատել էր միջնորդների մի խմբով, որ միջնորդի դեր էր կատարում նրա և գործատերերի միջև և նրա ու իրենց անունից ստանում մեծամեծ գումարներ»:³ Հետաքրքիր է նշել, որ Ք. Զունըլատը կարողացել է տեսնել այն կազմ, որ կա իմպերիալիստների քաղաքականության ու նպատակների և ապականության ու կաշառակերության սաստիկ ծաղկման միջև: Այդ առթիվ նա հետևյալ միտքն է արտահայտում. «Ապականության և կաշառակերության տարածելը իմպերիալիզմի ծրագրի հիմքն է ու իր անմիջական նպատակների իրագործման բնական միջոցը, նա այն հաշիշն է, որ հարթեցնում ու թմրեցնում է ժողովուրդներին և նրանց դարձնում կամազուրիկ, ընդունելու այն, ինչ մերժում են վերածննդի, բարոյական վերելքի և արժեքների վերադնահայտման շրջանում»:⁴

¹ Ph. Hitti, Lebanon in history. London, 1957. p. 506.

² .31 كمال جنبلاط...، ص

³ Նույն տեղում,

⁴ Նույն տեղում, էջ 34:

Ժողովրդական մասսաները և կիրանանի դեմոկրատական ուժերը պահանջում էին վերջ տալ կամայականություններին, բոլոր տեսակի սպականություններին և երկրում ապահովել դեմոկրատական ազատություններն ու իրավունքները: Նրանք հանդիս էին դաշիս պառամենտի դերի ուժեղացման և համայնքային-կրոնական սիստեմի վերացման պահանջով:

* * *

Լիրանանի հասարակական-քաղաքական կյանքում որոշակի դեր են խաղում քաղաքական կուսակցությունները: Դրանց թիվը Լիրանանում այժմ մի տասնյակից ավելի է՝ մոտ 15: Սակայն դրանք բոլորը չեն, որ լիարժեք կուսակցություններ են: Նրանց մի մասը ավելի շուտ քաղաքական խմբեր են, որոնք իրենց շարքերում հաշվում են երեքմեծ մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր մարդ: Բացի այդ նրանց մի մասը առաջանում է քաղաքական որևէ կամպանիայի կամ պառամենտական ընտրությունների ժամանակ և այդ կամպանիայի ավարառություն հետո քայլայվում և հեռահում է քաղաքական արենայից:

Ինչպես Արևելքի մյուս երկրների, այնպես էլ Լիրանանի քաղաքական կուսակցությունների մեծ մասին առանձնահատուկ է այն, որ նրանք չունեն կազմակերպչական կուռ կառուցվածք, մշտական անդամակցություն, կուսակցական տոմսեր, ամենամայա անդամակցարների մուծում և այլն, ինչպես նաև որոշակիորեն մշակված, հստակ կուսակցական ծրագիր ու կանոնադրություն: Այդ պատճառով էլ այդ կուսակցություններն իրենց քաղաքական գործունեության մեջ թույլ են տալիս մեծ տատանումներ և քաղաքական կարևոր իրադարձությունների ժամանակ շեն կարողանում հստակ գիծ վարել:

Այժմ կանգ առնենք Լիրանանի կարևոր քաղաքական կուսակցությունների բնութագրման վրա:

Լիրանանի քաղաքական կուսակցությունների մեջ միակը, որը հանդիս է գալիս հետևողական դեմոկրատիայի դիրքերից և ներկայացնում քանվոր դասակարգի ու գյուղացիու-

թյան շահերը, ուա Լիբանանի կոմունիստական կուսակցությունն է:

Լիբանանում կոմունիստական առաջին քայլերը արդել են 20-ական թվականներին, երբ Հայ մարքսիստները կաղմակերպում են խմբակներ, նրանց մեջ ներգրավելով աշխատավորներին և պրոգրեսիվ գործիչներին, կազմակերպում են ցուցեր ու ժողովներ, հրատարակում թուուցիկներ և այլն: Լիբանանի կոմունիստական կուսակցությունը փաստորեն գոյություն ունի 1924 թվականից¹: Եվ այդ թվականից նա աշխատանք է տանում աշխատավորական մասսաների շրջանում, կազմակերպում թերթերի և թուուցիկների հրատարակում և այլն: Լիբանանի կոմունիստական կուսակցությունն անում ու ամրապնդվում է հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1943 թ. սկսած, երբ նրա շարքերը ընդլայնվում են ու նրա ազգեցությունը երկրում մեծ չափով ուժեղանում է, կոմունիստական կուսակցությունն իր կազմակերպություններն է հիմնում Բեյրութում, Տրիոպալիում, Զանլեռում, Աբբայում, Զերել Դրուզում, Քեսրվանում, Բեյրայում, Մեթնում և այլ վայրերում²: Բուրժուական գրականության մեջ զոյլություն ունեն մի շարք սիսալ տեսակենաներ կոմունիստական կուսակցության ազգեցության աճման. Նրա կազմի վերաբերյալ և այլն: Այսպես Վ. Հաքյորը նշում է, որ կառավարության թուլությունն ու սիսալները, «...միշին դասակարգի անընդունակությունը առաջազրելու առաջնորդությունը և զեկավարություն ու քաղաքական կուսակցության գրադարձության մեջ այս բոլորը բարերար հող ստեղծեցին կոմունիստական գաղափարների ինտենսիվ զարգացման համար, իդեալական պայմաններ, որոնց ներքո կոմունիստները նշանակալի հաջողություններ ձեռք բերին անցյալում և ավելի խոստումնալից ապագա ունեն առաջիկայումք»³: Ինչպես մեջբերումից երևում է, հեղինակը ճիշտ չի բացաբարում այն

¹ «Современный Ливан», стр. 145.

² E. Abouchaid, 30 years of Lebanon and Syria, 1917—1947, Beirut, 1948, p. 81.

³ W. Laqueur, Communism and nationalism in the Middle East, p. 137.

սպառնառները, որոնք հանդեցրին կռմունիստական կուսակցության ազգացության աճմանը: Եթե կառավարման թերություններն ու սիսալները նպաստել են նրա ազդեցության աճմանը, ապա նրանք ինչո՞ւ չնպաստեցին մյուս կուսակցությունների հեղինակության աճմանը: Հարցը, իհարկե, դրանում չէ, Վ. Լաբյորը աշխաթող է անում այն հանգամանքը, որ բանվոր դասակարգը վերջին քառասում տարրում աճել ու դարդացել է, մեծացել է նրա տեսակարար կշիռը Լիբանանի քաղաքական կյանքում: Բնականաբար, դա պետք է հասցներ նաև նրա կուսակցության ազդեցության աճմանը: Բացի այդ նրա գաղափարախոսությունը, մարքս-լենինյան գաղափարները մագնիսի նման իրենց են գրավում ժողովրդական մասսաներին: Լիբանանի կռմունիստական կուսակցությունը միակ քաղաքական ուժն է, որը ճիշտ կերպով ցույց է տալիս այն ուղիները, որոնք կարող են հասցնել Լիբանանի տնտեսական ու քաղաքական մասսաների շահերի պաշտպանության համար և մերկացնում իմապերիալիստների մեքենայությունները: Ահա այս բոլորը միասին հասցըին լիբանանի կռմունիստական կուսակցության հեղինակության աճմանը:

Սխալ տեսակետներ գոյություն ունեն նաև կռմկուսի ազգային կազմի վերաբերյալ: 1948 թ. ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի հանձնաժողովի № 5 ենթահանձնաժողովը՝ որը զբաղվում է ազգային և միջազգային շարժումների հարցերով, հրապարակեց մի զեկուցադիր՝ «Կռունկարությունը Մերձավոր արևելյում»: Այդ զեկուցագրում ասված է, որ, իրը մուսուլմանների և քրիստոնյաների միջև գոյություն ունի թշնամություն և քրիստոնյաները խրոնիկական վախ են զգում մուսուլմաններից: Այդ պատճառով էլ, — նշված է զեկուցագրում, — քրիստոնյաները ընդհանրապես և մասնավորապես լիբանանում, որտեղ նրանք համարյա մեծամասնությունն են, ավելի են ընկարում կռմունիստական պրոպագանդան, քան մուսուլմանները: Հույն-ուղղափառները և հայ-լուսավորշականները կազմում են կուսակցության ինչպես ակտիվ անդամների, այնպես էլ համակրողների հիմնա-

կան մասսանք: Հայերի գերի որոշ գերազնահատում ենք տես-
նում նաև Վ. Լաքորի մոտ:

Այս բոլորը, իհարկե, չի համապատասխանում իրակա-
նությանը: Միանգամայն սխալ է կիրանանի կոմունիստական
կուսակցությունը միմիայն քրիստոնյաներից բաղկացած կու-
սակցություն ներկայացնել: Դրա իմաստը պարզ է. դրանով
ուզում են ասել, որ այդ կուսակցությունը չի ներկայացնում
ամբողջ ազգի շահերը և փորձում են կոմկուսի հանդիպ ան-
վտահություն ներշնչել հասարակ մարդկանց մոտ, որոնք
դժվար են կողմնորոշվում քաղաքականության մեջ: Մինչդեռ
իրականում կիրանանի կոմունիստական կուսակցությունն իր
շարքերում համախմբում է աշխատավորական մասսաներին
և առաջադեմ ինտելիգենցիայի ներկայացուցիչներին անկախ
նրանց կրոնական դավանանքից: Նրա շարքերը կարող են
մտնել թե՛ մուտքմանները և թե՛ քրիստոնյաները, որոնք
ընդունում են նրա քաղաքական հավատամքը և գաղափարա-
խոսությունը:

Իսկ ինչ վերաբերում է հայերին, ապա, իրոք, անժիստե-
լի է նրանց կատարած գերը և մատուցած ծառայությունները
կիրանանի կոմունիստական շարժմանը: Սակայն այդ գերը
չպետք է փորձել գերազնահատել և ընկնել ծայրահեղություն-
ների մեջ: Կիրանանի կոմունիստական կուսակցությունն իրե-
նից ներկայացնում է նախ և առաջ արարական (ազգային
կազմի իմաստով) կուսակցություն, որի շարքերում միավոր-
վել են թե մուտքման և թե քրիստոնյա բանվորներն ու դյու-
դացիները, ինտելիգենցիայի ներկայացուցիչները:

Մինչև 1944 թ. կիրանանի կոմունիստական կուսակցու-
թյունը միավորված էր Սիրիայի կոմունիստական կուսակցու-
թյան հետ և կոչվում էր Սիրիայի և կիրանանի կոմունիստա-
կան կուսակցություն: 1943 թ. դեկտեմբերի 31-ից մինչև
1944 թ. հունվարի 2-ը տեսի ունեցավ Սիրիայի և կիրանանի
կոմունիստական կուսակցության ազգային համագումարը:
Համագումարը հաշվի առնելով, որ ստեղծվել են կիրանանի
և Սիրիայի անկախ պետություններ, որ փոխվել են քաղաքա-
կան ու սոցիալական պայմանները և յուրաքանչյուր երկրի
առջև իր ազգային խնդիրներն են կանգնած, որոշեց ստեղծել

առանձին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցություններ, յուրաքանչյուրն իր կենտրոնական կոմիտեով և ղեկավար այլ մարմիններով¹:

Համագումարն ընդունեց Լիբանանի կոմունիստական կուսակցության Ազգային պակտը, որը փաստորեն ժրագրի ընույթ ունի և հանդիսանում է գործողության ուղեցույց կուսակցության համար։ Ազգային պակտը հստակորեն սահմանում է կուսակցության քաղաքականության դիմավոր հարցերը։ Դրանք են։

1. Պայքար Լիբանանի անկախության, գերիշխանության, դույության ամրապնդման և ազգային լիակատար ազատագրման համար։

2. Հանրապետական, իսկական դեմոկրատական վարչաձևի հաստատում։

3. Եղբայրական համերաշխության կապերի ամրացում Լիբանանի ու Սիրիայի և մնացյալ արարական երկրների միջև։

4. Հավասարություն բոլոր լիբանանցիների միջև, ինչ կրոնի և ազգության էլ պատկանեն նրանք։

5. Ազգային գերիշխանության տարածումը դրամական, արդյունաբերական և առևտուրական օտար հաստատությունների վրա։

6. Դեմոկրատական ազատությունների ապահովում և, առաջին հերթին, խղճի, խոսքի, մամուլի, ժողովների, միությունների, կուսակցությունների և արհմիությունների ազատություն։

7. Բարձրացնել երկրի տնտեսական մակարդակը, պաշտպանել ազգային արդյունաբերությունը, զարգացնել երկրագործությունը և աշխուժացնել առևտուրը։

8. Պաշտպանել քաղաքի և դյուլի մանր արտադրողներին, պայքարել անգործության, թշվառության ու շքավորության դեմ և այլն², Խնձոր տեսնում ենք սույն ծրագիրը ընդունելում է Լիբանանի հասարակական-քաղաքական և տնտե-

1 «Ժողովրդի Զայն», 10 հունվարի, 1944 թ.։

2 Խույն անդում։

սական կյանքի բոլոր բնագավառները։ Այն բխում է աղաւտագրումից հետո Լիբանանի առջև կանգնած կենսական կարևոր հարցերից և պայմանավորված է ազգային-ազատազրական պայքարի տվյալ էտապի խնդիրներով։ Ազգային պակտի ընդունումից հետո Լիբանանի կոմունիստական կուսակցությունը աշխատեն և մոբիլիզացնել Լիբանանի աշխատավորական մասսաներին վերոհիշյալ կարևոր խնդիրները կյանքում կենսագործելու համար։

1947 թ. վերջերին լիբանանյան իշխանություններն արգելեցին Լիբանանի կոմունիստական կուսակցությունը և նա ստիպված անցավ ընդհատակի Հենց Ընդհատակի պայմաններում էլ տեղի ունեցավ Լիբանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցությունների միավորումը, որը գոյություն ունեցավ մինչև 1958 թ.։ Այդ թվականին նրանք կրկին բաժանվեցին առանձին կուսակցությունների։

Լիբանանի կոմունիստական կուսակցությունը մեծ ուշադրություն է դարձնում ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքին, գտնելով, որ Լիբանանի առջև կանգնած կարևոր քաղաքական ու տնտեսական խնդիրները կարելի է լուծեն միայն երկրում բնակվող բոլոր ժողովուրդների միահամուռ և համերաշխ ջանքերով։ Այդ քաղաքականության արտահայտությունն է հանդիսանում այն, որ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցություններին կից գոյություն ուներ հայկական սեկցիա։ Նա մեծ ու դրական աշխատանք է կատարեն հայ մասսաների շրջանում կոմունիստական զաղափարները տարածելու և հայ ու արար քարեկամությունն ամրապնդելու ուղղությամբ։ Լիբանանի կոմունիստական կուսակցության ալյափիսի ազգային քաղաքականությունը շատերի սրացով չէր և նրանք պատեհ առիթը բաց չէին թողնում քննազատելու նրան։ 1944 թ. հունվարի 1-ին հանդեմ գալով հայերի կողմից թիյրությում կազմակերպված մի ժողովում Լիբանանի կոմունիստական կուսակցության նախագահ Ֆարաժալլա Հելում, նշում էր. «Մարդիկ կան, որ կը նադադատեն մեզ, արար կոյունիստներս, թե զուտ արարական կուսակցություն մը չենք, քանի որ հայեր ալ ունինք մեր շարքերն ներսւ Մյուս կողմեն հայեր ալ կան, որ ձեզ կը նա-

դատեն, թե արաբներու հետ նույն կուսակցության մեջ եք։ Սակայն մենք, արար կոմունիստներու հայ կոմունիստներուն դործակցելով լավագույն արաբներ կհանդիսանանք, քանի որ մեր ազգային գործերուն համար ապահոված կը լլանք մեր հայ եղբայրներուն աշակցությունը։ Իսկ հայ կոմունիստները արարական կոմունիստներուն գործակցելով լավագույն հայերը եղած կը լլան, որովհետեւ այդ ձեռվ անոնք լավագույնս կժառային հայ ժողովրդի շահերունը¹։

Լիրանանի հայերն իրենց հերթին շատ բարձր էին գնահատում հայ-արար բարեկամության անհրաժեշտությունը և ամեն ինչ անուամ այդ բարեկամության ամրապնդման, լիրանանի ազգային խնդիրներին աղնվորեն ծառայելու համար։ Հովհաննես Աղբաշյանը հանդես գալով լիրանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցության ազգային համագումարում, նշեց հետեւալը։ «Հայ կոմունիստները, որոնք իրենց արար կոմունիստ ընկերներուն հետ բանտարկվեցան և հալածվեցան, ապացուցանեցին, թե հայերը օտարներ չեն այս երկրուներուն մեջ, այլ Սուլիման և լիրանանը կնկատեն իրենց հայրենիքը։ Եվ եթե կա մեկը, որ օտար է այս երկրներուն և անոնց ժողովրդին, ատիկա ոչ թե հայերն են, այլ իմաստերիալիստները»²։

Լիրանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցությունների հայկական սեկցիան գոյություն ունեցավ մինչև 1947 թ., 1947 թ. դեկտեմբերի 30-ին հայկական սեկցիայի ղեկավարությունը հրապարակեց կոմյունիկե, որտեղ ասված էր, որ 23 տարիների ընթացքում հայ կոմունիստները կազմուել էին Սիրիայի և լիրանանի կոմունիստական կուսակցությունների հատուկ սեկցիա և արաբների հետ կողք-կողքի պայքարել են իմաստերիալիզմի դեմ հանում արաբական երկրների ազատության, Մյուս կողմից, հայ կոմունիստների մտահոգության կարևոր առարկան է եղել Սովետական Հայաստանը և նրա շահերի պաշտպանությունը։ Այժմ այդ սեկցիաների ղեկավարությունը, լիրանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների համաձայնու-

1 ոճողավորդի Զայն, 4 հունվարի 1944 թ.։

2 Նույն տեղում, 7 հունվարի 1944 թ.։

թյամբ որոշում է լուծարքի ենթարկել Հայկական սեկցիան և ստեղծել ուժայ Հայրենասերների միություն։ Այդ որոշման մեջ նշված էին այն պատճառները, որոնք թելադրում էին այդպիսի քայլի անհրաժեշտությունը։ «Հայկական կոմունիստական սեկցիան գտնում է, որ պատերազմից հետո տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով, նրա առջև կանգնում են նոր խնդիրներ։ Արտասահմանի հայերի կյանքում տեղի ունեցավ պատճական մեծ փոփոխություն՝ աշխարհով մեկ սփռված հայ տարագիրների վերադարձը Հայաստան, Հայկական կոմունիստական սեկցիան գտնում է, որ ներկա շրջանում ամենակարևոր խնդիրը հայերի ազգային միավորումն է։ Այդ պարագան պահանջում է մեղանից և բոլոր հայ հայրենասերներից իրենց ուժերի լարումը այդ խնդիրի կատարման համար... Այդ ազգային խնդիրների իրադրժման և ազգային ուժերի կենտրոնացման հեշտացման համար Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների համաձայնությամբ որոշեց լուծարքի ենթարկել Հայկական կոմունիստական սեկցիան և մյուս հայ հայրենասերների հետ միասին ստեղծել «Հայրենասերների միություն»։

Լիբանանի կոմունիստական կուսակցությունը այժմ էլ հարկադրված է գործել անլեզու պայմաններում՝ կազմակերպելով աշխատավորական մասսաների պայքարը ընդդեմ օտարերկրյա իմպերիալիստների ու նրանց ներքին դաշնակիցների, հանուն ազգային տնտեսության ստեղծման, աշխատավորական մասսաների վիճակի բարելավման, դեմոկրատիայի և բարեկամական կապերի ամրապնդման արարական ու սոցիալիստական երկրների հետ։

Լիբանանի կոմունիստական կուսակցությունը ակտիվորեն հանդես է գալիս հանուն միջազգային կոմունիստական շարժման շարքերի ամրապնդման։ Նա մասնակցեց 1960 թ. Մոսկվայում տեղի ունեցած 81 կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցությանը և հավանու-

¹ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 8088, л. 8—9.

թյուն տվեց այդ խորհրդակցությունում ընդունված որոշումներին: Մեր ժամանակի կարևորագույն հարցերում՝ պատերազմի և խաղաղության, միջազգային հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի տեսի ու դերի գնահատման հարցերում կիրանանի կոմունիստական կուսակցությունը գրավում է նիշտ և սկզբանքային դիրք, հետևողականորեն պայքարելով մարքս-լենինյան տեսության անաղարտության համար:

Կիրանանի մյուս կարևոր կուսակցություններից է կիրանանի սոցիալիստական առաջադիմական կուսակցությունը—«Հըգը աթ-թարադդումի ալ-իշթիրաքիւ: Նա հիմնվել է 1949 թ.: Նրա հիմնադիրն է Քամալ Ջուբրլատը, կիրանանի սոցիալիստական առաջադիմական կուսակցությունը աչ սոցիալիստական, մանրուրդուական կուսակցություն է, նա իրեն համարում է «միջազգային սոցիալիստական շարժման» բաղկացուցիչ մասը: «Միջազգային սոցիալիզմ» ասելով այդ կուսակցությունն ինկատի ունի ոչ թե նրա հեղափոխական, այլ ռեֆորմիստական, աջ-համաձայնողական թերը: Պատահական չէ, որ կուսակցության լիդեր Թ. Ջուբրլատը բազմից ընդգծել է իր հոգենոր հարազատությունը այն սոցիալիզմի հետ, որ ներկայացնում էր էտալին: Կանգնած լինելով աչ սոցիալիզմի դիրքի վրա այդ կուսակցությունը դեմ է հեղափոխական գործողությունների և ընդունում է միայն ռեֆորմի ուղին: Նա հանդես է դալիս կոմունիստական գաղափարախոսության դեմ, շթաբըներով իր թշնամանքը նրան նկատմամբ:

Կուսակցությունը շոմի հստակ ծրագիրը նրա ծրագիրը, որ հրատարակվեց պարտիայի օրգան «Ան-Նաբառ-ում 1952 թ. սեպտեմբերի 10-ին, լի է ընդհանուր ֆրազներով և շատ հարցեր մշուշապատ են: Որո՞նք են այդ կուսակցության հիմնական ծրագրային պահանջները: Ներքին քաղաքականության բնագավառում նա պահանջում է նոր ընտրական օրինադիմ մշակել, մտցնել սոցիալական ապահովագրում և ստեղծել փոխօգնության գրամարկղներ, պաշտպանել գյուղի աշխատավորների և պետական ծառայողների աշխատանքային շահերը, հոգանավորական քաղաքականություն վարել մանր հողատերերի նկատմամբ և նրանց վաճառել պե-

տական հողերը: Նա պահանջում է նաև ստեղծել գյուղատընտեսական բանկ, որը ֆինանսական օգնություն ցույց տա մասն արտադրողներին: Բացի այդ նա պահանջում է պրոտեկցիոնիստական քաղաքականություն վարել ազգային արդյունաբերության նկատմամբ, ազգայնացնել կիրանանում գործող մի շարք մոնոպոլիստական ընկերություններ և այլն¹: Խնդիր տեսնում ենք կուսակցության ծրագիրը լրիվ արտահայտում է գյուղի և քաղաքի մասն արտադրողների շահերը, թեև դրանց պահանջության համար չի առաջարկում արժատական միջոցառումներ: Այդ բոլորին նա ձգտում է հասնել միայն խաղաղ բարեփոխումների ուղիղով:

Այդ կուսակցությունը հստակ դասակարգային քաղաքականություն չի վարում: Նա ոկտոտի տերրորդ ուժին դեր կատարել խոշոր կապիտալիզմի և գործավարներու դասակարգային բախումներու ընթացքին², իսկ ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա սոցիալիստական առաջդիմական կուսակցությունը պաշտպանում է դրական չեղոքության քաղաքականությունը, պահանջում է կիրանանը և արարական մյուս երկրներն ազատել իմպերիալիզմի կապանքներից և դիմ է ռազմական դաշինքներին միանալուն: Նա կողմնակից է բարեկամական հարաբերությունների զարգացման Սովետական Միության և սոցիալիստական մրգս երկրների հետ:

Այս կուսակցության քաղաքականության համար մնորոշ է նաև այն, որ նա ակտիվ գործնական քայլերի չի դիմում իր պահանջների կենսագործման համար և շատ հաճախ իր խընդիրը համարում է լուծված այս կամ այն հարցի կապակցությամբ պաշտոնական հայտարարություն անելով:

Կիրանանում գործում են մի շարք այսպես կոչված ավանդական բլոկ-կուսակցություններ, որոնք մեծ դեր են խաղում կիրանանի քաղաքական կյանքում: Դրանք են Ազգային բլոկ, Սահմանադրական միություն և Ազգային լիբերալներ կուսակցությունները: Հիմնականում նրանք են վերահսկում

¹ 10.IX.1952 «بیرونی»

² «Արարատ», 18 հունիսի 1956 թ.:

պառաւանենոր և ղեկավար դիրք զբավում պետական ապա-
րատում¹:

Ազգային բլոկը (*«Ալ-Քութա ալ-Ղաթանիյա»*) ստեղծվել
է 1935 թ. էմիլ Էղդեհի կողմից: Ալֆմ նրա լիդերներն են էմիլ
Էղդեհի որդիները՝ Ռայմոն և Պյեր Էղդեները, էղդարդ Հանա-
ուին, Թանիուս Ֆրեյն և Նուչադ Բուեյզը: Ազգային բլոկը
Լիբանանի առևտրա-ֆինանսական բուրժուազիայի և կալ-
վածատերերի կուսակցությունն է: Նրա գործունեության մեջ
մեծ դեր է խաղում մարոնիթ ռովուրականությունը: Այդ կու-
սակցությունը ողորեղ կապերով կապված է արևմտյան պե-
տություններու հետ և բնակլ շեն ցանկանար փոփոխված տես-
նել լիբանանի ներկա կառուցվածքը²: Ազգային բլոկը ման-
դատային սիստեմի գոյության ժամանակ սերտորեն կապված
էր ֆրանսիական իմպերիալիստների հետ, իսկ մանդատի վե-
րացումից հետո նա կապվում է նաև ամերիկյան և անգլիա-
կան իմպերիալիստների հետ:

Կուսակցությունն հիմնականում բաղկացած է առևտրա-
կաններից, կալվածատերերից, արդյունաբերողներից և բարձ-
րաստիճան պհատական պաշտոնյաններից:

Ազգային բլոկը ներքին քաղաքականության բնագա-
վառում պահանջում է խրախուաել օտարերկրյա կապիտալի
հոսքը Լիբանան, օտարերկրյա կապիտալիստներին և առև-
տրականներին տալ համապատասխան երաշխիք և այլն: Կու-
սակցության ծրագրում շատ է խոսվում ժողովրդի կարիքնե-
րի մասին, սակայն դրանք դատարկ խոսքեր են՝ ժողովրդա-
կան մասսաների մոտ հեղինակություն նվաճելու համար:
Իրականում նա հետևողականորեն պաշտպանում է կոմպրա-
դորական բուրժուազիայի, կալվածատերերի և մարոնիթ ռո-
վուրականության շահերը³: Արտաքին քաղաքականության
բնագավառում Ազգային բլոկը կողմնակից է արևմտյան տե-
րությունների հետ սերտ դաշնութին, պահանջում է միանալ
արևմտյան ուղմական խմբավորումներին և ձգտում է ստըն-

¹ Н. Տ հ ա ր ա ծ ի . . . թ. 144.

² «Արարատ», 18 Հունիս 1956 թ.:

³ «Современный Ливан», стр. 148.

տեսական օգնություն ստանալ արևմտյան իմպերիալիստական տերություններից: 1952 թ. ապրիլի 25-ին կուսակցության գործադիր կոմիտեն ընդունեց կուսակցության ծրագիրը լրացնող մի բանաձև, որը կոչ էր անում Լիբանանին միանալ ռհամատեղ պաշտպանության սիստեմին: Ազգային ըլոկը հրաժարվեց մասնակցել Լիբանանի կուսակցությունների կոնֆերանսին, որը հանդես էր գալիս Լիբանանը արևմտյան տերությունների մասնակցությամբ որևէ ռազմական խմբավորման մեջ մտցնելու դեմ: Նա կողմնակից էր և պաշտպանում էր սէյզնհաստերի դոկտրինան: Նրա օրգանն է «Աս-Սահաֆա»-ն, որը բացերաց պաշտպանում է «ամերիկյան օգնություն»-ը և արևմուտքի հետ Լիբանանի սերտ դաշինքի գաղափարը: Կուսակցության դիրքը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների նկատմամբ ոչ բարյացակամ է:

Մինչև 1952 թ. Լիբանանում գոյություն ուներ Սահմանադրական բլոկ կուսակցությունը: Սակայն նա 1952 թ. քայլավեց և նրա բազայի վրա 1954 թ. քաղաքական արենա դուրս եկավ Սահմանադրական միություն կուսակցությունը, որի լիգերներն են Ֆիլիպ Թաքլան և Բահիչ Թակի էդ-Դինը: Ինչպես Աղքային բլոկը, այնպես էլ Սահմանադրական միությունը հիմնականում կաղղմած է առևտրականներից, կալվածատերներից, փաստաբաններից, պետական պաշտոնյաներից և այլն: Փաստորներ այդ երկու կուսակցությունների միջև սկզբունքային ոչ մի տարրերություն չկա: Նրանք ներկայացնում են կոմպրադորական բուրժուազիայի, կալվածատերների և մարոնիթ հոգևորականության տարրեր խոմբերի շահները: Միայն թե Սահմանադրական միություն կուսակցությունն ավելի ճկում քաղաքականություն է վարում: Նա բացահայտորնեն չի պաշտպանում Արևմուտքի հետ դաշինքի դադափարը, ցույց է տալիս, որ կողմնակից է արարական միասնականությանը և այնու իհարկե, ու չի նշանակում, թե նա արևմտյան օրինտացիա չունի:

Ներքին քաղաքականության բնագավառում նա պահան-

1. «Современный Ливан», стр. 149.

շում է առևտրի աղատություն և արդյունաբերության պաշտպանություն:

Բացի ալդ, ինչպես նշել է կուսակցության հանգուցյալ զեկավար Բիշարա Էլ-Խուրին 1959 թ. ապրիլի 23-ի իր ելույթում, իր կուսակցությունը պահանջում է արմատական փոփոխություն մտցնել ընտրական սիստեմում, համագործակցություն հաստատել բոլոր դասակարգերի և կրոնական համայնքների միջներ:

Կուսակցության պաշտոնական օրգանն է «Ալ-Դիար» թերթը, իսկ զեկավար մարմինը՝ կենտրոնական բյուրոն: Սահմանադրական միությունը բազմամարդ կուսակցություն չէ և չունի տեղական կազմակերպություններ:

Լիբանանում զգալի ազդեցություն ունեն ֆալանգիստները՝ «Ալ-Թաթար» ալ-Հուրբանիայա: Դա միայն բրիտանյա, գլխավորապես մարոնիթ երիտասարդությունից բաղկացած կիսառազմական, մանրբուժության կազմակերպություն է, որը ստեղծվել է 1934 թ.: Նրա անդամների և համակրողների թիվը համանում է մի քանի հազարի: Այդ կուսակցության կազմում կան գործարար շրջանների, մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ, առևտուականներ, բժիշկներ, փաստաբաններ, ինչպես նաև բանվորներ ու գյուղացիներ: Նրա անդամները, որոնք ցույցերի և հանդեսների ժամանակ կրում են ուղղմական համազգեստ, բաժանվում են ֆալանգաների (500-ական մարդ), կորպուտաների (250-ական մարդ), սեկցիաների (125-ական մարդ) և էսկադրաների (25-ական մարդ):¹

Այդ կուսակցության ծրագրային պահանջները հիմնականում հանգում են հետեւյալին՝ Լիբանանի անկախության պահպանումը նրա ներկա սահմաններում, զորացնել աղդային ոգով քաղաքացիների պատրաստությունը, ազգային նպատակներին համեմու համար երաշխավորել Լիբանանի անտեսական զարգացումը, բարելավել աշխատավոր դասակարգի վիճակը և այլն:²

¹ 24.V.1959 «النـافـرـاف»

² В. Луцкий, Арабские страны, М., 1947, стр. 73.

³ «Արաբաց», 16 «ուշիսի 1949 թ.»

Այս կուսակցությունը շատ բացասական դեմ է խաղում Լիբանանի քաղաքական կյանքում: Նա ատելություն է սերմանում Լիբանանի քրիստոնյաների և մուսուլմանների միջև և պառակտում Լիբանանի աշխատավորական մասսաների շարքերը: Կուսակցությունը բրացարձակագեց դեմ է որևէ միության և հատկապես քաղաքական, արարական որևէ պետության հետո¹, Ֆալանգիստներն այն տեսակետն են զարգացնում, որ Լիբանանի բնակչությունն այլ կուլտուրա ունի և տարրեր հիմք, որը հնարավորությունն ըստ տալիս նրան խառնվելու մյուս արարական երկրների հետ: Չնայած իրենց բազմաթիվ հայտարարություններին, նրանք փաստորեն դեմ են արարական երկրների հետ որևէ համագործակցության: Դրա փոխարեն նրանք ունեն ակնհայտ արևմտյան և, հատկապես, ամերիկյան օրինատացիա: Նրանք կողմնակից են ամերիկյան ուղղության և երկրում օտարերկրյա ու, հատկապես, ամերիկյան կապիտալի ներհոսմանը, թեև դա հակառակության մեջ է գտնվում նրանց ծրագրի այն կետի հետ, որտեղ ասվում է երաշխավորել Լիբանանի տնտեսական զարգացումը: Սակայն հակասությունը առելի է այդ կուսակցության ծրագրային պահանջների և ամբողջ քաղաքական գործունեության մեջ, «Ֆալանգիստները», — նշում է «Արարատ» թերթը, — իրենց սեփական պրոպագանդի նյութ դարձուցած են բարելավելու Լիբանանի տնտեսական կացությունը: Բայց իրենց ըստ խոսքերի գործի չեն անցները²: Ֆալանգիստները կողմնակից են, որ Լիբանանը միանա արևմտյան իմպերիալիստական բլոկներին: Նրանք իր ժամանակին պաշտպանում էին և էլեկտրակառակի դոկտրինան: Խոկ 1958 թ. ապստամբության ժամանակ ֆալանգիստները հանդիսանում էին պրեզիդենտ Շամունի հենարանը և հիմնական մարտական ուժը՝ ուղղված հակաիմպերիալիստական պայքարի մարտիկների դեմ: Սովետական Միության և սոցիալիստական լագերի մյուս պետությունների նկատմամբ այս կուսակցությունը բացահայտ թշնամանք է տածում:

¹ E. Abouchaidid, 30 years of Lebanon and Syria, 1917—1947, p. 80.

² «Արարատ», 18 Հունիսի 1956 թ.:

Յալանգիստների լիդերն է Պյեր Ժեմայելը, պաշտոնական օրգանը՝ «ԱՀ-Ամալը»:

Համարյա նույն բնույթի՝ կիսառազմական, երիտասարդական, մանրբութուական կազմակերպությունն է «Նաշշաղես-ն¹։ Սակայն նա ներկայացնում է միայն մուսուլման երիտասարդությանը և ստեղծվեց 1934 թ. ի հակակշիռ ֆալանգիստների միջն գոյություն ունի ուժեղ անտագոնիզմ²։ Սակայն նրանց միջև մի կարևոր տարրերություն էլ կա: Եթե ֆալանգիստները կողմակիցներուն կիրանանի սերտ դաշինքին արևմտյան իմպերիալիստական պետությունների հետ և նրանց ազդեցության տարածողներից են հանդիսանում, ապա «Նաշշաղես»-ն բացահայտորեն հանդիս է գալիս կիրանանը արևմտյան բլոկին միացնելու քաղաքականության դեմ: «Նաշշաղես»-ն հատկությունը հակարևմտյան խմբումն է³, — նշում է «Արարատ»-ը: Դեռ ավելին, նրանք կողմնակիցներ են Կիրանանի մերձեցմանը արարական մյուս երկրների հետ: Խնչպես նշում է է. Արուշդիզը, «Նաշշաղես» վստահորեն հավատում է արարական երկրների քաղաքական ու տնտեսական բացարձակ միասնությանը⁴:

Կուսակցության ղեկավարն է Աղման Հաքիմը:

Բացահայտ ֆաշիստական բնույթի կուսակցությունն է կիրանանի Ազգային-սոցիալական կուսակցությունը: Նա հիմնվել է 1932 թ. և հայտնի է իր ունեցած կապերով իտալական և գերմանական ֆաշիստների հետ: Պատահական չէ, որ այդ կուսակցության հմրեման սվաստիկան էր⁵, Կուսակցությունն ունի ուղղմա-ֆաշիստական կառուցվածք, նրա հիմնադիրն էր Անտուան Սաադեն, թերութիւ ամերիկյան համալսարանի նախկին դասախոս, որն անձնական կապեր ուներ Մուսոլինիի հետ: Այս կուսակցությունը ազգային-սոցիալա-

1 «Նաշշաղես», «գնականեր» դժբախտության մեջ,

2 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 3108, л. 128.

3 «Արարատ», 18 հունիսի 1955 թ.:

4 Е. Абоуշдид. — р. 80.

5 В. Луцкий ... стр. 73.

կան սկսեց կոչվել 1958 թ. հետու Մինչ այդ նա կոչվում էր Սիրիական ազգային կուսակցություն և գրականության մեջ հայտնի էր ղովմի սուրբիներ անունով։ Կուսակցությունը սիրիական էր կոչվում այն պատճառով, որ նրա հիմնական ծրագրային պահանջը ու Մեծ Սիրիայի կամ ինչպես իրենք էին անվանում, ընական Սիրիայի ստեղծումն էր, որը պետք է Սուեզի ջրանցքի գոտուց տարածվի մինչև Տավրոսի լեռները, իր մեջ ընդգրկելով Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Հորդանանը և Պաղեստինը¹։ Սակայն այդ պարտիայի մեջ մի խումբ կար, որը թեև սկզբունքորեն դեմ չէր «Մեծ Սիրիայի» ծրագրին, սակայն գտնում էր, որ նրա մեջ չպետք է մտցնել Լիբանանը և նրա պետական անկախությունը պետք է ապահովել Այդ խումբը գլխավորում էր նիմեն Թաքեթը և այդ հողի վրա պառակտում տեղի ունեցավ կուսակցության շարքերում²։ 1949 թ. ղովմիները պրակտիկ քայլի դիմեցին իրենց ծրագրային պահանջը կենսագործելու համար։ Նրանք փորձեցին պետական հեղաշրջում կատարել լիբանանում, որը պետք է հանդիսանար առաջին քայլը «Մեծ Սիրիա» ստեղծելու անդիմական իմացերիալիզմի պլանների իրականացման ճանապարհին։ Սակայն այդ հեղաշրջումը ձախողվեց և ղովմիների առաջնորդ Անտուան Սաադեն ձերբակալվեց ու գնդակահարվեց, իսկ կուսակցությունը պաշտոնապես արգելվեց։

Չնայած այդ հանգամանքին այդ կուսակցությունը Շամունի իշխանության գլուխ գալուց հետո (1952 թ.) համարյա կիսալեգալ վիճակում էր գտնվում և օգտվում ազատություններից։ Նա ակտիվորեն պաշտպանում էր Շամունին 1958 թ. ապստամբության ժամանակ և Շամունը նախքան պրեզիդենտությունից հեռանալը պաշտոնապես թույլատրեց այդ կուսակցության գործունեությունը, որը սկսեց կոչվել ազգային-սոցիալական կուսակցություն՝ «Հըզը ալ-Կառումի ալ-իշթիմահի»։ 1961 թ. դեկտեմբերին այս կուսակցությունը պետական հեղաշրջում կատարելու մի անհաջող փորձի ևս դիմեց,

¹ Kermit Roosevelt, Arabs, oil and history, New York, 1949, p. 139.

² E. Abouchadi... p. 79.

որից հետո կիրանանի կառավարությունը նրկին այդ կուսակչությունն արգելեց:

Աղջային-սոցիալական կուսակցությունն իր գործունեության մեջ մեծ տեղ է հատկացնում տեսորի քաղաքականությանը, շի խորշում դիմել սպառնալիքների ու սպառնությունների և բացահայտ հակակուսնիստական դիրք է զրավում:

Կիրանանում կան նաև մի շարք այլ կուսակցություններ, ինչպես «Աղջային կոմիտե», «Աղջային կող» և այլ կուսակցություններ, որոնք ներկայացնում են կիրանանի բուժուազդիայի և կալվածատերերի տարրեր շերտերի շահերը:

Կիրանանյան իրականության մեջ արաբական կուսակցությունների կողքին գոյություն ունեն և գործում են հայկական ավանդական քաղաքական կուսակցություններ՝ Հնչակներ, ռամկավարներ, դաշնակներ, զանազան կազմակերպություններ և այլն: Ըստ որում նրանք տարբեր դեր են խաղում հայ և արաբ իրականության մեջ: Հնչակները և ռամկավարները հայ կոմունիստների հետ միասին կազմում են դեմոկրատական թեր և դաշնակցում արաբ դեմոկրատների հետ՝ հանուն կիրանանի ազգային անկախության, իմակերիալիզմի ազդեցության վերացման և հայ-արաբ բարեկամության, Մինչդեռ դաշնակները արարական հետազիմական ուժերի հետ գտնվում են միևնույն շարքում և պառակտում մտցնում լիրանանահայ համայնքի ներսում:

Կիրանանի քաղաքական կյանքում մեծ դեր են խաղում զանազան կուսակցական խմբավորումներ և միություններ՝ ինչպես օրինակ Աղջային կոնգրեսը, Սոցիալիստական նախատը և այլն:

Աղջային կոնգրեսը ստեղծվել է 1943 թ., Նրա գործունեությունն առանձնապես ակտիվ էր և դրական 1943—1946 թ. հակաիմակերիալիստական պայքարում: Դա միջազարտիական խմբավորում է, որի մեջ մտնում են կիրանանի համարյա բոլոր աշխի ընկերող կուսակցությունները, այդ թվում նաև կոմունիստական կուսակցությունը: Նրա աշխատանքներին մասնակցում են նաև հայ դեմոկրատական ուժերը: Աղջային կոնգրեսը իր գլխավոր խնդիրն է համարում պայքարը կիրա-

նանի անկախության համար։ Կոնգրեսը շունի որոշակիորեն մշակված ծրագիր և նա գումարվում է ամեն անգամ, եղբ կիրանանի քաղաքական կյանքում տեղի է ունենում խոչըր իրադարձություն։ Սակայն 1946 թ. հետո կոնգրեսի աշխատանքներում որոշ դադար տեղի ունեցավ, նա համարյա չէր գումարվում և այնպես ակտիվորեն չէր գործում, ինչպես սկզբնական շրջանում։ Եվ միայն 1951—1953 թթ. և ապա 1958 թ. նա սկսեց որոշ աշխատություն ցուցաբերել։ Տարբեր քաղաքական կուսակցությունների միավորումը կոնգրեսում իր կնիքն է դրել նրա աշխատանքների վրա։ Կոնգրեսի մեջ մտնում են նաև այնպիսի կուսակցություններ, որոնք կողմնակից են արևմտյան տերությունների հետ համագործակցելու Այդ պատճառով էլ նրա որոշումները միշտ չեն, որ կրում են վճռական ու արժատական բնույթ։

Միշտուակցական խմբավորում էր, այսպես կոչված Լիբանանի Սոցիալիստական ճակատը, որի մեջ միավորվել էին Սոցիալիստական-առաջադիմական, Ազգային բլոկ, Ազգային կոչ, Փալանգիստների, ղովմինների կուսակցությունները, որոնք պայքարում էին Բիշարա Քլ-Խուրիի դեմ, պահանջելով նրա հրաժարականը, Սակայն այդ միավորումը երկար գոյցից շունեցավ և 1952 թ. սեպտեմբերին Բիշարա էլ-Խուրիի հրաժարականից հետո որոշ ժամանակ անց, ներքին հակասությունների պատճառով քայլալից և դադարեց գոյություն ունենալուց։

Այսպիսով, լիբանանի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ անկախություն ձեռք բերելուց հետո, թեև երկիրը հասել է որոշ հաջողությունների տնտեսության զարգացման և կյանքի այլ բնագավառներում, այնուամենայնիվ, լիբանանի առջև կանգնած բազմաթիվ ազգային կարևոր խնդիրներ գեռնա չեն լուծվել, երկիրը վերջնականապես չի ազատվել օտարերկրյա իմպերիալիզմի աղղեցությունից, որի դիրքերը տակավին ուժեղ են լիբանանի տնտեսության մեջ։ Կառավարությունն իր քաղաքականության մեջ հաշվի չի առնում ժողովրդական մասսաների պահանջ-

Ները և շի ապահովում դեմոկրատական իրավունքները։ Ուստի Հիրանանը օտարերկրյա իմպերիալիզմի ազդեցությունից թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքականապես ազատելը, ազգային անտեսության ստեղծելը, աշխատավորական մասսաների դրության բարելավելը և անկախության ու դեմոկրատիայի ուղիղով ընթանալը մնում է օրակարգի մեջ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԼԻԹԱՆԱՆԻ
ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ
(1939—1946 թ.)

Մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը
այն տերիտորիան, որ այժմ մենք անվանում ենք Լիբանան,
մտնում էր օսմանյան կայսրության կազմի մեջ։ Օսմանյան
կայսրության խայտառակ պարտությունից և անկումից հետո
նրա կազմի մեջ մտնող արարական տիրապետություն-
ները հիմնականում բաժանվեցին Անգլիայի ու Ֆրանսիայի
միջև, Դեռևս 1916 թ. Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքվել
էր այսպես կոչված «Սայքս-Պիկոյի» գաղտնի համաձայնա-
գիրը, ըստ որի Սիրիան և Լիբանանը հայտարարվում էին
ֆրանսիական ազգեցության գոտի, իսկ Միջազգետքը (բացի
նրա հյուսիսային մասից), Անգլո-ռուսանը և Պաղեստինը՝
անգլիական¹։ Հենվելով այդ գաղտնի համաձայնագրի վրա
1920 թ. Սան Ռեմոյում տեղի ունեցած կոնֆերանսում Լիբա-
նանի և Սիրիայի մանդատը հանձնվեց Ֆրանսիային, իսկ
Իրաքի և Պաղեստինի մանդատը՝ Անգլիային։ 1922 թ. Հուլիսի

¹ „Documents on British foreign policy. 1919—1939”, 1-st series,
v. 4, p. 241—247; այս նույն „Раздел Азиатской Турции. По секрет-
ным документам б. министерства иностранных дел”, под ред. Е. А.
Адамова, М., 1924, стр. 154—157.

24-ին Ազգերի լիդայի խորհուրդը պաշտոնապես հաստատեց Հրամանսիայի մանդատը Սիրիայի և Լիբանանի վրա¹: Մանդատային սիստեմը գաղղութային ամրապնդության նոր և բռնպարկված ձև էր, որ հորինվեց և հրապարակ նետվեց արևմբայան իմպերիալիստական տերությունների կողմից: Վ. Ի. Լենինը մանդատային սիստեմը համարում էր կողոպուտի մի խորամանկ և սքողված ձև:

1919 թ. հանդես գալով Արևելքի կոմունիստական կազմակերպությունների համառուսական 2-րդ համագումարում վ. ի. Լենինը նշում է. «Երբ խոսում են գաղղութների մանդատները բաժանելու մասին մենք հիմնալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի լնչին մասին իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»², Ղեկավարվելով լենինյան ցուցումներով սովետական կառավարությունը երբեք չի ճանաչել մանդատային սիստեմը և բազմիցս հանդես է եկել պրոտեկտորատների և մանդատների վերացման պահանջով³, իսկ 1934 թ., երբ Սովետական Միությունը դարձավ Ազգերի լիդայի անդամ, սովետական պատվիրակը հատուկ ընդգծեց սովետական կառավարության բացասական վերաբերմունքը մանդատային սիստեմի նկատմամբ և հրաժարվեց մասնակցել Ազգերի լիդայի Մանդատային մշտական հանձնաժողովի աշխատանքներին⁴:

Այսպիսով, թեև Լիբանանը ազատվեց թրքական բռնակալական լծից, սակայն նա քաղաքական անկախություն ձեռք շրբեց: Նա ընկավ ֆրանսիական իմպերիալիզմի տիրապե-

1 Ю. Ключников, А. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 3. От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской революции, вып. 2. Акты дипломатии иностранных государств, М., 1929, стр. 174—176.

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 186.

3Տե՛ս «Документы внешней политики СССР», М., 1962, т. VI, стр. 226; «Известия», 10, V. 1927.

4 «Советско-арабские дружественные отношения», М., 1961, стр. 14—15.

տության տակ, Ֆրանսիական մանդատային ռեժիմի հաստատումը խոր զայրույթ առաջացրեց Լիբանանում: Երկրի ղեմուկրատական ռւժերը դեմ էին մանդատին և պահանջում էին Լիբանանի անկախության ճանաչումը: Եվ այդ պահանջը դարձավ երկու Համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում լիբանանում ծավալված հակահմապերիալիստական պայքարի հիմնական բովանդակությունը, Սակայն մինչև երկրորդ Համաշխարհային պատերազմը լիբանանի ժողովրդական մասսաներին և հակաիմապերիալիստական մրուս ռւժերին չհաջողվեց հասնել իրենց այդ պահանջի կենսագործմանը ու լիբանանը երկրորդ Համաշխարհային պատերազմին մասնակցեց (1939—1943 թթ.) որպես Ֆրանսիայի ենթամանդատային տերիտորիա:

Երբ սկսվեց պատերազմը ֆրանսիական իշխանությունները լիբանանում մտցրին արտակարգ գրություն: Նրանք դիմեցին մի շարք ռեպրեսիվ միջոցների, ցրեցին պառլամենտը, ազատեցին բոլոր մինիստրներին և կուռավարության փոխարքներին պահանջին պետական մի քարտուղարություն: Բացի այդ նրանք դիմեցին մի շարք հակադեմոկրատական ակտուրի՝ արգելեցին կոմունիստական կուռակցությունը, փակեցին նրա օրգան «Սառութ աշ-Շաար»-ը, ձերբակալեցին կոմունիստական կուռակցության ղեկավարներ Խալեդ Թեկդաշին, Նիկոլա Շամիին, Մուատաֆա ալ-Արիսին և այլն: Այս գործողությունները չեն արդարացվում պատերազմական իրադրությամբ: Պարզապես ֆրանսիական գաղութարարները օգտագործեցին պատերազմի հանգամանքը իրենց դիրքերն լիբանանում ավելի ամրացնելու և դեմոկրատական ու ազգային ռւժերին հարված հասցնելու համար:

Պատերազմը Ֆրանսիայի համար կատասրոֆիկ վախճան ունեցավ և նա 1940 թ. հունիսին ստիպված գիմեց կապիտուլյացիայի: Այդ կապիտուլյացիայից հետո լիբանանի ֆրանսիական մանդատային իշխանությունները իրենց հավատարմությունը հայտնեցին զինադադարի պայմաններին և Վիշիի կուռավարությանը: 1940 թ. հունիսի 7-ին լևանտում

¹ A. Hourani, Syria and Lebanon, London, 1946, p. 230.

Ֆրանսիական ուժերի հրամանատարի պոստում գեներալ Վեյց-
դանին փոխարինած գեներալ Միթելհառլեբը արձակեց մի
հրաման, որտեղ ասված էր, որ համաձայն զինադադարի
ֆրանսիական պայմանների, ինքը հայտարարում է, որ
մանդատային տերիտորիաների ստատուում ոչ մի փոփխու-
թյուն տեղի չի ունենալու Հրաման է տրված դադարեցնել պա-
տերազմական դարձողությունները, Ֆրանսիական դրշը շա-
րունակվելու է ծածանվել այս տերիտորիաների վրա և Ֆրան-
սիան շարունակվելու է կատարել իր առաքելությունը Անան-
տում¹:

Ֆրանսիայի կապիտուլյացիան, Անանտում ֆրանսիական
մանդատային իշխանությունների միանալը Կոմպլենի զինա-
դադարին և գեներալ Միթելհառլեբը հրամանը պատերազ-
մական գործողությունները դադարեցնելու մասին բոլորովին
նոր իրադրություն ստեղծեցին Մերձավոր արևելքում, որը
լուրջ կերպով անհանգստացրեց Անգլիային, Փաստորեն լայն
հեռանկարներ ու հնարավորություններ էին ստեղծվում Մի-
րիա և Լիբանան գերմանական ու իտալական ներթափանց-
ման համար, Անգլիայի առջև բացվում էր Արաբական արևել-
քում գերմանական ու իտալական ֆաշիզմի դեմ միայնակ
պայքարելու մոռայլ հեռանկարը. Ուստի Անգլիան դիմում է
մի շարք քայլերի այդպիսի հնարավորությունն իրականություն,
դարձնելը խափանելու համար, Պատերազմական գործողու-
թյունները դադարեցնելու մասին Միթելհառլեբը հրամանից
երեք օր անց, 1940 թ. հուլիսի 1-ին, հրապարակվեց Անգլիա-
յի կառավարության գեկլարացիան, որի մեջ ասված էր, որ
անգլիական կառավարությունը ենթադրում է, թե Միթելհառ-
լերի հրամանը չի նշանակում, որ եթե Գերմանիան ու Իտա-
լիան փորձեն օկուպացնել Սիրիան ու Լիբանանը, ապա Ֆրան-
սիական ուժերը դիմադրություն ցույց չեն տալու Այնուհետև
անգլիական կառավարությունը դգուշացնում էր, որ սինթը

¹نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، القاهرة، ١٩٥٤ ص ١٣

թույլ չի տա, որ որևէ թշնամի պետություն օկուպացնի Սիրիան կամ Լիբանանը կամ Նրանց օգտագործեն որպես բազա¹, իսկ եթե, ասված էր դեկլարացիայում, ֆրանսիական իշխանությունները թույլ տան, որ առանցքի երկրները Սիրիան ու Լիբանանը օգտագործեն իրենց ազրեսիլ նպատակների համար, ապա Մեծ Բրիտանիան իրեն ազատ է համարելու դիմել այնպիսի գործողությունների, որ ինքը նպատակահարմար կդատի:

Սակայն ֆրանսիական իշխանությունները հաշվի չառան այդ զգուշացումները և ուժեղացրին իրենց համագործակցությունը առանցքի երկրների հետ, Եռուսով Լիբանան ժամանեց իտալական հաշտության հանձնաժողովը, որն իր հսկողության տակ վերցրեց Սիրիայի և Լիբանանի բոլոր ռեսուրսները և ֆրանսիական դիմով ուժերը, Հաջորդ քայլը եղավ դեմոկրատական հայացքների տեր պաշտոնյաներին աշխատանքից հեռացնելը և նրանց փոխարինելը այնպիսի մարդկանցով, որոնք համակրում էին առանցքի երկրներին և հավատում հիտլերյան ռուր կարգին։ Այդ գործում հատկապես մեծ եռանդ էր ցուցաբերում Լևանտում վիշիական զիսավոր կոմիսար Դենցը։ Նա մի կողմից հովանավորում էր պրոֆաշիստական տարրերին, իսկ մյուս կողմից ուժեղացնում բռնություններն ու ճնշումները դեմոկրատական ուժերի նկատմամբ։ Դենցը նույնիսկ արգելեց լսել բրիտանական ռադիոհաղորդումները։

Որպես պատասխան Անգլիան ևս դիմեց մի շարք քայլերի. նա տնտեսական բլոկադայի ենթարկեց Սիրիան ու Լիբանանը, խիստ սահմանափակեց կապը Պաղեստինի և ֆրանսիական մանդատային տերիտորիաների միջև, փակեց Կիրեկուլ-Տրիպոլի նավթամուղը և այլն, Սիրիայում և Լիբանանում խիստ վատացավ տնտեսական վիճակը, մթերքները զգալիորեն պակասեցին, նրանց գները շեշտակի բարձրացան։ Մանր կացություն ստեղծվեց աշխատավորական մասսաների համար, թեյրութում, Տրիպոլիտայ, Սալտայում և այլ վայրերում ծայր առան գործադուներն ու ցույցերը՝ ուղղված ֆրան-

¹ A. Hougrani, p. 232.

սիական մանդատային իշխանությունների քաղաքականության դեմ:

Դրությունը ավելի սրվեց այն բանից հետո, երբ ֆրանսիական իշխանությունները թույլ տվեցին գերմանական ինքնաթիւններին օգտագործել կանոնի օդանավակայանները:

Իսկ ինչպիսի՞ն էր կիրանանի տարրեր քաղաքական հոսանքների դիրքը պատերազմի հարցում, ո՞ւմ էին նրանք պաշտպանում և ի՞նչ նպատակներ էին հետապնդում: Կիրանանի տիրող վերնախավի, կալվածատեր-ֆեոդալների և կոմպրադորական բուրժուազիայի մեջ կային որոշ տարրեր, որոնք պաշտպանում էին հիտլերյան «նոր կարգը» և ցանկանում գերմանացիների հաղթանակը: Դրանք Վիշիի ռեժիմի կողմնակիցներն էին կիրանանում, որոնք հույս ունեին օգտվել գերմանական զինքի հաղթություններից: Զպետք է մոռանալ, որ զա այն ժամանակ էր, երբ պատերազմի բոլոր թատերաբեմերում գերմանական ֆաշիստները մեծ հաջողությունների հասան և ոմանց թվում էր, թե դրանք մշտական են: Բացի այդ, կիրանանի ռեակցիոն տարրերի համար գերմանական կառավարման մեթոդները, հիտլերյան «նոր կարգը» թվում էր ամենահուսալի զինքը գեմոկրատական շարժումները ճնշելու և իրենց տիրապետությունը պահպանելու համար Խալեդ Բեկաչը «Մահամերձ հուահատին սիրը» հոդվածում անդրադառնալով այդ հարցին, նշել է, որ կիրանանում թե՛ արաբների և թե՛ հայերի մեջ (ի նկատի ունի դաշնակցականներին) գոյրություն ուներ հինգերորդ զորասյուն Նա դրանց անվանում էր թափթփուկներ, որոնցից լրիվ հրաժարվում են արաբական ու հայկական ժողովրդական մասսաները. «Ինչպես որ արաբները կուրանան այս արաբական թափթփուկները, — գրում էր Խ. Թեկդաշը, — նույնպես հայ ժողովրդը կուրանա այս հայկական թափթփուկները»¹; կիրանանում կար որոշ խոսք, որը երկրի բախտը կապում էր Անգլիայի հետ և ցանկանում, որ Անգլիան օկուպացնի կիրանանը²:

Սակայն կիրանանի ժողովրդական մասսաները, բոլոր

1 «Ժողովրդի Զայե», 29 Հունիսի 1942 թ.:

2 A. Hourant, Syria and Lebanon, p. 233.

դեմոկրատական ուժնը դեմ էին թե՛ ֆրանսիական, թե՛ անգլիական և թե՛ գերմանական տիրապետությանը, ինչպես նկատել է Ս. Հառիւրանին, երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը ուզում էր ազատվել ֆրանսիական և ամեն մի օտար տիրապետությունից¹:

Ինչպես նշեցինք, Լևանտի օդանավակայանների օգտագործումը գերմանական ինքնաթիւնների կողմից խիստ սրբը դրությունը Արարական արևելքում, Անգլիային անհանգստացնում էր ոչ միայն այն, որ գերմանացիները կարող էին Սիրիան և Լիբանանը օկուպացնել, այլև այն, որ նրանք կարող էին օգնել Ռաշիդ Ալի Գալլանիին, որը իրաքում կատարել էր պետական հեղաշրջում և պատերազմական գործողություններ էր մղում Անգլիայի դեմ:

Հաշվի առնելով գերմանական ու իտալական զանազան միսիաների այցելությունները, բազմաթիվ գերմանական ռատեխնիկներին գործությունը Լևանտում և գերմանացիների կողմից այդ օդանավակայանների օգտագործումը, Անգլիան Սիրիան ու Լիբանանը համարեց օկուպացիայի ենթարկված երկրներ, Դրանով Անգլիան իրեն իրավունք վերապահեց իրագործելու 1940 թ. հունիսի 1-ի գեկլարացիայում հռչակած սկզբունքները՝ թույլ շտալ այդ երկրների օկուպացումը և պաշտպանել իր իրավունքները:

1941 թ. հունիսի 8-ին Անգլիան և «Մարտնչող Ֆրանսիան» պատերազմական գործողություններ սկսեցին Սիրիայում և Լիբանանում, Վիշիի կառավարությունը այդ ակտը համարեց ռոշնով շհրահրվածքին «Թայվանը» նշում էր, որ ոչ դո Գոլի զորքերը, ոչ անգլիացիները շէին խախտի սիրիական սահմանը, եթե չիրագործվեր այդ երկիրը զավթելու գերմանական պլանը²:

Զնայած գեներալ Դենցի դիմադրությանը, անգլիական և «Մարտնչող Ֆրանսիայի» զորքերը առաջ են շարժվում՝ ունենալով տեղական ժողովրդի աշակցությունը: Այդ տեսակետից

1 Նույն տեղում:

2 „The Times“, June 10, 1941.

Հատկանշական է Բեյրութի ազգաբնակչության դիրքը: Բեյրութիները ցույցներ էին կազմակերպում պահանջելով դադարեցնել դիմադրությունը դաշնակիցներին, բոլոր զորքերը հանել բաղաքից և Բեյրութը հայտարարել բաց քաղաք¹: Դենցը ճնշում է այդ ցույցերը և բաղաքի ականավոր դեմքերից շատերին ձերբակալում:

Սակայն Դենցի դրությունը դառնում է անհույս և արդեն հովհանքի 8-ին նա հաշտություն է խնդրում: 1941 թ. հովհանքի 11-ին դադարեցվում է կրակը, իսկ հովհանքի 14-ին Դենցը անձնատուր է լինում: Հովհանքի 15-ին Ակկրայում կնքվեց հաշտության համաձայնագիրը, ըստ որի դաշնակից զորքերը գրավեցին Սիրիան և Լիբանանը, իսկ ֆրանսիական (Վիշիական) զորքերը դուրս բերվեցին այդ երկրներից²:

Դենցի կապիտուլյացից հետո Սիրիան և Լիբանանը դաշնակիցների տնօրինության տակ դրեցին իրենց նավահանգիստները, երկաթուղարին և խճուղային ճանապարհները, զորանոցները և այլն: Երիտասարդներից շատերը մտան դաշնակից բանակը³:

Պատերազմական գործողություններ սկսելով Սիրիայում և Լիբանանում անգլիացիները և ֆրանսիացիները շատ լավ դիմեին, որ Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների նվիրական իղձը մանդատային ռեժիմի վերացումը և քաղաքական անկախության ձեռք բերումն էր: «Մարտնչող Ֆրանսիան», որը դեռևս շատ թույլ էր և լուսեր համապատասխան ուժեր իր կամքը թելադրելու, հարկադրված էր հաշվի նստել սիրիացիների և լիբանանցիների այդ պահանջի հետ: Ուստի և 1941 թ. հունիսի 8-ին, դաշնակիցների կողմից Սիրիայում և Լիբանանում պատերազմական գործողություններ սկսելու օրը, հրապարակվեց գեներալ Կատրուփ⁴ դիմումը Սիրիայի և Լիբանա-

¹ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 234, л. 85.

² "Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East", p. 322.

³ ادیب فرحت، ص ۳۳۶

⁴ Գեներալ Կատրուփ Լեռնուում «Մարտնչող Ֆրանսիայի» զորքերի հրամանատարն էր, իսկ հասապայում՝ պլանավոր դելեգատ:

նի ժողովուրդներին։ Այդ դիմումի մեջ ասլած էր. «Սիրիացիներ և լիբանանցիներ! ես գալիս եմ վերջ զնելու մանդատի ռեժիմին և հայտարարելու ձեզ ազատ ու անկախ։

Հետեւարար այս պահից դուք սոսվերեն ու անկախ եք»¹։ Միաժամանակ հրապարակվեց Անգլիայի հայտարարությունը, որով նա պաշտպանում էր Կատրուի դիմումը և հանդիս գալիս որպես մանդատը վերացնելու ֆրանսիական խոստման երաշխավորը։

Այստեղ անհրաժեշտ է համառոտակի կանգնել անգլո-ֆրանսիական փոխհարարերությունների վրա։ Անգլիան պընդում էր ֆրանսիական մանդատի վերացման, իսկ հետադարձում նաև այդ խոստման կատարման վրա։ Որոշ բուրժուական հեղինակներ Անգլիայի այդ քաղաքականությունը փորձում են բացատրել նրա «հումանիզմով» և «գեներալատիզմով»։ Ռ. Լանգառու ուղղակի նշում է, որ Ֆրանսիան ամեն կերպ ձգտում էր ասիմիլացիայի ենթարկել իրեն ենթակա տերիտորիաները, մինչդեռ Մեծ Բրիտանիան իր գաղութների ժողովուրդներին նախապատրաստում էր ինքնորոշման համար և նրանց մոտ զարգացնում դեմոկրատիզմի սկզբունքները²։ Սա, մեզմ ասած, չի համապատասխանում իրականությանը։ Այդ սխալ տեսակետը ժխտում է հենց իր՝ անգլիական գաղութատիրության արյունոտ պատմությունը։ Անգլիայի դիրքը Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական մանդատի վերացման հարցում պետք է բացատրել նրա իմպերիալիստական նպատակներով։ Նա փորձում էր օգտվել Ֆրանսիայի թուլությունից, նրան դուրս մղել Սիրիայից ու Լիբանանից և այդ երկներում գրավել նրա տեղը։ Անգլիան գտնում էր, որ այդ բանի հնարավոր թյունը նա ձեռք կբերեր, եթե այդ երկըրները հռակեկին անկախ։ Խոկ քանի որ ինքը այդ ժամանակ Արաբական Արևելքում ամենաուժեղ դիրքերն ուներ,

¹ N. Zadeh... 'اديب فرحت'، لبنان و سوريا، ص ٣٣٦
p. 66.

² R. Landau, France and the Arabs. „Behind the headlines“, Toronto, 1954, № 7, vol. XIII, p. 1.

տպա նրա համար դժվար չէր լինի ներթափանցել Սիրիա և Լիբանան։ Եվ նա հանդես գալով մանդատը վերացնելու վերաբերյալ ֆրանսիական խոստման երաշխավորի դերում, փաստորեն իրավունք ձեռք բերեց պաշտոնապես միջամտելու ֆրանս-սիրիա-լիբանանյան հարաբերակալյուններին։ Զ. Բաներցին գրում է, որ «իրական իշխանությունը գտնվում է բրիտանացիների ձեռքում։ Եվ սրանից հետո բրիտանացիները՝ զեներալ-մայոր սըր Էդվարդ Սպիրսի ղեկավարությամբ կանոնում ֆրանսիական ազդեցությանը գերեզման փորելու գործում կլինեն սիրիական նացիոնալիզմի դաշնակիցը»¹։

Ֆրանսիացիներն, անշուշտ, հասկանում էին այդ և փորձում էին ամեն կերպ դիմադրել անզիհական իմպերիալիզմի հարձակմանը։ Օրինակ, գեներալ դը Դոլը դիմադրում էր Անգլիայի պահանջին հանդես գալ որպես ֆրանսիական հայտարարության երաշխավորը²։ Մուսսա Դիրը նշում է, որ «Դը Գոլը շէր կարգանում տեսնել այն բանի անհրաժեշտությունը, թե ինչու Մեծ Բրիտանիան պետք է տա իր երաշխավորությունը մեկ այլ պետության՝ Ֆրանսիայի խոստմանը»³, Սակայն Ֆրանսիան ստիպված էր զիջել, որովհետև այլ ելք չուներ։

Արար պատմարան Նաշիր ալ-Արմանազին ճիշտ կերպով նկատել է, որ Անգլիան Միջին արևելքը համարում էր կամուրջ Ասիայի և Աֆրիկայի միջև, ինչպես նաև Միջերկրական ծովի ու Հնդկական օվկիանոսի միջև։ Այդ պատճառով էլ նա պայքարում է ամեն մի թշնամի, ինչպես նաև բարեկամ պետության դեմ, որը ցանկանում է այդտեղ գերակշռություն ձեռք բերելը⁴։

Անգլո-ֆրանսիական հակամարտությունը ծպտյալ էր Առեւույթ Անգլիան ընդունում էր Ֆրանսիայի տիրապետող

¹ J. Vanserji, The Middle East in world politics p. 55.

² Шарль де Голль, Военные мемуары, М., 1957, т. 1, стр. 211—212.

³ Musa Dib. The Arab block in the United Nations, Amsterdam, 1956, p. 64.

⁴ نجيب الارمناز، ص ۱۳۱.

շահերը Սիրիայում և Լիբանանում, Այդ բանը հաստատեց
 Անգլիայի պրեմինիստը Զերվիլը համայնքների պալա-
 տում ունեցած իր ելույթում, նշելով, որ Անգլիան բնակ մտա-
 դիր չէ Ֆրանսիային գուրս մղել Լևանտից և գրավել նրա տեղը:
 Դա պաշտոնապես հաստատվեց նաև այսպես կոչված ողբ
Գոլ-Լիթլտոն համաձայնագրում: Դա նամակների փոխա-
 նակություն էր Միջին արևելքում Մեծ Բրիտանիայի մինհստր-
 ռեզիդենտ Օլիվեր Լիթլտոնի և գեներալ դը Գոլի միջեւ, որ տե-
 ղի ունեցավ 1941 թ. օգոստոսի 7-ին, Դը Գոլին ուղղված
 նամակում Լիթլտոնը հայտնում էր, որ Անգլիան բացի պատե-
 րազմը շահելուց ուրիշ ոչ մի շահ շունի Սիրիայում և Լիբա-
 նանում և երր այդ երկրները ձեռք բերեն վերջնական անկա-
 խություն, ապա Ֆրանսիան այդ երկրներում, ուրիշ եվրապա-
 կան պետությունների համեմատ, պետք է ունենա տիրապե-
 տող դիրքեր¹: Իր պատասխանում դը Գոլը ի գիտություն էր
 ընդունում բրիտանական հավաստիացումները, որ «Մեծ Բրի-
 տանիան շահ շունի Սիրիայում և Լիբանանում և... որ Մեծ
 Բրիտանիան ճանաշում է առաջիկայում Ֆրանսիայի գերա-
 կշիռ և արտօնյալ դիրքերը այդ երկրներում»²: Սակայն ինչ-
 պես նշեցինք, սա լոկ հայտարարություն էր, որը չէր խանգա-
 րում Անգլիային պայքարելու իր ազդեցությունն այդ երկրնե-
 րում ուժեղացնելու համար: Անգլիան իր ձեռքում պահեց
 Միջին արևելքում դաշնակից գորքերի գլխավոր հրամանատա-
 րությունը: Սիրիայում ու Լիբանանում գտնվող բոլոր զորքե-
 րը, այդ թվում նաև Ֆրանսիական, ենթարկվում էին անգլիա-
 կան հրամանատարությանը: Նա իր հսկողությունը սահմա-
 նեց այդ երկրների արտաքին առևտորի և կապի միջոցների
 վրա: Իսկ 1941 թ. սկսեմբերին Անգլիան Սիրիան և Լիբա-
 նանը մտցրեց ստերլինգյան բլոկի մեջ: Դա նշանակում էր,
 որ Սիրիան ու Լիբանանը ֆինանսական ու տնտեսական կախ-
 ման մեջ էին ընկնում Անգլիայից:

¹ «Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914—1956», New York, 1956, vol. II, p. 232.

² Նովյա տեղում:

³ G. Lenczowski... p. 277.

1941 թ. հունիսի 8-ին Հողակելով Սիրիայի և Լիբանանի անկախությունը և մանդատային ռեժիմի վերացումը, ֆրանսիական իշխանությունները, սակայն, չէին շտապում գործնական քայլերի դիմել՝ իրենց այդ խոստումն իրագործելու համար: Դեռ ավելին, «Մարտնչող Ֆրանսիան» լրիվ իր վրա վերցրեց մանդատային իշխանության ֆունկցիաները: Այս շրջանում ֆրանսիական քաղաքականությունը ըմբռնելու համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում դը Գոլի 1941 թ. հունիսի 24-ի թվակիր նամակը Լևանտում ֆրանսիական գլխավոր դելեգատ գեներալ Կատրուփին: Նա հետաքրքիր է այն առումով, որ պարզ ցույց է տալիս, թե ինչպես ֆրանսիական իմպերիալիզմը հարկադրված լինելով հողակել Սիրիայի և Լիբանանի անկախությունը, իրականում ճգոտում էր այդ երկրները պահել իր գերիշխանության ներքո:

Նամակը գրելիս և Կատրուփին համապատասխան ցուցումներ տալիս դը Գոլը ենում էր այն բանից, որ Լիբանանում և Սիրիայում պետք է անհապաղ ամրապնդել Ֆրանսիայի հեղինակությունը, որ Վիշիի պարտաւթյունը լի կարող առիթ ծառայել Ֆրանսիային հետին պլան մղելու համար¹, Նամակից երեսում է, որ նա այդ ժամանակ լուրջ շէր էլ մտածում մանդատից հրաժարվելու մասին: «1923 թ. Ֆրանսիային տրված Լևանտի մանդատը, — գրում է դը Գոլը, — պետք է իրականացվի, ինչպես այդ պահանջում են նրա պայմանները, և Ֆրանսիայի առաքելությունը պետք է շարունակվիշիք²: Մյուս կողմից շատ լավ գիտակցելով, որ, վերջին հաշվով, Սիրիային ու Լիբանանին անկախություն շտալ լինի, նա Կատրուփին առաջարկում էր Լիբանանի և Սիրիայի հետ կնքել մի այնպիսի պայմանագիր, որն ապահովեր Ֆրանսիայի ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային շահերը³: Իսկ Բեյրութում հանդիպում ունենալով ԱՄՆ-ի հյուպատոսի հետ դը Գոլը բացերաց ասում է նրան: «Ֆրանսիան անկախություն կշնորհի Սիրիային և Լիբանանին, բայց միայն այն

1 Шарль де Голль, т 1, стр. 513.

2 Նույն տեղում, էջ 521.

3 Նույն տեղում:

ժամանակ, երբ ժողովուրդը պատրաստ կլինի դրան, սակայն դրա համար կպահանջվեն տարիները¹:

Գաղութատիրական այս մտայնությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ չնայած անկախության հռչակմանը, ֆրանսիացիներն իրենց ձեռքում կենտրոնացրին ողջ քաղաքացիական իշխանությունը, համարյա ոչնչի հավասարեցնելով կիրանանի կառավարության դերը: Ֆրանսիական զիսավոր դեկտատը ֆրանսիական տարրեր առաջինանավորների կցնց կառավարության բոլոր հիմնարկներին: Նա բոլոր կարևոր վարչությունները վերցրեց իր ենթակայության ներքո, ինչպես ընդհանուր շահերին սպասարկությունը, որը տնօրինում էր Սիրիայի և կիրանանի մաքսերի, կոնցեսիոն ընկերությունների և որոշ տնտեսական ու ֆինանսական հարցեր, տեղական բանակն ու ռազմական ուժերը, ներքին անվտանգությունը, գրաքննությունը և այլն²:

Այս բոլորը խիստ դժգոհություն առաջացրեց երկրի ներսում: Երկրի գեմոկրատական ուժերը տեսնում էին, որ կիրանանի գրությունը ոչնչով չի փոխվել, նա ձեռք չի բերել անկախ պետության ստատուա: Հաշվի առնելով այդ արամադրությունները և ցանկանալով հանգստացնել երկրի ընդդիմացիր ուժերին գիներալ Կատրուն 1941 թ. նոյեմբերի 26-ին երկին հավաստեց կիրանանի անկախությունը: Նա պրեսիդենտի պատուամ հաստատեց Ալֆրեդ Նակկաշին և ստեղծեց նոր կարինետ: Սակայն վերջնական անկախությունը նա երկին պայմանավորում էր Ֆրանսիայի և կիրանանի միջև այնողիսի պայմանագրի կնքումով, որն ապահովեց Ֆրանսիայի տիրապետող դիրքերը կիրանանում: Ֆրանսիայի այդ պահանջը ուժեղ բողոք առաջացրեց երկրում: Կիրանանի քաղաքական խոշոր գործիչ Բիշարա ալ-Խուրին կիրանանի անկախությունը հայտարարեց կեղծ և պահանջեց աղատ ընտրություններ անցկացնելու: Քաղաքական մեկ այլ հայտնի գործիչ՝ Ռիխադ Սոլհը գտնում էր, որ Կատրունի առաջ քաշած պայմանը՝ պայմանագրի կնքելու մասին, հակասում է Ֆրանսիայի

¹ N. Ziadeh, p. 69.

² E. Abouchadi... p. 126.

³ N. Ziadeh, p. 69.

սպաշտոնական ներկայացուցիչների, այդ թվում նաև Կատրուի հայտարարություններին՝ Լիբրանանին լրիվ անկախություն տալու մասին, նա նշում էր, որ զիսավոր գելեգատի կողմից պրեզիդենտ նշանակելը և կառավարության պարտականությունների սահմանումը չէին խոսում այն մասին, որ Լիբրանանի անկախությունն իսկական է և այն հարգվում է¹:

Լիբրանանի գեմոկրատական ուժերի ճնշման ներք Կատրում բանակցություններ է սկսում առանձին քաղաքական գործիչների հետ Լիբրանանի կառավարման հարցի շուրջը, Սակայն բանակցելով առանձին անհատների հետ, նա բոլորովին անտեսում է Լիբրանանի կառավարությանը, որը առիթ է տալիս Նակկաշին բողոքելու Կատրուի այդ վարքագծի դեմ, ի պատասխան այդ բողոքի Կատրու 1943 թ. փետրվարի 27-ին դրում է Նակկաշին հետևյալը. «Ես հարկ եմ համարում հաղորդել Ձեզ, որ չնայած 1941 թ. նոյեմբերի 26-ին Լիբրանանի անկախություն հռչակմանը, Ֆրանսիան դե յուր պահպանում է Լիբրանանի մանդատը մինչև որ Ազգերի լիգան նըրան կազմատի իր պատասխանատվությունից»²; Այնուհետև նա նշում էր, որ միայն Ֆրանսիայի զիսավոր գելեգատին է պատկանում անհրաժեշտ որոշումներ ընդունելու ամբողջ իրավունքը ու պատասխանատվությունը.

Գեներալ Կատրուի այս հայտարարության մեջ հստակ երևում է Ֆրանսիայի քաղաքականության երկդիմությունը: Նա մի կողմից երկու անդամ հռչակում է Լիբրանանի անկախությունը, իսկ մյուս կողմից շի ուղում այդ անկախությունը խոսրից գործի վերածել և ցանկանում է ուժի մեջ թողնել մանդատը՝ նրանից բխող բոլոր իրավունքներով:

Սակայն գեմոկրատական ուժերի ճնշումն ուժեղանում էր: Նրանք պահանջում էին վերականգնել սահմանադրությունը և անցկացնել պառկամենտական ընտրություններ: Իրավացի է Ուտման Քամալ Հադադը, երբ նշում է, որ արաբական երկրները, այդ թվում նաև Լիբրանանը, զիտակցում էին, որ իրենք պետք է օգտվեն պատերազմի հետևանքով ստեղծ-

¹ N. Zia de h... p. 69.

² Նույն տեղում, էջ 70.

ված նպաստավոր դրությունից և հասնեն իրենց անկախությանը¹: Ի վերջո Ֆրանսիան զիջում է, վերականգնում սահմանադրությունը և նշանակում պառլամենտական ընտրությունները, երկրի պրոգրեսիվ ուժերը գոհումակությամբ են ընդունում այդ լուրը, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության հատուկ հայտարարության մեջ ասված էր. «Սուրիո և Լիբանանի կոմունիստ կուսակցության քաղաքական բյուրոն իր վերջին նիստին մեջ քննելի հետո երկրին քաղաքական կացությունը և տառմասերելի ետք սահմանողական կյանքի վերադարձի կարևորությունը, կոմունիստների անունով իր հրճվանքը կհայտնե այս հույժ կարևոր գեղքին համար, որ մեր երկիրը քայլ մը ավելի կմոտեցնե իր ազգային նպատակներու իրագործմանը², Սահմանադրության վերականգնումը ողջունում են նաև հայ գեմոկրատական ուժերը, Հարություն Մատեյանը նշում է, որ իրենք ողջունում են սահմանադրության վերականգնումը և ընտրություններ անցկացնելու որոշումը նա հայտարարում է, որ իրենք, կոմունիստները, ընտրական թեկնածուները կորչեն ելնելով ժողովրդի շահերից և ընտրությունների կդնան դեմոկրատիայի զարգացման և հայ ու արար ժողովրդների բարեկամության էլ ավելի ամրապնդման պահանջի ներքո³,

Ընտրությունները անցկացնելու համար ստեղծվեց փոխանցման կառավարություն Այուք Թարեթի, իսկ հետո Թրադի զիխավորությամբ։ Ընտրությունները տեղի ունեցան 1943 թ. օգոստոսի 29-ին, Ընտրական կամպանիան ընթանում էր լարված մթնոլորտում։ Ուժեղ պայքար էր գնում բուրժուազիայի և կալվածատերերի տարրեր խմբերի միջև։ Ընտրություններին միշամտում էին Անգլիան ու Ֆրանսիան։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր պառլամենտ անցկացնել իր կողմնակիցներին։ Եվ այս անգլո-ֆրանսիական մրցակցու-

عثمان كمال حداد، حركة رشيد عالي الكيلاني،^١
صبدأ، ص ١٠

2 ժողովրդի Զայնէ, 13 փետրվարի 1943 թ.։

3 Նույն տեղում, 7 մարտի 1943 թ.։

թյան մեջ հաղթողը և դավ Անգլիան։ Պառամենտական ընտրությունների ժամանակ հաղթեց բուրժուազիայի և կալվածատերերի այն խումբը, որը անգլիական կողմնորոշում ուներ Դա Սահմանադրական միություն խումբն էր, որի լիդերն էր Բիշարա ալ-Խուրին, Արար պատմաբան Մ. Թակի էդ-Դինը նշում է, որ «Սպիրուս» (Անգլիայի զորքերի հրամանատարը—Ն. Հ.) շատ պայքարեց Բիշարա Խուրիի սահմանադրական միության ցանկը ամրապնդելու համար, երկիրը օտար լից ազատելու և անկախության պայքարի դիմակի տակ։

Այս գործում Սպիրուսին օգնեցին Եգիպտոսի պրեմյեր-մինիստր Նահամ փաշան և Իրաքի պրեմյեր-մինիստր Նուրի Սահդ փաշան։ Այս օգնության փոխարեն Բիշարա Խուրին հանձն առավ Հետևել բրիտանական-արարական քաղաքականության¹։

1943 թ. սեպտեմբերի 21-ին բացվեց Լիբանանի պառակամենտի առաջին նիստը, որը Բիշարա ալ-Խուրիին ընտրեց Լիբանանի պրեզիդենտ։ Նա կառավարության կազմելը հանձնեց Ռիադ Սոլէին։

Բիշարա ալ-Խուրին, որը ներկայացնում էր Լիբանանի ամենաազգեցիկ քրիստոնյա՝ մարոնիթ համայնքը և Ռիադ Սոլէ ամենաազգեցիկ մուսուլման՝ սունի համայնքը, 1943 թ. սեպտեմբերին կնքեցին այսպիս կոչված «Ազգային պակտ»-ը, իրականուած դա մի շենուլմենյան համաձայնագիր էր, որը որոշում էր Լիբանանի տարրեր կը ունական համայնքների և ազգային խմբերի փոխհարաբերությունները, ինչպիս նաև հանրապետության արտաքին քաղաքականությունը, Նրանք համաձայնվեցին, որ այն պետք է հիմնվի դրական շեղորդության սկզբունքների վրա։

«Ազգային պակտը» սահմանում էր, որ Լիբանանը պետք է լինի լրիվ անկախ պետություն, Քրիստոնյաները չպետք է փնտրեն օտար, այսինքն արևմտյան և մասնավորապես Ֆրանսիայի, Հռվանավորությունը կամ շփորձեն Լիբանանը

¹ منير تقى الدين، ولادة الاستقلال، بيروت، ١٩٥٣.

դնել օտար հսկողության և ազդեցության ներքու իսկ մուսուլմաններն իրենց հերթին պարտավորվում էին ոչ մի փորձ շկատարել Լիբանանի և Սիրիայի կամ որևէ մեկ այլ արաբական պետության միջև քաղաքական միություն ստեղծելու ռԱղջային պակտը Լիբանանը համարում էր արաբական երկիր և արաբական աշխարհի մի մասը, սակայն իր հատուկ, քրիստոնեական ուսութագրով, նրկու կողմերը համաձայնության եկան, որ Լիբանանը համադրժակցելու է արաբական բոլոր պետությունների հետ և պետք է դառնա արաբական ընտանիքի անդամը, սակայն նա չպետք է խղի իր կուտուրական և հոգմոր կապերը արևմտյան քաղաքակրթության հետ¹:

«Աղջային պակտը» շոշափում է նաև պետական ծառայության մեջ տարրեր կրոնական համայնքին պատկանող ներկայացուցիչների կողմից պաշտոններ գրավելու հարցը: Թիշարա ալ-Խուրին և Ռիադ Սոլիմ համաձայնության եկան, որ հանրապետության պրեզիդենտը պետք է լինի քրիստոնյամարոնիթ, պրեմյեր-մինիստրը՝ մուսուլման-սունի, պառամենատի նախագահը՝ մուսուլման-շիի, արտաքին գործերի մինիստրը՝ պետք է պատկանի Հույն ուղղափառ համայնքին, պաշտպանության մինիստրը՝ դրուզ և այլն²:

Ընդհանուր առմամբ «Աղջային պակտը» արժանի է դրական պահանջականի, որովհետև նա հանդիս էր գալիս հօգուտ անկախ ու սուվերեն Լիբանանի և խաղաղություն ու համագործակցություն էր Հողակում տարրեր ազգային խմբերի և կրոնական համայնքների միջև: Սակայն նրա թերությունը կայանում էր նրանում, որ նա պետական կառավարման սիստեմում պահպանում էր համայնքային սկզբունքը, ետին պլան մղելով պետական ծառայության մեջ ըստ գործարար հատկանիշի, անկախ կրոնական պատկանելության, մարդկանց ընդունելու սկզբունքը:

1943 թ. Հոկտեմբերի 7-ին Ռիադ Սոլիմ պառամենտում հանդիս եկավ կառավարական հոյտարարությամբ: Նա պառամենտի առջև ուրվագծեց, թե ինչպիսի արտաքին ու ներքին

¹ F a h i m Q u b a i n... p. 19.

² Նույն տեղում; E. L e n g y e l... p. 186.

քաղաքականություն է վարելու իր կառավարությունը։ Նա իր կառավարության կարևորագույն խնդիրը համարեց կիրանանի խսկական անկախության ու գերիշխանության ձեռքբերումը և տերիտորիալ ամրոցքականության պահպանումը։ «Մենք կուղինք, — հայտարարեց պրեմյեր-մինիստրը, — իրական անկախություն և լիակատար ազգային գերիշխանություն, որ մեզ թույլ տա որոշելու մեր ճակատագիրը մեր հասկցած ձեզով և միայն մեր ազգային շահերու համապատասխան ձևով։ Այս է իմ կազմած և զիսավորած կառավարության նշանարանը և ասոր համար միայն ժանր պատասխանատվության տակ մտանք»¹։

Իսկ այդ լիակատար անկախությանը հասնելու համար անհրաժեշտ էր փոփոխության ենթարկել սահմանադրությունը և նրանից հանել այն հոգլածները, որոնք վերաբերում էին մանդատին, Դա կլիներ առաջին լուրջ քայլը, որը իրավաբանութեան կիրանանը կազմաեր ֆրանսիական մանդատի հովանավորությունից։ Եվ Ռիադ Սոլյը նշում է, որ իր կառավարությունը լի է վճռականությամբ սահմանադրությունը փոփոխության ենթարկելու և այն պառկամենտի հաստատմանը նիւթեացնելու։

Դաշտի ներքին քաղաքականության հարցերին և հատկապնա անտեսության զարգացման հարցերին, Ռիադ Սոլյը նշում է, որ իր կառավարությունը դարձել կտա ազգային արդյունաբերության զարգացմանը, ոյտուանտեսական արտադրության բարձրացմանը, կընդարձակի մշակելի հողատարածությունները և ոռոգման սիստեմը, կմատակարի անհրաժեշտ զրուցատնտեսական մեթենաներ և այլն։

Կառավարությունը խոստանում էր իրականացնել վարչական ու դատական բարեփոխումներ, լուծել ռաշխառավորների վեճերը, շանակով բանվորին ապահովել իր հացը, ազտությունը, ապագան և օրինավոր իրավունքները², Ռիադ Սոլյը իր կառավարական հայտարարությունը անվանեց «Անկախության խարտիա»։

1 Թիոդոր Ռիադ Ռազի, 12 Հոկտեմբերի 1943 թ.։

2 Նույն տեղում։

Գառլամենտը հավանություն տվեց կառավարական հայտարարությունը և վստահություն հայտնեց Ռիադ Սոլհին:

Այս կառավարական հայտարարությունը հավանության արժանացավ նաև պառլամենտից դուրս: Դեմոկրատական կազմակերպությունները հատկապես ընդգծում էին կառավարության վճռուկանությունը՝ հասնելու կիրանանի լիակատար անկախությանը: Հանդես գալով այդ հարցի կապակցությամբ կոմունիստական կուսակցության ականավոր ղեկավարներից մեկը՝ Յարաչալլա Հելուն «կիրանանը իր բնական զարգացման համփուն մեջ» հոգմածում կառավարական հայտարարությունը համարեց քաղաքական շատ կետերով սխիզախ և հարուստ հայտարարություններ՝ նա նշում էր, որ սժողովուրդը երեսփոխաններն ալ ավելի պատրաստ է իր վստահությունը տալու և թիկունք կանգնելու կառավարության, եթե անիկա հարատես աշխատիլ այն քաղաքական ոգիով, որ ի հայտ բերավ իր հայտարարության մեջ²:

Կիրանանի կառավարության ծրագրին հիմնականում իրենց հավանությունը տվեցին նաև հայ դեմոկրատները: Հ. Մատեյանը «Ռիադ Սոլհի նախարարական հայտարարությունը և լիրանանահայությունը» հոգմածում նշում էր, որ այդ ծրագրի իրագործումով կիրանանում և լիրանանահայության կյանքում անխուսափելիորեն խոր փոփոխություններ տեղի կունենան, որովհետեւ նա մեծ թափ է հազորդում ազգային զարթոնքին և իրական անկախությանն ու ազգային գերիշխանությանը³: Դա համարելով կիրանանի զարգացման բնական ուղին, Հ. Մատեյանը նշում էր, որ «կիրանանի հայությունը իր սեփական շահերուն դեմ մեղանշած կըլլա, եթե իր զարգացումը կիրանանի զարգացման բնական հունովը շտանիչ»⁴:

Հայ դեմոկրատները ելնում էին այն բանից, որ հայերի զարգացումը քաղաքական ու տնտեսական բոլոր թելերով

1 «Ժողովուրդի Զայն», 14 Հոկտեմբերի 1943 թ.:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, 17 Հոկտեմբերի 1943 թ.:

4 Նույն տեղում:

կապված է Լիրանանի հետ և հայերի սուլթան պարտականությունն է արարների հետ միասին զորավիր կանգնել Լիրանանի ազգային անկախությանը:

Ստանալով պառակմենտի վատահությունը Ռիադ Սոլցի կառավարությունը անմիջապես դիմեց գործնական քայլերի Լիրանանի ազգային դերիշխանությունը ամրապնդելու ուղղությամբ Լիրանանում դեռևս մանդատի հաստատման առաջին օրերից տրադիցիս էր դարձել, որ կառավարության կազմվելուց հետո նրա դեկավարը այցելում էր ֆրանսիական ներկայացուցիչն: Ռիադ Սոլցը վճռեց վերջ տալ Լիրանանի ազգային դերիշխանության հետ անհամատեղելի այդ ծիսակատարությանը, նա շայցելեց գլխավոր դելեգատին, նրան դիտելով մյուս երկրների դեսպաններին հավասար դեսպան, որի շնորհավորական այցելությանը կարելի էր պատասխանել, եթե նա, գլխավոր դելեգատն, առաջինը ինքը այցելեր: Այս հոդի վրա վեճ ժագեց Լիրանանի կառավարության և ֆրանսիական գլխավոր դելեգատի միջև: Վերջինս ամեն կերպ ձգտում էր ուժի մեջ թողնել նախկին սովորույթը: Սակայն Ռիադ Սոլցը անկոտրում գտնվեց և վերջի ի վերջո, ֆրանսիացիները ստիպված եղան դիմել ու համաձայնվել Լիրանանի կառավարության ցանկության հետ: Այսպիսով, ինչպես նշում է Մանիք Թակի էդ-Դինը, «կառավարությունը վերացրեց մի արադիցիս, որ լիրանանցիներին ցավ էր պատճառում, որովհետեւ նրանում տեսնում էին գաղութակալության և ստորացման խորհրդանշան»²:

Այսուհետեւ կառավարությունը ձեռնամուխ եղավ սահմանադրության վերանայմանը: Նա սահմանադրության առաջին հոդվածից վերացրեց մանդատային պետությանը և Աղգերի լիգային վերաբերող բոլոր բառերը և այն շարադրեց հետևյալ կերպ: «Լիրանանը անկախ, ունիտար և սուվերեն պետություն է»³: Մինչ այդ ֆրանսերենը համարվում էր պաշ-

¹ منير تقى الدين، ولادة الاستقلال، ص ٣٦.

² Նույն տեղամ, էջ 35—37:

³ „Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East“ p. 29.

սոնական լեզու, որը և արձանագրված էր սահմանադրության մեջ, Այժմ այդ կետը շնչվեց և կիրանանի միակ պաշտօնական լեզուն հայտարարվեց արարերենը: 1943 թ. Հոկտեմբերի 13-ին Ռիադ Սոլհը հրահանգ ուղարկեց բոլոր մինիստրություններին, որտեղ ասված էր. «կիխնդրեմ որ հետ այսու ձեր նախարարությանց ենթակա բոլոր հաստատություններուն մեջ բոլոր գրավոր հաղորդագրությունն ու դործանությունները կատարել տաք արարերեն լեզվով, որ երկրի պաշտօնական լեզուն է»¹: Կառավարությունը փոփոխության ենթարկեց նաև սահմանադրության 52-րդ հոդվածը, որը միշտգային պայմանագրեր կնքելու իրավունքը վերապահում էր միայն Ֆրանսիային: Փոփոխելով այդ կետը կառավարությունն առաջարկում էր, որ այդ իրավունքը տունվի Ֆրանսիայից և լրիվ տրվի Լիբանանի հանրապետության պրեզիդենտին: Եվ վերջապես Լիբանանի կառավարությունը շնչեց սահմանադրության 90—94 հոդվածները, որտեղ ասված էր, որ լիբանանյան սահմանադրական իշխանությունները պարտավոր են պահպանել մանդատային պետության, ալյունքն Ֆրանսիայի իրավունքները, որ հարևան երկրների հետ լավ հարաբերությունները պիտի ստանան վեհական ֆրանսիական մանդատի ներքո, որ վեճերի դեպքում Ֆրանսիան հանդս է գալու արքիտրի դերում և որ Ֆրանսիան է Լիբանանին ներկայացնելու այն երկրներում, որտեղ կային մեծ թվով լիբանանցիներ²:

Ահա սրանք էին սահմանադրության այն հոդվածները, որոնք վերաբերում էին մանդատին և սահմանափակում Լիբանանի անկախությունն ու գերիշխանությունը:

Կառավարությունը սահմանադրության մեջ մտցրած իւ փոփոխությունները ներկայացրեց պառլամենտի հաստատմանը:

Սկզբան մինչև պառլամենտի քննարկումը գլխավոր դելեգատ Ժելլոն (նա Կատրուին այդ պաշտոնում փոխարի-

1 «Ժողովադրդի Զայե», 14 Հոկտեմբերի 1943 թ.:

2 Ա. Խուրան. . . թ. 285.

Նել էր 1943 թ. Հունիսի սկզբներին) պաշտոնապես առարկեց այդ փոփոխությունների դեմ, նշելով, որ Լիբանանը իրավունք չունի միակողմանիորեն փոփոխություններ մտցնել սահմանադրության մեջ: Մժաւ կողմից նա առաջարկեց հարցը լուծել բանակցությունների միջոցով: Բայց որպես բանակցությունների հիմք նա առաջարկեց 1936 թ. ֆրանս-լի-բրանանյան պայմանագիրը: Ըստ այդ պայմանագրի վերանալու էր մանդատը, սակայն Լիբանանը պարտավորվում էր արտաքին քաղաքականության բոլոր հարցերում խորհրդակցել Ֆրանսիայի հետ, վերջինս իր ուսպանական ուժերը շարունակելու էր պահել Լիբանանում, Ֆրանսիան իրեն իրավունք էր վերապահում հանդես գալ Լիբանանի կրօնական և ազգային փոքրամասնությունների պաշտպանի դերում և ալլու, Ալլ կերպ ասած, Ֆրանսիան իրավունք էր ձեռք բերում ազդել Լի-բրանանի քաղաքականության վրա և միշամտել նրա ներքին գործերին: Եվ բանի որ Լիբանանում պետք է մնային ֆրանսիական զինված ուժերը, ապա Լիբանանի անկախությունը փաստորեն լիակատար չէր լինի: Չնայած այս բոլորին, ֆրանսիական պառլամենտը 1939 թ. շվավերացրեց այս պայմանագիրը: Ֆրանսիայի կառավարող շրջանների համար նույնիսկ այս կիսանկախությունը, մանդատից ձևականորեն հրաժարվելն անդամ անընդունելի էր: Ուստի 1936 թ. պայմանագիրը երրեք ուժի մեջ մտավի: Այժմ ֆրանսիական իշխանությունները կրկին մեջտեղ էին բերում այդ պայմանագիրը: Դա պետք է բացատրել նրանով, որ նա հնարավորություն էր տալիս նրանց ֆրանսիական զինված ուժեր պահպանել Լի-բրանանում և միշամտել նրա ներքին գործերին: Նրանք շատ լավ էին հասկանում, որ ձևականորեն մանդատից շնորհարվել և լիբանանին անկախություն շտալ շի լինի: Ուստի բոլոր միջոցներով նրանք ձգտում էին, գոնեւ այդ բանից հետո պահպանել որևէ սողանցք Լիբանանի ներքին գործերին միշամտելու և իրենց ազդեցությունը այդ երկրում պահպանելու համար: Ի դեպք նշենք, որ գեներալ դը Շոլը չէր թաքցնում իր մտադրությունները: Նա նշում էր, որ ֆրանս-լիբանանյան պայմանագիրը պետք է ապահովի Ֆրանսիայի տնտեսական ու կուլտուրական շահերը և Ֆրանսիային պետք է իրավունք

տա կիրանանում ունենալ իր ուազմական բաղաները, ինչպես Անգլիան ունի, օրինակ, Իրաքում: Եվ միայն ալդպիսի պայմանագրի կնքումից հետո Ֆրանսիան պատրաստ էր հրաժարվել մանդատից:

Լիբանանի կառավարությունը, բնական է, մերժեց ֆրանսիական առաջարկությունները: Դրանից հետո Լիբանանի կառավարության և Հելլույի միջև համաձայնություն ձեռք բերվեց, որ վերջինս կոմիտեի¹ հետ այդ հարցը քննարկելու և անհրաժեշտ հրահանգներ ստանալու: Ազատագրության կոմիտեն քննարկելով այդ հարցը, 1943 թ. նոյեմբերի 4-ին հրապարակեց պաշտոնական կոմիտեիկե, որտեղ նա մերժում էր սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու և մանդատային ռեժիմը վերացած համարելու Լիբանանի իրավունքը: Կոմյունիկեն նշում էր, որ Լիբանանը իրավունք չունի առանց Ֆրանսիայի հավանության փոփոխության ենթարկել միջազգային հանձնառությունները, որոնք Ֆրանսիան ստանձնել է և որոնք (այսինքն մանդատը) ի զորու կմնան: Եվ Ազատագրության կոմիտեն պաշտոնակեն հայտարարում էր, որ նա վավերական չի նկատի առանց իր համաձայնության Լիբանանի սահմանադրության մեջ կատարելիք որևէ փոփոխություն²:

Ազատագրության կոմիտեի այս կոմյունիկեն ստանձնուց հետո, 1943 թ. նոյեմբերի 5-ին տեղի ունեցավ Լիբանանի Մինիստրների խորհրդի նիստը, որը պետք է որոշեր Լիբանանի հետագա քաղաքականությունը: արդյոք ընկրկե՛լ Ֆրանսիայի բացահայտ ճնշման առջև և հրաժարվել սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելուց, թե շարունակել ընթանալ ազգային ազատագրության ուղիղությունը, Լիբանանի անկախությունն ու գերիշխանությունն ամրապնդելու ուղիղությունը: Լիբանանի կառավարությունն ընտրեց երկրորդ տևիքին, Այդ նույն օրը՝ նոյեմբերի 5-ին նա հրապարակեց մի հայտարա-

1 Ֆրանսիայի Ազգային ազատագրության կոմիտեն ժամանակավորապես գտնվում էր Ալժիրում,

2 «Ժողովուրդի Զայն», 7 նոյեմբերի 1943 թ.

բություն, որտեղ ասված էր. «Նկատի ունենալով, որ սահմանադրության փոփոխումը լիրանանյան սահմանադրական իշխանությունների իրավունքն է, կառավարությունը, համաձայն սահմանադրության 76-րդ և այլ հոդվածների, այժմ պառամենատին ներկայացրեց կիրանանի ճանաշված անկախությանը հակասող մի քանի հոդվածների փոփոխման նախագիծ, որ Մինիստրների խորհուրդը սկսել էր ուսումնասիրել համաձայն կառավարական հայտարարության և ի կիրառումն անկախության գործնական իրականացման»¹:

Լիրանանի պառամենատի նիստը նշանակվել էր 1943 թ. նոյեմբերի 8-ին։ Յրանսիհական իշխանությունները մի փորձ ևս կատարեցին այդ նիստը տապալելու համար։ Նրանք աշխատեցին համոզել կառավարությանը, որ այժմ այդ հարցը չըննարկի և հետաձգի պառամենատի գումարումը։ Մյուս կողմից նրանք փորձում էին համոզել առանձին դեպուտատների, շղնալ պառամենատի նիստին, որպեսզի անհրաժեշտ մեծամասնությունը լապահովվի։ Սակայն նրանց բոլոր փորձերը ձախողվեցին, լիրանանի պառամենատի նիստը, որ կոչված էր պատմական դեր խաղալու, բացվեց 1943 թ. նոյեմբերի 8-ին։ Նիստին 55 դեպուտատից ներկա էր 52-ը։ Նիստին շկային ռԱյյուր Թարեթը, ԱՀմեդ ալ-Հուսեյնին և Մովսես ՏերԳալուստյանը², որոնք բացակայում էին դիտավորյալը³։

Պառամենատի այդ պատմական նիստը շատ հետաքրքիր է նկարագրում արար պատմարան Մոմիր Թակի էդ-Դինը իր ռԱնկախության ծնունդը՝ գրքում, որը անհրաժեշտ ենք համարում լրիվ մեջքերել. «Պառամենատի նախագահը բացեց նիստը, սրտերը բարախեցին, շնչերը պահվեցին, որպեսզի տիանքները լսեն։ Տեղի ունեցավ փոփոխումը (սահմանադրության հոդվածների — ն. Հ.) ձախողելու մի վերջին փորձ. մի քանի դեպուտատներ պահանջեցին նախագիծը ուղարկել հատուկ հանձնաժողովի, որպեսզի հաջողեցնեն հասնել

¹ منير نقى الدين، ولادة الاستقلال، ص 47.

² Թաշինակցականների գեկավարներից մեկը.

³ منير نقى الدين، ولادة الاستقلال، ص 53.

փոփոխման որոշման հետաձգմանը, սակայն վերջին փորձն էլ ձախողվեց առաջինի նման, Այդ ժամանակ էմիլ էղդն գուրս եկավ պառամենտի շենքից, նրանց հետևեց Ամին աս-Սաադը: Բազմությունը նրանց ճանապարհեց սուլոցներով և զայրույթի ու դատապարտման խոսքերով: Պառամենտը շարունակեց քննարկումը և փոփոխումը հաստատեց հոգված առ հոգված և այն վերջացրեց միայն մոնղատի կապանքներից ազատվելուց հետո: Այդ պահին գահին գտնվողները մեքենայարար ոտքի կանգնեցին, ցնցվեցին պատերը բացական-չություններից ու ծափերից:

Եվ 1943 թվականի նոյեմբերի 8-ը՝ երկուշաբթի օրը մտավ պատմության մեջ¹:

Լիբանանի պառամենտի այս որոշումը, որը վերացրեց մանղատը և լիբանանի հարաբերությունները Ֆրանսիայի հետ նոր հիմքերի վրա դրեց, երկրի ամբողջ բնակչությունը ընդունեց շտեսնված խանդավառությամբ: Թեյրութում և այլ քաղաքներում տեղի են ունենում բազմամարդ ցույցեր, որի ժամանակ աշխատավորական մասսաները, ուսանողները, արհետավորները, արար թե հայ, քրիստոնյա թե մահմեդական կամ դրուզ, իրենց գոհումակությունն են հայտնում այդ պատմական կարևոր ակտի կապակցությամբ²:

Ինչպես նշեցինք, դաշնակցական զեպուտատ Մովսես Տեր-Գալուստյանը դիտավորյալ չներկայացավ պառամենտի այդ պատմական նիստին և, հետևաբար, իր ձայնը շավեց հօգուտ ֆրանսիական մանղատի վերացման և լիբանանի ազգային անկախության ամրապնդման: Եվ դա պատահականություն չէր: Դաշնակցությունը լիբանանում միշտ էլ համագործակցել է ֆրանսիական մանղատային իշխանությունների հետ, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ վիշիականների հետ: Նա արաբական հետադիմության հետ միասին ձգաել է լիբանանը պահել ֆրանսիական հովանավորության ներքո: Եվ ինքն էլ դրա փոխարեն վայելել է ֆրանսիական իշխանությունների հովանավորությունն ու աջակցությունը:

¹ Նույն տեղում.

² ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 1824, л. 33.

«Ժողովուրդի Զայն» թերթը նշում էր, որ «Դաշնակցության երեսփոխան Տեր-Գալուստյան այդ օրերուն իմպերիալիզմի մնալուն կողմնակից փոքրաթիվ երեսփոխաններու խռումը կողմն անցնելով, պատճառ դարձավ, որ արար հանրային կարծիքը դրգովի հայերուն դեմ¹: Հայ կոմունիստները և մյուս դեմոկրատները հարկադրված էին բացատրական լայն աշխատանք տանել արարական ջրանակներում, նրանց համոզելու, որ դաշնակցական Մ. Տեր-Գալուստյանի վարժագիրը չի արտահայտում կիրանանի հայության քաղաքական արամագրությունները: Նրանք մատնանշում էին, որ հայերը արարների հետ միասին պահանջում են մանդատի վերացումը և անվերապահորեն պաշտպանում կիրանանի անկախությունը: Այս հարցին անդրադարձել է նաև Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության օրգան «Սառւթ աշխարհ»-ը: Նա նշում էր, որ եթե դաշնակցական դեպուտատը ներկա շգանեցնց պառզամենուի 1943 թ. նոյեմբերի 8-ի նիստին և իր ձայնը չտվեց ի նպաստ մանդատի վերացման, ապա ոռչ-դաշնակցական երեսփոխան պ. Շամլյան² ներկա եղավ այդ նիստին և կողմնակից գտնվեցավ այդ փոփոխությանը³: Թերթը այսուհետև ընդգծում էր, որ եթե դաշնակները աշքի են ընկել մանդատային իշխանությունների հետ իրենց համագործակցությամբ և ձգտել են արգելել հայերի համագործակցությունը արարների հետ, ապա հայ դեմոկրատները արար հայրենասերների հետ միասին պայքարել են հայ և արար ժողովուրդների բարեկամության ամրապնդման, արար հետադիմականների հակահայկական քարոզությունները ձախողեցնելու և ազգային ազատագրական պայքարին հայերի մասնակցությունն ապահովելու համար⁴:

Վերևում նշվեց, որ ի պաշտպանություն և հավանություն

1 «Ժողովուրդի Զայն», 30 հունիսի 1946 թ.

2 Լիբանանի հայ համայնքին 1943 թ. ընտրությունների ժամանակ պատղամնատում երկու տեղ տրվեց: Դեպուտատներից մեկը ընտրվեց դաշնակցական Մ. Տեր-Գալուստյանը, իսկ մյուսը՝ Հրաչ Շամլյանը, որը վայելում էր հայ դեմոկրատների աշակցությունը:

3 Տե՛ս «Ժողովուրդի Զայն», 24 նոյեմբերի 1946 թ.:

4 Նույն տեղում:

պառկամենտի որոշումների, կիրանանում տեղի ունեցան ցույցեր:

Ֆրանսիական իշխանությունները որպես պատասխանայդ ցույցերի սահմանեցին ֆրանսիական զինված ջոկատների անընդմեջ պարեկություն թեյրութի փողոցներում: Դաքաղաքում և երկրում ստեղծեց լարված մթնոլորտ: Հիրանանի կառավարությունը զգուշացրեց ֆրանսիական իշխանություններին, որ նրանց այդ միջոցառումը կարող է տհաճ հետևանքների: Հանգիցնել: Ֆրանսիական իշխանությունները այս զգուշացումը ոչ միայն հաշվի շառան, այլ դիմեցին մի այնպիսի բայլի, որ ողջ կիրանանը մարտի նետեց ընդդեմ ֆրանսիական զաղութարարների, Վերջիններս տեսնելով, որ պառկամենտի նոյեմբերի 8-ի որոշումից հետո իրենց ոտքի տակից հողը լրիվ գնում է և կանգնած են կիրանանը իրենց տիրապետությունից դուրս գալու վտանգի առջև, զիմեցին բռնի ուժի, փորձելով զենքի միջոցով ստիպել կիրանանին հրաժարվել լիակատար անկախության հասնելու իր մտադրությունից:

1943 թ. նոյեմբերի 11-ին Ֆրանսիայի զվարկոր գելեզատժան Հելլոյի հրամանով ձերբակալվեցին կիրանանի պրեզիդենտ Շեյխ Բիշարա ալ-Խուրին, պրեմյեր-մինիստր Ռիադ Սոլիմ, կառավարության երեք մինիստրներ՝ Ազիլ Օսեյրանը, Սելիմ Թագլան և Քամիլ Շամունը, ինչպես նաև Հյուսիսային կիրանանի դեպուտատ, ականավոր քաղաքական գործիչ Արդ ալ-Համիդ Քարամեն: Նրանք բանտարկվեցին Հերմոն սարի մոտ գտնվող Ռաշայյալի ամրոցում: Այնուհետև, նրա հրամանով ցրվեց պառկամենտը և երկրում մտցվեց ուազմական դրություն: Հատուկ հրամանով պրեզիդենտ և կառավարության ղեկավար նշանակվեց էմիլ էդգեն, որին հանձնարարվեց կազմել նոր կառավարություն, Ֆրանսիական ու սենեկալական զորքերը թեյրութում և մյուս քաղաքներում գրավեցին բոլոր ստրատեգիական կարևոր կետերը:

¹ 10.XI.1943 «المصر»، القاهرة»

Ֆրանսիական իշխանությունների այս քայլը ցնցեց ամբողջ կիրանանը: Երկիրը համակվեց խոր ցասումով ու զայրությունով ընդդեմ գաղութարարների: Եարժման մեջ մտան կիրանանի բոլոր խավերը, ազգային բուրժուազիան, հողատերերի մեծ մասը, բանվոր դասակարգը, դյուլացիությունը, առևտրականները, արհեստավորները, ինտելիգենցիան, ուսանողությունը և այլն: Չնայած նրանց միջև եղած դասակարգային տարրերություններին ու քաղաքական տարրեր նպատակներին, նրանք միավորվեցին և հանդիս եկան միասնական ճակատով:

Վրդովված ժողովրդական մասսաները դուրս եկան փողոց, բողոքելու ֆրանսիական իշխանությունների գործողությունների դեմ: Թեյրութում, Տրիպոլիում, Սալդայում ծայր առան ցուցյալների վրա: Նրանցից շատերը սպանվեցին և վիրավորվեցին¹, կիրանանյան ժամարմերիան հրաժարվեց ենթարկվել ֆրանսիական իշխանություններին և անցավ ժողովրդի կողմը:

Ամբողջ կիրանանում հայտարարվեց համընդհանուր գործադուլու թեյրութում և մյուս քաղաքներում փակվեցին իանութները: Ժողովրդական ելույթները զեկավարելու համար կիրանանի խոշոր քաղաքական կուսակցությունները, այդ թվում կոմունիստական կուսակցությունը, ինչպես նաև հայկական զեմոկրատական կուսակցությունները միավորվեցին և ստեղծեցին միշկուսակցական օրգան՝ Ազգային կուսակցությունների համագումարը²: Ազգային համագումարը մեծ դեր խաղաց ֆրանսիական գաղութարարներին դիմադրություն ցույց տալու գործում: Նրա որոշումներն ու հրամանները բոլորը անշեղորեն կատարում էին:

Նոյեմբերի 12-ին թեյրութի նալահանգստի շրջանում փոխհրաձգություն տեղի ունեցավ ցուցարարների և սենեղալական զորքերի միջև, որոնց ֆրանսիական իշխանությունները կանչել էին լիրանանյան ժամարմերիայի և ապստամբված

1 ԱՐԱՕՐ ՀՀՀՊ, Փ. 4459, օպ. 1 և. աճ. 1824, լ. 38.

2 «ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ», 27 Նոյեմբերի 1943 թ.:

ժողովրդի դիմադրությունը ձեշելու համար¹: Այդ նույն օրը նրանք փորձեցին գրավել պրեզիդենտի տունը: Սակայն դա նրանց Հաջողվեց: Պրեզիդենտի տունը վերածելով բարիկադի, ընդդիմադիր ուժերը դիմադրություն են ցույց տալիս սենեկալական զորքերին և վերջիններս ստիպված նահանջում են², ժողովրդական շարժման թափն այնքան է ուժեղանամ, որ ֆրանսիական իշխանությունները հարկադրված ցուցարանների դեմ հանում են տանկեր և զրահապատ ավտոմեքենաներ: Նոյեմբերի 13-ին նրանք Բելյութում տանկերից ու զրահապատ մեքենաներից զնդակոծեցին դեմոկրատական ուժերի ցույցը: Ցուցարարները ուժեղ դիմադրություն ցույց տվեցին և հրկիւղեցին մեկ տանկ³: Պայքարը հատկապես կաղմակերպված և ուժեղ բնույթ ուներ Բաստա թաղամասում, որը ծածկված էր բարիկադներով:

Նման արյունալի ընդհարումներ տեղի ունեցան նաև Տրիպոլիում, Սայդայում և այլ վայրերում: Ֆրանսիական զաղութարարները ոչ մի վայրապության առջև կանգ շառան կրանանի ժողովրդի դիմադրությունը կոտրելու համար: Ամբողջ կրանանը ցնցեց նրանց բարբարոսական արարքը Սայդայում: Ֆրանսիական զինվորները ցույցի մասնակից կանանց և երեխաներին քշեցին կառավարական շենքի բակը, փակեցին դարպանները և փայտերով անխնա ծեծեցին անպաշտպան կանանց ու երեխաներին⁴:

Ինչպես նշեցինք կրանանի պրեզիդենտին և պրեմյերմինիստրին ձերբակալելոց հետո Ժ. Հելլոն կառավարություն կազմելը հանձնարարեց ֆրանսիական մարիոնետ Էմիլ Էդգեին: Ստանձնելով իշխանությունը նա հայտարարեց, որ ինքը դա համարում է իր ազգային պարտքը: Էմիլ Էդգեն դիմեց ժողովրդին, որ իրեն վստահեն, միաժամանակ ծանր պատիժներ սպառնալով նրանց, ովքեր կհամարձակվեն շենթարկվել իր սկառավարության՝ որոշումներին⁵: Սակայն կառավարու-

¹ ЦГЛАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 1824, л. 52.

² Նույն տեղում, թ. 66.

³ Նույն տեղում, թ. 67.

⁴ Նույն տեղում, թ. 193.

⁵ N. Zia deh... p. 76.

թիւն կազմելու նրա բոլոր փորձերն ասպարոյում անցան, Ոչ
ոք չհամաձայնվեց մտնել նրա «կառավարության» մեջ. Վերջ
ի վերջո նա ստիպված եղավ «կառավարություն» կազմել
«տնօրիններե», քաղաքապետներե և ոստիկան գորահրամա-
նատարներե¹, որոնք սակայն չեն ներկայանում կառավա-
րական պալատու Փաստորեն էմիլ էդդեի «կառավարությունը»
մնաց թղթի վրաւ Այս ձախողումը պետք է բացատրել նրանով,
որ աղջային-աղատագրական պայքարի այս վճռական պա-
հին, երբ որոշվում էր երկրի բախտը, կիրանանի աղջային ան-
հայտության հարցը, կիրանանի հայրենասեր քաղաքական
գործիչների համար մտնել էմիլ էդդեի ֆրանսիական մարրո-
նետային «կառավարության» կազմի մեջ Հավասարազոր էր
երկրի անկախությանը դավանանելուն, իսկ նրանք, ովքեր
կարգված էին ֆրանսիական գաղութարարների հետ և ներ-
քուստ համաձայն էին նրանց քաղաքականությանը, չհամար-
ձակվեցին համագործակցել է. էդդեի հետ, զգալով, որ դրա-
նով իրենք կվարեկարեկվեն: Եվ պատահական չէ, որ նույնիսկ
պետական պաշտոնյաները հրաժարվում էին կատարել
է. էդդեի «կառավարության» հրամանները, այն համարելով
աղջային դավանանության կառավարություն: Է. էդդեի առա-
քելության ձախողումը աղջային-աղատագրական պայքարի
հաղթանակը և ֆրանսիական գաղութարարների պարտու-
թյունն էր:

Նոյեմբերյան այս պատմական իրադարձությունների
ժամանակ կիրանանի ընդդիմադիր ուժերը կազմակերպեցին
ժամանակավոր կառավարություն: Նրա ստեղծողները եղան
Ռիադ Սոլիկի կառավարության ձերբակալումից խուսափած
երկու մինիստրները՝ Հարիբ Արու Շահլան և Մաշիդ Արսլանը:
Նրանք հաստատվեցին Լեռնային կիրանանի Թշամուն գյու-
ղում, իրենց հետ ունենալով պառկամենտի նախագահ Սարբի
Համադեին: Այստեղից նրանք կազմակերպեցին ֆրանսիական
գաղութարարների գեմ մղվող պայքարը: Ժամանակավոր կա-
ռավարությունը ձեռնամուխ եղավ լիրանանյան աղջային բա-
նակի ստեղծմանը: Հաղարավոր լիրանանցիներ մեկնում էին

¹ Կառողովուրդի Զայն, 27 նոյեմբերի 1943 թ.

Բշամում գյուղը մտնելու ազգային բանակի մեջ և մարտնչելու հայրենիքի ազգաւագրության համարու Այդ կառավարության որոշումներն ի դրու էին համարյա ամբողջ երկրում։ Նրա հրահանգով Սիրիայի և Լիբանանի բանկը ու Լիբանանի գանձարանը շկատարեցին էղդեի կառավարության ոչ մի կարգադրությունը¹։ Ֆրանսիական իշխանությունները շատ լավ էին հասկանում, որ ժամանակավոր կառավարությանը իրենց համար մեծ վտանգ է ներկայացնում։ Եվ նրանք որոշեցին ճնշել ու ասպարեզից վերացնել հակախմակերիալիստական պայքարի այդ կարեւոր կենտրոնը։ Նոյեմբերի 16-ին ֆրանսիական զորքերը տանկերի աշակցությամբ շարժվեցին գեպի Բշամուն։ Տեղի ունեցավ ճակատամարտ կառավարական և ֆրանսիական զորքերի միջև։ Կառավարական զորքերին հաջողվեց ետ մղել ֆրանսիացիների գրոհը։ Հստ որում նրանք խփեցին երկու տանկ²։ Այս անհաջողությունից մի քանի օր անց, նոյեմբերի 19-ին ֆրանսիական զորքերը, այս անգամ 20 տանկերի աշակցությամբ, նոր հարձակման անցան³, Սակայն կրկին ձախողվեցին։ Նրանց հաջողվեց գրավել Բշամուն գյուղը։

Բշամունի կառավարությունը վայելում էր Լիբանանի ժողովրդական մասսաների և բալոր գեմոկրատական ուժերի վստահությունն ու աշակցությունը։ Նրան պաշտպանում էր նաև պառլամենտը, ի գեպ նշենք, որ լիբանանի պառլամենտը, չնայած Հելլոյի նոյեմբերի 11-ի գեկրեստին՝ այն ցրելու մասին, երբեք շղադարեցրեց իր գործումնեությունը։ Նոյեմբերի 11-ին պառլամենտի գեպուտատները մտան պառլամենտի շենքը և նիստ գումարեցին, Պառլամենտը ընդունեց մի բանաձև, որը դատապարտում էր Լիբանանի սահմանադրության և կառավարության գեմ ֆրանսիական իշխանությունների ձեռք առած միջոցները⁴։ Միաժամանակ նա մի հուշագիր ուղարկեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Սիրիայի, Եգիպտոսի և Իրաքի կառավարություններին, խնդրելով նրանց աշակցությունը։

¹ N. Zia deh... p. 77.

² ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 1824, л. 193.

³ Նույն տեղում։

⁴ Ժոհովովրդի Զայն, 4 գեկտեմբերի 1943 թ.։

Պառկամենան իր երկրորդ նիստը գումարեց նոյնմբերի 12-ին Սահք Սալամի ընակարանում։ Նա վստահություն հայտնեց Բշամունի մեջ հաստատված ժամանակավոր կառավարությանը¹։ Այնուհետև նա նիստեր է գումարում նոյնմբերի 15-ին, 16-ին և 20-ին։ Այս վերջինը արդեն Բշամուն գյուղում։ Այդ նիստերի ժամանակ պառկամենան որոշում է ընդունում ոչ մի բանակցություն չձեռնարկել ֆրանսիացիների հետ նախքան ձերբակալված անձնավորությունների ազատ արձակումը և սահմանադրության վերականգնումը²։ Նոյնմբերյան դեպքերի ժամանակ, երբ վճռվում էր Լիբանանի անկախ լինելու կամ Ալինելու հարցը, Լիբանանի պառկամենան և դեպուտատների ճնշող մեծամասնությունը գտնվեց խնդրի բարձրության վրա և կատարեց իր հայրենասիրական պարտքը Լիբանանի ժողովրդի հանդեպ։ Լիբանանի պառկամենան այդ դիրքը մեծապես նպաստեց ազգային-ազատազրական, հակահմապերիալիստական ուժերի կոնսոլիդացմանը և ֆրանսիական գաղութարարների գեմ մղվող պայքարի հաջողությանը։

Ռազմական գործողություններին և բռնություններին զուգընթաց ֆրանսիական գաղութարարները ժողովրդական ընդդիմադիր ճակատը պառակտելու նպատակով դիմեցին հին և փորձված «բաժանիր, որ տիրես» քաղաքականությանը։ Նըրանք փորձեցին գժտություն առաջացնել մուսուլմանների և քրիստոնյաների միջև և լարել միմյանց դեմ։ Ֆրանսիացիները, նշում է Ն. Զիադեհը, փորձեցին ամրող շարժումը ներկայացնել որպես քրիստոնյաների դեմ ուղղված շարժում³։ Մունիր Թակի Քո-Դինը իր «Էլակուացիան» աշխատության մեջ նշում է, որ ընդհանուր անվտանգության հիմնարկները և առանձին վարձկաններ աշխատում էին երկրում սարսափ տարածել Նրանք «քրիստոնյաներին ասում էին, որ մահմեդականները ուղում են իրագործել իսլամական միությունը, իսկ մահմեդականներին ասում էին, որ քրիստոնյաները ուղում են

¹ «Ժողովուրդի Զայն», 4 դեկտեմբերի 1943 թ.։

² Եղուն տեղում։

³ N. Ziaadeh... p. 77.

ստեղծել քրիստոնեական ազգային հայրենիք¹: Իրենց այս ավանդութիւնական պլանների իրագործման մեջ ֆրանսիական իմպերիալիստները մեծ տեղ էին հատկացնում հայերին: Նրանք հույս ունեին հայերին որպես պահեստի ուժ օգտագործել արարական ազատագրական շարժումների դեմ: Դրա համար նրանց գործակալները հայերի շրջանում սկսեցին զանազան լուրեր տարածել, որ Ռիխադ Սոլհի կառավարական դեկլարացիան և սահմանադրության մեջ կատարած փոփոխություններն իրք ուղղված են հայերի դեմ: «Ընդլայնեցին այս շարամիտ ագիտացիան,— գրում է Մ. Թալիի էդ-Դինը,— ու հասան մինչև իսկ հայերին: Սրանք այս տեսակետից շատ զգայուն ժողովուրդ են...»

Խորվության գործակալները սկսեցին տարածել իրենց պրույցներն ու հերցուրանքները հայերի մեջ, դիմադրության շարժումը նրանց ներկայացնելով՝ որպես մուսուլմանների շարժում իրենց ոչնչացնելու համար: Մի շարք հայեր իրենք ևս սկսեցին տարածել այս ագիտացիան հայերի մեջ²: Մի շարք հայեր ասելով, Թալիի էդ-Դինը, անշուշտ, ի նկատի ունի գաշնակցականներին, որոնք, իրոք, այդ օրերին հանդես էին դալիս ֆրանսիական իմպերիալիստների շահերի պաշտպանությամբ: «Ժողովուրդի Զայն թերթը նշում է, որ նոյեմբերյան դեպքերի ժամանակ ուիթանանի և իմպերիալիզմի միջև ծագած այդ արյունալի ռախումին ընթացքին դաշնակ շեֆերը իմպերիալիզմի կողմն էինք³»:

Դրությունն է՝ լ ավելի սրվեց, երբ սկսեցին լուրեր տարածել, որ իրոք, Ռիխադ Սոլհի ձերքակալման ժամանակ նրա թղթերի մեջ գտել են հայերին լիրանանյան քաղաքացիությունից զրկելու օրինագծի նախագիծ⁴: Թե արար և թե հայ առա-

¹ منير تقى الدين، ‘الجلاء’، بيروت، ١٩٥٦، ص ٣٠.

² منير تقى الدين، ‘ولادة الاستقلال’، ص ١٦٤.

³ «Ժողովուրդի Զայն», 30 Հունիս 1946 թ.

⁴ منير تقى الدين، ‘ولادة الاستقلال’، ص ١٦٤.

շագնմ գործիշները լավ էին հասկանում, որ եթե հայ մասսաները հավատան այս ստուտ լուրին, ապա դա կունենա շափաղանց ծանր հետեւներ: Արարական ազգային գործիշները բաշ դիտենին, որ հայերին չի կարելի հաշվից դուրս գցել, չի կարելի անտեսել նրանց վարքագիծը: Նրանք հասկանում էին, որ կիրանանը իր առջև կանգնած քաղաքական ու տնտեսական խնդիրները կարող է լուծել տարրեր ազգերի միջև համեռաշխատիցւնը պահպանելու ուղիով: «Մենք լավ գիտենք, — որել է Խալեղ Բեկդաշը «Արար հայրենասերներու հարգանքն հայ ժողովրդին» հոգվածում, — թե արար ազգային որևէ հարցի լուծում, որ նկատի շառներ Սուրբիո և Լիբանանի հայ ժողովրդին շահերը, անխուսափելիորեն դատապարտված է ձախողության»¹:

Արար և հայ առաջադեմ գործիշները լայն բացատրական աշխատանք են ծավալում հայերի շրջանում: Նրանք նշում են, որ հայերին քաղաքացիությունից զրկելու վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ գոյություն չի ունեցել, որ արարական ազգայական շարժումը չի ուղղված հայերի դեմ, ընդհակառակը, օտարերկրյա լծի թոթափումը չ' է ավելի կամրապնդի արարների և հայերի բարեկամությունը: Լիբանանի Ազգային համագումարը նոյեմբերի 20-ին հատուկ պատվիրակություն ուղարկեց Անթիլիաս, հայոց կաթողիկոսությանը, հայերին հայտնելու, որ ուղարկած ազգային շարժման նպատակն է լիբանանի բոլոր դավանական համայնքներում իրավունքները ապահովել և ոչ թե մեկը հօգուտ մյուահին իրավագրկել, ինչպես կտարածեն շարամիտ բերանները²: Իր պատասխանում կաթողիկոսի տեղապահը վստահեցնում է Ազգային կուսակցությունների համագումարի պատվիրակությանը, որ հայ և արար ժողովուրդներու եղբայրությունն անքակտելի է: Պատվիրակությունը Անթիլիասից մեկնում է գոհ և համագումարը, հաջորդ օրը, իր նիստի մեջ հատուկ գոհունակություն

1 ոժողավարդի Զայէ, 17 մարտի 1943 թ.:

2 Նույն տեղում, 27 նոյեմբերի 1943 թ.:

է Հայտնում հայերին՝ նրանց գրաված զիրքի առթիվ։ Նույն նպատակներով կաթողիկոսի մոտ է մեկնում Լիբանանի կանանց պատվիրակությունը։ Ելույթ ունեցողները հայերին կոչ են անում շհամատալ սուս լուրերին և «համատարիմ լինել Լիբանանին, որ նրանց հյուրընկալի էր ու դարձել լավագույն հայրենիք, այն հայրենիքից հետո, որտեղ նրանք ծնուել էին»²։ Կանանց պատվիրակությունը բացատրում է հայերին, որ այդ սուս լուրերը իմաստիալիստների հերթական բանսարկությունն է, որ տնրանց (հայերին — Ն. Հ.) անցյալում պատճառել է միայն ավերածություն ու թշվառություն և որ նրանց կարող էր պատճառել այս դարում անցյալից ավելի մեծ շարիք ու վիշտան։ Կաթողիկոսարանում պատվիրակությանը հավաստիացնում են, որ հայերը հավատարիմ են լիբանանին և արարների եղբայրներն են թե ուրախության և թե տիրության մեջ³։

Արար և հայ դեմոկրատական կազմակերպությունների ջանքերով ֆրանսիական իմաստիալիստները չկարողացան հասնել իրենց նպատակներին, Հայերը նոյեմբերյան պատմական օրերին ոչ միայն շպառակտվեցին և շհակադրվեցին արարներին, այլ, ընդհակառակը, կանգնեցին նրանց կողքին, պայքարելով ֆրանսիական իմաստիալիստների դեմ հանում լիբանանի ազգային անկախության։

Լիբանանի ժողովրդական մասսաների և դեմոկրատական ուժերի այսպիսի միահամուռ դիմադրությունը ֆրանսիացիներին դրեց ծանր կացության մեջ։ Այժմ արդեն Ֆրանսիան էր ստրաված միջոցներ գտնել ստեղծված ճգնաժամից շաբաթվով։ Դուրս գալու համար, 1943 թ. նոյեմբերի 15-ին Ալժիրում տեղի ունեցավ Ֆրանսիայի Ազգային ազատագրության կոմիտեի հատուկ նիստը նվիրված լիբանանում տիրող դրու-

¹ «Ժողովրդի Զայն», 27 նոյեմբերի 1943 թ.։

² منير نقى الدين، ولادة الاستقلال، ص 166.

³ Նույն տեղում, էջ 167։

⁴ Նույն տեղում։

թյանը: Կոմիտեի ղեկավարները ելքը գտան նրա մեջ, որ ոլխավոր դելեզատ Հելլոյի գործողությունները համարեցին ինքնազգություն, որ իր Հելլոյի դիմել է այդ քայլին առանց Կոմիտեի հավանության¹: Պարզ էր, որ Ազգային կոմիտեն փորձում էր Հելլոյին զոհարերելու գնով փրկել դրությունը: Այսուհետեւ Կոմիտեն որոշեց հարցը մոտիկից ուսումնասիրելու և յուժելու համար իրանան ուղարկել գեներալ Կատրուին: Նա իրանան ժամանեց նոյեմբերի 16-ին, Սանոթանալով իրազրությանը և հանդիպում ունենալով իրանանի տարրեր քաղաքական գործիչների հետ, նա եկավ այն եզրակացության, որ ուղմական ուժով կամ բռնություններով ու սպառնալիքներով անհնար է հասնել խնդրի կարգավորմանը, եվ նա հարկադրված հայտնում է Ալֆիր՝ Ազգային կոմիտեին, որ միակ ելքը ձերբակալված անձնավորություններին ազատ արձակելն է, որը որոշ շափով կթեթևացնի լարված դրությունը²:

Ֆրանս-լիրանանյան ամրող ճգնաժամի ընթացքին Անգլիան ուշադիր հետևում էր զեալքերի զարգացմանը: 1943 թ. նոյեմբերի 19-ին անգլիական մինիստր-ռեզիդենտ Քեյսին Բելլութում հատուկ նոտա հանձնեց գեներալ Կատրուին: Նոտայում ասված էր, որ անգլիական կառավարությունը կարելու է համարում ձերբակալված անձնավորությունների ազատ արձակումը և իրենց պաշտոններում վերականգնելը: Այսուհետեւ անգլիական կառավարությունը հայտարարում էր, որ եթե մինչև նոյեմբերի 22-ի ժամը 10-ը իր պահանջները լրավարարվեն, ապա մինիստր-ռեզիդենտը կիրանանում ուղմական դրություն կմտցնի: Եվ եթե Հանրապետության պրեզիդենտը և լիրանանյան մյուս մինիստրները մինչև նոյեմբերի 22-ը ժամը 10-ը բաց շթողնվեն, ապա նրանք ազատ կարձակվեն բրիտանական զորքերի կողմից³:

Բրիտանական կառավարության այսպիսի վճռական միշտառության շարժառիթը կիրանանում Ֆրանսիայի դիրքերի

¹ «Ժողովուրդի Զայե», 27 նոյեմբերի 1943 թ.

² N. Zadeh... p. 78

³ Նույն տեղում:

ուժեղացման վտանգն էր, Նրա շահերը պահանջում էին թույլ շտալ, որ ֆրանսիական ազդեցությունն ուժեղանա կիրանանում, իսկ այդ հարավորությունը Ֆրանսիայի առջև բացվում էր, եթե նա հաղթանակով դուրս գար այդ ճնշաժամկեց:

Մյուս կողմից Անգլիան արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին փայփայում էր իր ազդեցության տակ գտնվող արարական երկրների ֆեղերացիա ստեղծելու իմպերիալիստական ծրագիրը: Սակայն նա իր այդ գաղղութարարական ծրագիրը փորձում էր թաքցնել արարական ժողովուրդների որպարերին դիմակի տակի ծվ ահա օգտվելով առիթից և սպառնալով Ֆրանսիային Անգլիան իրեն ներկայացնում էր որպես արարական ժողովուրդների «փրկիչ»: Փաստորեն անգլիական կառավարությունն իր ացդ հայտարարությամբ երկու նապաստակ էր խփում. ստիպում էր Ֆրանսիային նահանջել և հանդես էր գալիս որպես կիրանանի ռազմատարար:

Հանդիպելով կիրանանի ժողովրդի վճռական դիմադրությանը և հաշվի առնելով անգլիական կառավարության պահանջը Ֆրանսիայի Ազգային ազատագրական կոմիտեն ստիպված եղավ նահանջել: Այս ասելով մենք նպաստակ շունենք հավասարության նշան գնել կիրանանի ժողովրդի խաղացած դերի և անգլիական կառավարության գործողության միջև: Բնավ շժիստելով այն, որ ստեղծված իրադրության մեջ Անգլիայի կառավարության նոյեմբերի 19-ի նոտան խաղաց իր որոշակի դերը, ցանկանում ենք նշել, որ վճռական դերը պատկանում էր կիրանանի ժողովրդին, դեմոկրատական բոլոր ուժերին, որոնց անձնուրաց պայքարի շնորհիվ ապահովվեց կիրանանի հաղթանակը ազգային անկախության համար մղվող պայքարի առաջին հատապում:

1943 թ. նոյեմբերի 21-ին Ֆրանսիայի Ազգային ազատագրության կոմիտեն որոշեց ազատ արձակել պրեզիդենտին ու մինիստրներին, նրանց վերահստատել իրենց պաշտոններում, իսկ գլխավոր դելեգատ Հելլոն ետ կանչվեց: Նրա փոխարեն գլխավոր դելեգատ նշանակվեց իվ Շատինյան: Վերջինս նոյեմբերի 22-ի հատուկ դեկրետով շնորհական հայտարարեց իր նախորդի՝ Հելլոյի կողմից նոյեմբերի 11-ին ընդունված

Դեկտեմբեր, Երկրում հաստատվեց պառամենտական կյանքը, որաշտոնապես վերացվեց էղդեի և կառավարությունը, Միայն տակախ մնաց սահմանադրության փոփոխության հարցը¹:

Ամբողջ երկիրը ցնծությամբ ընդունեց այս լուրը, կիրանանի քաղաքներում և գյուղերում տեղի ունեցան ցույցերու Տասնյակ հազարների հասնող քաղմություն հավաքվեց պառամենտի շնչների առջև գտնվող հրապարակի վրա, Ֆրանսիայի եռագույն դրույք իշեցվեց և նրա փոխարեն պառամենտի ու կառավարական շնչների վրա բարձրացվեց կիրանանի նոր դրոշը՝ կարմիր-սպիտակ-կարմիր, մեջտեղում ունենալով կիրանանի խորհրդանիշը՝ հանդիսացող մայրին:

Նոյեմբերի 22-ին ժ. 3-ին Բեյրութ ժամանեցին պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին, պրեմյեր-մինիստր Ռիադ Սոլիմ և մյուս մինիստրները, ժողովուրդը նրանց ընդունեց խանդավառությամբ և ուրախության բացականնություններով:

1943 թ. նոյեմբերի 23-ին կառավարության կողմվ ընդհանուր գործադուլն ավարտվեց և բանվորները, ծառայողները, առևտուրականներն ու արհեստավորներն անցան աշխատանքի, Կառավարությունը լրիվ կազմով անցավ իր պարտականությունների կատարմանը, Երկրում վերահաստատվեց բնականոն կյանքը, Նոյեմբերի 24-ին գեներալ Կատրուն պաշտոնապես տեղիկացրեց հանրապետության պրեզիդենտին, որ ետ է վերցնում իր վերապահումը, այսինքն ճանաշում է կիրանանի սահմանադրության մեջ կատարած փոփոխությունները²: Այսպիսով, ֆրանսիական իշխանությունների կողմից նոյեմբերի 11-ին ընդունված բոլոր որոշումները վերացվեցին:

Ամփոփելով նոյեմբերյան պայքարի արդյունքները Ֆարաշալլա Հելուն հիմք ուներ նշելու, որ Շիրանանի ժողովուրդը իր պայքարով ազգային դատին համար բացուրոշ հաղթանակ մը ապահովեցած³: Նոյեմբերյան ելույթների ընորոշ առանձնահատկությունը նա համարում էր այն, որ Շիրանա-

1 ժողովուրդի Զայնը, 27 նոյեմբերի 1943 թ.,

2 Նոյեմբերի 10-ին:

3 Նոյեմբերի 28 նոյեմբերի 1943 թ.,

նի պատմության մեջ առաջին անգամ ըլլալով իսլամը, քրիստոնյան, դրուզին, հայը, շիհն, մարոնին, օրթոդոքսը, կաթոլիկը իրար միացան պաշտպանելու համար հայրենիքի իրավունքները և ազգային պատիվը¹: Այդ նույն հանգամանքն է ընդգծում Խալեղ Բեկդաշը «Լիբանանի պայքարի դասերեն» հոդվածում: Այդ պայքարի ամենակարևոր դասերից մեկը նա համարում է այն, որ Լիբանանն իր փորձով ցույց տվեց, թե ոկրոնը աստծուն է, իսկ հայրենիքը՝ բոլորին և նա նշում է, որ լիբանանյան շարժումը ազգային արարական շարժում էր, զուրկ որևէ կրոնական և ցեղային գույնից: «Հազարավոր իւլայ, քիչստոնյա, զրուցի և հայ ցուցարարներ,— գրում է Խալեղ Բեկդաշը,— կողք-կողքի կքալեին առանց որ մեկը մյուսին դավանանքը դիտնար, առանց որ կրոնական գույն կրող բացագանցություն մը լսվեր: Այս կամ այն համայնքին հասուի կեցցեները միայն ու միայն ուղղված էին հայրենիքի, անկախության, սահմանադրության և դրոշակի հասցեին²: Նրանց այդ շարքերի միասնությունը և շանքերի միավորումն էր, որ ստիպեց ֆրանսիական զաղությարարներին նահանջել: Արարեների հետ միասին գնալը և նրանց հետ բարեկամության ամրապնդումը Հ. Մատեյանը իրավացիարեն համարում է «ազգօգուտ միակ ուղին»: Նա նշում է, որ նոյեմբերյան օրեւնին Լիբանանի հայությունը դրված էր ճակատագրական նշանակություն ունեցող փորձի առջև, որ ոճարագործ ձեռքերը փորձում էին արար և հայ թշնամություն առաջացնել: «Մակայն ուրախ ենք արձանագրելու, — նշում է Հ. Մատեյանը, — որ Լիբանանի հայությունը իր առջև դրված փորձության դասը հաշողությամբ անցուցի Հայ և արար թշնամություններ առաջ շեկան, ինչպես որ այդ կուզեին թե հայ և արար ժողովուրդներու թշնամիները»³:

Նոյեմբերյան իրադարձություններից հետո Լիբանանի պետական ու քաղաքական գործիչները, զանազան կաղմակերպություններ առաջ շեկան, ինչպես որ այդ կուզեին թե հայ և արար ժողովուրդներու թշնամիները»³:

1 «Ժողովուրդի Զայն», 28 նոյեմբերի 1943 թ.:

2 Նույն տեղում, 4 դեկտեմբերի 1943 թ.:

3 Նույն տեղում, 28 նոյեմբերի 1943 թ.:

բանանի անկախութան համար մղվող պայքարի այդ պատասխանատու օրերին հայերի գրաված դիրքին ու կատարած գերին, բարձր զնահատելով նրանց հայրենասիրությունը և կիրանանի անկախությանը նվիրված լինելը:

Հիրանանյան Ազգային համագումարի թերթը (նա վերնագիր չուներ և լուս էր տեսնում հարցական նշան կրող վերտառությամբ) 1943 թ. նոյեմբերի 23-ի իր համարում հայերին համարում էր արարների եղայրները և նրանց պայքարի ընկերները: Թերթը նշում էր, որ «հայերը չեն մասնար թե Կիլիկիային, Խակենդերումնեն և Ծեպել Մուսային ելել հետո զիրենք այս երկրին մեջ ընդունողը ամեննեն առաջ լիրանանցի ժողովուրդը եղավ: Նույնը ըրին նաև Սիրիան և արարական մյուս երկրները: Հայերը չեն կրնար մոռանալ, որ թրբական լուծեն ազատվելու համար իրենց մղած պայքարին մեջ իրենք այս երկրի ազգային զեկավարներում և ազատականներում հետ պայքարի հին ընկերներ եղած ենք¹: Թերթը այն միտքն էր զարգացնում, որ հայերին ու արարներին միացնում է անցյալում ունեցած նրանց ճակատագրի ընդհանրությունը, համատեղ պայքարը ընդեմ թուրք բարբարուների և այն, որ նրանք այժմ ապրում են միասին և կիրանանի աղդային դատը միաժամանակ նաև հայերի դատն է:

1943 թ. նոյեմբերի 24-ին Ազգային համագումարի նախագահ Ահմեդ Դաութը մեծ ընդունելություն կատարեց, որին մասնակցում էր նաև հայկական պատվիրակությունը: Այդ ընդունելության ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկան համագումարի մի քանի անդամները նրանք բոլորն էլ բարձր գնահատեցին հայերի գերը կիրանանի ազգային ազատագրական պայքարի մեջ: Հայերի կողմից հանդես եկան Թապուրյանը, Ենիդոմշույանը և Աղբաշյանը, որոնք նշեցին, որ հայ ժողովուրդը թանկ է զնահատում բարեկամությունը արարների հետ և պատրաստ է նրանց հետ մինչև վերջ մարտնչել կիրանանի ազատության ու անկախության համար: «Թերության բարձր պարագաները անդքաղաղամանակով Ազգային համագումարի կազմակերպած ընդունելությանը և այնտեղ արտասան-

1 Մեջբերումն ըստ ժողովուրդի Զայն, 27 նոյեմբերի 1943 թ.:

ված ելույթներին, ուստի պահե մեր հայ եղբայրները՝ խորագրի տակ տպված հոդվածում նշում էր. «Մենք իրապես հիացած ենք մեր հայ եղբայրներում զգացումներում վրա: Եատերը կկարծեն, թե հայերը իրենց համար պահեստ մըն են և կարող են զանոնք հրապարակ նետել, երբ որ ուղեն: Սակայն հայերը լիբանանցիներ են, ունին միևնույն իրավունքները և պարտականությունները ու պատրաստ են իրենց բոլոր միջոցները ի գործ դնելու լիբանանի համար¹,

Եերբակալումից ազատվելուց և կրկին իր պարտականությունները ստանձնելուց հետո լիբանանի պրեմյեր-մինիստր Ռիխարդ Սոլցը հարկ համարեց հրապարակորեն անդրադառնալ այն լուրերին, որ նրա ձերբակալման ժամանակ իբր նրա փաստաթղթերում հայտնաբերել են հայերին լիբանանի քաղաքացիությունից զրկելու օրենքի նախագիծ: 1943 թ. նոյեմբերի 30-ին հանդես դարձվ պրես-կոնֆերանսում նա հայտարարեց. «բացարձակապես կհերքեմ այս շարամիտ սուս լուրը: Նման փաստաթուղթ գոյություն ունեցած չէ: Եթե գոյություն ունի կպահանջեմ, որ հրապարակեն: Ես հայերուներկայությունը այս երկրեն ներս կընդունիմ զրկարաց և մասնավոր հաճույքով: Անոնք այս երկրին անկախությունը թերևս մեզմե ավելի լավ պաշտպանեն: Որովհետեւ անոնք երկար ատեն ապրած են բռնության տակ, պայքարած և գոհված են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը: Իմ կառավարության սիրոտ բաց է հայերունամար: Ես պիտի ընեմ ամեն կարելին, որպեսզի անոնք հետայսու ավելի լավ բաժին ըն ունենան կառավարական գործերու մասնակցության մեջ»²:

Եվ վերջապես լի-անանի հայերի դերի բարձր գնահատմամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ լիբանանի պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին անհրաժեշտ համարեց 1943 թ. դեկտեմբերին այցելել Հայ Ազգային Առաջնորդարան: Առաջնորդ հայրը՝ Սուլեմելան սրբազանը դիմելով պրեզիդենտին ասաց, որ հայերը հավատարիմ են ու նվիրված լիբանանին, նրա ժողովրդին, անկախության ու սահմանա-

1 Մեջբերումն ըստ «Ժողովուրդի Զայն», 28 նոյեմբերի 1943 թ.

2 «Ժողովուրդի Զայն», 1 դեկտեմբերի 1943 թ..

դրությանը։ Իր պատասխանում արեգիղենուց գովեց հայ համայնքը և հայտնեց, որ «Լիբանանի հայ համայնքը անբաժան մասն է լիբանանյան ազգությանը»¹,

Հասկանալի է, որ լիբանանի հայերը այսպիսի վերաբերմունքի արժանացան չնորհիվ իրենց ազնիվ կեցվածքի և լիբանանի ազգային անկախությունն ու գերիշխանությունը պաշտպանելու:

1943 թ. դեկտեմբերին բանակցություններ սկսվեցին Սիրիայի, լիբանանի և Ֆրանսիայի միջև, վերջինիս կողմից կառավարման ֆունկցիաները նրանց զիշելու հարցի շուրջը՝ նոյնմերյան դեպքերից հետո Ֆրանսիային ուրիշ ելք չէր մնում,

Իր ո՛՛մազմական հուշերում խոսելով այդ հարցերի և Սիրիայում ու լիբանանում ֆրանսիական մանդատի դեմ ուղղված ազատագրական պայքարի մասին, դը Գոլը հակված է այդ շարժումները բացատրել անզվիական սաղրանքներով։ «Մենք ենթադրում էինք, — գրում է նա, որ Դամասկոսի և Բեյրութի կառավարությունները իրենց պահանջներով կարող էին սպասել մինչև պատերազմի վերջը և այն ժամանակ կլուծվեին վերջին ձևականությունները, որոնք դեռևս սահմանափակում են այդ երկրների սույներենիտետը։

Ե՛զ Սիրիան, և լիբանանը, անկասկած, կսպասեին, եթե լոնդոնը շնորհուած նրանց պահանջները»²,

Դը Գոլը սրանով փորձում է ստվեր գցել Սիրիայում և լիբանանում ժավալված ազգային-ազատագրական շարժումների վրա, ցույց տալ, որ դրանք ոչ թե բնական, ինքնարութելութենք էին, այլ դրսից հրահրված։ Դը Գոլի այս սխալը՝ արարական շարժումների բնույթի և անզվիական իմպերիալիզմի դերի մասին, կարմիր թելի նման անցնում է նրա ամբողջ հուշերի միջով։ Նա համառորեն չի ուզում ոհասկանալ այդ շարժման օբյեկտիվ պատճառները և լիբանանի ու Սիրիայի ազատատենչ ձգուումները։

1943 թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիան, Սիրիան և լի-

¹ «Ժողովուրդի Զայես», 8 դեկտեմբերի 1943 թ.։

² Шарль де Голль, Военные мемуары, т. 2, стр. 231.

բանանը պաշտոնապես համաձայնադիր կնքեցին, որտեղ
ասված էր.

«Այսօր պետության լիազոր գեներալ Կատրուի և սիրիա-
կան ու լիբանանյան կառավարությունների ներկայացուցիչ-
ների միջև համաձայնություն կայացավ ներկայումս ֆրան-
սիական իշխանությունների իրազործած լիազորությունները
այս երկու կառավարություններին հանձնելու շուրջ։ Այս հա-
մաձայնության համապատասխան ընդհանուր շահերն ու նը-
րանց պաշտոնյանները փոխանցվելու են սիրիական և լիբա-
նանյան պետություններին՝ օրենսդրական և վարչական իրա-
վունքի հետ միասին, առաջիկա հումվարի 1-ից սկսյալ։¹ 1944 թ. հունվարի 1-ից սկսած կիրանանի և Սիրիայի տնօ-
րինությանն անցան բոլոր կարևոր սպասարկությունները,
ինչպես օրինակ, ընդհանուր ապահովությունը, արտաքին
գործերը, ֆինանսական, տնտեսական և օրենսդրական սպա-
սարկությունները, փոստ-Հեռուստիրը, գրաքննությունը, ար-
դյունաբերական և առևտրական սեփականության պաշտպա-
նությունը, առողջապահության, վառողի և պայթուցիկ նյու-
թերի արտադրության, հանքային հետախուզության և այլ
սպասարկությունները, հսկողությունը օտար ընկերություն-
ների վրա և այլն։ 1944 թ. հունիսի 5-ին Դամասկոսում Սի-
րիայի և կիրանանի կառավարությունները հրապարակեցին
համատեղ կոմյունիկե, որտեղ ասված էր, որ կառավարման
ֆունկցիանների փոխանցումը ավարտված է²։ Դա փաստորեն
նշանակում էր, որ Ֆրանսիան մանդատով իրեն արված բռլոր
իշխանությունները և լիազորությունները հանձնում էր Սի-
րիային և կիրանանին։³

Դրանով ավարտ էց կիրանանի ազգային ազատազրա-
կան պայքարի առաջին էտապը, Այդ էտապի ամենակարևոր
արդյունքը եղավ կիրանանի անկախության նվաճումը։

¹ منير تقى الدين، الجلاء، ص ٣٥

² ١٧» 1943—1947. أربع سنوات من العهد الوطنى».

دمشق، 1947، ص ٤٠

Առաջին դասեմ վաղ էր խոսել Լիբանանի քաղաքական յրին անկախության մասին, որովհետև Ֆրանսիան Լիբանանին, ինչպես և Սիրիային, շանձնեց բանակը, այսպես կոչված «Հատուկ զորամասերը», Բացի այդ Լիբանանի և Սիրիայի տերիտորիայում շարումակում էին մնալ ֆրանսիական և բրիտանական զորքերը: Առանց «Հատուկ զորամասերը» Սիրիային և Լիբանանին հանձնելու, առանց բրիտանական և ֆրանսիական զորքերը այդ երկրների տերիտորիայից հանելու խոսք շեր կարող լինել Սիրիայի և Լիբանանի քաղաքական անկախության նվաճման պրոցեսի ավարտման մասին: Այդ բանը լավ էին ըմբռնում Լիբանանի և Սիրիայի պետական զործիչները: Լիբանանի պրեմյեր-մինիստր Ռիադ Սուլեյմանը պառլամենտում հայտարարեց, որ շանկախության դատը վերջացած չէ: Լիբանանը տակավին կատարյալ հեղաշրջման մեջ է: Մենք անկախության այն առեն միայն իրավես տիրացած կը լանք, երբ մեզի փոխանցվի բանակը և տակավին ուրիշ իրավունքները¹: Եթե 1945 թվականից սկսած մինչև 1946 թվականի վերջերը Լիբանանի ազգային-ազատագրական, հակախմբի իրավական պայքարի հիմնական ռովանդակությունը կազմել է «Հատուկ զորամասերի» հանձնումը Լիբանանին, ըստոր օտարերկրյա զորքերի գուրս բերամը երկրի տերիտորիայից և Լիբանանի անկախության ու զերիշխանության ամրապնդումը:

«Հատուկ զորամասերը», որոնց մասին խոսքը գնում է, փաստորեն տեղական զորքն էր: Նրա թիվը համում էր 25000-ից: Այդ զորամասերը գտնվում էին ֆրանսիական սպաների հրամանատարության ներքո և սիրիական և լիբանանյան կառավարությունները ոչ մի իշխանություն չունեին նրանց վրա, թեև նրանք հավաքագրվում էին արաբներից,

1 «Ժողովուրդի Զայն», 30 մարտի 1944 թ.:

2 Moussa Dib, The Arab block in the United Nations, p. 65.

ինչպես նաև ազգային փոքրամասնություններից՝ քրդերից, չերքեղներից և հայերից¹:

Լիբանանի և Սիրիայի կառավարությունները պահանջում էին իրենց հանձնել «Համառուկա» գորամասերը։ Այդ էին պահանջում ժողովրդական մասսաները և բոլոր ընդդիմադիր ուժերը։ Ի նպաստ այդ պահանջի 1945 թ. հունվարի 29-ին Լիբանանում համընդհանուր գործադրությունները, խանութները և այլն, Զէր աշխատում տրանսպորտը։ Աշխատավորական մասսաները թեյրութում և լիբանանի մյուս վայրերում ցուցաբեր են կազմակերպում։ Ցուցաբարները երգում էին ազգային երգեր և կրում լիբանանի դրոշներ, որոնց վրա գրված էին. «բանակը հայրենիքի պատնեշն է», որանակը անկախության պաշտպանն է ու խորհրդանիշը², թեյրութում ցուցաբարների առջև հանդես եկավ պրեմյեր-մինիստրը, որը ծափահարությունների ներքո հայտարարեց, որ կառավարությունն իր վրա պարտականություն է վերցրել զրադվիլ այդ ազգային հարցով, որ նա պահանջում է և կապահանջի բանակի փոխանցումը, մինչև որ հասնի իր նպատակին³։

Բանակի փոխանցման հարցը հատուկ քննարկման առարկա դարձավ լիբանանի պառամեմնության 1945 թ. փետրվարի 3-ի նիստում։ Հանդես գալով այդ նիստում արտաքին գործերի մինիստր Հանրի Ֆարաոնը հայտարարեց, որ լիբանանի կառավարությունը հուշագիր է ուղարկել Ֆրանսիայի Ներկայացուցչին՝ պահանջելով լիբանանցիներից կազմված բանակը փոխանցել լիբանանին⁴. Պառլամենտի դեսպանատներն իրենց ելույթներում պաշտպանեցին կառավարության այդ քայլը։ Դեպուտատ Լա՛ռուտին նշում է, թե բանակի փոխանցման պահանջը չի նշանակում ատելություն որևէ մեկի դեմ, այլ նշանակում է անկախության ամրողացում⁵.

¹ M. Seton-Williams, Britain and the Arab States, London, 1948, p. 119.

² «Ժողովուրդի Զայն», 31 հունվարի 1945 թ.,

³ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 4271, л. 22.

⁴ «Ժողովուրդի Զայն», 4 փետրվարի 1945 թ.,

⁵ նույն տեղում,

իր ելույթում պրեմյեր-մինիստրը Համիդ Քարամեն (նա այդ պատում Ռիադ Սոլէին փոխարիննել էր 1945 թ. հունվարին) ասում է. «բանակ շռնեցող պետությունը չկրնար ապրիլ... Լիբրանանը ազատ, անկախ և գերիշխան պետություն մըն է և ան պիտի ունենա իր բանակը»¹:

Լիբրանանի կառավարությունը «Հաստուկ զորամասերը» իրեն հանձնելու պահանջի հետ միասին գործնական բայլերի է զիմում ազգային բանակ ստեղծելու ուղղությամբ։ Այդ նպատակով նա պետական բյուզենում առանձնացնում է 5 մլն. սիրիա-լիբրանանյան ֆունտ², Պառլամենտը կառավարության այդ միջոցառմանը հավանություն է տալիս և միաժամանակ պարտավորեցնում է նրան շարունակել պնդել բանակի փոխանցման պահանջի վրա։

Այդ հարցի շուրջը բանակցություններ են սկսվում Ֆրանսիայի, Սիրիայի և Լիբրանանի կառավարությունների միջև։ Ֆրանսիան նշում էր, որ ինքը սկզբունքորեն համաձայն է «Հաստուկ զորամասերը» զիշել Սիրիային և Լիբրանանին։ Սակայն նա չէր ցանկանում այդ պիտույքը կատարել առանց պայմանի։ Որպես զիշման դին Ֆրանսիան առաջարկում էր հաստուկ պայմանագիր կերել, որն ապահովեր Ֆրանսիայի կուտուրական, տնտեսական և ստրատեգիական շահերը։ Ֆրանսիան պնդում էր, որ իրեն իրավունք տրվի այդ երկրներում ունենալ ուղմածովային և ուղմատային բազաներ, ինչպես նաև իրավունք ունենա այդ երկրներում պահպանել ֆրանսիական ռազմական հրամանատարություններ, Պարզ էր, որ Սիրիայի և Լիբրանանի կառավարությունները չէին կարող համաձայնվնել այս իմպերիալիստական պահանջների։ Հետո նրանք պնդում էին, որ «Հաստուկ զորամասերը» իրենց հանձնեն անմիջապես և առանց որևէ պայմանի Լիբրանանի պրեմյեր-մինիստրը Արդել Համիդ Քարամեն հայտարարեց, որ Լիբրանանը իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ ուղղամբ է կարդալուրել իրավահավասարության հիմքի վրա, որ ոմեզմե

1 «Ժողովուրդի Զայն», 4 փետրվարի, 1945 թ.

2 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 4271, л. 29.

3 M. Seton-Williams, Britain and the arab states, p. 108.

պահանջված բարեկամությունը մենք կհարգենք պայմանով, որ Հարգվին նաև մեր բարեկամությունն ու իրավունքները¹, «Բեյրութ» թերթը անդրադառնալով ֆրանսիական դիրքին և պահանջներին «Տվեք մեղ բանակը, հրաժարվեք ամեն ինչից և մենք կմնանք բարեկամներ», հոգվածում նշում էր, «Մենք ասում ենք և կրկնում, որ Ֆրանսիայի հետ շենք ցանկանում կնքել որևէ պայմանագիր, որը նրան մեր երկրում տար արտոնյալ դիրք, քանի որ մեր ժողովուրդը հանդիսանում է ազատ, անկախ և գերիշխանա՞»².

Սակայն Ֆրանսիան ոչ միայն ցանկացավ հաշվի նստել Սիրիայի և Լիբանանի օրինական պահանջների հետ, այլ ի զարմանո բոլորի, լրացուցիչ զինվորներ բերեց Սիրիա և Լիբանան, 1945 թ. մայիսի 7-ին և 17-ին սենեգալական զինվորները առանց լիբանանի կառավարության զիտության ժամանեցին Բեյրութի նավահանգիստը։ Դա փաստորեն ռազմական ցույց էր, մի փորձ ճնշում գործադրել Սիրիայի և Լիբանանի կառավարությունների վրա և ստիպել նրանց նահանջել ու համաձայնվել ֆրանսիական իմպերիալիստական պահանջների հետ։ Լիբանանի և Սիրիայի կառավարությունները բողոքի նոտա հղեցին Ֆրանսիային³, Բայց սիրիա-լիբանանյան բողոքը հաշվի լառնվեց և ֆրանսիական զորքերի ժամանումից մեկ օր անց՝ 1945 թ. մայիսի 18-ին ֆրանսիական նոր զիսավոր դելեղատ Բեյնեն Սիրիայի և Լիբանանի կառավարություններին հանձնեց նոտա հետևալ բավանդակությամբ։ «Ֆրանսիական կառավարությունը ցանկանում է Սիրիայում և Լիբանանում ապահովել իր կենսական շահերի անվտանգությունը։ Այդ շահերը կուլտուրական, տնտեսական և ստրատեգիական ենք»⁴, Նոտայում ասված էր, որ ստրատեգիական պահանջների տակ Ֆրանսիան ի նկատի ունի իրեն հանձնել տրոշակի ռազմական բազաներ։ Այնուհետև նշվում

¹ «Ժողովուրդի Զայն», 4 փետրվարի 1945 թ.։

² 3.III.1945, «بیروت»

³ ۱۹۴۳—۱۹۴۷. أربع سنوات من العهد الوطني،

ص ۴۲

⁴ N. Ziadeh., p. 81.

էր, որ «... երբ պայմանագրերը կնքվեն... այն ժամանակ
ֆրանսիական կառավարությունը կհամաձայնվի փոխանցել
«Հատուկ զորամասները», որոնք պատկանում են երկու եր-
կրթներին, այս զորքերի հրամանատարությունը վերապահե-
լով ֆրանսիական բանակի բարձրագույն հրամանատարու-
թյանը այնքան ժամանակ, քանի դեռ պայմանները թույլ չեն
տա այս երկու երկրներին իրենց բանակների ամրողական
հրամանատարությունն իրականացնելը¹:

Լիրանանի և Սիրիայի կառավարությունները մերժեցին
Ֆրանսիայի այս պահանջը²: Նրանք բողոքեցին ֆրանսիական
նոր զորքերի լիրանան ժամանման դեմ և հրաժարվեցին բա-
նակցություններ վարել ֆրանսիական ներկայացուցիչների
հետ: Այդ առթիվ լիրանանի և Սիրիայի կառավարություն-
ները հրապարակեցին համատեղ կոմյունիկե, որտեղ ասված
էր, «զորքերուն (ֆրանսիական—Ն. Հ.) ցամաք հանելու ձեզ
ոտնձություն մըն է երկու երկիրներու գերիշխանության
դեմ և թե հուզագիրը (Բեյնեի —Ն. Հ.) կապարունակե այնպի-
սի առաջարկներ, որոնք չեն համապատասխանեք Սուրբու և
լիրանանի անկախության: Հետևարար, սուրբիական և լիրա-
նանյան երկու կողմերը համաձայն գտնվեցան մերժել բա-
նակցության մտնել և ներկա կացություննեն առաջանալիք
ամեն պատասխանատվություն նետել ֆրանսիական կառա-
վարության վրա»³: Ֆրանսիական կառավարության այս ակ-
տը դատապարտեց նաև լիրանանի պարամենտը: Պառա-
մենտի մայիսի 19-ի փոթորկալից նիստում բողոքի ուժեղ
ելույթներ ունեցան դեպուտատներ Խալիլ Արու Յասուղը, Լա-
հուղը և Ֆերգելին: Նրանք լիրանանի կառավարությունից
պահանջեցին կորուկ միջոցներ ձեռք առնել⁴:

Ֆրանսիական նոր զորքերի ժամանումը և Բեյնեի պա-
հանջները խոր վրդովմունք առաջացրին լիրանանի և Սիրիա-

¹ Նույն տեղում:

² 17 آب 1943—1947. أربع سنوات من المعهد²
الوطني³ ص 43.

³ «Ժողովուրդի Զայե», 22 մայիսի 1945 թ.:

⁴ „Le Jour“, Beyrouth, 19. V. 1945.

յի ժողովրդական մասսաների մոտաւ Մայիսի 18-ին ի նշան բողոքի, գործադուլ սկսվեց Բեյրութում, որը շուտով վերածվեց համընդհանուր գործադուլի: Բեյրութում, Տրիպոլիում և մյուս վայրերում փակվեցին շուկաները, խանութները, առևտրական, ուստամնական և հասարակական ձեռնարկերությունները: Տեղի ունեցան ցույցեր: Մի շաբթ վայրերում ընդհարում տեղի ունեցավ ցուցարարների և ֆրանսիական զորքերի միջև: Մայիսի 20-ին ֆրանսիական զորքերը Բեյրութում գնդակոծեցին աշխատավորների ցույցը, որի հետևանքով միքանի մարդ սպանվեց¹:

Դրա հետ միասին ֆրանսիական գաղութարարները և նրանց գործակալները ժաղովոդական դիմադրությունը թուլացնելու և պառակտելու նպատակով դարձյալ փորձեցին միջհամայնքային թշնամություն առաջացնել և քրիստոնյաներին ու մահմենդականներին իրար դեմ լարել: Եվ ինչպես միշտ, այս անգամ նույնպես, նրանք հույս ունեին օգտագործել հայերին: Լիբանանի դեմոկրատ զորդիչներն իմաստելիստների այդ դավերը տապալելու նպատակով լայն բացատրական աշխատանք են տանում ժաղովրդական մասսաների շրջանում: Այդ օրերին Հայ կոմունիստները գումարում են ժողով և որոշում հայերի բռնելիք դիրքը: Այնուհետև, մայիսի 11-ին Հայ կոմունիստ դեկավարները հանդիպում ունեցան Լիբանանի կոմունիստական կուսակցության նախագահ Ֆարաշալլա Հելուի և կենտրոնական կոմիտեի անդամ, արհմիութենական շարժման դեկավար Մուսաթաֆա ալ-Արիսի հետ: Այդ Հանդիպման ժամանակ որոշվեց Լիբանանի կոմունիստական կուսակցության անունից հատուկ կոլով դիմել Հայ ժաղովրդին: Այդ կոչը, որ վերնագրված էր. «Լիբանանի կոմունիստական կուսակցություն», Կոչ լիբանանահանայ ժողովրդին, Պահպանեցք ձեր միությունը, զգուշացեք խանուակիլներնեւ, հրապարակվեց մայիսի 20-ին: Կոչում ասված էր. «Հայրենակիցներ. երկու օր է լիբանան, իր քաղաքներով և գյուղներով, իսլամ թե քրիստոնյա զավակներով, գործադուլի մեջ է իր ազգային անկախության և գերիշխանության դեմ կատարվող ոտնձգու-

¹ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 4271, л. 129.

թյուններեն պաշտպանվելու համարը¹: Այնուհետև նշված էր, որ ազգային ազատագրական պայքարի այս վճռական պահին ռեակցիոն տարրերը և նրանց գործակալները փորձում են քրիստոնյան ու իսլամը, հայն ու արարը իրար դեմ հանել, նրանցից յուրաքանչյուրին հավատացնելով, որ այս շարժումն իր դեմ է ուղղված: Կոմունիստական կուսակցությունն զգուշացնում էր, որ դրանով փորձում են պառակտել ազատագրական պայքարի միասնականությունը, փոխադարձ անվըստահության մթնոլորտ ստեղծել և կիրանանի ազգային պայքարը շեղել իր նպատակից: Ուստի կոմունիստական կուսակցությունը դիմում է հայերին, ասելով նրանց: «Հայ ժողովուրդը կիրանանի արար ժողովուրդը ոչ մեկ թշնամություն ունի հայ ժողովուրդի հանդեպ: Ընդհակառակը, անիկա տոգորված է բարեկամական լավագույն զգացումներով և կհավատա թե հայ աղատասեր ժողովուրդն ալ իրեն պես կխորհի: Մենք վստահ ենք, թե ինչպես անցյալին, նույնպես ներկայիս, հայ ժողովուրդը ձախողության պիտի մատնե ամեն գույնի զրդուիներու դավադրությունները: Հայ ժողովուրդը՝ գիտակից իր ազգային ապահովության շահերում, գիտակից, թե կիրանանի ժողովուրդին հացի և աղատության համար մղած պայքարը իր ալ պայքարն է, ալիսի շարունակե տեղացի ժողովուրդին հետ հաշտ ու խաղաղ ապրելու իր հեռատես և իմաստում քաղաքականությունը², Կոչը կիրանանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անունից ստորագրել էին Ֆարաջալլա Հելուն և ուրիշներու կիրանանի առաջադեմ ուժերի շանքերի շնորհիվ Փրանսիական իմպերիալիստների պլանները չիրականացան: Ոչ մի տհան դեպք տեղի չունեցավ և ժողովրդական պայքարի միասնականությունը շշլատվեց, Քրիստոնյաները մահմեղականների հետ միասին կուռ շարքերով պայքարում էին կիրանանի անկախության համար: Պրեմյեր-մինիստր Ա. Քարամեն գովարանելով կիրանանի ժողովուրդի միահամուռ կամքը 1945 թ. մայիսի 22-ին պաղամենտի բարձր ամբիոնից հայտարարեց:

1 ժժողովուրդի Զայես, 20 մայիսի 1945 թ.:

2 նույն տեղում:

«Ֆրանսիացիները ժամանակին կըսեին թե քրիստոնյաները պաշտպանելու համար կդունվին այստեղ, սակայն այսօր ազգային պայքարի առաջին գծին վրա կդունվին քրիստոնյաները»¹:

Յուլյան և ժողովրդական ելույթները ուղղված ֆրանսիական իմպերիալիստների դեմ Սիրիայում և Լիբանանում ոչ միայն չեն դադարում, այլ քանի գնում ուժեղանում են: Կատաղության և հռաւահատության հասած ֆրանսիական գաղութարները ժողովրդի դեմ հանեցին կանոնավոր ֆրանսիական զորամասեր: Նրանք մայիսի 29-ին թնդանոթներից ու ականանետներից ոմբակոծեցին Սիրիայի մայրաքաղաքը՝ Դամասկոսը: Ռմբակոծումը կատարվեց նաև օդից ինքնաթիռներով²: Ֆրանսիական իմպերիալիստների այդ ոճրագործությունը ցաման ալիք բարձրացրեց ամբողջ աշխարհում: Առաջադեմ մարդկությունը իր բողոքը հայտնեց ֆրանսիական գաղութարարներին սիրիական անմեղ ժողովրդի արյունը թափելու կապակցությամբ:

1945 թ. մայիսի 31-ին Լիբանանի քաղաքական կուսակցությունների Ազգային համագումարի կոչով ամբողջ Լիբանանում հինգօրյա գործադրու սկսվեց իրրև բողոք Սիրիայում կատարած վայրագությունների, Սիրիայում և Լիբանանում տիրող ճնշման և բռնության դեմ և առ ի միասնականություն Լիբանանի կառավարության դիրքին: Լիբանանի ժողովուրդը իր աջակցությունը հայտնելով Սիրիայի եղբայր ժողովրդին, Ֆրանսիայից պահանջում էր վերջ տալ արյունահոսությանը և իր զորքերը դուրս հանել Լիբանանից ու Սիրիայից:

Դամասկոսի ոմբակոծումից հետո կոնֆլիկտին միջամբաց Անդիան: Նա ուղարկելով դադարեցնել կրակը և ֆրանսիական զորքերը ետ քաշել իրենց զորանոցները: Իր ուղարկմատումի մեջ Անդիան սպառնում էր, որ եթե իր այդ պահանջները Ֆրան-

1 ժողովուրդի Զայն, 23 մայիսի 1945 թ.,

2 Ծ. 1947—1948 թ. ա. 17»

3 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 4271, л. 224.

սիւն մինչև մայիսի 31-ը շկատարի, ապա նա իր զորքերին հրաման կտա կռվի մեջ մտնել ֆրանսիական զորքերի հետ:

Անգլիական կառավարությունն իր այդ վարքագիծը բացարում էր նրանով, որ սիրիական իրադարձությունները կարող էին ամրոցք Միջին արևելքը անհանգուացնել և խանգարել դաշնակիցների պատերազմական ջանքերին¹; Իրականում դա պետք է բացատրել անգլո-ֆրանսիական հակամարտությամբ, որի մասին խոսվել է սույն աշխատության նախորդ բաժիններում:

Ֆրանսիական գաղութարարների քաղաքականության գատապարտմամբ և Լիբանանի ու Սիրիայի անկախության պաշտպանությամբ հանդես եկավ Սովետական Միությունը: Սովետական կառավարությունը 1945 թ. հունիսի 1-ին նոտա ուղարկեց Ֆրանսիայի կառավարությանը, որտեղ նա Ֆրանսիայի գործողությունները Սիրիայում և Լիբանանում համարեց ՄԱԿ-ի որոշումներին հակասող: Սովետական կառավարությունը գտնում էր, որ «անհապաղ միջոցներ պետք է ձեռք առնել, որպեսզի դադարեցվին ռազմական գործողությունները Սիրիայում և Լիբանանում, և ժագած կոնֆլիկտը խաղաղ հանպարհով կարգավորելը»²:

Սիրիայի և Լիբանանի շահերի պաշտպանությամբ հանդես եկան բոլոր արարական երկրներու Արտահայտելով նըրանց կամքքը Արարական լիգայի խորհուրդը 1945 թ. հունիսի 7-ին ընդունեց մի որոշում, որը Սիրիայում և Լիբանանում եղած դեպքերի ողջ պատասխանատվությունը դնում էր Ֆրանսիայի վրա և պահանջում է՝ աշտուկ զորամասերը անհապաղ փոխանցել Սիրիային ու Լիբանանին: Բացի այդ նա ֆրանսիական զորքերի ներկայությունը երկու երկրներում համարում էր նրանց անկախությանը և գերիշխանությանը հակասող մի երևույթ և այդ զորքերի անհապաղ էվակուացիան համարում կենսական կարևոր հարց³:

¹ M. Seton-Williams... p. 112.

² «СССР и Арабские страны. 1917—1960. Документы и материалы», М., 1961, стр. 87.

³ N. Ziadeh... p. 87.

Հանդիպելով Սիրիայի և Լիբանանի դեմոկրատական ուժերի անկոտրում դիմադրությանը և համաշխարհային առաջդիմ հասարակության մեջման ներքո, Ֆրանսիան հարկադրված էր կրկին նահանջել: 1945 թ. հունիսի 8-ին նա Սիրիայի և Լիբանանի կառավարություններին պաշտոնապես տեղեկացրեց, որ համաձայն է նրանց փոխանցել «Հաստում զորամասերը», որը և փոքր ժամանակ անց, իրոք, տեղի ունեցավ¹:

Այսպիսով, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների պայքարը «Հաստում զորամասերը» իրենց հանձնելու, աղօային բանակ ստեղծելու համար, որը նշանակում էր ազգային անկախության հետագա ամրապնդում, նույնպես պսակվեց Հաջողությամբ:

Սակայն Լիբանանից և Սիրիայից օտար զորքերի էվակուացիայի հարցը դեռևս չէր լուծվել: Ֆրանսիական և անդիմական զորքերը շարունակում էին մնալ այդ երկրներում: Հետեարար դեռևս խոսք չէր կարող լինել նրանց լրիվ անկախության և ինքնուրույնության մասին: Ուստի Սիրիայի և Լիբանանի կառավարություններն ու դեմոկրատական ուժերը իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացրին օտար զորքերի էվակուացման խնդրի վրա: 1945 թ. հունիսի 7-ին Լիբանանի արտաքին գործերի մինիստրը Հանրի Ֆրանսոնը հայտարարեց: «Մենք պահանջում ենք դուրս հանել ֆրանսիական զորքերը և մեզ հանձնել վերջին հրամանատարական կետերը, որոնք դեռևս գտնվում են ֆրանսիական իշխանությունների ձեռքում»: Նա նշում է, որ միայն իրենց այդ պահանջը բավարարելուց հետո խոսք կարող է լինել Ֆրանսիայի հետ բանակցություններ վարելու և պայմանագիր կնքելու մասին: Այդ խնդրի վերաբերյալ Սիրիայի և Լիբանանի կառավարու-

نجيب الأرمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال¹
حتى العام، ص 170.

² ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 4272, л. 94.

Բյունները 1945 թ. հունիսի 22-ին հրապարակեցին համա-
 տեղ հայտարարություն, որտեղ նշվում էր, որ նրանք միաց-
 յալ շանթերով պայքարնելու ևն օտար զորքերի էվակուաց-
 ման համար և ոչ մի երկրի թույլ չեն տա կեանտում մենա-
 շնորհյալ դիրք ունենաւ: 1945 թ. օգոստոսի 9-ին տեղի ունե-
 ցավ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցություն-
 ների ներկայացուցիչների համատեղ նիստը, որտեղ քննարկ-
 վեց այդ երկրներում տիրող դրության և Անգլիայի ու Ֆրան-
 սիայի հետ ունենալիք հարաբերությունների հարցը նիստում
 ընդունված միացյալ հայտարարությունը ընդգծում էր, որ
 «Ֆրանսիական և բրիտանական բանակներուն հեռացումը
 Սիրիայի և Լիբանանի ժողովարդուներուն գլխավոր պահանջն
 է, որում իրականացման համար պիտի պայքարին առանց
 դադարիչ՝ Հայտարարությունը հետաքրքիր է ոչ միայն այն
 առումով, որ շարադրում է Սիրիայի և Լիբանանի կոմունիս-
 տական կուսակցությունների քաղաքականությունը այդ
 կարևոր հարցի կապակցությամբ, այլ նաև այն տեսակետից,
 որ նա անզու-ֆրանսիական 1945 թ. դեկտեմբերի 13-ի պայ-
 մանագրի կնքումից մի քանի ամիս առաջ խորաթափանցո-
 րեն կարողացել էր կանխատեսել, որ այդ երկու իմպերիա-
 լիստական պնտությունները կփորձեն համաձայնության գալ
 ի հաշիվ Սիրիայի և Լիբանանի կենսական շահերի: Օգոստո-
 սի 9-ի հայտարարության մեջ ուղղակի ասված է, որ անգ-
 լիստական ու ֆրանսիական իմպերիալիստները ռկադպտին հա-
 մաձայնիլ... ազգեցության գոտիները բաժանելու համար
 իրարու միջև՝ Եվ, իրոք, շորս ամիս անց, 1945 թ. դեկտեմ-
 բերի 13-ին կնքվեց «Անգլո-ֆրանսիական համաձայնագիր
 Միջին արևելքում տարվելիք քաղաքականության մասին»:
 Տարօրինակն այն է, որ պայմանագրի հեղինակները փոր-
 ձում էին այս պայմանագրի ներկայացնել իրեն անգլիական
 և ֆրանսիական զորքերը ստաղիաներով էվակուացնելու
 ոլայմանագիրը իսկ իրականում այդ պայմանագրում ասված

1 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 4272, л. 215.

2 «Ժողովուրդի Զայն», 15 օգոստոսի 1945 թ.:

3 Նույն տեղում:

էր հետեւյալը. «Էվակուացիայի ծրագիրը պետք է կազմվի այնպես, որ նա ապահովի կեանուում բավարար թվով ուժեր թողնելը՝ անվտանգությունը երաշխավորելու նպատակով, մինչև որ Միավորված Ազգերի կազմակերպությունը լուծի այդ գոտում կոլեկտիվ անվտանգություն կազմակերպելու հարցը՝; Մինչև այդ հարցի լուծումը Ֆրանսիան իր զորքերը թողնելու էր կիրանանում, միայն թե ովերախմբավորելու էր: Այնուհետև երկու կառավարությունները պարտավորվում էին շփմել այնպիսի քայլերի, որ վնասեր մյուսի շահերին², ինչպես պարզ երկում է պայմանագրից, Անգլիան և Ֆրանսիան փորձում էին իրենց զորքերի էվակուացման հարցը հետաձգել անորոշ ժամանակով, որովհետև այդ ժամանակ ՄԱԿ-ի կողմից Մերձավոր արևելքում կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կամ դրա նման որմէ այլ բան կնքելու կամ կազմակերպելու հարց չէր դրվում: Մյուս կողմից մենք տեսնում ենք, որ Անգլիան ու Ֆրանսիան փաստորեն համաձայնության էին եկել այդ շրջանում տիրապետելու հարցի շուրջը: Անգլո-ֆրանսիական այս մերձեցումը պետք է բացատրի նրանով, որ օտարերկրյա զորքերի էվակուացման պահանջը հավասարապես վերաբերում էր թե՝ ֆրանսիական, թե՝ անգլիական զորքերին: Բացի այդ, ինչպես Սիրիայում և կիրանանում, այնպես էլ արարական մյուս երկրներում, խիստ ուժեղացել էին ազգային ազգատագրական շարժումները: Օտարերկրյա լծից ազատվելը դարձել էր համընդհանուր պահանջ: Այսպիսի նոր իրադրության մեջ, երբ հակաիմպերիալիստական շարժումները սպառնում էին Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետությանը, նրանք որոշեցին այդ շարժումների դեմ հանդես գալ միասնական ճակատով: Նրանց միավորեց ընդհանուր վտանգը, Անգլիայի համար այժմ դժվար չէր դիմել այդ քայլին, այսինքն մերձենալ Ֆրանսիայի հետ, որովհետև Ֆրանսիայի հեղինակությանն ու ազգեցությանը Սիրիայում և կիրանանում արդեն զգալի հարված էր հասց-

¹ „Diplomacy in the Near and Middle East. A documentary record: 1914—1956”, vol. II, p. 258.

² Նույն տեղում:

ված, իսկ իր ազդեցությունն ու դիրքն այդ երկրներում բավականին ամրապնդվել էին:

Անգլո-ֆրանսիական պայմանագիրը կնքվեց առանց Սիրիայի ու Լիբանանի գիտության ու մասնակցության, թեև Հարցն ամրողովին վերաբերում էր Նրանց: Եվ երբ այդ պայմանագրի բավանդակությունը հայտնի դարձավ Նրանց, ապա Սիրիայի և Լիբանանի կառավարությունները պաշտոնապես հայտարարեցին, որ այն իրենց համար անընդունելի է: Այդ պայմանագրի դեմ արտահայտվեցին դեմոկրատական ուժերը, մամուլը, քաղաքական դործիչները և այլն: «Ալ-Հադաֆ» թերթը հայտարարում էր ժողովրդի անումից, որ իրենք կոչուացնեն այդ պայմանագրիը, որովհետև նա հակասում է Սիրիայի և Լիբանանի անկախությանը: Թերթը նշում էր. «Մեր երկրում չկան անկարգություններ, որոնց վերացման համար կարիք լիներ օտար ռազմական ուժեր պահել: Թացի այդ մենք ունենք մեր ազգային բանակը, որը նախատեսված է երկրում կարգ ու կանոնի պահպանման համար և որը ի վիճակի է իր պարտքը կատարել»¹: Լիբանանի պառլամենտի դեպուտատները պառլամենտում քննարկելով անգլո-ֆրանսիական պայմանագրիը, հայտարարեցին, որ նա ներհակ է Սիրիայական Ազգերի պայմանագրին, Դեպուտատ Արու Զառուդը հայտարարեց, որ այդ պայմանագրը նկատի է առել միայն Անգլիայի և Ֆրանսիայի շահերը², Մեկ այլ դեպուտատ, Արու Շահան Նշեց, որ «այս երկիրներու (Սիրիայի և Լիբանանի — Ն. Հ.) ապահովության հարցը ոչ Ֆրանսիայի և ոչ ալ Անգլիայի կվերաբերի, այլ միմիայն Սիրիայական Ազգերու կազմակերպությանը»³:

1945 թ. դեկտեմբերի 13-ի պայմանագրի դատապարտմամբ հանդես եկան Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունները, Նրանք հրապարակեցին միացյալ հայտարարություն, որտեղ ցույց էր տրվում, որ Անգլիան ու Ֆրանսիան հաշվի չեն առել ֆաշիզմի պարտությունից հետո

¹ 26. XII. 1945 «اللهفـ «بيروـ ت»

² «Ժողովուրդի Զայեն», 26 դեկտեմբերի 1945 թ.:

³ Նույն տեղում:

ստեղծված նոր իրադրությունը և ժողովուրդների խոյանքը դեպի աշատություն, անկախություն ու գեմոկրատիա: «Այս հոմաձայնությունը, — ասված էր այդ հայտարարության մեջ, — ի՞նչերի այստական ավանդական քաղաքական մըն է և կձգոի տեսականացնել տիրապետությունը Սուրբիո և կիրանանի և արաբական երկիրներու նակատագրին և խափանել անոնց առաջխաղացքը անկախության, դեմոկրատիզմի և ընկերային զարթոնքի ուղիին վրա»¹:

Առ ի բողոք անգլո-ֆրանսիական համաձայնագրի կիրանանի Ազգային համագումարի որոշմամբ 1946 թ. հունվարի 2-ին ամբողջ կիրանանում սկսվեց համընդհանուր գործադուլ: Թեյրություն, Տրիպոլիում, Սայդայում, Զաշլեպում և երկրի մյուս շրջաններում փակվեցին ձեռնարկությունները և խանութները, կանգ առավ տրանսպորտը: Այդ օրը քաղաքական տարրեր կուսակցություններից և կազմակերպություններից, ինչպես նաև արհմիությունների ներկայացուցիչներից բաղկացած մի պատվիրակություն այցելեց հանրապետության պրեզիդենտին և նրան հանձնեց հուշագիրը: Այդ հուշագիրը անգլո-ֆրանսիական համաձայնագիրը գնահատում էր որպես մեծ հարված կիրանանի անկախությանը: Պատվիրակությունը պահանջում էր պրեզիդենտից և կառավարությունից շընդունել երկրի իրավունքները ոտնահարող այդ պահմանագիրը և պայքարել օտար բոլոր բանակների ամբողջական ու շուտափույթ մեկնման համար²: Հանրապետության պրեզիդենտի, կառավարության և պառակենտրի հասցեով երկրի տարրեր մասներից ամեն օր հարցուրավոր հեռագործ և նամակներ էին ստացվում, որտեղ նույն պահանջն էր առաջդրվում:

Կիրանանի և Սիրիայի կառավարությունները տեսնելով, որ Ֆրանսիան և Անգլիան ոչ մի ցանկություն չունեն բավարարել իրենց օրինական պահանջները, հարկադրված եղան օտար գորքերի էվակուացման հարցը մտցնել ՄԱԿ-ի

1 «Ժողովուրդի Զայն», 22 դեկտեմբերի 1945 թ.

2 Նույն տեղում, 3 հունվարի 1946 թ.:

բննարկմանը: 1946 թ. փետրվարի 4-ին ՄԱԿ-ում Սիրիայի և Լիբանանի պատվիրակություններն իրենց կառավարությունների հանձնարարությամբ համատեղ բողոք ներկայացրին Անվտանգության խորհրդին: Այդ բողոքում ասված էր, որ շնչայած պատերազմի ավարտմանը անգլիական ու ֆրանսիական դորբերը շարումակում են մնալ Սիրիայում և Լիբանանում, որ այդ զորքերը, ինչպես ցուցում է տվել անցյալի փորձը, մեծ վտանգ են ներկայացնում այդ շրջանի խաղաղությանը և անվտանգությանը: Այնուհետև ասվում էր, որ այդ զորքերի ներկայությունը հակասում է Լիբանանի և Սիրիայի գերիշխանությանը: Այդ ի նկատի ունենալով «Սիրիական և Լիբանանյան պատվիրակությունները ղեկավարվելով իրենց կառավարությունների հրահանգներով և համաձայն կանոնադրության (ՄԱԿ-ի — Ն. Հ.) 34-րդ հոդվածի, պատիվ ունենայս խնդիրը ներկայացնել Անվտանգության խորհրդի ուշադրությանը և պահանջել ընդունել մի որոշում, որը հանձնարարի օտարերկրյա գորքերի լրիվ ու միաժամանակյա էվակուացումը Սիրիայի և Լիբանանի տերիտորիաներից»¹:

Այսպիսով, Սիրիայից և Լիբանանից օտար զորքերի հեռացման խնդիրը ներքին պրորեմից վերածվեց միջազգային պրարևմի: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդումը այդ հարցի քննարկմանը ձեռնամուխ եղավ 1946 թ. փետրվարի 14-ին: Առաջինը հանդիս եկավ Լիբանանի պատվիրակ Համիդ Ֆրանժին: Նա շարադրեց իր կառավարության տեսակետը անգլիական և ֆրանսիական զորքերը Լիբանանից ու Սիրիայից էվակուացնելու հարցի շուրջը: Հ. Ֆրանժինն հայտարարեց, որ, թեև ռազմական ոչ մի անհրաժեշտություն չկա, բայց անգլիական ու ֆրանսիական զորքերը շարումակում են մնալ երկու գերիշխան պետությունների տերիտորիաներում: Լիբանանի և Սիրիայի կառավարությունները պատերազմից հետո միշտ պահանջել են հեռացնել այդ զորքերը: Սակայն նրանք շարումակում են մնալ, թեև այդ հարցի շուրջը ոչ մի համաձայնագիր գոյություն չունի Լիբանանի, Սիրիայի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև Անգլիականալով 1945 թ. դեկ-

¹ „Diplomacy in the Near and Middle East”, vol. II, p. 259.

տեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական համաձայնագրին, Հ. Ֆրանսիան ընդգծեց, որ նա հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը և հանդիսանում է միջամտություն Լիբանանի և Սիրիայի ներքին գործերին, վերջում Լիբանանի պատվիրակը նշեց, որ ինքը պահանջում է «անգլիական ու ֆրանսիական զորքերի անհապաղ» միաժամանակյա և լրիվ էլակուացիան»¹:

Նման հայտարարությամբ հանդես եկավ նաև Սիրիայի պատվիրակ Ֆարիս էլ Խուրին:

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ժորժ Բիդոն իր ելույթում փորձում էր ապացուցել, որ Լիբանանում և Սիրիայում անգլիական և ֆրանսիական զորքերի ներկայությունը նրանց գերիշխանության խախտում չէ և շատ տեղերում մի պետության զորքերը գտնվում են մյուս երկրի տերիտորիայում², նա կրկին փորձեց վկայակոչել մանդատը, Ֆրանսիայի առանձնահատուկ իրավունքներն ու շահերը այդ երկրներում³. Այսուհետև հարկադրված լինելով ընդունել իրենց զորքերի էլակուացման անհրաժեշտությունը, Բիդոն, սակայն, հայտարարեց, որ այդ բանը չի կարելի անել անհապաղ և նա համբերության կոչ արեց, «Կարենոր է, — ընդգծեց նա, — որ բոլոր ազգերը, մեծ թե փոքր, համբերություն ունենան և փախադարձ հասկացություն ի հայտ բերենան», Ժ. Բիդոն Անվտանգության խորհրդից խնդրեց վստահել Անգլիային ու Ֆրանսիային և հավատալ, որ քննարկվող պրոբլեմի լուծումը կդանվի:

Ֆրանսիական տեսակետի պաշտպանությամբ հանդիս եկավ Անգլիայի ներկայացուցիչ Կադոգանը, նա, ինչպես և Բիդոն, փորձում էր իրենց զորքերի առկայությունն այդ շրջանում արդարացնել անվտանգության և կոմունիկացիաների պաշտպանության խնդիրներով, նա իր վրա վերցրեց մի դժվարին գործ. արդարացնել 1945 թ. դեկտեմբերի 13-ի

¹ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 5439, л. 116.

² Mussa Dib... p. 68

³Տե՛ս «Ժողովուրդի Զայն», 19 գետրվարի 1945 թ.:

⁴ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 5439, л. 112.

անդքո-ֆրանսիական համաձայնագիրը: Բնդումնելով, որ նա
 ուշարյուր տոկոսով չի բավարարում պահանջները, Կադո-
 գանը հայտարարեց, որ այդ համաձայնագիրը նրանք կնքել
 են իրր թե ռկանինելու վակուումի առաջացումը և ապահովե-
 լու աշխարհի այդ կարևոր ստրատեգիական մասի խաղաղու-
 թյունն ու անվտանգությունը¹: Ինչպես տեսնում ենք, Անդ-
 լիան ու Ֆրանսիան անհիմն փաստարկներով փորձում էին
 արդարացնել իրենց քաղաքականությունը: Թուրին էլ պարզ
 էր, որ անգլիական ու Ֆրանսիական զորքերի հեռացումից
 հետո ոչ մի վակուում չէր առաջանա, որովհետև օտարերկրյա-
 լծից ազատվելու ու թե վակուում է ստեղծում, այլ ամրապն-
 դում է երկրի անկախությունն ու գերիշխանությունը: Ոչ ոքի
 չհամոզեցին նաև Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչ-
 ների հայտարարությունները Սիրիայի ու Լիբանանի ան-
 վտանգությունն ապահովելու մասին: Համիդ Ֆրանժին դիմե-
 լով Թիգոյին և Կադոգանին, հարցնում է, թե նրանք ո՞ւմ ան-
 վտանգությունն են ուզում պաշտպանել: Ենթադրին անվտան-
 գությունը, — հարցնում է նա: — Պարզ է, որ դա կարող է
 միայն Սիրիայի և Լիբանանի կառավարությունների կողմից
 իրականացվել: Միջազգային անվտանգությունը: Ավելի քիչ,
 որովհետև երկու ռեզուլտիկաներն էլ շրջապատված են բա-
 րեկամ պետություններով, որոնք կնքել են Արարական լիգա-
 յի պահպարք²: Հ. Ֆրանժին ծիծաղելի համարեց Սան-Ֆրան-
 ցիսկոյում ՄԱԿ-ի կանոնադրությունը ստորագրելուց վեց
 ամիս հետո հիշել Ազգերի լիգան և նրա մանդատը, ինչպես
 ուս արեց Փ. Բիբոն: Նա հայտարարեց, որ Լիբանանի համար
 ոչ մի մանդատ գոյություն չունի³, Նա միաժամանակ հակա-
 հարված տվեց ֆրանսիական ստուծգություններին՝ իրենց զոր-
 քերի էվակուացիան պայմանավորել հատուկ պայմանագրերի
 կնքումով, որը Ֆրանսիային մի շարք արտօնություններ էր
 տալու և սահմանափակելու լիբանանի անկախությունը: Այդ
 առթիվ Լիբանանի պատվիրակը հայտարարեց. «Մենք պատ-
 րաստ ենք բանակցելու բոլոր առկաի հարցերու մասին, սա-

¹ Mussa Dib... p. 68.

² Նույն տեղում:

³ «Ժողովուրդի Զայն», 19 փետրվարի 1946 թ.:

կայն չենք կրնար ընդումիլ, որ մյուս բանակցությունները պայմանավորվին զորքերի պարագումի շուրջը ըԱԱԱլիք բանակցություններով: Մենք չենք կրնար ընդումիլ, որ միաժամանակ մեզի խոսվի թե մշակութային և թե ռազմագիտական խարիսխներու մասին»¹:

Իսկ ինչպիսի՞ դիրք բռնեցին Անվտանգության խորհրդի մյուս անդամները այս կարևոր հարցի քննարկման ժամանակ: Նրանք բաժանվեցին երկու մասի: Մի մասը՝ Սովետական Միությունը, կեհաստանը, Եգիպտոսը և Մեքսիկան, վճռականորեն հանդես եկավ Լիբանանի և Միրիայի ազգային շահերի պաշտպանությամբ, իսկ մյուս մասը՝ ԱՄՆ-ը, Ավստրալիան, Բրազիլիան, Հուանդիիան և այլն, հանդես եկավ անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների դիրքի պաշտպանությամբ:

Մեքսիկայի ներկայացուցիլ Նորվոն հայտարարեց, որ իր կառավարությունը չի պաշտպանում օտար զորքերի առկայությունը բարեկամ երկրի տերիտորիայում: Նա նշեց, որ Միրիայի և Լիբանանի պահանջը լրիվ համապատասխանում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, ուստի և անզլիական ու ֆրանսիական զորքերը պետք է դուրս բերվեն նրանց տերիտորիաներից²:

Եգիպտոսի պատվիրակ Ռիադը պաշտպանելով Միրիայի և Լիբանանի գատը, առաջարկեց մի բանաձև, որտեղ ասված էր, որ Անվտանգության խորհուրդը անզլիական և ֆրանսիական զորքերի ներկայությունը Սիրիայի և Լիբանանի տերիտորիաներում համարում է անհամատեղելի ՄԱԿ-ի կանոնադրության հոչակած սկզբունքների և ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների իրավահամարության սկզբունքների հետ: Բանաձևում այսուհետև ասվում էր, որ այդ սկզբունքը ռպետք է իր լրիվ կիրառումը գտնի այդ երկրների (Միրիայի և Լիբանանի — և. 2.) դեռևս օկուպացված տերիտորիաներում զտնվող բոլոր զորքերի անհապաղ ու միաժամանակյա էվակուացման մեջ: Անվտանգության խորհուրդը հանձնարարում

1 տեղավորդի Զայն, 19 փետրվարի 1946 թ.

2 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 5439, л. 175.

է մի կողմից ֆրանսիական և բրիտանական կառավարություններին, իսկ մյուս կողմից Սիրիայի և Լիբանանի կառավարություններին, ամենակարճ ժամկետում բանակցություններ սկսել բացառապես այդ էվակուացման տեխնիկական պայմանները սահմանելու համար, ներառյալ այդ էվակուացման կենսագործման ժամկետի հաստատումը¹.

Անվտանգության խորհրդի փետրվարի 15-ի նիստում հանդես եկավ Սովետական Միության ներկայացուցիչ Ա. Յա. Վիշինսկին, Նա ամբողջ աշխարհի առջև պաշտպանեց Սիրիայի և Լիբանանի օրինական պահանջները, մերկացրեց Անգլիայի և Ֆրանսիայի գաղութարարական քաղաքականությունը և 1945 թ. գեկտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական համաձայնադրի իմպերիալիստական բնույթը, Նա ցույց տվեց, որ Անգլիան ու Ֆրանսիան Սիրիայի և Լիբանանի թիկունքում դորժարքի մեջ են մտնում այդ երկրները ազգեցրության սիերայի բաժանելու և համատեղ քաղաքականություն վարելու հարցի շուրջը: Նա նշեց, որ Սիրիայի և Լիբանանի պահանջները արդարացի պահանջներ են և հիմնված են յուրաքանչյուր պետության գերիշխանության սկզբունքի վրա: Ա. Վիշինսկին Սովետական կառավարության անունից պաշտպանեց Սիրիայի և Լիբանանի պահանջները և գոտավ, որ Անվտանգության խորհուրդը պետք է որոշում ընդունի անգլիական և ֆրանսիական զորքերի համընդհանուրը, անհապաղ և միաժամանակյա էվակուացման վերաբերյալ².

Արևմտյան տերությունները պաշտպանելով ու արդարացնելով Ֆրանսիայի ու Անգլիայի գործողությունները Սիրիայում և Լիբանանում, սակայն չէին համարձակվում բացահայտ հանդես գալ նրանց զորքերի էվակուացման պահանջի դեմ: Դա կնշանակեր իրենց մերկացնել ամբողջ աշխարհի առջև: Բայց նրանք փորձում էին հարցին այնպիսի լուծում տալ, որ դա հնարավորություն ընձեռեր Անգլիային ու Ֆրանսիային էվակուացման հարցը ձգձգել և կապել Սիրիայի ու Լիբանանի կողմից այլ պայմանների կատարման հետ: Դա հատկապես արտացոլվեց ամերիկյան բանաձևի մեջ, որ Ան-

1 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 5439, л. 186.

2 «СССР и Арабские страны», стр. 95.

վտանգության խորհրդի քննարկմանը մտցրեց ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ստետտինիուսը: Ամերիկյան բանաձևում առված էր. «Անվտանգության խորհուրդը... իր վտանգությունն է հայտնում, որ Սիրիայում և Լիբանանում գտնվող օտարերկըրյա զորքերը գուրս կրերվեն այնքան շուտ, որքան դա հնարավոր կլինի իրագործել, որ այդ նպատակով կողմերը անհապաղ բանակցություններ կսկսեն»¹: Առաջին հայացքից թվում է, որ ամերիկյան բանաձևը արտառոց ոչինչ մի պարունակում: Սակայն երբ ուշադիր զննում ենք, ապա ակնհայտ է դառնում նրա պակասությունները և Անգլիայի ու Ֆրանսիայի շահերը պաշտպանելու ձգտումները: Ամերիկյան բանաձևը շեր գնում օտարերկըրյա զորքերի համընդհանուր, անհապաղ էվակուացիայի հարցը: Նա միայն ցանկություն էր հայտնում այդ զորքերը հանել, երբ որ դա պրակտիկ կերպով հետարակոր կլինի իրագործել: Այսպիսի հարցադրություն էր ընձեռում զորքերի էվակուացման հարցը անվերջ ձգձգել, որովհետև ոչ ոք կոնկրետ չի կարող ասել, թե երբ է վրա հասնելու այդ պահանջը «գործնականորեն իրականացնելու պահը: Սա հարցի մի կողմն է:

Ամերիկյան բանաձևը առաջարկում էր բանակցություններ սկսել զորքերի էվակուացման հարցի շուրջը: Սակայն բանակցություններ էլ կան, բանակցություններ էլ: Բանակցությունները կարող էին վարվել բացառապես զորքերի դուրս բերման հարցի շուրջը, ի նկատի ունենալով խնդրի տեխնիկական կողմը: Սակայն նրանք կարող էին վարվել նաև սակարկության նպատակով, այսինքն զորքերի հեռացման հարցը պայման դարձնել անտեսական, քաղաքական ու ռազմական բնույթի իրավունքներ ու արտօնություններ ձեռք բերելու համար: Ամերիկյան ձևակերպումը այս բնույթի բանակցություններ վարելու լայն հետարակորություններ էր ստեղծուած: Զպետք է մոռանալ, որ Ֆրանսիան թե՛ «հատուկ զորամասերը» հանձնելը և թե՛ իր զորքերի գուրս բերումը կապում էր ֆրանս-լիբանանյան հա-

¹ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 5439, л. 169.

առուկ պայմանագրի կնքման հետ, որը պետք է ապահովեր Ֆրանսիայի տնտեսական, կուլտուրական ու սորատեգիական (ռազմական բազաների ձեռք բերում) շահերը Լիբանանում: Ահա որպեսզի այդ բանակցությունները Անգլիայի ու Ֆրանսիայի ձեռքին շդառնային գործիք Սիրիայի և Լիբանանի վրա նշում գործադրելու և նրանցից քաղաքական ու ռազմական բնույթի զիջումներ կորզելու համար, հարկավոր էր պարզ ու որոշակի ասել, որ օտար բանակների գուրս բերման հարցը չի կապվում այլ բնույթի պահանջների հետ: Իսկ հենց դա էր, որ բացակայում էր ամերիկյան բանաձեկի նախագծում: Եղիպատական բանաձեկի նախագծի առավելությունը կայանում էր նրանում, որ վերոհիշյալ հարցերը այնտեղ որոշակի էին դրված: Նա պահանջում էր օտարերկոյա գործերը էվակուացնել անհապաղ ու միաժամանակ, իսկ բանակցությունները վարել բացառապես էվակուացման տեխնիկական պայմանները սահմանելու համար:

Այդ պատճառով էլ Սովետական Միությունը հանդես եկավ եղիպատական բանաձեկի նախագծի պաշտպանությամբ: Լիբանանը և Սիրիան հայտարարեցին, որ իրենց համար ընդունելի է եղիպատական նախագիծը: Իսկ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները նշեցին, որ իրենք համաձայն են ամերիկյան նախագծի հետ: Այսուհետև երկու բանաձեկներն էլ դրվեցին քվեարկության: Եղիպատական բանաձեկի օգտին քվեարկեցին շրու պետություն՝ ՍՍՀՄ-ը, Լեհաստանը, Մեքսիկան և Եգիպտոսը: Այսպիսով, Անվտանգության խորհուրդը մերժեց այն:

Նախքան ամերիկյան բանաձեկի քննարկմանը անցնելը Սովետական Միության ներկայացուցիչը առաջարկեց մի շարք ուղղումներ մտցնել: Այստեղ, որտեղ առված էր, որ «ինչքան հնարավոր է շուտու հանել զորքերը, նա առաջարկեց այդ բառերի փոխարեն գրել տանհապաղ»: Իսկ որտեղ խոսվում էր զորքերը գուրս բերելու նպատակով բանակցություններ վարել, նա առաջարկեց բանակցություններ բառի առջև գրել տաեխնիկական բառը: Սովետական Միության ուղղումները նպատակ ունեին բանակցությունների առարկան դարձնել միայն ու միայն զորքերի գուրս բերման հարցը,

نروا تهليخن يكواكا نا կողմը, թույլ շտալ, որ այն գառնա սպի-
կովացիայի առարկա և հասնել Սիրիայի ու Լիբանանի օրի-
նական պահանջների շուտափույթ կատարմանը:

Սակայն Անվտանգության խորհուրդը մերժեց սովորա-
կան ուղղումները: Այնուհետև քվեարկության դրվեց ամե-
րիկյան բանաձեռը, որը նույնպես շանցավ, որովհետև Ան-
վտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից մեկը՝
Սովետական Միությունը դեմ քվեարկեց: Այսպիսով, Ան-
վտանգության խորհուրդը, փաստորեն ոչ մի բանաձեռ չըն-
դումեց:

Սիրիայից ու Լիբանանից օտար զորքերի դուրս բերման
հարցի քննարկումը Անվտանգության խորհրդում ունեցավ իր
դրական նշանակությունը: Համաշխարհային հասարակայ-
նությունը պարզ տեսավ, թե ովքեր են ճնշված ժողովուրդ-
ների պաշտպանները և ովքեր են հանդես գալիս իմպերիա-
լիստական, գաղութարարական ծրագրերով: Այդ քննարկումը
ցուց տվեց, որ ֆրանսիական ու անգլիական զորքերի դուրս
բերումը կենսական անհրաժեշտություն է: Նույնիսկ իրենք՝
Անգլիան ու Ֆրանսիան շհամարձակվեցին բացահայտորեն
հանդես գալ իրենց զորքերի էվակուացման գաղափարի դեմ:
Այդ քննարկման շնորհիվ օտար զորքերի էվակուացման ան-
հրաժեշտությունը միշազգային մասշտաբով համընդհանուր
հանաշում գտավ և Անգլիան ու Ֆրանսիան այլևս չեն կա-
րող խուսափել այդ պահանջի կատարումից:

Աղ-Արմանազին իրավացիորեն նշում է, որ Սիրիան ու
Լիբանանը Անվտանգության խորհրդում բարոյական մեծ
հաղթանակ տարան, որն անպայման, իր պտուղները կտա¹:

Անվտանգության խորհրդում օտար զորքերի դուրս բեր-
ման հարցի քննարկումը լայն արձագանք գտավ Լիբանա-
նում, Լիբանանցիները տեսան, թե ովքեր են իրենց բարե-
կամներն ու շահերի պաշտպանները և ովքեր են իրենց թշնա-
միները: Նրանք հատկապես իրենց գոհումակությունն էին

نجيب الازمني، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، ص ١٨٦.

Հայտնում Սովետական Միությանը Նրա վճռական դիրքի համար։ Լիբանանի պառամենտի 1946 թ. փետրվարի 19-ի նիստում գեղուտատների մեծ մասը երախտագիտության խոր զգացումներ արտահայտեց հանդեպ Սովետական Միությունը։ Ժորժ Աքըլը ընդգծելով, որ Անվտանգության խորհարդը բացորդ երկու մասի բաժանվեց՝ մի մասը լիբանանի զատին ի նպաստ, իսկ մյուսը՝ աննպաստ, հայտարարեց։ Շառաջին կողմը, զոր կզիսավորեր սովետ պատվիրակությունը, մեր զատը պաշտպանեց այնքան խիզախությամբ և հստակությամբ, որ մենք իսկ չպիտի կարողանայինք ընկելաւ։ Մեկ ուրիշ դեպուտատ՝ Յակուպ Սարաֆը սովետական պատվիրակության դիրքը համարեց խիստ նշանակալից։ Նա նշեց, որ ամերիկյան բանաձեռի գեմ քվեարկելով, դրանով Սովետական Միությունը ռմբող ձերբազատեց կաշկանդումներե և կարելիություն տվավ շարունակելու պայքարը օտար ուժերու պարագային համարձակությանը։

Ի՞արկե, ոչ բոլորն էին այդ կարծիքին, Կային դեպուտատներ և քաղաքական գործիչներ, որոնք պաշտպանում էին ամերիկյան բանաձեռը և հավանություն չէին տալիս սովետական պատվիրակության կողմից այդ բանաձեռի դեմ քվեարկելուն։ Այսպիս, դեպուտատ Արդալյա Յաֆին պառամենտի այդ նույն նիստում հայտարարեց, որ «Ապահովության խորհրդի որոշումը, զոր շեղյալ հողակեց սովետ պատվիրակը, մեզ նպաստավոր էք»։ Դեպուտատ Արու Շահլան նրան պատասխանեց։ Ընդհակառակը այս գույքում է։

Պառամենտի գեղուտատների ճնշող մեծամասնությունը չի բաժանում Յաֆիի տեսակետը և լիբանանի պառամենտը դեպուտատներ Ժորժ Աքըլի, Յակուպ Սարաֆի և Քամալ Ջունըրլատի առաջարկությամբ շնորհակարություն է հայտնում Սովետական Միությանը և այն պետություններին, որոնք պաշտպանեցին լիբանանի պահանջները։ Թացի այդ թեյրութում սովետական ներկայացուցություն են այցելում

1 ԿԺՊԱԳԱՊՐՊՀ Զայնե, 27 փետրվարի 1946 թ.

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

Ազգային համագումարի, Կանանց միության և երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք կիրանանի ժողովրդի անումնից խոր երախտադիտական դգացումներ են հայտնում Սովետական Միությանը:

Անվտանգության խորհրդի կողմից օտարերկրյա զորքերը հանելու հարցը քննարկելուց հետո, Միրիայի և կիրանանի կառավարությունները, ժողովրդական մասսաները և բոլոր ընդդիմադիր ուժերը շարումակում են պնդել իրենց պահանջների վրա։ Անզիան և Ֆրանսիան հարկադրված 1946 թ. մարտին բանակցություններ սկսեցին Միրիայի և կիրանանի հետ իրենց զորքերի էվակուացման հարցի շուրջու Այդ բանակցությունների ժամանակ նրանք մի անգամ ևս փորձեցին համեմ իրենց զորքերի դուրս բերման ժամկետի հետաձգմանը։ Ֆրանսիան առաջարկեց մի տարով ևս հետաձգել իր զորքերի դուրս բերումը¹, Ֆրանսիայի այդ առաջարկը գալիս էր հաստատելու, թե ինչքան ճիշտ էր սովետական պատվիրակությունը, երբ Անվտանգության խորհրդում առաջարկում էր հստակ ու կոնկրետ նշել էվակուացիայի ժամկետը։

Միրիան և կիրանանը վրդովմումքով ընդունեցին անգուֆրանսիական այդ նոր առաջարկությունները։ Միրիական և կիրանանյան պատվիրակներին հրահանգ արվեց շընդունել անգլո-ֆրանսիական առաջարկները և պնդել, որ բրիտանական և ֆրանսիական զորքերը միաժամանակ հնարանան կիրանանի պրեմյեր-մինիստրը հայտարարեց, թե ոկտահանջնը անգլիական և ֆրանսիական բանակներու միաժամանակ պարպումը և ուրիշ բան չենք ընդունիր։ Կառավարությունը կանդե արագ և միաժամանակ պարպումինը², Վերջ ի վերջու անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները հարկադրված եղան զիջել, 1946 թ. մարտի 22-ին Փարիզում ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի Անզիան ու Ֆրանսիան պարտավորվում էին իրենց զորքերը դուրս բերել Միրիայից մինչև 1946 թ. ապրիլի 15-ը, իսկ կիրանանից՝ 1946 թ. դեկ-

¹ «Ժողովրդի Զայն», 13 մարտի 1946 թ.,

² Նույն տեղում, 17 մարտի 1946 թ.»

տեսքերի 31-ը¹: Ըստ որում Լիբանանից օտար զորքերի դուրս
բնակչության հիմնականում պետք է ավարտվեր մինչև 1946 թ.
ոգոստոսի 31-ը: Դրանից հետո լիբանանում պետք է մնային
ֆրանսիական 30 սպա և 300 մասնագետներից բաղկացած
մի զորամաս, որը պետք է հսկեր ռազմական նյութերի և
հանդերձանքի վրա, մինչև նրանց փոխադրելը: Իսկ դա պետք
է ավարտվեր, ինչպես նշվեց, 1946 թ. դեկտեմբերի 31-ին:
Օտար զորքերի էվակուացիան ավարտվեց նշված ժամկետին,
1946 թ. դեկտեմբերի 31-ին լիբանանի արտաքին գործերի
մինիստրությունը հրապարակեց կոմյունիկե, որտեղ ասված
էր, որ «ֆրանսիական վերջին զորամասը հեռացավ լիբանա-
նից և այժմյանից լիբանանյան տերիտորիայի վրա դաշնա-
կիցների ոչ մի զորք չկա»²:

1947 թ. հունվարի 1-ը լիբանանը դիմավորեց որպես
լրիվ բաղաքական անկախություն ձեռք բերած երկիր: Այդ
որը ամերոջ երկրում մեծ շուրջով տեղի ունեցան տոնակատա-
րություններ: Թեյրութը և լիբանանի մյուս քաղաքները զար-
դարված էին լիբանանյան դրոշներով: Նահը Թարլի մեջ տե-
ղի ունեցավ մեծ հանդես, որի ժամանակ ճառով հանդիս
եկավ հանրապետության պրեզիդենտը: Նա մասնավորապես
նշեց: «Անկախության շրջանի շորորդ տարվան մեջ կատար-
վնցավ օտար բանակներու հեռացումը լիբանանյան հողեն: Ասիկա
եղավ բոլոր լիբանանցիներուն շնորհիվ, անոնց տված
զոհերուն շնորհիվ»³: Ի պատիվ լիբանանի քաղաքական ան-
կախության ամրոշացման տրվեց թնդանոթի 101 համա-
զարկ: Դրանից հետո պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին, կա-
ռուարության անդամները և բոլոր հյուրերը ուղղվեցին գե-
ղի Բիյրութի հյուսիսում գտնվող «Ազատության ժայռը», որի
վրա փորագրված էր: «1946 թ. դեկտեմբերի 31-ին, Շեյխ
Բիշարա ալ-Խուրի պրեզիդենտության օրով, ավարտվեց բո-
լոր օտար զորքերի դրվագը բերումը լիբանանյան հողեց»⁴: Այդ

¹ G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950, p. 101.

² ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 6700, л. 1.

³ «Ժողովությի Զայն», 3 հունվարի 1947 թ.:

⁴ Ph. Hitti, Lebanon in history, p. 496.

օրը կառավարությունը կազմակերպեց մեծ ընդունելություն։
Տարբեր պատվիրակությունների շնորհավորանքները ընդունեցին պրեզիդիւնտը, պառակմաննետի նախագահը, պրեմյեր-մինիստրը և մինիստրները։ Արարական զանազան կազմակերպությունների հետ միասին կիրանանի աղքային տոնը շնորհավորելու էին եկեղեց նաև Հայ պատմիրակությունները, ինչպես օրինակ, Հայ կոմունիստների պատվիրակությունը, Կիրանանահանայ և Վերածնության միության պատմիրակությունը և այլն։ «Ժողովուրդի Զայն» թերթը «Էլիրանանի մեծ տոնը» հոգվածում նշում էր, որ Հայ կոմունիստները իրենց զիանավոր լորսանզններից մեկը դարձել էին օտար զորքների դուրս բերումը, որ նրանք «ամեն առիթով մասնակցեցան պայքարի բոլոր հանգրվաններուն ու հաւ գեմոկրատ տարրերուն հետ Հայ ժողովուրդը մղեցին, որ ընթանա նույն ուղինենք»¹։ Կիրանանի Հայ գեմոկրատական ուժերը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո միանական ջանքերով աշխատել են ամրապնդել Հայ և արար ժողովուրդների բարեկամությունը և պայքարել Լիրանանի անկախության համար։ 1946 թ. Հոկտեմբերին Հրատարակվեց Հայ ուամկավար-ազատական, Հնչակյան կուսակցությունների, Հայ կոմունիստների և Լիրանանահանայ և Վերածնության միացյալ կույզ Լիրանանի և Սիրիայի Հայ ժողովուրդին։ Այդ կոչում Հայ գեմոկրատական ուժերը բարձր էին գնահատում Լիրանանի ժողովուրդի մեծահոգի, բարեկամական և մարդասիրական վերաբերմուճքը Հայ ժողովուրդի նկատմամբ։ ՇԱրար ժողովուրդը, — ասված էր կոչում, — իր ասպնջականությամբ ու մարդասիրական զգացումներով Հայ կյանքի պատմության մեջ անշնչելի հիշատակումներով պիտի մնան²։ Այնուհետև, Սիրիայի և Լիրանանի Հայ գեմոկրատական կուսակցությունները և կազմակերպությունները ի լուր ամենքի Հայարարում էին, որ իրենք իրենց կարևոր խնդիրն են Համարում Սիրիայի և Լիրանանի անկախության պահպանումը

1 ժողովուրդի Զայն, 5 Հունվարի 1947 թ.,

2 նույն տեղում, 1 Հոկտեմբերի 1946 թ.,

և այդ խնդրի իրականացման համար նրանք պատրաստ են իրենց բոլոր միջոցները տրամադրել¹:

Պատմական այս կարևոր իրադարձության կապակցությամբ իրանականում տեղի են ունենում ցույցեր, միտինգներ, հավաքույթներ և այլն, որոնց մասնակցում էին արարներն ու հայերը, մահմեդականներն ու քրիստոնյաները։ Այդպիսի մի միտինգ 1947 թ. հունվարի 3-ին կազմակերպեց կիրանանի կոմունիստական կուսակցությունը Միտինգը տեղի ունեցավ Բեյրութի Բաղրամյան ակումբի առջև Ակումբի մուտքի վրա կախված էր մի պատառ, որի վրա արարներն և հայերն զրված էր. «Հայ ժողովուրդ կողջունե կիրանաննեն օտար զորքերու հեռացման ամբողջացումը»²։ Ակումբի առջև հավաքվում է արարներից և հայերից կազմված մի հակա բազմություն՝ չահերով ու դրոշներով։ Միտինգին մասնակցում էին Սիրիայի և կիրանանի կոմունիստական կուսակցությունների ղեկավարները՝ Խալեղ Բեկդաշը, Նիքոլա Շավին, Ֆուադ Կազանը, Հասան Կուրեյթեմը, Հաշիմ էմինը, ինչպես նաև Հ. Մատեյանը, Պ. Երիցյանը և ուրիշներ։ Հայերն իրենց հլույթներում նշում են, որ այս տոնը միայն արար ժողովորդի տոնը չէ, նա հավասարապես նաև հայ ժողովորդի տոնն է, որ իր լոււման է մացրել կիրանանի անկախության համար մղված պայքարում³, Այնուհետև հանդես եկավ կիրանանի կոմունիստական կուսակցության նախագահ Նիքոլա Շավին։ Նա նշեց, որ օտար զորքերի էվակուացիան շատ մեծ նշանակություն ունի արար և հայ ժողովուրդների, նրանց բարեկամության ամբազնդման համար նա հատկապես շնչառեց երկու ժողովուրդների, համագործակցության անհրաժեշտությունը։ «Այդ դործակցությունը, — հայտարարեց Ն. Շավին, — նոր չէ. պայքարի ընթացքին, թե բանտերի մեջ, միշտ մեր կողքին ունեցած ենք մեր հայ ընկերները»⁴:

Միտինգում ճառով հանդես եկավ նաև Սիրիայի կոմունիստական կուսակցության նախագահ Խալեղ Բեկդաշը։

1 «Ժողովուրդի Զայն», 1 հոկտեմբերի 1946 թ.:

2 Նոյն տեղում, 5 հունվարի 1947 թ.:

3 Նույն տեղում։

4 Նոյն տեղում։

բարձր գնահատից հայերի և արարեների համագործակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային ազատագրական պայքարի մեջ, Այնուշետև նա անդրադարձավ իմակերիալիստների կողմից տարածվող այն տեսակետներին, որ իրենց հեռանալուց հետո հայն ու արարը իրար պիտի հողոտեն, Մերկացնելով ազգային պարակտում առաջացնելու գաղութարարների փորձերը և ալեք Բեկդաշը հայտարարում է. ուրդ, հիմա թող գան տեսնելու, թե ինչպես հայն ու արարը զիրար կողջագուրնեն, իրարու կեղբայրանանե¹:

Այսպիսով, լիբանանի ժողովրդի մոտ 25-ամյա պայքարը մանգատի վերացման, գաղութային լծի թոթափման և քաղաքական անկախություն ձեռք բերելու համար պահպակց հաջողութամբ, նա դուրս եկավ քաղաքական ինքնուրույն զարգացման ուղին:

Լիբանանի անկախությունը ձեռք բերվեց շնորհիվ բոլոր ընդդիմադիր ուժերի միավորման: Ազգային ազատագրական պայքարի շարժիչ ուժերն էին ժողովրդական մասսաները՝ բանվորները և գյուղացիները: Այդ պայքարին ակտիվորեն մասնակցում էին ազգային բուրժուազիան, արհեստավորական խավը, ինտելիգենցիան, ուսանողությունը և այլն, Այս ուժերի համախմբումը հզորացրեց ազգային ազատագրական պայքարի թափը, որի առջև ստիպված եղավ նահանջել ֆրանսիական իմակերիալիզմը:

Հակաիմակերիալիստական պայքարի հաջողության մյուս պայմանը եղավ այն, որ համերաշխությունը և համագործակցությունը գոյություն ուներ լիբանանի տարրեր համայնքների, մասսովմանների և քրիստոնյաների միջև: Չնայած իմակերիալիստների բոլոր շանքերին, շհաշողվեց ազգային երկապառակությունը սերմանները և կրոնական տաճելությունը բորբոքել տարրեր համայնքների միջև: Ազգային համերաշխությունը և համագործակցությունը տասնապատկեց ժողովրդական մասսաների ուժը և միասնական, համալիրանանյան ճակատ ստեղծեց գաղութարարների դեմ մղվող պայքարում: Եվ վերջապես լիբանանի քաղաքական անկախության ձեռք բերմանը մեծ

¹ «Ժողովուրդի Զայն», 5 հունվարի 1947 թ.

Հափով օժանդակեց բարենպաստ միջազգային իրադրությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմում Սովետական Միության և դեմոկրատական ուժերի հաղթանակը ֆաշիզմի դեմ խթանեց բռլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև Լիբանանի ազգային ազատագրական պայքարը:

Այս բռլորը միասին վերցրած հանգեցրեց ֆրանսիական դադութային լծի թոթափմանը և Լիբանանի ազգային անկախության նվաճմանը:

ՎԻՐԱՆԱՆԻ ՀԱԿԱԽՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐՔ
ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Ֆրանսիական գաղութային լուծը թոթափելուց և քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո կիրանանի առջև կանգնեց այդ անկախությունը ամրապնդելու գժվարին խնդիրը, իմպերիալիստական պետությունները հարկադրված լինելով ճանաչել կիրանանի քաղաքական անկախությունը, սակայն չէին հրաժարվում նրան իրենցից տնտեսական ու քաղաքական կախման մեջ պահելու պլաններից, նրանք երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջ քաշեցին դանազան ծրագրեր և դոկտրինաներ, ձգտելով նրանց օգնությամբ ուժեղացնել իրենց գիրքերը կիրանանում և արարական մյուս երկրներում, ինչպես նաև նրանց ներգրավել ուղմական ազրեսիվ բլր՝ ների մեջ: Այդ գործում երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած առաջին տարիններին հատկապես մեծ ակտիվություն էր ցուցաբերում Անգլիան: Նա էր հանդիսանում համարյա թուրք իմպերիալիստական ծրագրերի հեղինակը: Եվ հենց նրա մտահղացմամբ ու դրդմամբ առաջ քաշվեց «Մեծ Սիրիայի» ծրագրը: «Մեծ Սիրիայի» ծրագրի մասին սկսեցին խոսել դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիններին: Այդ հարցում «նախաձեռնություն» ցուցաբերեց Անգլիայի վասալ ԱնդրՀորդա-

նանի թագավոր Արդալլահը: Նա 1943 թ. փետրվարին հայտարարեց, որ Սիրիայի, Լիբանանի, Անդրհորդանանի և Պաղեստինի միջև զոյլություն ունեցող սահմանները արհետական խոշընդուներ են, որոնք պետք է վերացնել և ստեղծել արաբական երկրների մի ֆեդերացիա¹: Անգլիան իսկույն հանդիս եկավ այդ պլանի պաշտպանությամբ: Անգլիայի արտարին դորժերի մինիստր Անտոնի Իդենը համայնքների պալատում 1943 թ. փետրվարի 24-ին հայտարարեց, որ Անգլիան համակրանքով է վերաբերվում արաբական երկրների ֆեդերացիա ստեղծելու գաղափարին²:

Հետագայում արաբական երկրների ֆեդերացիայի գաղափարն ավելի բյուրեղացավ և ի վերջո նա հանդես եկավ «Մեծ Սիրիայի» անվան տակ: Համաձայն անգլիական իմպերիալիստների և նրա արաբական գործակալների մտահղացման նրա մեջ պետք է մտնեին Անդրհորդանանը, Իրաքը³, Սիրիան, Լիբանանը և Պաղեստինի մի մասը: Դա պետք է լիներ մի թագավորություն, որի գլուխ կանգնելու էր Իրաքում և Անդրհորդանանում իշխող Հաշիմիդների դինաստիայի որևէ ներկայացուցիչը: Արդալլահ թագավորը, Անդրհորդանանի ու Իրաքի պետական գործիչները, անգլիական իմպերիալիստները և նրանց շահերի պաշտպանները պարբռաբար հանդիս էին զալիս «Մեծ Սիրիայի» ծրագրի պաշտպանությամբ, նշելով, որ նրանք լի են վճռականությամբ այն կենսադրութելու համար: 1946 թ. նոյեմբերին Արդալլահ թագավորը իր զահական ճառուամ «Մեծ Սիրիայի» ծրագիրը հողակեց իր թագավորության արտաքին քաղաքականության պաշտոնական կուրսը⁴: Այդ հարցի կապակցությամբ հանդես գալով Անդրհորդանանի օրենսդիր ժողովում Անդրհորդանանի արտաքին գործերի մինիստր Շուքեյրի փաշան նշեց: «Անդրհորդանանը երբեք պիտի չհրաժարի Միացյալ Սուրիո կամ

¹ ԱՊԱՕՐ ՀՀՀ, ֆ. 4459, օպ. 1 ս., չ. 1374, լ. 54.

² Նույն անդում, թ. 72:

³ Որոշ պետական գործիչների հայտարարությունների մեջ նշվում էր, որ Իրաքը կամ պետք է մտնի «Մեծ Սիրիայի» մեջ կամ վերցին նրա հետ ամենասերտ կապերի մեջ է լինելու:

⁴ N. Ziadeh... p. 95.

դաշնակցային ծրագրեն: Եթե այս դաշնակցությունը չիրականանա, ասիկա բռնաբարում պիտի ըլլա Մեծն Սուրբո բնական իրավունքներունք¹:

«Մեծ Սիրիայի» ծրագրի կողմնակիցները չեն սահմանափակվում միայն այսպիսի հայտարարություններով: Նրանք երբեմն-երբեմն դիմում էին նաև աշարեկման, սպառնալով զենքի միջոցով իրագործել իրենց ցանկությունները: Արդարացն իր հայտարարություններից մեկում նշում է, որ «եթե կիրանանը մտածում է դուրս մնալ սիրիական դաշինքից, ապա Սիրիային կրկին կմիացվին այն տերիտորիաները, որոնք երանից խլվեցին 1920 թ., մանդատի հաստատման ժամանակ»²: Այստեղ խոսքը գնում է կիրանանի հյուսալին և հարավային մասերի՝ Տյուրոսի և Տրիպոլիի շրջանների մասին, որոնք կիրանանին էին անցել 1920 թ.: Խեկ թերութիւ ռուս Շայք թերթի թղթակից Սայիդ Սըրբեյին տված ինտերվյուուի ժամանակ Արդարացնը իր զարմանքն է հայտնում կիրանանի անկախության առթիվ և ասում, որ իր հայրը՝ լի պայքարել ոչ կիրանանի և ոչ էլ Սիրիայի անկախության համար, նշելով, որ իր քաղաքականության նպատակն է «Մեծ Սիրիայի» ստեղծումը, որի մասը պետք է կաղմի նաև կիրանանը, նա հայտարարում է, որ իր բանակը կարող է անակնկալ գրավումով իրականացնել «Մեծ Սիրիայի» ստեղծումը³: Նա պարօքներությամբ նշում է, որ իր բանակը զորավորագույն բանակներից է: Այստեղ անդին է հիշեցնել, որ Անդրբորդանանի բանակի կորիգը կազմում էր այսպիս կոչված «արաբական լեգիոնը»: Այն ստեղծել էին անգլիացիները: Նրանք էին զինում այդ լեգիոնը և նրանց ձեռքում էր գտնվում նրա հրամանատարությունը: Այժմ Անդրբորդանանի վեհապետը արաբական ժողովուրդներին սպառնում էր այդ անզինական զենքով:

Անզինական իմպերիալիստները առաջ քաշելով «Մեծ Սիրիայի» ծրագիրը վարպետորեն օգտագործեցին արաբների:

1 տիոզուրդի Զայն, 22 նոյեմբերի 1945 թ.:

2 „L'Ortent“. Beyrouth, 26.XI.1945.

3 Նրա հայրը Մեթամի շերիֆ Հուսեյն էր:

4 տիոզուրդի Զայն, 30 մարտի 1947 թ.:

աղղային զգացումները, նրանց ձգտումները միավորվելու
մեկ պետական միավորման մեջ, Այդ շարժումը, որը սկսվել
էր դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարինե-
րին, նոր թափ ստացավ երկրորդ համաշխարհային պատե-
րազմի տարիներին և նրանից հետո: Անգլիացիներն իրենց
դորժակալների հետ միասին այժմ շահագործում էին արաբ-
ների այդ ձգտումը նրանք ուզում էին, որ այդ շարժումն ըն-
թանա իրենց համար ցանկալի հումուզ Միանգամայն իրա-
վացի է Թ. Զունրլատը, երբ ի նկատի ունենալով հենց այս
ժամանակաշրջանը, գրում էր. «Բոլորն էլ հիշում են, որ այն
ժամանակ անգլիական քաղաքականությունը հավաստում էր,
որ իրը թե օգնում է արաբներին, տարածում է միության
դադարիաը և իր գործակալներին ու բարեկամներին կոչ էր
անում ձեւացնել, որ համամիտ են այս հոսանքին, մինչդեռ
խորքում և իրականում աշխատում էր քայլայիլ արաբական
միության գաղափարը, ճախողել նրա զարգացմանը կամ այն
ներդաշնակի Արևելքում Բրիտանիայի շահերի հետ»¹. Ձգտե-
լով ստեղծել «Մեծ Սիրիա» անգլիական իմպերիալիստները
զրահով հետեւյալ նպատակներն էին հետապնդում: Առաջին,
նրա օդնությամբ նրանք ցանկանում էին ընդարձակել ու ամ-
րապնդել իրենց տիրապետությունը Արարական արևելքում:
Այդ հնարավորությունը ստեղծվում էր այն պատճառով, որ
Անգլիայի դիրքերը շափազանց ուժեղ էին Իրաքում, Անգլիա-
զանանում և Պաղեսափինում: Իսկ «Մեծ Սիրիայի» մեջ վճռա-
կան դերը խաղալու էին հենց այդ երկրները: Ուստի Սիրիայի
և Լիբանանի կցումը նրանց, կհանգեցներ այն բանին, որ Անգ-
լիան Հաշիմիդների դինաստիայի և իր մյուս համակիրների
օգնությամբ իր ազդեցությունը կտարածեր նաև նրանց վրա:

Երկրորդ, արդեն երկրորդ համաշխարհային պատերազ-
մի տարիներին երևացին անգլո-ամերիկյան մրցակցության
առաջին նշանները, մրցակցություն, որն ավելի ուժեղացավ
պատերազմից հետո: Արարական արևելքը դարձավ անգլիա-
կան և ամերիկյան կատաղի հակամարտության թատերաբեմ:

¹ كمال جنبلاط، حقيقة الثورة اللبنانية، ص ٢٧.

Այսպիսի իրադրության մեջ Անգլիան «Մեծ Սիրիայի» ստեղծումով փորձում էր պատճեց ստեղծել ընդդեմ ամերիկյան ներթափանցման:

Եվ երրորդ, ինչուս Ասիայի մյուս մասերում, այնպես էլ Արաբական արևելքում լայն ծավալ էին ստացել աղօպային աղատադրական շարժումները, որոնք հարցականի տակ էին դրել իմպերիալիզմի տիրապեսությունը: Աղօպային աղատադրական շարժման թափը խիստ վախսեցրեց գաղութարարներին և այն ճնշելու համար նրանք դիմում էին ամեն միջոցի: Անգլիական իմպերիալիստները հույս տնեին, որ «Մեծ Սիրիայի» ստեղծումով, որտեղ իշխանությունը գտնվելու էր հետադիմական տարրերի ձեռքում, նրանք կկարողանան լուրջ հարված հասցնել արաբական ժողովուրդների աղօպային-աղատադրական պայքարին:

Ինչպես տեսնում ենք «Մեծ Սիրիայի» ծրագիրը հետապընդում էր ակնհայտ իմպերիալիստական նպատակներ: Այդ ծրագրի լույս աշխարհ դալու օրվանից ինչպես արաբական մյուս երկրների, այնպես էլ Լիբանանի ժողովրդական մասները, առաջադիմ կազմակերպությունները, քաղաքական ու պետական գործիչները, մամուլը և այլն դեմ արտահայտվեցին նրան: Նրանք իրավացիորեն դա համարում էին սպառնալիք լիբանանի անկախությանը: «Մագիր ալ-Ազվալ» թերթը նշում էր, որ նրանք, ովքեր պաշտպանում են «Մեծ Սիրիայի» ծրագիրը, դավանաններ են, որոնց լիբանանյան իշխանությունները պետք է անհապաղ ձերբակալին¹: «Ան-Նահար» թերթը իրավացիորեն դավեշտ էր համարում այն, որ «Մեծ Սիրիայի» ստեղծման հարցը բարձրացրել է մի պետություն՝ Անդրհորդանանը, որը ինքը անկախ չէ և գտնվում է անգլիական մանդատի տիրապետության ներքո²: Մերկացնելով անգլիական իմպերիալիստներին և նրանց գործակալներին «Մաութ աշ-Շաարը» նշում էր, որ «Մեծ Սիրիայի» հարցը առաջ է քաշվել այն նպատակով, որպեսզի արաբա-

¹ 27.XI.1945 «رقیب الاحوال» بیروت.

² 27.XI.1945 «النهار» بیروت.

կան ժողովուրդների ուշադրությունը շեղեն իրենց ազգային, կենսական կարևորություն ներկայացնող հարցերից¹:

1945 թ. մարտի 5-ին Բեյրութում տեղի ունեցավ Լիբանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների միացյալ նիստը, որը քննության առաջ Լիբանանի և Սիրիայի քաղաքական ընդհանուր դրությունը «Մեծ Սիրիայի» ծրագրի առնչությամբ: Նրանց հրապարակած հայտարարության մեջ «Մեծ Սիրիայի» ծրագիրը համարվում էր իմակերիալիստական ծրագիր, որ հրապարակ էր նետվել արարներին շեղելու իրենց ազատության և անկախության համար մղած պայքարից: «Այդ ծրագիրը, — ասված էր հայտարարության մեջ, — իմակերիալիստական մեծագույն խարերայությունն է, որ նպատակ ուներ ամրապնդել իմակերիալիզմի հենակետը և արարական միության պատըրվակին տակ արարները իրարմի բաժանելը²: Այնուհետև հայտարարությունը մատնանշում էր, որ եթե հաջողվի իրադրժել այդ ծրագիրը, ապա նա շատ ծանր հետևանքների կարող է հասցնել: Նա կհանգեցներ իմակերիալիստական ազգեցության նոր գոտիի առաջացմանը, Սիրիայում և Լիբանանում հանրապետական վարչաձևի վերացմանը, արարական երկրների միջև համերաշխության չքացմանը և նրանց միջև ընդհարումների ու բախումների առաջացմանը³:

Բացահայտելով «Մեծ Սիրիայի» ծրագրի իմակերիալիստական բնույթը և համոզիլ կերպով ցույց տալով նրա վտանգավոր հետևանքները արարական երկրների ապագայի համար, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունները կոչ էին անում աշխատավորական մասսաներին և բոլոր գեմոկրատական ուժերին համախմբվել ու միասնական ճակատով պայքարել իմակերիալիստական այդ նոր դավադրության դեմ: Միաժամանակ կոչ էր արվում ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա, որպեսզի նրանք մերժն այդ ծրագիրը:

¹ 27.XI.1945 «صوت الشعب» بیروت،

² «Ժողովուրդի Զայե», 10 մարտի 1945 թ.,

³ նույն ակղում,

«Մեծ Սիրիայի» ծրագրի հանդեպ բացասական դիրք գրավեցին նաև Լիբանանի քաղաքական կուսակցությունների մնշող մասը։

Այդ հարցը թննարկման առարկա հանդիսացավ Լիբանի պառլամենտի 1946 թ. նոյեմբերի 26-ի նիստում։ Պառլամենտի դեպուտատներն իրենց ելույթներում դատապարտում էին «Մեծ Սիրիայի» ստեղծումը, որպես իմպերիալիստական պլան, որը սպառնում է Լիբանանի անկախությանը։ Դեպուտատ Արդալլա Յաֆին հայտարարեց, որ «...մեր նպատակն է պահպանել մեր երկիրը անկախ և գերիշխան»¹։ Մեկ ուրիշ դեպուտատ՝ Ժորժ Աքըլը ասաց. «...մենք Մեծն Սուլուտ դեմ ենք, Լիբանանը մեջը ըլլա թե ոչ»², Մի շարք դեպուտատներ իրենց զարմանքն էին հայտնում, թե ինչպես կարելի է անկախ մի երկիր՝ տվյալ դեպքում Լիբանանը, միացնել մի երկիր՝ Անդրօրդանանի հետ, որը ազատ չէ։ Բացի այդ նրանք ուշադրություն էին հրավիրում այն հանգամանքի վրա, որ Լիբանանը Արաբական լիգայի անդամ դարձավ պայմանով, որ այն ճանաչվի նրա անկախությունը։ Արաբական լիգան 1945 թ. ընդունեց հատուկ որոշում, որը երաշխավորում էր Լիբանանի անկախությունը նրա ներկա աշխարհագրական սահմաններով։ Այժմ, երբ ստիպում էին, որ Լիբանանը անդամակցի «Մեծ Սիրիային» և կամ սպառնում էին, թե նրանից կիշլեն նրա հյուսիսային և հարավային շրջանները, ուստի ակնհայտ ոտնձգություն էր Լիբանանի անկախությանը։ Դա հակասում էր նաև Արաբական լիգայի որոշումներին։ Ինչպես նշեց դեպուտատ Ռիադ Սուլէյ «Մեծ Սիրիայի» հարցը «լ մի տեսակետից հիմնավորված հարց չէ։ Նա ասաց, որ մենք ռթափեցինք մեր արյունը, կարելի չէ, որ ձգենք մեր այս վճռականությունը»³։

Վերջում Լիբանանի պառլամենտը միաձայն ընդունեց Ալֆրեդ Նակկաշի առաջարկած հետևյալ բանաձեռք. «Լիբանանի պառլամենտը դատապարտում է «Մեծ Սիրիայի»»

1 «Ժողովադիրդի Զայե», 28 նոյեմբերի 1946 թ.՝

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

ստեղծման ծրագրը և կառավարությունից պահանջում է պաշտոնական բողոք ուղարկել Անդր՛հրդանանի կառավարությանը¹:

Այդ ծրագիրը դատապարտուա են նաև Սիրիայի պառլամենտն ու կառավարությունը, ինչպես նաև Արարական լիդույի խորհրդի քաղաքական կոմիտեն։ Այդ կոմիտեն մերժեց «Մեծ Սիրիայի» պլանը, ուշադրության առնելով այն հանգամանքը, որ նա հակասում է Արարական լիգայի կանոնադրությանը²:

Իսկ ինչպիսի՞ն էր կիրանանի կառավարության դիրքը։ Այսպիսի իրադրության մեջ, երբ կիրանանի և արարական մյուս երկրների դեմոկրատական ուժերը վճռականորեն՝ դեմքին արտահայտվում «Մեծ Սիրիայի» ծրագրին, կիրանանի կառավարությունը նույնպես պաշտոնապես հանդես եկավ նրա դեմ։ Կիրանանի արտաքին գործերի մինիստր Համիդ Ֆրանժին 1945 թ. նոյեմբերին հայտարարեց. «Ես շատ զարմացած եմ, որ ժամանակ առ ժամանակ հարկադրված ենք տարօրինակ խոսակցություններ լսել «Մեծ Սիրիայի» ստեղծման մասին։ Կիրանանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ նա ամբողջովին մերժում է այդ գաղափարը»³. Այդ տեսակետը կիրանանի կառավարությունը կրկին հաստատեց 1946 թ. իր հայտարարության մեջ. «Մեծն Սիրիան չենք ուզեր ոչ կիրանանով և ոչ ալ առանց կիրանանի»⁴.

Սակայն սետք է նշել, որ կիրանանի կառավարությունն իր այս քաղաքականության մեջ հետևողական չէր, շատ հաճախ տատանվում էր և պատրաստ էր դիմել կուպրոմիսների։ Դա պետք է բացատրել նրանով, որ իշխանության գլուխ անցած կիրանանի կոմպրագրուական բուրժուազիան իր դասակարգային բնույթի պատճառով հակված էր համագործակցելու իմպերիալիզմի հետ, նա շահագրգուված չէր ակտիվ հակամակերիալիստական պայքար մղել կիրանանի կառավարության շրջաններից, ֆեոդալ-կալվածատերերից, խոշոր առև-

1 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 5440, л. 172.

2 Նոյեմբերում, թթ. 174—175,

3 „L'Orient“, 26.XI.1945.

4 «Ժողովուրդի Զայե», 22 նոյեմբերի 1945 թ.:

տրականներից և բուրժուաններից շատերը կապված էին անդլիական իմպերիալիզմի հետ և վերջինս նրանց միջոցով ազգում էր կիրանանի կառավարության քաղաքականության վրա, ճնշում գործադրում և ձգում հասնել այն բանին, որ կիրանանի կառավարությունը ընդունի «Մեծ Սիրիայի» ժրագիրը:

Սակայն այդ տեսնդենցիները բախվում էին երկրի հակախմբերիալիստական ուժերի պայքարին, հակասում էին ժողովրդական մասսանների և կիրանանի ազգային շահերին: «Մեծ Սիրիայի» մեջ մտնելը ձեռնոտու չէր նաև հենց իրեն՝ կոմունիստական բուրժուազիային, որովհետև կիրանանի անկախությունը կորցնելը և Հաշիմիդների իշխանության ներքո անցնելը ոչ մի լավ բան չէր խոստանում նրան: Այստեղից էլ կիրանանի կառավարության անհետաղականությունը և տատանումները «Մեծ Սիրիայի» հարցում: Նա մի կողմից պաշտոնապես հայտարարում էր, որ իրեն համար անընդունելի է «Մեծ Սիրիայի» ծրագիրը, իսկ մյուս կողմից ամեն կերպ ձգում էր մերձենալ Իրաքի, Անդրհորդանանի և Թուրքիայի հետ: Կիրանանի կառավարության այդ տատանումների դեմ հանդես եկան երկրի գեմոլիրատական ուժերը: Կիրանանի կոմունիստական կուսակցությունը 1946 թ. հունիսին հատուկ կոչով դիմեց կիրանանի ժողովրդին, որովհետո նա ժողովրդական զանգվածներին տեղյակ էր պահում, որ կիրանանի արտաքին քաղաքականության մեջ սկսել է երկան դալ վտանգավոր ուղղություն: Այդ նոր ուղղությունը՝ կայանում էր նրանում, նշում էր կոմունիստական կուսակցությունը, որ կիրանանի կառավարությունը «կձգուի կիրանանը դարձնել պուլը Ամմանի և Բաղդադի քաղաքականության»: Ընդգծելով, որ այդ քաղաքականության նպատակն է ստեղծել «Մեծ Սիրիա», պառակտել արարական ժողովրդների միասնականությունը և համերաշխությունը իրենց ազգային անկախության համար մղվող պայքարում, կոմունիստական կուսակցությունը նշում էր: «իսկապես ցավալի է տեսնել կիրանանի մեջ պատասխանատու մարդիկ, որոնք կնետվին այս

1 «Ժողովրդի Զայն», 27 հունիսի 1946 թ.

վլտանգավոր քաղաքականության ուղին, ուրկե կը նթանան Ամմանի և Բաղդադի կարգ մը հայտնի քաղաքագետները¹, Հիրանանի կոմունիստական կուսակցությունը կոչ էր անում ժողովրդական զանգվածներին և դեմոկրատական ուժներին համախմբվելու պահանջել, որ Հիրանանի կառավարությունը վարի անկախ քաղաքականություն՝ հիմնված միշտաղային համագործակցության և Հիրանանի ինքնուրույնության ոլահպահան սկզբունքների վրա:

Հիրանանի կոմունիստական կուսակցության քարտուղար Նիքոլա Շավին իր «Հիրանանի արտաքին քաղաքականությունը Սիրիայի, արաբական երկրներու և մեծ պետությանց հանդիպած հոդվածում անդրադառնալով այդ նույն հարցին, նշում էր, որ Հիրանանի արտաքին քաղաքականության այդ նոր կուրսը դեմ է թե՝ Հիրանանի և թե՝ նրա դրացի երկրների շահերին: «Այն պահին, — գրում էր Նիքոլա Շավին, — երբ ուժեղացած է «Մեծ Սուլրիո» ծրագրին համար կատարվող պրոպագանզը, Հիրանանի պաշտոնական շրջանակներուն մոտ կահնեննք Ամմանի մոտենալու ձգտում մը, ինչ որ զարմանք կպատճառն ոչ միայն անոր համար, որ ան կոժվարացնե Սուլրիս դիրքը, այլ մասնավորապես անոր համար, որ ամեն բանն առաջ դեմ է Հիրանանի շահերուն»²:

Հիրանանի կառավարության անհետևողականությունը «Մեծ Սիրիայի» հարցում ամենացայտուն կերպով գրսնորվեց նացիոնալ-սոցիալական կուսակցության նկատմամբ ունեցած վերաբերումի մեջ: Դա միակ ուժն էր Հիրանանում, որ բացեիրաց հանդես էր գալիս հանուն «Մեծ Սիրիայի»: Այդ բանը քաջ հայտնի էր Հիրանանի կառավարությանը: Եվ չնայած այդ հանգանանքին Հիրանանի կառավարությունը, իհարկե, ոչ առանց անզիփացիների միշտամտության, այդ կուսակցությանը լեզար գործելու իրավունք տվեց: Օգտվելով իրենց տրված հնարավորությունից այդ կուսակցությունը լայն գործունեություն ծավալեց հօգուս «Մեծ Սիրիայի» գաղափարի: Նրա այդ գործունեությունը հատկապես ակտիվացավ, երբ

1 «Ժողովակարդի Զայն», 27 Հունիսի 1946 թ.

2 Նոյն տեղում, 22 Հոկտեմբերի 1946 թ.

պաշտոնապես առաջ քաշվեց «Մեծ Սիրիայի» ստեղծման
 պլանը, որի իրագործման մեջ անգիտական իմպերիալիստ-
 ները և նրանց գործակալները մեծ տեղ էին հատկացնում այդ
 կուսակցությանը: Ու նա չհապաղեց արդարացնել իր վրա
 դրված հույսները: 1946 թ. սեպտեմբերի 1-ին, օգոստվելով լի-
 րանանյան իշխանությունների թողտվությունից նացիոնալ-
 սոցիալական կուսակցությունը Դհուր էլ Շուեյրի մեջ բացա-
 հայտ ցույց կազմակերպեց ի պաշտպանություն «Մեծ Սիրիա-
 յի» ծրագրի: Կուսակցության անդամները ցույցի եկան ավ-
 տումնեթենաներով և զինված ատրճանակներով ու գաշուննե-
 րով: Նրանցից մենք հարցնում էր, թե «ո՞վ պետք է ապրի: Մյուսները խմբովին պատասխանում էին՝ մենք, Այնուհետեւ
 նա հարցնում էր, թե մենք «ո՞ւմ ենք պատկանում: Նրանք
 պատասխանում էին՝ Մեծ Սիրիային¹: Ցուցարարները խոսքն
 ուղղելով կուսակցության լիդեր Անտուան Սաադիին, որն այդ
 ժամանակ գտնվում էր Արգենտինայում, բղավում էին: «Ով
 առաջնորդ, մինչև մահ քու հետ ենք: Վաղը երր վերադառ-
 նաս, թեզ Սերայ² պիտի նստեցներք: Եվ այս բոլոր խժդու-
 թյունները կատարվում էր Լիբանանի ոստիկանության աշքի
 առջև, որը գտնվում էր ցույցի վայրում՝ նրա Շիադաղ ըն-
 թացքը առաջնովելու նպատակով: Նացիոնալ-սոցիալական
 կուսակցության այս ցույցը խոր դժգոհություն առաջացրեց
 Լիբանանի գեմոկրատական շրջաններում: Իրենց զայրուցիթը
 հայտնելով այդ կուսակցության գործողությունների դիմ,
 նրանք միաժամանակ գատապարտում էին Լիբանանի կառա-
 վարության շշեղոքը և գործողություններին շմիշամտելու դիր-
 քը: Նրանք իրավացիորեն նշում էին, որ լի կարելի դեմոկրա-
 տիզմի պատրվակի տակ ազատություն տալ ֆաշիստական
 թափթափուկներին:

1947 թ. մարտին Լիբանան վերադարձավ այդ կուսակցու-
 թյան լիդեր Անտուան Սաադին, որին իր կուսակցության ան-
 դամները մեծ ընդունելություն ցույց տվին: Նա հանդիս եկալ

¹ «Ժողովուրդի Զայն», 4 սեպտեմբերի 1946 թ.:

² Սերան Լիբանանի կառավարության ռեզիդենցիան է:

³ «Ժողովուրդի Զայն», 4 սեպտեմբերի 1946 թ.:

մի նառով, որտեղ բացահայտ հայտարարեց, որ իր կուսակցությունը պայթարելու է «Մեծ Սիրիայի» ստեղծման համար: Դիմելով իր կուսակցության անդամներին նա ասում է. «Ովկովմիներ¹, ձեր ազգային ընկերությունը լավագույն թարդմանն է Լիբանանի, Շամի², Պաղեստինի, Անդրհորդանանի և Միջազգեատքի բնակչությանց կամքինքն: Անտուան Սաադեի այս ելույթը ցնցող տպավորություն գործեց: Լիբանանի տարրեր խավերը և քաղաքական խմբերը իրենց բողոքն ու զայրույթն են արտահայտում այդ կապակցությամբ: Լիբանանի առաջադեմ թերթերը նրա ելույթը համարում են դավաճանություն և պրովոկացիա: «Ը՞րիան» թերթը պրովոկացիոն համարելով Սաադեի ճառը, նշում է, որ «Դովմի» կուսակցությունը իր «Ֆյուրերի» բերանով փաստեց, թե այդ կուսակցությունը լիբանանյան չէ: Ֆալանգիստների օրգան «Ալ-Ամալ»-ը դովմիներին համարելով դավաճաններ, գրում էր, որ Լիբանանի մեջ դավաճանների համար տեղ չկա: Նա պահանջում էր դավաճաններին զենքով պատժել: Մի շաբթ շրջաններում տեղի են ունենում ցույցեր և բողոքի ելույթներ: 1947 թ. մարտի 2-ին Լիբանանի կռուուխստական կուսակցությունը բողոքի մեծ միտինգ կազմակերպեց Բեյրութում: Միտինգի մասնակիցները դատապարտելով Անտուան Սաադեի ելույթը դովմիների կուսակցությունը համարում են դավաճանների կուսակցություն, որն աշխատում է հօգուտ իմպերիալիստների և դեմ է Լիբանանի անկախությանը: Այդ միտինգին արարների հետ կողք-կողքի մասնակցում էին նաև հայերը, որոնք արար առաջադեմ ուժերի հետ միասին հանդես էին դալիս «Մեծ Սիրիայի» իմպերիալիստական ժրագրի դեմ: Այդ ժրագրի դեմ հանդես գալու համար նրանք ունեին նաև մեկ այլ պատճառ: դա դովմիների կուսակցության թշնամական վերաբերմունքն էր դեպի հայերը: Իր ստեղծման առաջին օրվանից՝ 1932 թվականից այդ կուսակցությունը անասնական ատելություն էր տածում հայերի նկատմամբ: Ուշադրություն

¹ Ղովմի կամ կառմի, Խայբունալ-սոցիալական Հրզք ալ-կառմի ալ-իշմայլի կուսակցության կրթատ անվանումն է:

² Սիրիա:

³ «Ժողովուրդի Զայն», 6 մարտի 1947 թ.:

հրավիրելով այդ հանգամանքի վրա Հովհանը գրում
էր. «Հայերու այս ինքնարությունը մասնակցությունը հասկանալի
է այն բանով, որ զովմիներն իրենց կազմության առաջին
օրեն անասնային ատելությունն քարոզած են հայ ժողովրդին
դեմ, պահանջելով զանոնք ծով թափելաւ, Այսպիսով, հայե-
րի մասնակցությունը այդ միտինգին և ընդհանրապես «Մեծ
Սիրիայի» ծրագրի դեմ մզկող պայքարին պայմանավորված
էր երկու հանգամանքով. նախ, որ նա սպառնում էր արարա-
կան մի շարք երկրների ինքնուրույնությանը և նպաստում
իմաստիալիզմի դիրքերի ամրապնդմանը և երկրորդ, վտան-
գի տակ էր դուռը, ինչպես իրավացիորեն նշում էին կիրա-
նանի հայ դեմոկրատ գործիչները, արարական երկրներում
ապրող հայերի ֆիզիկական գործությունը:

1947 թ. մարտի 4-ին Տրիպոլիում զովմիների և ժողո-
վըրդական մասսաների միջև արյունալի ընդհարումներ տե-
ղի ունեցան, որի ժամանակ զոհվեց 14 և վիրավորվեց 46
մարդ: Կարզը վերականգնելու համար դեպքերին միշամտում
են ոստիկանությունը և բանակը²:

Անտուան Սաադեի ելույթը և զովմիների գործունեու-
թյունը քննության առարկա դարձավ կիրանանի պառլամենտի
նիստում, որը կայացավ 1947 թ. մարտի 6-ին: Մի շարք դե-
պուտատներ բուռն կերպով դատապարտում են Ա. Սաադեի
ճառը Հանդես գալով պառլամենտի նիստում արտաքին գոր-
ծերի նախկին մինիստր Համիդ Ֆրանժիեն նշեց, որ Սաադեն
ոչինչ չի սովորել և ոչինչ չի մոռացել նա հաշվի չի առնում,
որ կիրանանի ներկա վիճակը բխում է 1943 թ. Ազգային
պակտից և որ կիրանանը անհերքելի իրողություն է³: Այնու-
հետև նա պառլամենտի անդամ Ժորժ Աքըլի հետ միասին կա-
ռավարությունից բացատրություն է պահանջում, թե նա ինչ
միշոցներ է ձեռնարկել այդ կապակցությամբ: Հանդես գալով
կառավարության անունից պրեմյեր-մինիստր Ռիադ Սոլէը
հայտարարեց, որ Անտուան Սաադեի ճառը վիրավորանք է
կիրանանի գերիշխանությանը և հակասում է 1943 թ. Ազգա-

1 «Ժողովուրդի Զայն», 6 մարտի 1947 թ.

2 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1 с., ед. хр. 6700, л. 56.

3 «Ժողովուրդի Զայն», 9 մարտի 1947 թ.

յին պակտին: Նա վստահեցրեց պառլամենտին, որ կառավարությունը ճզմելու է այդ պակտի և կիրանանի անկախության դեմ ուղղված ամեն մի ելույթ¹: Ռ. Սոլհը միաժամանակ տեղյակ պահեց պառլամենտի անդամներին, որ ոստիկանությանը հրաման է տրված ձերբակալելու Անտուան Սաադին, սակայն վերջինիս հաջողվել է ծպտվել:

Դայած այս համաժողովրդական ընդհանուր շարժմանը ընդդեմ «Մեծ Սիրիայի» ծրագրի, անզիւական իմացերիալիստները, զովմիները և իմացերիալիզմի մյուս գործակալները չեն դադարեցնում իրենց գործունեությունը նրա իրականացման համար: Ընդհակառակը, նրանք որոշում են դիմել ավելի վճռական քայլերի: 1949 թ. հուլիսի 3-ին զովմիները կիրանանում պետական հեղաշրջման փորձ կատարեցին, նըրանց զինված զոկատները երկրի տարրեր վայրերում հարձակում գործեցին ոստիկանական կայանների վրա: Կառավարությունը ստքի հանեց բանակը և ոստիկանությանը²: Զովմիները դիմեցին փախուատի: Սակայն նրանք հուլիսի 4-ի լույս 5-ի դիշերը դիմում են նոր հարձակման: Հովմիները զինված ավտոմատ հրացաններով և ատրճանակներով սիրիական սահմանից մտնում են Ռաշիայի շրջանը: Այստեղ նրանց և ոստիկանական զնդի միջև սկսվում է հրացանաձորություն և ի վերջո ոստիկանական ուժերին հաջողվում է զովմիներին փախուատի մատնել³: Զինված մարտեր են տեղի ունենում նաև Մաշպարայի շրջանում:

Այս դավադրությունը նախապատրաստված էր խնամքով: Դավադիրներն ունեին մշակված պլան: Նրանց տրամադրության տակ կար մեծ քանակությամբ զենք, զինամթերք, ավտոմեքենաներ և այլն: Դավադրության միջոցով զովմիները հույս ունեին զավթել իշխանությունը և արդեն որպես կառավարող կուսակցություն պայքարել «Մեծ Սիրիայի» ստեղծման համար: Սակայն ժողովրդի զովնության ու աշակ-

1 «Թիվավորդի Զայն», 2 մարտի 1947 թ., ԱԳԱՕՐ ՀՀՀ, ֆ. 4459, օլ. 1 ս., ըլ. քր. 6700, լ. 60.

2 «Արարատ», Բեյրութ, 7 հուլիսի 1949 թ.:

3 Նոյին տեղում, 8 հուլիսի 1949 թ.:

ցության և կառավարության արագ գործողությունների շնորհիվ հաջողվեց ձախողել այդ դավադրությունը:

Այդ կուսակցության շատ անդամներ ձերբակալվեցին, այդ թվում և նրա լիդեր Անտուան Սաադեն: Նա դատապարտվեց մահվան և անմիջապես զնդակահարվեց:

Այս դավադրության ճնշումը լուրջ հարված էր «Մեծ Սիրիայի» կողմնակիցներին:

Հիբանանի և արաբական մյուս երկրների ժողովուրդների ու առաջադեմ ուժերի երկարատև պայքարի արդյունքը եղավ այն, որ անզլիական իմպերիալիստներին և նրանց գործակալներին շնչացողվեց իրականացնել իրենց պլանները: Նրանք ստիպված էին գոնե առժամանակ հրաժարվել «Մեծ Սիրիայի» գաղափարից:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շափականց ակտիվանում է ամերիկյան իմպերիալիզմի գործունեությունը Մերձավոր և Միջին արևելքում: Նրան հրապուրում էին այդ շրջանի բնական հարստությունները, ստրատեգիական կարևոր դիրքը և շահույթներ ստանալու հնարավորությունները: ԱՄՆ-ը ամեն կերպ աշխատում էր կովաններ ստեղծել Մերձավոր ու Միջին արևելքում իր դիրքերն ամրացնելու և Անգլիային ու Ֆրանսիային այնտեղից դուրս մղելու համար: Եվ Ասիայի, Եվրոպայի ու Աֆրիկայի միջև ընկած այդ կարևոր շրջանը վերածվեց տնտեսական ու քաղաքական պայքարի ասպարեզի իմպերիալիստական պետությունների միջև:

Ռուրժուական պատմագրության մեջ միանգամայն սխալ դիրքերից են լուսարանվում արաբական երկրներ, այդ թվում նաև Հիբանան, ամերիկյան իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական ներթափանցման նպատակները: Որոշ պատմաբաններ, ինչպես օրինակ Վ. Ելը, այն տեսակետն են պաշտպանում, որ իր Միացյալ Նահանգների ցանկությունն է օդնել արաբական երկրներին բարձրացնելու ժողովողի կենսա-

մակարդակը, բարեփոխնել ազրարային սիստեմը, զարգացնել արդյունաբերությունը և այլն¹, նման ոչ ճիշտ տեսակետներ է պաշտպանում նաև Մոհամմեդ Շաֆի Աղվանին իր «Միացյալ Նահանգները և արաբական աշխարհը» գրքում, որտեղ տեղ են դանել մի շարք հակասական և իրարամերժ մտքեր։ Հեղինակը մի կողմից ճիշտ կերպով ընդգծում է, որ արաբական երկրների ստրատեգիական կարևոր դիրքն էր, որ Միացյալ Նահանգներին ներգրավեց Արաբական արևելք, որ այդ շրջանը ստրատեգիական տեսակետից Միացյալ Նահանգների համար այնպես էական է, ինչպես Մեծ Բրիտանիայի համար, իսկ մյուս կողմից ոչ ճիշտ կերպով նա պնդում է, որ ԱՄՆ-ը ոչ մի մտադրություն չունի արաբական երկրներում ձեռք բերնելու քաղաքական կամ ռազմական հենակետեր՝² Մ. Աղվանին նշում է, որ միշամտությունը մյուս երկրների ներքին գործերին ամենիկացիներին թվում է «տիմաքերիալիստական», ուշ-ամերիկյան և «ուշ-դեմոկրատական», Անկարող լինելով կամ շահնկանալով խորամուխ լինել հարցի էության մեջ, նա անհիմն հայտարարում է, որ «Տրումենի դոկտրինայիշ շնորհիլ առաջին անգամ արաբական երկրները տնտեսական ու ահիսնիկական օգնություն ստացան իրենց ազգային կազմերը սպատրաստելու, իրենց սեփական պլանները մշակելու և իրենց սեփական գործարանները կառուցելու համար»³։ Այսուղ ամերիկյան իմագերիալումի իսկական նպատակները թաքցնելու մեջ Մ. Աղվանին շատ հեռու է դնում։ Անվիճելի է, որ «Տրումենի դոկտրինան» երբեք ազգային արդյունաբերությունը զարգացնելու նպատակներ չի հետապնդել Ընդհակառակը, նա ձգտել է արգելակել այդ զարգացումը, Յուափ Խաթթար Հելուն նշում է, որ «Տրումենի դոկտրինան» նպատակ շուներ զարգացնել արդյունաբերությունը, ինչպես հավակնում են ցույց տալ որոշ քաղաքական գործիչներ ու պատմաբաններ, այլ ձգտում էր ամերիկյան կտապիտակի տի-

¹ W. Yale. The Near East. A Modern History, p. 431.

² Mohammed Shafi Aghwani, The United States and the Arab World, Allgarth, 1955, p. 110.

³ Եռվեն տեղում, էջ 104։

բապետությունը հաստատել թույլ զարգացած երկրների ազգային արդյունաբերության վրա¹,

«Տրումենի դոկտրինան» դարձով այն առաջին լուրջ դնելը, որի օգնությամբ երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը սկսում է իր էքսպանսիան Մերձավոր ու Միջին արևելքու ։ «Տրումենի դոկտրինան» լույս աշխարհու եկալ 1947 թ. դեկտեմբերի 12-ին, Սկզբնական շրջանում նա տարածվում էր միայն Թուրքիայի և Հունաստանի վրա։ 1951 թ. կոնգրեսը որոշում ընդունեց նրա գործողությունները Մերձավոր ու Միջին արևելքի, այդ թվում նաև արաբական երկրների վրա տարածելու մասին։ Այդ դոկտրինան ընդունեցին և ըստ նրա գործիքական ու տեսասական ռազմությունների էին ստանում Աֆղանստանը, Եգիպտոսը, Իրաքը, Իրանը, Լիբիան, Սաուդյան Արարիան, Խորայիլը, Հորդանանը և Պակիստանը։

1951 թ. մայիսի 29-ին Լիբանանի պրեմյեր-մինիստր Հուսյին Ռավեյնին ստորագրեց «Բնդհանուր համաձայնագիր Լիբանանի և ԱՄՆ-ի միջև տեխնիկական համագործակցության մասին՝ գործ կետին ծրագրին համապատասխան։ Դրանով Լիբանանը ևս մտավ «Տրումենի դոկտրինայի» գործունեության ոլորտի մեջ։ Ըստ այդ համաձայնագրի պայմանների ԱՄՆ-ը պարտավորվում էր ա) Լիբանան ուղարկել իր տեխնիկական փորձագետներին տեխնիկական նախագծեր կազմելու համար, թ) ցուցադրման նպատակով տրամադրել ամերիկյան սարքավորում և լիբանանցիներին նոր մեքենաների և տրակտորների հետ վարչել սովորեցնել, գ) լիբանանյան մասնագետներ պատրաստել լիբանանում, ԱՄՆ-ում կամ որևէ այլ երկրում²։

Իր կողմից լիբանանը, ըստ այդ համաձայնագրի պարտավորվում էր ամերիկյան փորձագետների տրամադրության տակ դնել անհրաժեշտ հողատարածություններ, շենքեր, նյութեր, վճարել փոխադրման ժամանելու և այլն։ գործ կետի»

¹ 2. III. 1963 «الأخبار»

² N. Burns, Technical Assistance in the Middle East—Tensions in the Middle East*, Baltimore 1958, p. 115.

միսիայի բոլոր անդամները տղատվում էին հարկից¹: Ամերիկյան շահնինիկական օգնությունը ցույց էր տրվնուու տողապահաւության, լուսավորության, գյուղատնտեսության և շինարարության բնագավառում: Այդ օգնությունը լիովին բացառում էր արդյունաբերությունը: Ընդհակառակը, նա հրապարակ էր նետվել թույլ զարգացած երկրների, այդ թվում նաև Լիբանանի արդյունաբերական զարգացումը արգելակելու համար: Այդ նպատակով ԱՄՆ-ի ներկայացուցիչների պայմանը 1950 թ. ընդունեց օրենք, որը արտասահմանում ներդրություն ամերիկյան կապիտալին երաշխիք էր տալիս միայն այն դեպքում, եթե նա ներդրվեր այնպիսի ձեռնարկություններում, որոնց արտադրանքը չի մրցակցի ամերիկյան արտադրանքի հետ²: Իսկ քանի որ ամերիկյան արդյունաբերական արտադրանքի ասորտիմենտը շատ լայն է և ամերիկյան արդյունաբերությունն արտադրում է ամեն ինչ, ապա գործնականում տեղական արդյունաբերության բոլոր արտադրաներն էլ մրցակից են հանդիսանում ամերիկյանի համար: Հետևաբար, ամերիկյան կապիտալիստները, ըստ այդ օրենքի, չեն կարող իրենց կապիտալիստները ներդնել արդյունաբերության բնագավառում:

Ամերիկյան քաղաքականության իսկական նպատակներն ըմբռնելու առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լիբանանում «4-րդ կետի» միսիայի ղեկավար Պիտերի հայտարարությունը: Պատասխանելով նրանց, ովքեր տրտնջում էին «Տրումենի դոկտրինայի» գեմ և դժգոհում, որ նա երկրի արդյունաբերական զարգացմանը չի նպաստում, նա նշում է: «4-րդ կետը»— դա ցուցադրման ծրագիր է և չի կարող դորժել որպես ֆինանսական ինստիտուտ փոխառություններ տալու և ուղղակի տնտեսական օգնություն ցույց տալու համար³:

1 «Политика США на Арабском Востоке» под ред. Б. Гафурова, Г. Бондаревского, Б. Данцига и Н. Халфина, М., 1961, стр. 167.

2 „Journal of Commerce“, July 1950.

3 „Point 4 in Lebanon. A joint technical cooperation program“, Beirut, 1955, p. 7.

1950 թ. օրենքից, Պիտերի այս հայտարարությունից, ինչպես նաև «Գ-րդ կետի» միսիայի ամբողջ գործունեությունից պարզ երևում է, որ «Տրումենի» գոկտրինան նպատակ չուներ նպաստել կիրանանի և մյուս երկրների տնտեսական զարգացմանը և բարձրացնել ժողովրդական մասսաների բարեկեցությունը, ինչպես բազմիցս հայտարարում էին Տրումենը և ԱՄՆ-ի մյուս պետական գործիչները, Ֆրանսիական տնտեսագետ Անդրե Լեբերժեն իր «Արարական պետությունները և արումենյան ծրագրի Գ-րդ կետը» հոդվածում քննության առնելով այդ հարցը, իրավացիորեն նշում է, որ «ամերիկան պրեզիդենտը յուրօրինակ պատկերացում ունի ազգային եկամուտը բարձրացնելու նղանակների մասին։ Մրագրի Գ-րդ կետում բարերովին չի դրվում ինդուստրիալիզացիայի հարցը։ Ա. Լեբերժեն շատ լավ է տեսնում այն կազը, որ կա ազգային եկամուտի բարձրացման ու երկրի ինդուստրացման միջև, որ հնարավոր չէ բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը, առանց զարգացնելու արդյունաբերությունը։ Այդ պատճառով էլ Ա. Լեբերժեն ամերիկան պրեզիդենտի հայտարարությունները թույլ զարգացած երկրների ժողովողի կենսամակարդակի բարձրացմանը նպաստելու մասին համարում է դատարկ խոսքեր, որովհետև, ինչպես նշում է նա այդ նույն հոդվածում, ամերիկան կառավարությունը ոչ միայն օգնություն ցույց չի տալիս թույլ զարգացած երկրների արդյունաբերության զարգացմանը, այլև, ընդհակառակը, ամեն կերպ փորձում է խոլընդունենք ստեղծել այդ ուղղությամբ։

Այստեղ տեղին է նշել, որ այն, ինչ պարզ էր ու հասկանալի ֆրանսիացի Անդրե Լեբերժեին, «անհասկանալի» էր լիրանանցի Շարլ Մալիքին, նա, որ այդ ժամանակ կիրանանի մշտական ներկայացուցիչն էր ՍԱԿ-ում, իր «Մերձավոր արևելքը Արևելքի և Արևմուտքի միջև» հոդվածում մեծ գովեստներ է շռայլում «Տրումենի» գոկտրինային հասցեին։ Նա «Գ-րդ կետի» ծրագրին վերագրում է ամբողջ աշխարհում տնտեսական ու սոցիալական շարիքները վերացնելու նպատակներ, մի պետությունը մյուս պետության հետ իր գիտե-

¹ «Le Moyen-Orient», Paris, № 23, 1951.

լիքները, փորձը, տեխնիկան և հարստությունը կիսելու մի հիւանալի օրինակ¹:

Սակայն «Տրումենի դոկտրինայիշ» մասին այդ նույն կարծիքին չէին կիրանանի ժողովրդական զանգվածները, առաջադեմ դործիչները և ընդհանրապես դեմոկրատական ուժերը: Նրանք գտնում էին, որ այդ դոկտրինայի օգնությամբ ամերիկան իմպերիալիզմը ցանկանում է ամրապնդել իր դիրքերը կիրանանում և նրան իրենից տնտեսական ու քաղաքական կախման մեջ զցել: Այդ պատճառով էլ նրանք դեմ էին «Տրումենի դոկտրինային» և գտնում էին, որ կիրանանի կառավարությունը պետք է հրաժարվի նրանից: Սակայն կիրանանում կային բավականին ազդեցիկ ուժեր, որոնք շահազըրդում էին այդ դոկտրինայի ընդունման մեջ և ամեն կերպ պաշտպանում էին այն, Դա առաջին հերթին կիրանանի կոմպրադորական բորժուազիան էր, որն ավելի ու ավելի էր կապվում ամերիկյան իմպերիալիզմի հետ: Այնուհետև նրա պաշտպանությամբ հանդես էին գալիս ֆեոդալ-շեյխները, որոնք հույս ունեին ամերիկյան տոեխնիկական օգնության շնորհիվ բարձրացնել իրենց եկամուտները, «Տրումենի դոկտրինայիշ» շերտ պաշտպանն էր պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին: Անձամբ նա և իր ընտանիքի անդամները մեծ կապեր ունեին ամերիկյան մոնոպոլիաների հետ: Պրեզիդենտի քաղաքականությունից շատ բան էր կախված, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, նրա ձեռքում կենտրոնացված էր շահիազանց մեծ իշխանություն, որը նրան հանրավորություն էր տալիս անմիջականորեն ազդել կառավարության քաղաքականության վրա:

Եվ ահա այս երկու ուժերի՝ դեմոկրատական և պրոիմպերիալիտական ուժերի միջև ուժեղ պայքար ծավալվեց: Դեմոկրատական կուսակցությունները, կազմակերպությունները, դործիչները, մամուլը և այլն հանդես էին գալիս այդ համաձայնագրի վավերացման դեմ: Նրա դեմ հանդես էին գալիս նույնիսկ առանձին բարձրաստիճան պաշտոնյաներ և մի-

¹ Charles Malik, The Near East between East and West—The Near East and the great powers*, Massachusetts, 1951, p. 22.

նիստըներ: Այսպես, «Տրումենի» գոկտրինային դեմ էր Լի-
քանանի պյուղատնտեսության մինիստր Յուսուֆ Խարուֆին:
Նա հայտարարեց, որ «4-րդ կետի» վերաբերյալ համաձայնա-
գիրը ի հօգուտ կիրանանի չէ¹, Նա պահանջում էր, որ հա-
մաձայնագրի մեջ հատուկ կետ մտցվի կիրանանին պյուղա-
տնտեսական մեքենաներ մատակարարելու մասին:

Ըստ Հանոււր զժությունը իր արտացոլումը գտավ նաև
պառլամենտի արտաքին գործերի հանձնաժողովի գործու-
նեության մեջ՝ 1951 թ. օգոստոսի 7-ին նա քննարկեց 1951 թ.
մայիսի 29-ի համաձայնագրի հարցը, Արտաքին գործերի մի-
նիստրությունը իր հայտարարության մեջ փորձում էր հանձ-
նաժողովի անդամներին ցույց տալ ամերիկյան ուղղության
առավելությունները: Սակայն, ինչպես հաղորդում էր «Արա-
րատ» թերթը «կիրանանը և ամերիկյան 4-րդ կետի համաձայ-
նությունը զժվարությանց մեջ» հոդվածում, «խորհրդարանա-
կան հանձնաժողովը այնքան ալ առավելություններ շտեսավ
այս խնդրին մեջ և երկու մասի բաժանվեցավ՝ թեր և դեմք²:
Կառավարությունը հարկադրված էր հետաձգել հարցի քննար-
կումը: Եվ պետք է նշել, որ համաձայնագրի վավերացումը
շատ ուշացավ: Նրա վավերացման հարցը կառավարությանը
հաջողվեց պառլամենտի քննարկմանը ներկայացնել միայն
1951 թ. նոյեմբերի վերջերին: Սակայն այդտեղ ևս ամեն ինչ
հարթ ու խաղաղ շանցավ: Պառլամենտի մի շարք անդամներ
դեմ էին նրա վավերացմանը: Սարբի Համադեն նշեց, թե
սերկրագործական նախարարը իրեն հավաստած է, թե 4-րդ
կետի համաձայնությունը վտանգավոր է³: Պրեմյեր-մի-
նիստր Արդալյա Ցաֆին փորձում էր համոզել, որ այդ հա-
մաձայնագիրը ոչ մի վտանգ չի ներկայացնում, որ ամերի-
կացիները քաղաքական նպատակներ չեն հետապնդում: Նը-
րանց ցանկությունն է, նշեց նա, կիրանանին ամերիկացի
մասնագետներ հայթայթել, Պատասխանելով նրան, պառլա-
մենտի անդամ Սամի Սուլհը ասաց. «անօգուտ է օտար մաս-

¹ «L'Orient», 4. VII. 1951.

² «Արարատ», 8 օգոստոսի 1951 թ.:

³ «Արարատ», 29 նոյեմբերի 1951 թ.:

նագեստներ բերելու Մենք անոնցմե արդեն ունինք տասնյակ մը, որոնց մշակած ծրագիրներն ոչ մեկը իրականացած է»¹:

Սակայն Լիբանանի կառավարությունը հաշվի չնստելով դեմոկրատական ուժերի ցանկությունների հետ և անտեսելով պառլամենտի մի շարք անդամների բացասական դիրքը, հասավ 1951 թ. մայիսի 29-ի ամերիկա-լիբանանյան համաձայնագրի վավերացմանը, Պառլամենտը 1951 թ. նոյեմբերի 27-ին 40 ձայնով ընդում 12-ի վավերացրեց այն: Խնշակես տեսնում ենք համաձայնագրի ստորագրման և վավերացման միջև ընկած է 6 ամսյա ժամանակաշրջան: Վավերացման այդպիսի ճգնաժամ պետք է բացատրել նաև և առաջ երկրի դեմոկրատական ուժերի բացասական դիրքով ու պայքարով: Մյուս կողմից իր նշանակությունն ունեցավ նաև Անգլիայի և Ֆրանսիայի դիրքը: Նրանք ճնշում էին գործադրում Լիբանանի կառավարության վրա, ճգտելով ձախողել Լիբանան ներթափանցելու ամերիկյան պլանները, որովհետև շատ լավ էին հասկանում, որ դա սպառնում է իրենց դիրքերին: Անգլիան ու Ֆրանսիան, շնայած նրանց միջև գոյություն ունեցող հակասություններին, միավորվել էին, որովհետև հրապարակ էր իշել ավելի ուժեղ դիշատիչ՝ ամերիկյան իմպերիալիզմը, որը սպառնալիքի տակ էր դնում երկուակի էլ դիրքերը:

«Տրումենի դոկտրինան սահմանափակում էր Լիբանանի և այդ դոկտրինան ընդումած մյուս երկրների գերիշխանությունը: Այդ դոկտրինան ընդումած երկրները պարտավոր էին սարատեգիական ապրանքների առևտուր շկատարել սոցիալիստական երկրների հետ: Եվ երբ Լիբանանի տնտեսության մինիստրությունը 1954 թ. թույլատրեց լիբանանցի մի առևտրականի նավթ վաճառել Լեհաստանին, ապա Բեյրութում ԱՄՆ-ի գետպանությունը խիստ բողոք հայտնեց Լիբանանի կառավարությանը²: ԱՄՆ-ի կառավարությունը սպառնում էր, որ եթե Լիբանանը շդադարեցնի սարատեգիական նյութերի արտահանումը սոցիալիստական երկրներ և

1 «Արարատ», 29 նոյեմբերի 1951 թ..

2 «Политика США на Арабском Востоке», стр. 168; М. Маджаз չ Յ Յ... стр. 103.

շկատարի «փոխադարձ անվտանգության» պայմանները, ապա
 ամերիկյան ամեն տեսակի «օգնություն» նրան կղաղաքացվի:
 Ինչպես տեսնում ենք սա բացահայտ նշում էր Հիրանանի
 կառավարության վրա, ԱՄՆ-ը իր կողմից տրամադրվող «օգ-
 նությունը» օգտագործում էր Հիրանանի ներքին գործերին
 միշտ տեղու և նրա արտաքին քաղաքական կուրսը իր համար
 ձեռնոտու ուղղությամբ տանելու համար Եվ ամերիկյան իմ-
 պերիալիստներն այդ բանը չեն թաքցնում: Նրանք բացեի-
 րաց նշում էին, որ Հիրանանին և մյուս թույլ զարգացած եր-
 կը բարեկարին ցույց տրվող «օգնությունը» առանց պայմանի չէ,
 նա որոշակի նպատակներ է հետապնդում: Հիրանանում «Տրու-
 մենի դրկտրինայի 4-րդ կետի» իրականացման միսիայի ղե-
 կավար Պիտերը Բեյրութում տված իր պրես-կոնֆերանսում
 հայտարարեց. «ԱՄՆ-ում նախապատրաստվող բոլոր պլան-
 ները՝ տեխնիկական, տնտեսական և ռազմական օգնության
 վերաբերյալ, գտնվում են կոլեկտիվ անվտանգության ծրագրի
 շրջանակների մեջ»¹: Սրանից պարզ երևում է, որ Հիրանանին
 ցույց տրվող ամերիկյան «օգնության» իսկական նպատակը
 ոչ թե նրան օգնելն էր հաղթահարելու իր տնտեսական հե-
 տամենացությունը և բարձրացնելու ժողովրդի կենսամակար-
 դակը, ինչպես վործում էին հավատացնել ԱՄՆ-ի պետական
 գործիչները, այլ Հիրանանը ամերիկյան իմպերիալիզմի
 ստրատեգիական բազան վերածելը, քաղաքականապես ոչ
 տնտեսապես կախման մեջ գցելը: Հիրանանի գյուղատնտեսու-
 թյան մինիստր Յուանի Խարութին անդրադառնալով այս
 հարցին հայտարարեց. «Ես շարունակում եմ պնդել, որ ՇՔ-րդ
 կետը» իրենից ներկայացնում է միայն առասպելական օդ-
 նություն և ես համոզվեցի, որ ամերիկացիները մեզ ուինչ չեն
 տա մեր գեղեցիկ աշխերի համար. ՇՔ-րդ կետից ծածկույթի
 տակ նրանք ուզում են իրենց սեփական պլաններն իրակա-
 նացնելը², Ամերիկյան այդ ժամանական պլաններից և «Տրու-
 մենի դրկտրինայի» իսկական նպատակները ավելի բացա-
 հայտ երևացին այն տարածայնությունների մեջ, որ ծագեցին

¹ „L'Orient“, 10.V.1952.

² 1.III.1952 «التلفرايف»

կիրանանում «Գ-րդ կետի» միսիալի և կիրանանի կառավարության միջև գոյություն ունենալիք փոխհարաբերությունների հարցի շուրջը: Սկզբում, քանի դեռ իշխանության գլուխ էր կանգնած Բիշարա ալ-Խուրին, այդ տարածայնությունների մասին նույնիսկ թույլ չէին տալիս խոսել, ինչպես արդեն նշել ենք, ամերիկյան իմպերիալիստները կիրանանում իրենց ծրագրերը կենսագործելու գործում հենվում էին պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրիի վրա: Սակայն երկրում խիստ դժգոհություն էր կուտակվել Բիշարա ալ-Խուրիի ոեժիմի դեմ: Երկրի դեմոկրատական ուժերը և ժողովրդական մասսաները դժգոհ էին նրա ներքին և արտաքին քաղաքականությունից: Նրա պրեզիդենտության մոտ 10 տարիների ընթացքում խիստ վատացավ ժողովրդական մասսաների վիճակը. գները բարձրանում էին, զործագուրկների թիվը աճում էր, ծաղկում էր կաշառակերությունը, սահմանափակվել էին դեմոկրատական աղատությունները և այլն: Իսկ արտաքին քաղաքականության ընազավառում նրա շափազանց մերձեցումը ամերիկյան իմպերիալիզմի հետ, «Տրումենի դպրինայիշ ընդունումը, և վերջապես նրա պատրաստականությունը մասնակցել ոմիշինարևելյան հրամանատարությանը», այս բոլորը մեծ տագնակ էին առաջացնում դեմոկրատական ուժերի մոտ: Ստեղծված դրությունից դուրս գալու ելքը նրանք տեսնում էին Բիշարա ալ-Խուրիի ոեժիմի տապալման մեջ: Կիրանանում 1952 թ. ստեղծվեց Ազգային ճակատ, որի մեջ մտան Ազգային կոնգրեսը և մի շարք բուրժուական խմբավորումներ¹: Պառակմանուտում Բիշարա ալ-Խուրիի ոեժիմին ընդդիմադիր դեպուտատները միավորվեցին և ստեղծեցին այսպես կոչված Սոցիալիստական ճակատը, որը զեկավարում էր Թամար Զոմբրյանը: Ահա այս ուժերը պայքար ծավալեցին Բիշարա ալ-Խուրիի ոեժիմի դեմ: Նրանք պահանջում էին պրեզիդենտի հրաժարականը: Նրանց կոչով երկրում ընդհանուր գործադրու սկսվեց: Բիշարա ալ-Խուրին իր տիրապետությունը պահպանելու համար փորձեց օգտագործել բանակը, սակայն բանակի հրամանատար Շիհարը հայտարարեց, որ բանակը ժողո-

¹ «Новое Время», 1953 г. № 28, стр. 9.

վըրդի դեմ չի գործի Բիշարա ալ-Խուրին հարկադրված 1952 թ. սեպտեմբերի 18-ին հրաժարական տվեց։ Այդ ռազմուն հեղափոխությունից հինգ օր անց, 1952 թ. սեպտեմբերի 23-ին պառամենտը պրեզիդենտ ընտրեց Թամիլ Շամունին, որ հայտնի էր իր պրոանդլիական տրամադրություններվ՝ Ընդհանրապես 1952 թ. սեպտեմբերյան իրադարձությունների մեջ անզիփական իմպերիալիզմը մեծ զեր խաղաց։ Բիշարա ալ-Խուրիի պրոամերիկյան ռեժիմի տապալման գործում նա վարպետորնեն օգտագործեց ժողովրդեց ժողովրդական մասսաների գժգոհությունը երկրի քաղաքական կուրսից և օժանդակելով այդ սեժմի հակառակորդ և իրեն համակիր քաղաքական գործիչներին, հասավ այն բանին, որ Բիշարա ալ-Խուրիի տապալումից հետո Լիբանանում իշխանությունն անցավ պրոանդլիական ուժերի ձեռքը։

1952 թ. սեպտեմբերյան իրադարձությունները ժողովրդական գժգոհության արտահայտություն լինելու հետ միասին, անզիփական և ամերիկյան մրցակցության արտահայտությունն էր, որի ժամանակ անզիփական իմպերիալիզմը շոշափելի հարված հասցրեց ամերիկյան իմպերիալիզմին։ 1952 թ. սեպտեմբերյան դեպքերից հետո Լիբանանի կառավարությունը հասարակական կարծիքին տեղյակ պահեց կառավարության և ռժ-րդ կետին միսիայի միջև դոյլություն ունեցող տարածայնությունների և վերջինիս հավակնությունների մասին։

ռժ-րդ կետին միսիան Լիբանանի կառավարությունից պահանջում էր, որ իրեն իրավունք տրվի, զանց առնելով Լիբանանի արտաքին գործերի մինիստրությանը, ուղղակի կապեր հաստատել Լիբանանի բոլոր մինիստրությունների և պետական հիմնարկների հետ։ Ամերիկացիների այս պահանջը հակասում էր անկախ և գերիշխան պետությունների միջև դոյլություն ունեցող փոխհարաբերությունների պրակտիկային և հանդիսանում էր բացահայտ միջամտություն Լիբանանի ներքին գործերին։

Տարածայնությունների մյուս առարկան այն էր, որ միսիան պահանջում էր իր խորհրդականներն ունենալ Լիբանանի բոլոր մինիստրություններում և պետական հիմնարկներում, որոնք կապված են Լիբանանում ռժ-րդ կետին միսիայի 190

գործունեության հետ¹, Ըստ որում, այդ խորհրդական-ների տրամադրության տակ պետք է դրվեին բոլոր պետական, տնտեսական, ֆինանսական և այլ բնույթի տվյալները Փառառության զա դառնալու էր լնդալիդացիայի ենթարկված հետախուզության աղջուուրը Միսիան պահանջում էր, որ Լիբանանուուր միսիայի անդամներին վերաբերվեն որպես գիվանադիւնների, այդուեղից բնուղ բոլոր հետևանքներով, նա պահանջեց, որ միսիայի և նրա անդամների կողմից ներածվող բարուրանքները աղատվեն մաքսային տուրքերից:

Հարաբերությունները միսիայի և Լիբանանի կառավարության միջն է՛լ ավելի սրվեցին 1952 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հարավային Լիբանանի Կասմիյեի շրջանում սոսովման ծրագրերը իրականացնելու կապակցությամբ: Ամերիկյան կողմը պահանջում էր, որ իրեն աշխատանքներին հետևելու այնպիսի իրավունք տրվի, ինչպես Լիբանանի կառավարությանը, որ նա իրավունք ունենա անմիջապես հոկել ձախսների վրա: Բացի այդ նա պահանջում էր, որ միսիայի ներկայացուցիչը մասնակցի կապալների բաշխման հանձնաժողովի աշխատանքներին և ունենա վետոյի իրավունք: Այս պահանջը առաջադրելով ամերիկյան իմպերիալիստները ձգտում էին, որ այդ կապալները ընկնեն միայն ամերիկյան կամ ամերիկա-լիբանանյան ընկերությունների ձեռքը և կանխեն նրանց օգտագործումը անզիհացիների և ֆրանսիացիների կողմից: Հանդես գալով պառկամենտի նիստում, Լիբանանի սրբամյեր-մինիստր Խալիդ Շիշարը 1952 թ. նոյեմբերի 13-ին հայտարարեց, որ միսիան ամբողջ հոկողությունը ուղում է իր ձեռքը վերցնել և «Լիբանանի կառավարության հըսկողությունը հանդեցնել զրոյի: Սակայն կառավարությունը ձերժեց այդ պահանջները և ուղում է այդ աշխատանքների վրա հոկել ինքնուրույն, ամերիկյան միսիայի վրա դնել հոկողությունը աշխատանքների վրա միայն տեխնիկական տեսակերպից»²:

¹ 27.XII.1952. «اللهفة»

² 7 XII.1952. «الآخر، ار»، بيروت،

Եվ վերջապես միսիան պահանջում էր, որ իրեն իրավունք տրվի ոչ միայն հսկելու աշխատանքների կատարման, վարկերի բաշխման վրա, այլ նաև «Գ-րդ կետի» օգնությամբ կատարված աշխատանքներից ապագայում ստացվող շահույթների վրա¹:

Ինչպես տեսնում ենք, ամերիկյան այս պահանջները հակասում էին կիրանանի անկախության և գերիշխանության սկզբունքներին: Դա բացահայտ միշտամություն էր կիրանանի ներքին դրոժերին: Եվ եթե այդ պահանջները ընդունվեին, ապա ամերիկյան միսիան փաստորեն կդառնար մի պետություն պետության ներսում:

Ամերիկյան միսիայի պահանջները խոր զայրույթ առաջցրին ամրող երկրում: Կիրանանի առաջազեմ ուժները այդ պահանջների ընդունումը հավասարազոր էին համարում նոր մանդատի ընդունման հետ: «Ալ-Ահրար» թերթը գրում էր, որ «մենք գերազասում ենք շտանալ այդպիսի օգնություն, որպեսզի նոր մանդատի տակ լընկնենք»²: Այդ նույն տեսակետն էր արտահայտում նաև «Ալ-Հադիթ» թերթը, նշելով, որ «Տրումենի դոկտրինայով արվող ամերիկյան «օգնությունը» պայմանավորված է նոր մանդատի ընդունման հետ»:

«Գ-րդ կետի» միսիայի քաղաքականության դեմ տեղի ունեցան ժողովրդական ելույթներ: Բեյրութի և Լիբանանի բազմաթիվ շրջաններից աշխատավորների պատվիրակությունները այցելում էին թերթերի խմբագրությունները և նըրանց հանձնում բողոքի պետիցիաներ: Պառլամենտի և կառավարության հասցեով ստացվում էին հեռագրեր ու նամակներ, որով հասարակ մարդիկ պահանջում էին շգիշել ամերիկյան մշշման առջև: Դեմոկրատական ուժները պահանջում էին երկրից արտաքսել «Գ-րդ կետի» միսիան, որովհետեւ նրա ներկայությունը հարված էր հասցնում կիրանանի գերիշխանությանը:

¹ „L'Orient“, 4.I.1953.

² 28.XI.1952 «الآخر»

³ 27.XII.1952 «الهدف»

«Տրումենի դռկտրինայից և ամերիկյան միսիայի պահանջների գեմ իրենց բողոքն են հայտնում թելրութիւնները՝ ամերիկյան համալսարանի ուսանողները։ Նրանք ամերիկա-լիրանանյան համաձայնագիրը համարում էին շահհամատեղելի երկրի տնտեսական և քաղաքական գերիշխանության հետո¹, նույն բնույթի բողոք են հայտնում նաև ֆրանսիական համալսարանի ուսանողները, որոնք պահանջում էին դադարեցնել ամերիկյան միսիայի գործունեությունը կիրանանում։ Զանազան թերթերի խմբագրություններն են այցելում թելրութիւն, Տրիպոլիի, Չունչայի, Ռաճիի, Բայնուկի և այլ շրջանների աշխատավորների պատվիրակությունները, որոնք նըրանց հանձնում են տասնյակ հազարավոր լիրանանցինների կողմից ստորագրված խնդրագրեր՝ ամերիկյան ուղղությունունու մերժելու պահանջով։ Այսպես օրինակ, միայն Բայնուկի և Ռաճիի (Աքքարի շրջան) գյուղերի պատվիրակության ներկայացրած խնդրագրի տակ կար չորս հազար հինգ հարյուր ստորագրություն²։

Այսպիսի պայմաններում, երբ բարձրացել էր հակաիմպերիալիստական պայքարի ալիքը և ժողովրդական մասսաները պահանջում էին լընկրկել ամերիկյան ձգումների առջև, կիրանանի կառավարությունը հայտարարեց, որ իր համար ամերիկյան առաջարկություններն անընդունելի են։ Նա միաժամանակ ավելացրեց, որ եթե ամերիկյան կողմը համարի պնդել իր պահանջների ընդունման վրա, ապա կիրանանի կառավարությունը հարկադրված կլինի շեղյալ հայտարարել ամերիկա-լիրանանյան համաձայնագիրն ընդհանրապես։ Ամերիկյան կողմը հարկադրված եղավ զիշել։ Նա հրաժարվեց իր պահանջներից և 1953 թ. հունվարի 12-ին կնքեց համաձայնագիր՝ «Ք-ըդ կետից ծրագրով նախատեսվող աշխատանքների իրականացման վրա համատեղ ամերիկա-լիրանանյան հսկողություն սահմանելու մասին։ Համաձայնագրությունը շեշտվեց, որ ամերիկյան փորձագետների գործու-

1 БИКИ, 22 января 1953 г. № 10 стр. 1.

2 Նույն տեղում, 27 հունվարի 1953 թ. № 12, էջ 2.

Նեռությունը պետք է սահմանափակվի տեխնիկական հսկողություն իրականացնելով։ Այսպիսով լուրջ հարված հասցվեց կիրանանի ներքին գործերին ազատորեն միշտամտելու և երկրի գերիշխանությունը ոտնաշարելու ամերիկյան իմպերիալիստների պլաններին։

Ամերիկյան իմպերիալիզմը այս հարցում հարկադրված եղավ նահանջել դեմոկրատական ուժերի ձնշման ներքո և, բացի այդ, չեր ցանկանում հարցականի տակ դնել իր ազդեցությունը և դիրքերը կիրանանում։ Նա լավ էր հասկանում, որ եթե ինքը չղիշի և իր դիրքերը կորցնի, ապա դա կնպաստի իր մրցակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի դիրքերի ամրապնդմանը։ Ուստի ԱՄՆ-ին ձեռնուու էր որոշ դիրքումներ կատարել և կիրանանում իր միսիան պահելու իրավունքն ունենալ, քան թե ամեն ինչ կորցնել, որովհետև միսիայի պահպանումը հնարավվորություն կտար այս կամ այն կերպ ազդել կիրանանի կառավարության քաղաքականության վրա և ուժեղացնել իր դիրքերը Արարական արևելքի այդ երկրում։

Իսկ ի՞նչ միջոցառումների համար էր նախատեսվում ամերիկյան ռօգնությունը և ի՞նչ նպատակների համար էր օգտագործվում այն։

Ընդունելով ամերիկյան ռօգնությունը՝ կիրանանի կառավարությունը կարծում էր, թե այն կարող է օգտագործել երկրի տնտեսության, այդ թվում ոռոգման սիստեմի զարգացման, հիգրոկայանների կառուցման և նույնիսկ արդյունարերության զարգացման համար։ Սակայն այդ նպատակով ամերիկյան ֆոնդերի օգտագործումը չեր մտնում ամերիկյան կառավարության պլանների մեջ։ Ամերիկա-լիբանանյան համաձայնագրի կնքման առաջին տարին կիրանանին տրվեց 5 մլն. դոլար։ Բայց այդ բոլոր գումարը ժախսվեց միսիայի աշխատակիցների և փորձագետների վճարման վրա։ ՏՏելեցրաֆ» թերթը գրում էր, որ «կիրանանում իր գոնվելու ամբողջ ժամանակամիջոցում Շե-րոդ կետին միսիան բոլոր վարկերը ծախսել է ամերիկյան ծառայողների վրա և ոչ մի օդտակար միջոցառում չի ձեռնարկել նախագծված ծրագրերի

իրականացման ուղղությամբ¹: Ամերիկյան միսիայի աշխատողները վարձատրվում էին շափազանց բարձր նորմաներով: Այսպես, օրինակ, միսիայի ամենացածր աստիճանավորը յուրաքանչյուր ամիս ստանում էր 800—1200 լիրանանյան լիրա, իսկ բարձր աստիճանավորը՝ 4000 լիրանանյան լիրա: Մինչդեռ լիրանանյան ամենաբարձր աստիճանավորը ստանում էր ընդամենը 350—450 լիր. լիրա², Հետագա տարիներին ևս «Տրումենի գոկտրինայի 4-րդ կետով» ցուց տրվող ոգնության զգալի մասը ծախսվում էր ամերիկյան միսիայի պահանջների բավարարման վրա:

Միսիան շահագրգոված չէր կարևոր տնտեսական միջոցառումների ծրագրեր նախապատրաստել և, առավել ևս, իրագործել այն նախագծերի կազմումը ձգձգում էր, չէր շահագում նրանք մինչև վերջ հասցնել: Միսիայի այդ գործունեությունը խիստ դժգոհություն էր առաջացնում երկրում: «Ալ-Ամալ» թերթը այդ կապակցությամբ գրում էր. «Ստիպված ենք խոստովանել, որ «4-րդ կետի» հիման վրա տրվող վարկերի օգնությամբ մինչև այժմ ոչ մի կարևոր միջոցառում չի կենսագործվել»³: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ թեև կիրանանին 1950—1957 թթ. նախատեսվել էր 35,8 մլն. դրամ, սակայն իրականում նրան հանձնվեց այդ գումարի 52,5 տոկոսը⁴:

Երբ կողմում էր ամերիկա-լիրանանյան համաձայնագիրը, երկու կողմերն էլ հայտարարում էին, որ «4-րդ կետը» նպաստելու է կիրանանի գյուղատնտեսության զարգացմանը, լուծելու է նրա կարևոր պրոբլեմները. և բարձրացնելու գյուղացիների կենսամակարդակը: Սակայն իրականում ի՞նչ տեղի ունեցավ, Փաստորեն «4-րդ կետի» միսիան հրաժարվեց ֆինանսավորել կիրանանի տնտեսության զարգացման համար շափազանց մեծ նշանակություն ունեցող կիթանիի գետի

¹ 23.XII.1952 «التلغراف»

² 14.XII.1952 «المرخة»، بيروت

³ 30.XI.1952 «العمل»

⁴ «Политика США на Арабском Востоке», стр. 170.

Հիդրոտեխնիկական կառուցումները: Հայտնի է, որ այդ գետի վրա կառուցվելու հետ մի շարք հիդրոկայաններ կիթանիի ծրագրով նախատեսվում էր մեծ չափով զարգացնել ոռոգման սիստեմը. ԱՄՆ-ը հրաժարվեց իր ու գնության ֆոնդից ֆինանսավորել կիթանիի ծրագրի իրավործումը: Նա միայն կազմեց տեխնիկական նախագիծը, որը կիբանանի վրա նստեց մոտ 1 մլն. դոլար¹:

Դյուլատնտեսության բնագավառում ամերիկյան միսիայի կատարած ամենամեծ միջոցառումը պետք է համարել երեք փորձակայտների կազմակերպումը Տյուրոսում, Թերուլում և Ալ-Արդում: Կիբանանի կառավարությունը տրամադրեց անհրաժեշտ հողատարածությունը, որոշ կառույցներ և իր վրա վերցրեց ծախսերի մի մասը²: Խսկ ամերիկացիները ցուցադրում են նորագույն գյուղատնտեսական մեթոնները, ոռոգման նոր մեթոդները, կառուցում են գոմ, սիլոսի աշտարակներ և այլն: Միսիայի պարտականությունների մեջ էր մտնում նաև տեղացիներին սովորեցնել այդ նույն մեթոնների հետ վարվելու եղանակը և տիբապետել գյուղատնտեսական աշխատանքների մեթոդներին: Սակայն ամերիկացիները այդ ուղղությամբ շատ քիչ աշխատանք էին տանում: Նրանք շահագրգուշ շեխին իրենց փորձը հաղորդել լիբանանցիներին: Ուստի պատահականություն չէ, որ, ինչպես նշում է Ն. Բըրնսը, երբ 1955 թ. Թերուլի փորձակայտնը հանձնվեց կիբանանին, ապա այնտեղ շկային տեխնիկական որակվում ունեցող աշխատողներ, որպեսզի աշխատանքը կատարեին պատշաճ կերպով³: Ինչպես նշեցինք, միսիան կառուցեց նաև ցուցադրական գոմ ժամանակակից տեխնիկայով Նրա արժեքը էր 128 հազար դոլար: Ամերիկյան քաղաքական մեկնարան Զ. Սոկոլսկին անդրադառնարով դրան և նշերվ, որ 128 հազար դոլարի արժողությամբ գոմը ցուցադրվում է տարեկան 100 դոլար եկամուտ ունեցող լիբանանյան գյուղացում, որում էր «ինչպիսի անհեթեթություն»: Լիբա-

¹ «Политика США на Арабском Востоке», стр. 171.

² N. Burns, Technical assistance in the Middle East, p. 119.

³ Նույն տեղում:

նախան գյուղացիները նայելով այդ զոմին պետք է ասեն, թե որ խարեւան է դա արել... Եվ, ձեռքը դնելով սրտին, խոստովանեցեք, թե արդյոք շատ կան ամերիկյան ֆերմերներ, որոնք ունեն 128 հազար դոլար արժողությամբ գոմա¹:

«4-րդ կետից միսիան բավականին լայն իրավունքներից էր օգտվում: Նա նույնիսկ բռնագրավում էր գյուղացիների հողաբաժինները, նրանց վրա «փորձեր» կատարելու նպատակով: Լիբանանի պառլամենտի անդամ Աղիք Ֆերգելին պաշտոնապես հայտարարեց, որ «4-րդ կետից վարչությունը բռնի ուժով կլուրացնե հողաբաժիններ այդ շրջանին (Բեքաայի — Ն. Հ.) մեջ, բայց կամո որոշելով հողին արժեքինը:

Անոնք, որ կմերժեն հանձնել իրենց հողը գեշ վարմումը, կենթարկվին «4-րդ կետից պաշտոնյաներուն կողմեա²:

Պարզ է, որ այսպիսի միջոցներով ու մեթոդներով չեր կարելի զարգացնել լիբանանի գյուղատնտեսությունը: Նրա զարգացման և գյուղացիության վիճակի բարելավման համար անհրաժեշտ էր փոխել ազգարային հարաբերությունները և վերացնել ֆեոդալական սեփականությունը: Ամերիկացիները ոչ միայն շահագրգուլած չեին այդ միջոցառումների կիրառման մեջ, այլ, ընդհակառակը, ինչպես նշում է Անդրե Լեբերժին, «ամերիկյան կառավարությունը սերտողին համագործակցում է այդ ֆեոդալական փոքրամասնության հետաց³:

Մենք արդեն նշել ենք, որ ամերիկյան «օգնությունը» չեր նախատեսում կապիտալ ներդրումներ կատարել և չեր կազմում արդյունաբերական օրյեկտների կառուցման նախագծեր:

Ամերիկյան «օգնությունը» լրիվ և հաջող իրագործվում էր այն բնագավառներում, որոնք ունեին ստրատեգիական և ուղղմական նշանակություն, ինչպես օրինակ, ավտոստրադաների, օգանակակալայանների կառուցում, Թեյրութի և Տրիպոլիի նավահանգիստների ընդլայնում և այլն: 1954—1956 թթ. այդ միջոցառումների վրա ծախսվեց 12,6 մլն. դոլար կամ «օգնության» համար տրամադրված ամբողջ գու-

1 «Политика США на Арабском Востоке», стр. 172.

2 «Արարատ», 21 նոյեմբերի 1953 թ.

3 „Le Moyen-Orient“, 1951, № 23.

մարի 50 տոկոսը¹: Այստեղ զարմանալու ոչինչ չկա, որովհետև, ինչպես նշել է Լիբանանում «Ք-րդ կետի» միսիոնիր ղեկավար Պիտերը, Լիբանանին և արաբական մյուս երկրներին ցույց տրվող ամեն մի ռօգնություն պայմանավորված է կողեկտիվ անվտանգության ծրագրի պահանջներով:

Այս բալորից պարզ երևում է, որ «Տրումենի ռոկորդինայի» իսկական նպատակն էր ոչ թե նպաստել Լիբանանի և մյուս թույլ զարգացած երկրների տնտեսության զարգացմանը և քարելավել աշխատավորական մասսաների վիճակը, այլ ներթափանցել Լիբանանի տնտեսության մեջ, միջամտել նրա ներքին գործերին, ուժեղացնել ամերիկյան իմպերիալիզմի դիրքերը այնտեղ և օգտագործել այն իր ռազմաստրատեգիական նպատակների համար: «Ազգային արդյունաբերության փրկությունը ու նրա զարգացման ուղիների ապահովումը, — գրում է Յ. Հելուն, — երբեք շեն կարող իրականանալ ոչ «Ք-րդ կետի» և ոչ էլ ամերիկյան ռօգնությունների» ու «վարկերի» միջոցով²: Լիբանանի տնտեսության զարգացմանը կարելի է հասնել երկրի անկախության ամրապնդման, տնտեսապես իմպերիալիզմի տիրապետությունից ձերբազատվելու, ազգային արդյունաբերությունը հովանավորելու և տնտեսական ու քաղաքական կյանքում բարեփոխումներ կիրառելու քաղաքանության միջոցով:

Արաբական արևելքում ծավալված ազգային-ազատագրական շարժումները 40-ական թվականների վերջներին և 50-ական թվականների սկզբներին նոր թափ ստացան: Արաբական ժողովրդական մասսաները ցանկանում էին վերշնականապես ազատագրվել իմպերիալիզմի կապանքներից: Ըստ որում ազատագրման տակ նրանք հասկանում էին թե՝ քաղաքական և թե՝ տնտեսական ազատագրումը: 1948 և 1952 թթ. դինված ապատամբություն տեղի ունեցավ Իրաքում: Իրաքի

1 «Политика США на Арабском Востоке», стр. 172.

2 2.III.1963 «الخطاب»

դեմոկրատական ուժերը պահանջում էին վերացնել 1930 թ. անդրա-իրաքյան պայմանագիրը, ամրապնդել երկրի անկախությունը, աղղալնացնել նավթարդյունաբերությունը և այլն: 1951—1952 թթ. մասսայական լայն շարժումներ տեղի ունեցան Եղիպատոսում, որոնք շատ հաճախ վերածվում էին զինված բնդհարումների ժողովրդական զանգվածների և անգլիական իմպերիալիստների միջև: Եղիպատոսի ժողովուրդը պահանջում էր շնորհալ Հայտարարել 1936 թ. անգլո-եղիպատական պայմանագիրը և վերականգնել Եղիպատոսի օրինական իրավունքները Սուեդի ջրանցքի վրա: Երկրի անկախությունը ամրապնդելու և իմպերիալիզմից տնտեսապես ազատագրվելու համար իրենց պայքարը ակտիվացրին Սիրիայի և Լիբանանի դեմոկրատական ուժերը: Նման լարված վիճակ էր ստեղծվել նաև արարական մյուս երկրներում:

Հակախմապերիալիստական պայքարի այս նոր վերելքը լուրջ սպառնալիք էր ստեղծում իմպերիալիստական պետությունների ազդեցությանը: Նա հարցականի տակ էր զնում նրանց տիրապետությունը Մերձավոր արևելքի այդ շրջանում: Այդ բանը, անշուշտ, հասկանում էին արևմտյան իմպերիալիստական տերությունները: Ուստի նրանք ազգային ազատագրական շարժումները ճնշելու և արարական երկրներում իրենց դիրքերը պահպանելու համար նոր միջոցներ ու ուղիներ են փնտրում և հրապարակ նետում զանազան ծրագրեր ու պլաններ: Այդ նոր միջոցների մեջ իմպերիալիստական տերությունները մեծ տեղ էին հատկացնում տարրեր ընույթի ուղմական խմբավորումներ ստեղծելու ծրագրերին, որ տարրեր անվան տակ նրանք առաջ էին քաշում 50-ական թվականների սկզբներին: Արարական երկրներ էին այցելում մերթ անգլիական և մերթ ամերիկյան ուղմական ու քաղաքական գործիչները, որոնք փորձում էին համոզել արարական երկրների կառավարություններին մտնել այդպիսի ուղմական խմբավորումների մեջ: Այդ նպատակով 1951 թ. սկզբներին արարական մի շարք երկրների մայրաքաղաքներն այցելեց Միջին արևելքում անգլիական ցամաքային ուժերի գլխավոր հրամանատար զեներալ Ռոբերտսոնը և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրության արևելյան բաժնի ղեկա-

վար Ֆերլոնջը: Փետրվարի 5-ին նրանք ժամանեցին Թեյրութ, և հանդիպումներ ունեցան պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրի և լիբանանյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Շիհարի հետ: Նրանց միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ շոշափվեցին ռազմական և քաղաքական տարրեր խնդիրներ: Գեներալ Մորերտսոնը փորձում էր իմանալ, թե ինչ չափով է Լիբանանը ցանկանում մասնակցել ծրագրվող «Մերձավոր արևելքի պաշտպանական բլոկում» և պարզել կիրանանի ռազմական ու տնտեսական հարավորությունները¹: Անգլիան ցանկանում էր, որ Լիբանանի մասնակցությունը այդ բլոկին լինի ոչ թե սիմվոլիկ, այլ իրական: Անգլիական գեներալը ձգտում էր հասնել այն բանին, որ Լիբանանի ու արաբական մյուս երկրների կառավարությունները համաձայնվեն «անհրաժեշտության» գեպքում թույլատրել իրենց տերիառիաները «դաշնակիցների» գործերը մտցնել: Սա փաստորեն նախկին գաղութային ռեժիմը վերականգնելու քողարկված փորձ էր: Արևմտյան իմպերիալիստները ցանկանում էին սօրինական» օկուպացման իրավունք ձեռք բերել:

Ռոբերտսոնի և Ֆերլոնջի այցելությունը խոր դժուճություն առաջացրեց Լիբանանում: Առաջադեմ գործիչների մի պատվիրակություն այցելեց պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին և գուշացրեց նրան, որ Լիբանանի վրա մեծ վտանգ է կախվել, որ շաբետք է թույլ տալ նրա օկուպացումը արևմտյան տերությունների կողմից: Պրեզիդենտը պատվիրակությանը պատասխանեց, որ բոլոր լիբանանցիները հանդես են գալիս հանում երկրի անկախության և օտարերկրյա օկուպացման դեմ: «Սակայն,— ավելացնում է նա ձեռքերը թափահարելով, — ինչ կարող ենք անել մենք, եթե օկուպացիան իրականացվի բռնի ուժով»²: Պատվիրակության անդամները նրան պատասխանում են, որ հարկավոր է բոլոր ընդդիմադիր ուժերը միավորել և ստեղծել ազգային ճակատ: Պրեզիդենտը լսում է և նրանց այս դիտողությանը ոչինչ չի պատասխանում, ելք դա պատահական չէր: Պրեզիդենտը և կառավարող շրջաններից

¹ 5.II.1951 «بیروت»

² 8.II.1951 «الهدف»

շատերը կապված էին արևմտյան տերությունների և մոնուպոլիստական ընկերությունների հետ: Բեռն նրանք չէին համարձակվում բացահայտորեն հանդես գալ իմակերիալիստական պլանների պաշտպանությամբ, բայց այդ պլանների գեմէլ ակտիվ պայքար շէին մղում, ցուցաբերում էին մնջ տառանումներ:

Լիբանանի կառավարությունը ենթադրելով, որ ցույցեր կարող են լինել Ռուբերտսոնի այցելության դեմ, ձեռք առավելապես շական միջոցառումներ, Նա մորիլիկացրեց ոստիկանությանը և ժանդարմերիան: Բացի այդ, Նա Բեյրութ բերեց լրացուցիչ զինվորական մասեր: Չնայած դրան փետրվարի 5-ին Բեյրութում տեղի ունեցավ բողոքի ցույց, որը ոստիկանությունը ճնշեց զենքի օգնությամբ: Բեյրութցիները կրկին հանդես եկան փետրվարի 7-ին: Նրանք կրում էին հակաանգլիական և հակաամերիկյան լոգումներ¹: Բողոքի ալիքը Բեյրութից տարածվեց երկրի բոլոր վայրերը: Ցույցեր տեղի ունեցան Տրիպոլիում, Սայդայում, Զահլեյում և մյուս վայրերում: Բերթերը տպեցին Լիբանանի տարբեր շրջանների՝ Տրիպոլիի, Տյուրոսի, Բաալբեկի, Բեշմեղինի և այլ վայրերի աշխատավորների բողոքի հեռագրերը: Փետրվարի 10-ին հրապարակվեց Լիբանանի խաղաղության կողմնակիցների կողը, որտեղ ասված էր, որ ռոշ մի բան չի կարող արդարացնել Ռուբերտսոնի մեր երկիր այցելությունը: Մենք հայտարարում ենք, որ հրաժարվում ենք որևէ պայմանագրով մեր երկիրը կապել այնպիսի բլոկի հետ, որի նպատակն է մեր երկիրը ներգրավել պատերազմի մեջ, գրավել մեր օդանավակայանները, նաևհանդիսանելու, օկուպացնել և այն դարձնել պատերազմի թատերաբեմը²:

Ժողովրդական այս լայն շարժման ներքո Ռուբերտսոնը հարկադրված էր հեռանալ Լիբանանից իր հետ կոնկրետ ոչինչ լտանելով: Լիբանանի կառավարող շրջանները վախճառալով դեմոկրատական ուժերի ընդլառումից շհամար-

¹ «Արարատ», 8 փետրվարի 1951 թ.

² 10.11.1951، دالشـقـة

ձակվեցին որևէ կոնկրետ պայմանով կապվել անզիստոն պահանջների հետ:

Ռոբերտսոնի մեկնումից հետո Թեյրութ և Դամասկոս այցելեց ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի Մերձավոր արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի գործերի վարչության պետ Մաքդին, Նրա այցելության նպատակն էր, բացի պաշտպանական բլոկից համար հող նախապատրաստելուց, շեղոքացնել անգլիական գեներալ Ռոբերտսոնի այցելության աղդեցությունը: Ամերիկյան իմպերիալիստաները վախճառում էին, որ գեներալ Ռոբերտսոնին կհաջողվի ստեղծել սիրիա-Հորդանանական-իրաքյան միացյալ բանակ: Իսկ դա կուժեղացներ Անգլիայի դիրքերը Արարական արևելքում ի վեաս ամերիկյան շահերի:

Լիբանանի դեմոկրատական ուժերը հասկացնել տվին Մաքդինն, որ իրենք թանկ են գնահատում Լիբանանի անկախությունը, որ նրանք այդ հարցի շուրջը երբեք չեն սակարկի և պատրաստ են մինչև վերջը պաշտպանել երկրի պաշտպանությունն ու անկախությունը: Նրանք հայտարարեցին. «Մենք մեզ կնկատենք բոլորովին ազատագրված օտար մանդատներն և մենք երբեք չպիտի ընդունինք նորեն օտարի լուծի տակ իշխալ, Ժողովուրդը պատրաստ է մինչև իր արյան վերջին կաթիլը պաշտպանել իր անկախությունը»¹:

Թե՛ Ռոբերտսոնի և թե՛ Մաքդին արարական երկրներ կատարած այցելությունների նպատակն էր հող նախապատրաստել նրանց ռազմական խմբավորումների մեջ ներդրավելու համար, ընդդիմադիր ուժերին շեղոքացնել և իրենց համակիրներին հավատ ու վստահություն ներշնչել:

Նախատեսելով ռազմական բլոկների ստեղծում, ամերիկյան իմպերիալիստները գտնում էին, որ այդ գործությունների դերը պատկանելու է իրենց, որ Անգլիայի դարը անցել է և նա չի կարող առաջվա նման առաջին ջութակ լինել, Ամերիկյան հայտնի տեսարան Սույուարդ Օլսուար իր և ԱՄՆ-ի քաղաքականությունը Միջին արևելքում հողվածում բացահայտ գրում էր. «Անգլիան այլևս մենակ չի կարող տի-

1 «Արարատ», 31 մարտի 1951 թ.

բապետել այս շրջանում¹: Նա նշում էր, որ անգլիական կառավարման ավանդական սիստեմը փլում է և հարկավոր են նոր մեթոդներ ու նոր ուժեր: Այդ նոր ուժը, որ աստիճանաբարար, բայց անողոք դուրս էր մղում անգլիական իմպերիալիզմին Մերձավոր ու Միջին արևելքից, ամերիկյան իմպերիալիզմին էր: Սա վկայում էր ուժերի նոր փոխարարերության մասին: Դրա արտահայտությունն էր նաև այն, որ հիմա Մերձավոր ու Միջին արևելքի նկատմամբ առաջարկող զանազան պլանների ու ծրագրերի հեղինակը միայն Անգլիան չէր, ինչպես դա տեղի էր ունենում մինչև 50-ական թվականների սկիզբը: Այժմ Անգլիան ստիպված էր հաշվի առնել նաև ԱՄՆ-ի շահերը և ցանկությունները: Հենց դրանով պետք է բացատրել այն փաստը, որ «միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու պլանը առաջ քաշվեց ոչ միայն Անգլիայի կողմից, այլ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Բուրբոնիայի կողմից:

1951 թ. Հոկտեմբերի 13-ին վերոհիշյալ պետությունները դիմեցին Եգիպտոսին, Սիրիային, Լիբանանին, Իրաքին, Սաուդյան Արարիային, Եմենին, Հորդանանին և Իսրայելին ումիջինարևելյան հրամանատարությունը ստեղծելու առաջարկով: Նրա մեջ պետք է մտնեին նաև Ավստրալիան, նոր Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան միությունը, թեև նրանք ոչ մի առնշություն չունեին Միջին արևելքի պաշտպանության հնատ և նրանից հեռու էին մի քանի հազար կիլոմետր:

Չորս պետությունները առաջարկում էին արարական երկրները և Իսրայելը արտաքին ազրեսիայից պաշտպանելու նպատակով հիմնել միջինարևելյան հրամանատարություն, որի նստավայրը պետք է լիներ Կահիրեն: Բայ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Բուրբոնիայի պլանի Մերձավոր ու Միջին արևելքի երկրների ռազմական ուժերը պետք է ենթարկվեին այդ հրամանատարությանը: Նրա տրամադրության տակ պետք է դրվեին այդ երկրների ռազմական բազաները, նաև անգլիական ստանդարտները և կոմունիկացիաները: Միջինարևելյան հրամանատարությունը պետք է իրավունք ունենար օտար-

¹ «New York Herald Tribune», 16.XII.1951.

երկրյա ռազմական ուժեր տեղադրել այդ երկրների տերիտո-
րիաներում: Նա պետք է կապ հաստատեր Հյուսիս-ատլանտ-
յան պակտի հետ¹:

Խնդպես տեսնում ենք «միջինարևելյան հրամանատա-
րությունը» դա Մերձավոր ու Միջին արևելքի երկրները
արևմայան իմակերիալիստական պետությունների ողորմա-
ծությանը հանձնելու, նրանց ռազմական օկուպացիայի են-
թարկելու պլան Քր:

Այդ հրամանատարության ստեղծման անհրաժեշտու-
թյունը արևմայան իմակերիալիստական պետությունները փոր-
ձում էին հիմնավորել նրանով, որ իր Մերձավոր ու Միջին
արևելքի երկրներին սպառնում էր Սովետական Միությու-
նը: Այդ սխալ տեսակետը պաշտպանություն գտավ մի շաբ
բուրժուական պատմաբանների կողմից: Զ. Հուբեկիցը արդա-
րացնելով շորս պետությունների իմակերիալիստական քայլը
գրում էր, որ «գաշնակիցները մտահոգված էին իրենց ան-
վտանգությունը ՍՍՀՄ-ից ապահովելու հարցով»²: Երևակա-
յական ռազմական ագրեսիվիտե մասին է խոսում նաև
Հ. Հոսկինսը: Նա նշում էր, որ Ֆրանսիայի կողմից իր տիրա-
պետությունները կորցնելու, Անգլիայի դիրքերը թուլանալու
և միջինարևելյան պետությունների անկայումության պատ-
ճառով Մերձավոր ու Միջին արևելքում առաջացել էր վա-
կուսմ, որը Ռուսաստանին ուղղակի հրավիրում էր միջամտել
այդ երկրների գործերին³: Նա գտնում էր, որ զա լուրջ վտանգ
էր ներկայացնում Մերձավոր ու Միջին արևելքին և ամբողջ
սաղատ աշխարհին, հետևաբար, արևմայան տերությունները
պարտավոր էին միջոցներ ձեռք առնել իրենց անվտանգու-
թյունը ռազմաշառանքու համար:

Այս տեսակետը միանգամայն սխալ է ու մտացածին:
Իրականում Սովետական Միությունը երբեք չի սպառնացել
Մերձավոր ու Միջին արևելքի կամ որևէ այլ շրջանի երկրնե-

¹ Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914—1956, vol. II. p. 330.

² Նույն տեղում, էջ 329.

³ H. Hoskins, The Middle East problem area in world politics, p. 275.

րին: Սովետական ազգեսիայի վերաբերյալ «թեզը» անհրաժեշտ էր արևմտյան տերություններին իրենց իմպերիալիստական պլանները քողարկելու համար: Դա լոկ մի պատրվակ էր նրանց ձեռքին արարական երկրների վրա իրենց ռազմական հսկողությունը սահմանելու համար:

Իրականում «միջիննարևնելլան» հրամանատարության պլանը առաջ բաշելու իսկական մոտիվները թաքնված էին հետևյալում:

Արարական երկրներում ծավալված աղքային ազատադրական շարժումները հարցականի տակ էին դնում արևմտյան տերությունների դիրքերը Մերձավոր ու Միջին արևելքում: Ժողովրդական մասսաների և հատկապես բանվոր դասակարգի հակամապերիալիստական պայքարը քանի դնում ուժեղանում և առնականանում էր: Իմպերիալիստական պետություններն ի վիճակի չեին առանձին-առանձին հաշվեհարդար տեսնել ժողովրդական ելույթների հետ և կանգնեցնել աղքային ազատագրական շարժման ալիքը: Սայուարդ Օլսոպը զրում էր. «... որպեսզի կանգնեցվի Միջին արևելքի տրոհման պրոցեսը նախքան նրա գնալը Զինաստանի ուղիով, Միացյալ Նահանգները պետք է իրենց ապահովեն աղքեցության լծակով այս բացառիկ կարևոր շրջանում»¹: Ս. Օլսոպի խոսքերից պարզ երևում է, որ ամերիկյան իմպերիալիստների մտահոգության առարկան արարական ժողովրդական պայքարի կանխումն էր ու նրա հետագա զարգացման արգելակումը: Ահա այդ խնդրի իրականացման համար արևմտյան տերությունները վճռեցին միասնական ճակատով հանդես գալ, քանի որ դա շոշափում էր նրանց բոլորի շահերը և հրապարակ նետեցին «միջինարևնելլան» հրամանատարության ստեղծման պլանը: «Միջինարևնելլան» հրամանատարության առաջին և կարևոր խնդիրը աղքային ազատագրական շարժումների ճնշումն էր: Սակայն դա միակը չէր: Մերձավոր ու Միջին արևելքը հետաքրքրություն էր ներկայացնում արևմտյան տերություններին նաև ստրատեգիական դիրքի, նյութական և մարդկային

¹ «New York Herald Tribune», 16. XI. 1951.

ռեսուլյանների տեսակետից: Ամերիկյան վիցե-ազմիրալ Ռ. Լիբրին իր «Մերձավոր արևելքի ռազմաստեղիական կարևորությունը» հոդվածում գրում էր, որ Մերձավոր արևելքը մեծ նշանակություն ունի ռազմա աշխարհին համար: Նրա այդ նշանակությունը կայանում է նրա դիրքի և նյութական ռեսուրսների մեջ¹: 1952 թ. ղեկտեմբերին արտաքին հարաբերությունների հարցերի խորհրդի Զիկագոյի մասնաճյուղում «ԱՄՆ-ի քաղաքականությունը Միջին արևելքում» զեկուցումով հանդես եկավ ԱՄՆ-ի պետական քարտուղարի Մերձավոր արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի գործերի գծով տեղակալ Հենրի Բայրոուդը: Նա ներկաներին բացատրեց թե ԱՄՆ-ը իր քաղաքականության մեջ ինչ տեղ է հատկացնում Մերձավոր արևելքին և ինչ իմաստով է նա ԱՄՆ-ին հետաքրքրություն ներկայացնում: Հ. Բայրոուդը բացեիրաց հայտարարեց, որ այդ շրջանի կարևորությունը կայանում է նախ և առաջ նրա ստրատեգիական կարևոր դիրքի մեջ, նա նշեց, որ այդ իմաստով նա առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում Արևելքի և Արևմուտքի միջև մղվող պայքարում, այդտեղից են անցնում կարևոր միջազգային ավիագծերը, Սուեզի ջրանցքը և այլն: Այնուհետև Հ. Բայրոուդը ընդգծեց Մերձավոր արևելքի նյութական ռեսուրսների կարևորությունը և հատկապես նավթային հսկայական պաշարների առկայությունը: Նա հատկապես ուշադրություն դարձեց այն հանգամանքի վրա, որ այստեղ գտնվում են նաև իր հետախուզված համաշխարհային պաշարների համարյա կեսը: Եվ վերջապես նա խոսում է Մերձավոր արևելքի մարդկային ռեսուրսների մասին, նշելով, որ այդ երկրներում ապրում է մոտ 65 մլն. մարդ²:

Այսպիսով, Մերձավոր ու Միջին արևելքի երկրները Արևմուտքին պետք էին որպես ստրատեգիական բազա ուղղված ՍՍՀՄ-ի դեմ: Նա ձգտում էր նրանց մարդկանց օգտագործել որպես թնդանոթի միս ապագա պատերազմում և բացի այդ իր ձեռքից բաց շթողնել այդ շրջանի նյութական

¹ „Tensions in the Middle East“, Baltimore, 1958, p. 32.

² «Бюллетень Государственного департамента США», 15 декабря 1952 г.

Հարստությունները և առաջին հերթին նավթը, Ահա այս խընդիրներն էր կոչված իրականացնել «միջինարևելլան հրամանատարությունը» և ոչ թե կանխել «ոսպնտական ադրբեսիան», որն իրականության մեջ գոյություն չուներ:

Թամալ Զունիրյառը իրավացիորեն նշում էր, որ արեմը տ-
յան իմակերիալիստական տերությունները առաջ քաշելով Մի-
ջին արիելիքի ռոպաշտականողականք ծրագիրը նպատակ ունե-
ին ռոպարիսապ կանգնեցնել Սովետական Միության տերիտո-
րիայի շուրջը ու բոլորովին էլ նպատակ չունեին զորացնել
արարական պետություններին և նրան հնարավորություն
տայու դիմագրավել Խորայիշին ու իմակերիալիքմի ռավերութ-

1951թ. նոյեմբերի 21-ին Սովետական կառավարությունը նոտաներ հանձնեց Լիբանանի, ինչպես նաև Եգիպտոսի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի, Օմենի և Խորայի լի կառավարություններին։ Իր նոտայում Սովետական կառավարությունը բացահայտում էր «միջինարևելյան հրամանատարության» ստեղծման իսկական պատճառները և ցույց տալիս, որ նա ընդհանուր ոչինչ չունի Մերձավոր ու Միջին արևելյան անվտանգության պաշտպանության և այդ շրջանի երկրների ազգային շահերի հետո Սովետական կառավարությունը նշում էր, որ «միջինարևելյան հրամանատարության» ստեղծումը նշանակում էր Մերձավոր ու Միջին արևելյան օկուպացում Ալյանտյան բլոկի երկրների զինվածութերի կողմից, որը «չէր կարող շասցնել այդ երկրների կողմից իրենց անկախության և գերիշխանության կորցնելուն»։ Իր նոտայում Սովետական կառավարությունը անհեթեթությունը էր համարում այդ ուղղմական խմբավորումը ստեղծելը արտաքին «ազգեսիայի» սպառնալիքով՝ արդարացնելը, Սովետական Միությունը զգուշացնում էր արարական երկրների կառավարություններին և ժողովուրդներին շխարվել ու շհավատալ իմակներիալիստական հերուլանքներին։ Փայտ կապացությամբ, — առված էր նոտայում, — Սովետական կապացությամբ, — առված էր նոտայում, —

^١ كمال جنبلاط، حقيقة الثورة اللبنانية، ص ٥٢.

² «СССР и Арабские страны», стр. 105.

ռայլարությունը անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանրահայտ փաստը, որ Սովետական կառավարությունը Սովետական պետության գոյության առաջին խնկ օրերից հասկացողությամբ ու համակրանքով է վերաբերվել Արևելքի ժողովուրդների գլուխամբներին և նրանց պայքարին հանուն աղջային անկախության ու գերիշխանության¹:

1951 թ. նոյեմբերի 24-ին Սովետական կառավարությունը նոտաներ հղեց նաև ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարություններին, նշելով, որ նրանք ուղղում են օկուպացնել Մերձավոր ու Միջին արևելքի երկրները և նրանց վերածել իրենց ռազմական պլացդարմին, Սովետական կառավարությունը հայտարարում էր, որ ինքը ռանցրաժեշտ է համարում հրավիրել ԱՄՆ-ի կառավարության ուղաղությունը այն բանի վրա, որ նա չի կարող անցնել այդ նոր ազգեսիվ պլանների կողքից, որոնք արտահայտվում են միջինարևելյան հրամանատարության ստեղծման մեջ այն շրջանում, որը դժոնվում է Սովետական Միության սահմաններից ոչ հետուաւ²: Նա հետագա բարդությունների համար ամրող պատասխանատվությունը զնում էր ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարությունների վրա:

Սովետական կառավարության այս երկու նոտաները մեծ շափով օգնեցին Մերձավոր ու Միջին արևելքի երկրների կառավարություններին ու ժողովուրդներին ճիշտ կողմնորոշվելու և արևմտյան պետությունների իմացերի ալիստական պլաններին դիմադրություն ցույց տալու գործում:

Պետք է նշել, որ արաբական երկրների, այդ թվում նաև Լիբանանի ժողովուրդները և առաջադիմ գործիչները չէին հավատում ուսովետական ազգեսիային վերաբերյալ առասպելներին: Ընդհակառակը, նրանք լավ էին ճիշում, որ արաբական երկրների նեղ օրերին Սովետական Միությունը միշտ էլ օգնության ձեռք է մեկնել նրանց:

Լիբանանի Ազգային համագումարի նախագահ Սալիմ Բղորիսը իր հայտարարություններից մեկում մերկացնելով

¹ «СССР и Арабские страны», стр. 105.

² Նույն տեղում, էլ 108,

ոսովետական ազրեսիային վերաբերյալ արևմտյան իմպե-
րիալիստների հերցուրանքները, նշում էր. «ևս չեմ տեսնում,
թե Ռուսաստանը մեզ սպառնում է»: Ընդհակառակը, նա մեզ
պաշտպանել է, մեզ համար ամենակրիստիկական պահերին:
Նա մեր նկատմամբ միայն փոխադարձ հասկացողություն և
բարի մտադրություններ է հանդես բերել և մեզ օգնություն է
ցույց տվել, մինչդեռ արևմտյան տերությունները միայն ժո-
ղովուրդների ստրկացման են ձգումաւ¹: Լիբանանի խաղա-
ղության կողմնակիցների հայանի ղեկավարներից մեկը՝
Ժաննան հայտարարեց, որ «միջինարևնլան հրամանա-
տարությունը մի ազրեսիվ պակտ է ուղղված արարական
ժաղովուրդների ազգային ազատագրական շարժումներին,
ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների դեմ»: Նա նշեց,
որ Սովետական Միությունը լիբանանում և արարական մյուս
երկրներում շումի ոչ մի կոնցեսիա, ոչ մի բազա, ոչ մի շա-
հագործողական ընկերություն և չի սպառնում նրանց: Սպառ-
նալիքը գալիս է միայն ու միտյն Արևմուտքի իմպերիալիս-
տական պետություններից²:

«Սովետական ազրեսիային վերաբերյալ «Թեզի» մեր-
կացմամբ հանդես եկավ նաև լիբանանի մամուլը, «Աշ-Շարք»
թերթը գրում էր, որ «...արարական ժողովուրդների և Սովե-
տական Միության ժողովուրդների միջև թշնամանքի և լար-
ված հարաբերությունների ոչ մի պատճառ գոյություն շումի,
որովհետեւ Սովետական Միությունը լի օկուպացնում արա-
րական աշխարհի ոչ մի մասը»³, իսկ «Ալ-Իթթիհադ ալ-Լյութ-
նանիյա» թերթը նշելով, որ շրոս պետությունները արարա-
կան երկրների նկատմամբ Ռուսաստանին անհիմն են վերա-
դրում ազրեսիվ նպատակներ, գրում էր. «Ի պատասխան դրա
մենք հայտարարում ենք, որ համաձայն իր ավանդություն-
ների Ռուսաստանը լի կովում իր ընդարձակ տերիտորիայի
սահմաններից դուրս և նա շումի ոչ մի տերիտորիալ և գա-
ղութարարական հավակնություններ: Ռուսաստանը ոչ ոքի չի

¹ 11.XI.1951 «المرخصة».

² 21.X.1951 «كل شيء»، بيروت.

³ 16.X.1951 «الشرق».

սպառնումք¹; Այսպիսի փաստերը շատ շատ են, Սակայն այսքանն էլ բավարար է հաստատելու, որ կիրանանի ժողովը բարդական զանգվածները, առաջադեմ գործիչները և մամուլը չեն հավատում և ուղեցնելուն սպառնալիքներից գոյությանը; Հետևաբար, նրանց համար անընդունելի էր այն վերսիան, որ «միջինարևելյան հրամանատարությունը» ստեղծվում էր արարական երկրներին «սովետական հարձակումից» որաշտպանելու համար; Այլ կերպ ասած վերանում էր նաև այդ ռազմական խմբավորմանը՝ միանալու անհրաժեշտությունը:

«Միջինարևելյան հրամանատարության» պլանը, ինչպես նշվեց, նախատեսում էր ռազմա-օդային և ռազմա-ծովային բազաներ ստեղծել արարական բոլոր երկրներում; Այդ պլանի համաձայն կիրանանում նրա, ավելի ճիշտ ԱՄՆ-ի, Անդրիայի և Ֆրանսիայի տրամադրության տակ էին գրվելու ջունիայի (Բեյրութից ոչ հեռու) և Սուրի ռազմա-ծովային բազաները, Ռայյակի ռազմա-օդային բազան, ինչպես նաև մի հողամաս Մերձարևում՝ ցամաքային զորքերի համար բազա կառուցերու նպատակով²; Արևմտյան տերությունները՝ միաժամանակ պնդում էին, որ իրենց իրավունք տրվի արարական երկրներում ատոմային զենքի պահպաններ կառուցել³; Բացի սրանից, ինչպես նշում էր «Աթ-Թայար» թերթը Անկարայի խորհրդակցությունում, որտեղ որոշվեց արարական երկրներին առաջարկել մտնել «միջինարևելյան հրամանատարության» մեջ, ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան համաձայնության էին եկել, որ պատերազմի կամ նրա վտանգի դեպքում ԱՄՆ-ը կօկուպացնի հորայելը, Անգլիան՝ Եգիպտոսը, իսկ Ֆրանսիան՝ Սիրիան և կիրանանը⁴:

Այս բոլորը կասկած չէին թողնում, որ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան հետապնդում էին ակնհայտ իմպե-

¹ 14.XI.1951 «الاتحاد اللبناني»

² 14.XI.1951 «البيرق»،

³ 31.X.1951 «الشرق»،

⁴ 20.X.1951 «الطباطب»، بيروت،

բիւլիստական նպատակներ և որոշել էին ինչ գնով էլ լինի ռկուպացնել Մերձավոր ու Միջին արևելքի երկրները:

Խոկ ի՞նչ դիրք գրավեցին կիրանանի տարրեր քաղաքական ուժիրը՝ «միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու շրու պետությունների առաջարկության նկատմամբ:

Կիրանանում կային ուժեր, որոնք բացահայտ հանդես եկան այդ առաջարկության պաշտպանությամբ: Դրանք հիմնականում կումպարադրական բուրժուազիայի, ինչպես նաև ֆեոդալ-կալվածատերների որոշ շրջանների ներկայացուցիչներն էին, որոնք կապված էին արևմտյան իմպերիալիստների հետ և որոնք առ ու սարսափի մեջ էին ժողովրդական շարժման թափից ու դեմոկրատական ուժերի աճումից: Այդ ժրագրի պաշտպանությամբ հանդես եկան, օրինակ Ազգային բլոկ կուսակցությունը, հայտնի ֆինանսական տուզ, կիրանանի արտաքին գործերի պառամենտական հանձնաժողովի նախագահ Անրի Ֆարաոնը, ինչպես նաև ուրիշներ: Արտահայտելով այդ շրջանների տրամադրությունը ուշ ժողովը թիրթը 1951 թ. հոկտեմբերի 27-ին, այսինքն շրու պետությունների համատեղ առաջարկից ուղիղ երկու շաբաթ անց գրում էր, որ արարական երկրները չպետք է անտեսեն արևմտյան տերություններին: Նրանք պետք է ընդունեն, որ համատեղ պաշտպանության սիստեմը համապատասխանում է արարական երկրների ազգային շահերին: Ելնելով դրանից նա պահանջում էր ոշտապել Արևմտաքից օգնություն ստանալու գործում¹:

Ինչ վերաբերում է կիրանանի կառավարությանը, ապա նա սկզբում սպասողական դիրք գրավեց: Նա միանգամից կողմ շարտահայտվեց այդ շրու պետությունների առաջարկին, սակայն դեմ էլ շարտահայտվեց: Դա պետք է բացատրել նախ և առաջ նրանով, որ եթե կիրանանի կառավարությունը անմիշապես կողմ արտահայտվեր, ապա նրա այդ քայլը ժողովրդական մասսաների և դեմոկրատական ուժերի խոր վըրդովմունքը կառաջացներ, կուժեղացներ նրանց հակաիմպերիալիստական պայմանը: Բացի այդ կիրանանը չեր կարող

¹ Le Jour*, 27.X. 1951.

անտեսել Եգիպտոսի դիրքը այդ հարցում։ Եգիպտոսի տեսակարար կշիռը արաբական ընդհանուր հարցերի լուծման դործում բավականին մեծ էր և արաբական մյուս երկրները այս կամ այն շափով հաջվի էին նստում նրա կարծիքի հետ։ Արևմտյան տերությունները ճնշում են գործադրում կիրանանի կառավարության վրա։ Նրանց ներկայացուցիչները այցելում են կիրանանի արտաքին գործերի մինիստր Շարլ Հելուին և հայտարարում, որ «միջինարևելյան հրամանատարությունը» միևնույն է ստեղծվելու է, անկախ այն բանից Եգիպտոսը կմասնակցի թե ոչ։ Նրանք հասկացնել տվյալն, որ եթե պարագաները պահանջեն, ապա կդիմեն արաբական երկրների բռնի օկուպացման։ Արևմտյան տերությունների այս ճնշումը և սպառնալիքը իր ազդեցությունն ունեցավ որոշ քաղաքական գործիչների վրա, որոնք արտահայտվեցին հօգուտ կիրանանի «միջինարևելյան հրամանատարության» միացման։ Այդ գործիչները իրենց այդ պահանջը հիմնավորում էին նրանվ, որ արևմտյան տերությունները, միևնույն է կօկուպացնեն կիրանանը, իսկ վերջինս բավարար ուժ չունի նրանց դիմադրելու Ռւատի, նշում էին նրանք, ավելի լավ է կամավոր ընդունել չորս տերությունների առաջարկը, որը իրը հնարավորություն կտա սակարգել և ավելի ձեռնտու պայմաններով միանալ այդ պակտին։

Այս տեսակետը բացահայտ կապիտուլյանտական տեսակետ էր, որի պաշտպանները ոչ միայն շէին համատում արաբական ժողովուրդների ուժերին, այլև սարսափում էին նրանցից։ Նրանց համար «միջինարևելյան հրամանատարությունը» փրկության խարիսխ էր։

Կիրանանի կառավարությունը անմիջապես կոնտակտի մեջ մտավ Եգիպտոսի, ինչպես նաև արաբական մյուս երկրների կառավարությունների հետ։ Կարծիքների փոխանակությունից հետո նրանք որոշեցին հարցը հանձնել Արաբական լիգայի քաղաքական կոմիտեի քննարկմանը, 1951 թ. նոյեմբերի 8-ին Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Արդել Ռահման Ազզը փաշան հայտարարեց, որ «արաբական աշխարհը միահամուռ կերպով դեմ է արևմտյան տերություն-

ների կողմից առաջարկած միջինարևելյան պաշտպանական պակտինս¹: Արարական լիգայի այս դիրքը իր դրական դերը խաղաց «միջինարևելյան հրամանատարության» ստեղծման պլանի մերժման դործում: Սակայն այդ դործում հիմնական դերը խաղացին արարական ժողովրդական զանգվածները: «Միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու արևմըտյան տերությունների առաջարկին արարական բոլոր երկրների աշխատավորական մասսաները և առաջադիմական կազմակերպություններն ու գործիչները պատասխանեցին ցուցերով, բողոքներով և տարբեր բնույթի ելույթներով: Այդպիսի լայն հակաիմապերիալիստական շարժում ծավալվեց նաև կիրանանում: Այդ շարժմանը մասնակցում էին բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիայի ներկայացուցիչները, ուսանողները և այլն: Այդ օրերին Թերութի փողոցներում կարելի էր տեսնել լողունզներ, որոնք պահանջում էին հրաժարվել «համատեղ պաշտպանության» ծրագրից: Նման լողունզներ հանդիս եկան նաև Զահլենում, որի պատճառով ոստիկանությունը կատարեց մի շարք ձերքակալություններ:

1951 թ. հոկտեմբերին իր գործունեությունը վերսկսեց կիրանանի քաղաքական կուսակցությունների Ազգային համագումարը: Նա 1951 թ. հոկտեմբերի 30-ի իր նիստում ընդունեց մի շարք կարևոր որոշումներ, որոնք մեծ դեր խաղացին դեմոկրատական ուժերի հակաիմապերիալիստական պայքարի կազմակերպման դործում: Ազգային համագումարը նշեց, որ չորս պետությունների առաջարկը սպառնալիք է ներկայացնում կիրանանի անկախությանը: Ենելով դրանից և կոնքրետ հայրենիքը հայտարարում է վտանգի մեջ՝², Այդ նիստում կոնքրետ որոշեց ստեղծել ռազմատության ֆալանգներ: Դա լինելու էր կիսառազմական բնույթի մի կազմակերպություն:

Կոնքրետ սիստեմատիկ կերպով կիրանանի ժողովրդին դիմում էր կոչերով, որտեղ բացահայտում էր չորս պետու-

¹ Mohammed Shafiq Aghwani, The United States and the arab world, p. 123.

² „Le Soir“, Beyrouth, 31.X.1951.

թյունների քայլի իմպերիալիստական բնույթը և ժողովրդական մասսաներին կոչ անում ոտքի ելնել իմպերիալիստական այդ դավադրությունը ձախողելու Ազգային համագումարի կոչերից մեկում ասված էր, որ շորս պետությունների առաջարկությունը «...իմպերիալիստական հնարանք է, ուղղված արարական աշխարհում իմպերիալիզմի դիրքերի ամրապնդմանը և վերջինիս (արարական աշխարհի — Ն. Հ.) ստրկացմանը: Ազգային կոնգրեսը կոչ է անում... արգելափակել նըրանց ուղին, ովքեր փորձում են ոչնչացնել ձեր անկախությունը և ձեր ազատությունը»¹:

Արևմտյան տերությունների այս իմպերիալիստական քայլի դիմ լայն կամպանիա ժավալեցին Լիբանանի խաղաղության կողմնակիցները: Նրանք 1951 թ. հոկտեմբերի 29-ին լիբանանի պառամենտին ներկայացրին մի պետիցիա, որտեղ նշում էին, որ լիբանանի ժողովուրդը երրեք թույլ չի տա կրկին վերականգնել օտարերկրյա օկուպացման ռեժիմը և իրենց ճրկիրը վերածել կովի արենայի: Կառավարության և պառամենտի անունով լիբանանի տարրեր վայրերից ստացվում էին բազմաթիվ պետիցիաներ և հեռագրեր, պահանջելով մերժել «Համատեղ պաշտպանության» պակտ ստեղծելու առաջարկը. Այդպիսի պետիցիաներ ստացվում էին Ռահըրի, Շիյյայի, Բախառնի, Դիննիեյի, Մազրայի, Մուսեյթընյի և շատ այլ վայրերի աշխատավորական մասսաներից: Ուշադրության արժանի է Դեխա գյուղի բնակիչների պետիցիան, որտեղ ասված էր հեխա գյուղի բնակիչների պետիցիան, մերժ ասված էր աշխատավորական մասսաներից: Ուշադրության արժանի է Դեխա գյուղի բնակիչների պետիցիան, որտեղ ասված էր հետևյալը. «Մենք, Դեխա գյուղի բանվորներս և գյուղացիներս, մեզ վրա զգացնել ենք ֆրանսիական օկուպացիոն իշխանությունների բռնատիրական գործողությունները, Մեր տները քանդվեցին, մեր ինչքը թալանվեց: Մենք... մերժում ենք «Համատեղ պաշտպանության» սիստեմի ծրագիրը, որի նպատակն է արարական երկրների նոր օկուպացումը և մեր երիտասարդության ոչնչացումը, քանի որ ծրագիրը մեր քաղաքները և գյուղերը վերածում է պատերազմի թատերաբեմի»:

¹ 20.X.1951 «الهدف»

Այս պլանի դեմ հանգես եկան նաև կիրանանի մուխթար-
 ները¹: Նրանց կիզան պաշտոնապես բողոք հայտնեց «միջին-
 արևելյան հրամանատարության» ծրագրի դեմ: Նրա ներկա-
 յացուցիչները 1951 թ. դեկտեմբերի 2-ին այցելեցին Հանրա-
 պետության պրեզիդենտին և կիզայի անռանից հայտնեցին, որ
 ունեղ համար թանկ է մեր անկախությունը, որը մենք ձեռք
 ենք բերել ծանր զոհերի գնով և որ մենք պատրաստ ենք ամեն
 ինչ զոհարերել հանուն նրա պահպանման²: Այդ օրերին
 ցույցեր ու գործադուլներ էին լինում կիրանանի գլխավոր քա-
 ղաքներում՝ Թեյրութում, Տրիպոլիում, Սայդայում, Զահլենում,
 Սուրում և մյուս վայրերում, որին մասնակցում էին բանվոր-
 ները, գյուղացիները, ինտելիգենցիան, ուսանողությունը,
 առևտրականները, պետական հիմնարկների աշխատադիները
 և այլն: Ազգային կոնգրեսի կոչով 1951 թ. նոյեմբերի 14-ին
 համբուղանուր գործադուլ սկսվեց կիրանանում ի պաշտպա-
 նություն Եգիպտոսի և ընդդեմ «միջինարևելյան հրամանա-
 տարության»: Այդ օրը նոյն նպատակների համար ընդհա-
 նուր գործադուլներ տեղի ունեցան նաև արաբական մյուս
 երկրներում: Նոյեմբերի 14-ին Թեյրութում, Տրիպոլիում, Սու-
 րում, Սայդայում և մյուս վայրերում փակվեցին բոլոր ձեռ-
 նարկությունները և խանութները: Շատ վայրերում տարերայ-
 նորն ցույցեր առաջացան: Գործադուլավորներն ու ցուցա-
 րարները կիրանանի կառավարությունից պահանջում էին սա-
 տար կանոնել Եգիպտոսին անզիական իմպերիալիզմի դեմ
 մղած պայքարում: Դրա հետ միասին նրանք պահանջում էին
 մերժել «միջինարևելյան հրամանատարության» իմպերիա-
 լիստական ծրագիրը և պաշտպանել երկրի անկախությունը:

Այսպիսով, կիրանանի հասարակության համարյա բոլոր
 խավերի միահամուռ կամքը և վճռական կեցվածքը կանխո-
 րուցեց կիրանանի կառավարության դիրքը «միջինարևելյան
 հրամանատարություն» ստեղծելու հարցի նկատմամբ: Նա
 արաբական երկրների մրտա կառավարությունների հետ

¹ Մուխթարը քաղաքի որևէ շրջանի մունիցիպալ իշխանության դեկա-
 զարն է:

² 3.XII.1951 «الهدف»

միասին մերժեց այդ իմպերիալիստական առաջարկությունը։ Դա կիրանանի և արարական մյուս երկրների դեմոկրատական, հակաֆիմպերիալիստական ուժերի խոշոր հաղթանակը և արևմտյան իմպերիալիստների պարտությունն էր։ Նրանք լուրջ հարված ստացան Մերձավոր ու Միջին արևելքում իրենց ազգական պլաններն իրագործելու ճանապարհին։

Բուրժուական որոշ հեղինակներ անդրադառնալով՝ «միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու արևմտյան տերությունների փորձերի ձախողմանը ճիշտ չեն բացահայտում այդ անհաջողության պատճառները։ Այսպես, օրինակ, Զ. Թեմբելը «Միջին արևելքի պաշտպանությունը։ Ամերիկյան քաղաքականության պրոբլեմները» իր գրքում գտնում է, որ այդ փորձի ձախողման պատճառը տակտիկայի և հարցի մոռեցման մեջ էր¹։ Նա նշում է, որ արևմտյան տերությունները սխալ թույլ տվեցին, որ նախքան «միջինարևելյան հրամանատարության» ծրագրի առաջ քաշելը չփորձեցին արարական երկրների հետ քաղաքական հասկացողություն ձեռք բերել և կամ քաղաքական համաձայնագիր կնքել²։ Ձախողման պատճառների մեջ նա մտցնում է նաև Խորայելի հարցը, իրանի դաշինքի մեջ շմտնելը և այլն, իհարկե, որանք չեն այն պատճառները, որոնք 1951—1952 թթ. հասցրին արևմտյան իմպերիալիստական պլանների տապալմանը Արարական արևելքում։ Զ. Թեմբելը հաշվից դուրս է նետում արարական ժողովրդական մասսաներին։ Նրանց եռանդուն պայքարը, բոլոր հակաիմպերիալիստական, դեմոկրատական ուժերի ակտիվ ելույթները, արարական երկրների ժողովրդների և կառավարությունների շհավատալը սովորական սպառնալիքներին։ — Արանք են այն իսկական պատճառները, որոնք վիճեցրին «միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու իմպերիալիստական պլանները։

Թեև ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան 1951 թ. հաջողություն շունեցան «միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու գործում, սակայն նրանք ընդհանրապես չհրա-

¹ J. Campbell, Defense of the Middle East. Problems of American policy, New York, 1958, p. 45.

² Նույն տեղում, էլ 46.

ժարվեցին Մերձավոր ու Միջին արևելքում ռազմական խմբավորում ստեղծելու գաղափարից։ Հետագա տարիներին նրանք տարբեր ցուցանակների տակ հրապարակ են նետում «նոր» պլաններ ու ծրագրեր, որոնց նպատակը, սակայն, նույնն էր, ինչ որ նրանց նախորդինը՝ «միջինարևելլան» հրամանատարությանը։ Այսպես, 1952 թ. առաջ քաշվեց «միջինարևելլան» պաշտպանողական կազմակերպությունը, 1953 թ. «մուառլմանական բլոկ»-ի ծրագիրը և այլն։ Բայց այս «նոր» ծրագրերը նույնպես հաջողություն չունեցան։ Նրանք արժանացան նույն բախտին, ինչ որ «միջինարևելլան» հրամանատարությանը ծրագիրը։

Արևմտյան տերությունների իմպերիալիստական ծրագրերի գեմ կիրանանի արար ժողովրդի ու գեմոկրատական ուժերի հետ կողք-կողքի հանգես էին գալիս հայ աշխատավորական զանգվածները և բոլոր գեմոկրատական հոսանքները, նրանք գտնում էին, որ այդ բոլոր պաշտպանողական պլանները պատերազմի սպառնալիք են ստեղծում։ Իսկ հայ ժողովուրդը, — զրում էր «Արարատ» թերթը, — որևէ շահ շակնկալեր պատերազմին, տևած ու կրած ըլլալով անոր ծանրությունն ու դառնությունը՝ համաշխարհային երկու պատերազմի ընթացքներուն։

Հայ ժողովուրդը կողմնակից է առևտրական, մշակութային այնպիսի գաշինքներու, որոնց ընթացքին առատորեն կնոպատավորվին բոլոր ազգերը՝ առանց արյան հոսումի, պայմանույթ, որ այդ գաշնագրերը կնքվին բոլոր ազգերուն հետ անխոտիր և ոչ թե միակողմանի հղանակով։ Հայ գեմոկրատական ուժերը մի կողմէից հանդես էին գալիս ազգեսիվ ռազմական պակաների ու խմբավորումների գեմ, իսկ մյուա կողմէից պաշտպանում տնտեսական ու կուտուրական պայմանագրեր ու համաձարմագրեր կնքելու գաղափարը։ Այս էր նրանց դիրքը, որը հասկանում ու բարձր էին դնահատում կիրանանի ժողովրդական մասսաները, պետական ու քաղաքական գործիչները։ Կիրանանի պառլամենտի նախագահ Աղիլ

Օսեյրանը հայկական մի պատվիրակության ընդունելության ժամանակ ասում է. «Դուք հայերդ ազնիվ ցեղի մը զավակ եք, ես անձնապես կգնահատեմ հայ ժողովուրդը: Հայերը կիրանանի արժեքավոր բաղաքացիներն են և մեծ վարձատրության արժանի, որովհետև լիբանանցի հայերը երկրին «պարագիթները» չեն, այլ բերած եք ձեր բաժինը աշխատանքի բոլոր մարզերուն մեջ¹, Այսուհետև նշելով, որ հայերը նախկինում շատ են ենթարկվել բռնությունների ու հալածանքների և թուրքական կոտորածներից փրկվելու համար ապաստան գտել նաև կիրանանում, շարունակում է. «Հայերը կիրանանի մեջ առաջադիմության, արվեստի, ճարտարարությունի և կյանքի բոլոր գիտությանց մեջ օրինակներ հանդիսացան մեզի: Հիացումով միայն կրնամ խոսիլ հայերու մասին»²:

Անհաջողություն կրելով Մերձավոր ու Միջին արևելքում համընդհանուր ռազաշտապանողական» սիստեմ ստեղծելու գործում, սիստեմ, որը պետք է ընդգրկեր արարական բոլոր երկրները, արևմտյան իմպերիալիստական տերությունները փոխեցին իրենց տակտիկան, Նրանք որոշեցին ստեղծել ռազմական խմբավորում՝ բազկացած ավելի փոքրաթիվ պետություններից: Այդպիսին հանդիսացավ Բաղդատի պակտը, որը լույս աշխարհ նեկավ 1955 թ.: Բաղդատի պակտը ուղղված էր ազգային-ազատագրական շարժումների և սոցիալիստական երկրների, դեմ: Նա մի սպառնալիք էր ամբողջ արարտկան աշխարհին: Բաղդատի պակտը իր հսկայական վտանգներու ոչ միայն մի նոր սպառնալիք է Իրաքի ժողովրդին, այլ նաև ամբողջ արարական ազգին և Միջին արևելքի մյուս ժողովուրդներին»³:

Ստեղծելով Բաղդատի պակտը, որի մեջ մտնում էր միայն մի արարական երկիր՝ Իրաքը, իմաստերիալիստական ուժերը հույս ունեին պառակտել արարական երկրները, ճնշում գործադրել նրանց վրա և փորձել առանձին-առանձին նրանց

1 «Արարատ», 2 սեպտեմբերի 1953 թ.,

2 նույն տեղում:

3 «انتفاضة العراق الأخيرة. عرض وتحليل» بغداد ١٩٥٧

ներդրավել այդ ազբեսիվ խմբավորման մեջ։ Դրանումն էր կայանում տրևմտյան տերությունների նոր տակտիկայի էռելյումը։ Եվ, իրոք, Բաղդատի պակտի ստեղծումից հետո նրա անդամները ձնշում են գործադրում արարական երկրների և հատկապես Եղիպատոսի ու Սիրիայի վրա։

Այդ նպատակով Իրաքի պետական ականավոր գործիչ Զադիլ ալ-Զամալին 1955 թ. սկզբներին այցելեց Սիրիա, Լիբանան, Հորդանան և ապա Եգիպտոս։ Հանդիպում ունենալով այդ երկրների ղեկավարների հետ նա փորձում էր համոզել նրանց միանալ նախապատրաստվող թուրք-իրաքյան պակտին և «ինքնապաշտպանության» համար համագործակցություն հաստատել հարևան երկրների հետ։¹

Սակայն արարական երկրների մեծ մասը՝ Եգիպտոսը, Սիրիան, Սաուդիան Արաբիան, Հորդանանը և Եմենը մերժում են այդ առաջարկությունը։ Նրանք խիստ թշնամական դիրք են գրավում Բաղդատի պակտի նկատմամբ և դատապարտում Իրաքին, նրա վարքագիծը համարելով թիկումքից հասցված հարված արարական ազատագրական շարժմանը։

Թուրքովին այլ դիրք բռնեց Լիբանանի կառավարությունը և Տրումենի դոկտորինայիշ ընդունումից հետո նրա քաղաքականության մեջ ավելի որոշակիորեն էին հանդես գալիս պրոարևմտյան տեհնդենցները և նա ավելի բացահայտ էր հանդես գալիս արևմտյան իմպերիալիստական պետությունների քաղաքականության պաշտպանությամբ։ Եվ այժմ, երբ արարական երկրների մեծ մասի կառավարությունները դատապարտեցին Բաղդատի պակտը, Լիբանանի կառավարությունը, ընդհակառակը, փաստորեն հանդես էր գալիս նրա պաշտպանությամբ։ Նա դարձավ մի գործիք իմպերիալիստների ձեռքին, որի օգնությամբ նրանք փորձում էին ընդայնել Բաղդատի պակտը ի հաշիվ արարական երկրների։ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունները իրենց միացյալ հայտարարության մեջ նշում էին, որ «Լիբանանի

الدكتور محمد فاضل الجمالي، من واقع السياسة العراقية،¹

بيروت، ١٩٥٦ ص ٣٣—٣٤.

կառավարող շրջանները անտեսում են լիբանանյան ժողովրդի կամքը և համառորեն պաշտպանում թուրք-իրաքյան ուղղմական պակտը։ Վերջին ամիսներին նրանց ամրող քաղաքականությունն ուղղված է այն բանին, որպեսզի լիբանանը այդ պակտի մեջ մտցնելու համար բարենպաստ հող ստեղծեն։¹ Այդ պակտի պաշտպանությամբ հանդես էին գալիս պրոարևմբույան օրինետացիա ունեցող որոշ քաղաքական ուժեր, պարտիաներ ու խմբավորումներ։ Այսպես, ֆալանգիստների պարտիայի լիդեր Պյեր Ժմայելը իր պրես-կոնֆերանսներից մեկում հետևյալ հայտարարությունն արեց. «Լիբանանի հումար դժվար է շեզոք մնալ Անհրաժեշտ է Արևմտյան Ուկտիբին հարիչ»², լիբանանի կառավարության այդ վտանգավոր կուրսի վրա մատնացույց էին անում արաբական մյուս երկրների կառավարությունները, նրանք փորձում էին համոզել լիբանանի կառավարությանը, որ նրա այդ քաղաքականությունը հակասում է արաբական բոլոր երկրների շահերին։ լիբանանի կառավարության հետ հասկացողության հասնելու նպատակով 1955 թ. մարտի 5-ին լիբանան այցելեց եղիպատական մի պատվիրակություն՝ Սակայն Շամունը շարձագանքեց արաբական երկրների այդ քայլին, նա, ընդհակառակը, էլ ավելի ուժեղացրեց իր կոնտակտները Բաղդատի պակտի երկու մասնակիցների՝ Թուրքիայի և Իրաքի հետ։ Դրա արտահայտությունն էր այն, որ 1955 թ. մարտի 12-ին լիբանան ժամանեց իրաքյան մի պատվիրակություն արտաքին գործների մինիստրի գլխավորությամբ։ Երեք օր անց պրեզիդենտ Շամունը երկարատև զրույց ունեցավ թուրքական դեսպանի հետ, որտեղ քննարկվեց նրա Թուրքիա այցելելու հարցը³։

լիբանանի կառավարության այդ հակարաբական քաղաքականությունը խոր վրդովմունք էր առաջացնում երկրի աշխատավորական գանգվածների և դեմոկրատական բոլոր

¹ 23.V.1955، *النور، دمشق*

² «Արարատ», 18 մարտի 1955 թ.

³ Марунов Ю. В., Потемкин Ю. В., Арабо-турецкие отношения на современном этапе, 1946—1960, М., 1961, стр. 40.

⁴ Նույն տեղում։

ուժերի մոտ: Նրանք դատապարտում էին Բաղդատի պակաւը և իրենց դժգությունը հայտնում կառավարության քաղաքականությունից: 1955 թ. մարտի սկզբներին Լիբանանի Ազգային համագումարը և քաղաքական ու հասարակական կազմակերպությունները գումարեցին մի ժողով, որտեղ հանդիս եկան Լիբանանի ականավոր քաղաքական գործիչներ՝ Քամալ Ջունը առաջ, Նասիր Մեթնին, Անվար Խաթիրը, Ժորժ Հաննան, Հուսեյն Ռաֆիյին և այլն: Նրանք բոլորն էլ դատապարտեցին Թուրք-իրաքյան պակտը և կառավարությունից պահանջեցին շմիանալ որևէ ռազմական պակախի: Հուսեյն Ռաֆիյին իր ելույթում ասաց, «Մենք կապայքարենք 1950 են ի վեր Արևմուտքի հովանավորությամբ կազմվելիք Միջին արևելքի պաշտպանության դիմա»¹:

Ժողովը ընդունեց մի որոշում, որը Թուրք-իրաքյան պակտի կնքումը դիտում էր որպես արարական համերաշխության խախտում: Որոշումը դատապարտելով այդ պակտը, Լիբանանի կառավարությունից պահանջում էր հստակացնել իր դիրքը և շմամնակցել Բաղդատի պակտին և ընդհանրապես ուրիշ օտար պակտերի²:

Սակայն Շամունը, անտեսելով Լիբանանի դեմոկրատական ուժերի պահանջը 1955 թ. ապրիլի 1-ին մեկնեց Անկարա, որտեղ բանակցություններ վարեց Լիբանանը Թուրք-իրաքյան պակտին միանալու հարցի շուրջը: Բացի դրանից նա ձգտում էր այդ պակտի մեջ ներդրավել նաև արարական մյուս երկրները: Այդ բանակցությունների կոնկրետ արդյունքը եղավ այն, որ Լիբանանը իր վրա վերցրեց այդ ժամանակ Եղիպատոսի, Միջիայի և Սաուդյան Արարիայի միջև գնացող բանակցությունները ձախողելու փորձը: Այդ բանակցությունների նպատակն էր ի հակակշիռ Թուրք-իրաքյան պակտի կնքել արարական պակտը: Լիբանանը ցանկություն հայտնեց միանալ այդ պակտին, սակայն պայմանով, որ նրա մեջ մտնի

¹ «Արարատ», 13 մարտի 1955 թ.:

² Նույն տեղում:

³ Марунов Ю., Потемкин Ю., Арабо-турецкие отношения на современном этапе, стр. 41.

նաև իրաքը։ Դա փաստորեն արարական պակտը ներսից պայմանացնելու մի փորձ էր, որովհետև իրաքը ռազմական պայմանագրերով կապված էր Անգլիայի և Թուրքիայի հետ։ Դա հնարավորություն կտար նրանց ակտիվորեն միջամտել այդ պակտին, և պառակտում մտցնել նրա անգամների շարքերում։ Ուստի պատահականություն չէ, որ արարական երկրները դրական պատասխան շտվին կիրանանի այդ առաջարկությանը։

Կիրանանի կառավարական պատվիրակության այցելությունը Թուրքիա և Թուրք-կիրանանյան բանակցությունները մեծ դժգոհություն առաջացրին երկրում։ Տարբեր վայրերում տեղի էին ունենում ցույցեր, Շեմոկրատական ուժերը գումարում էին ժողովներ, հրատարակում և տարածում թուրքիկներ ուղղված Բաղդատի պակտի և կիրանանի արտաքին քաղաքականության դեմ։

1955 թ. ապրիլի 2-ին, այսինքն Շամումի Անկարա մեկնելու հաջորդ օրը, իր հերթական նիստը ունեցավ կիրանանի Ազգային համագումարը։ Նա նորից դեմ արտահայտվեց թուրք-իրաքան պակտին։ Ելույթ ունեցողներից շատերը առաջարկում էին Թուրքիայի և արևմտյան տերությունների հետ պակտ կնքելու փոխարեն, ստեղծել արարական միացյալ բանակ¹։

1955 թ. ապրիլի 3-ին Բեյրութի Բաղդամասերից մեկում՝ Բաստայում, տեղի ունեցավ մեծ ցույց, որին մասնակցում էր մոտ 3000 մարդ՝ արաբներ և հայեր, Ցուցարարները կրում էին իմապերիալիզմի, Բաղդատի պակտի դեմ ուղղված և արարական ու ազգային միասնությունը պահանջող բազմաթիվ լոգումներու նստիկանությունը ցորեց այդ ցույցը և ձերբակալեց 16 արար ու հայ ցուցարարների², Սակայն մի քանի օր անց, ապրիլի 7-ին Հերմելի մեջ տեղի ունեցավ մի նոր ցույց, դարձյալ ուղղված Բաղդատի պակտի և այդ պակտին միանալու կիրանանի կառավարության մտադրությունների դեմ³։

1 «Արարատ», 6 ապրիլի 1955 թ.։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, 8 ապրիլի 1955 թ.։

Լիրանանի, կոմունիստական կուսակցությունը, ինչպես նաև Ազգային Համագումարը ամբողջ երկրով մեկ տարածում են թուրքիներ՝ ուղղված թուրք-լիրանանյան բանակցությունների և Թուրքիայի ու Լիրանանի մերձնցման դեմ։ Կոմունիստական կուսակցությունը ազգային ուժերի միավորման կոչ էր անում¹։ Լիրանանի կառավարության քաղաքականությունը դաշտավարտեցին նաև պառամենտի շատ անդամներ։

Լիրանանի ժողովրդական մասսաների և դեմոկրատական ուժերի, ինչպես նաև արարական հասարակական կարծիքի մնշման ներքո Լիրանանի կառավարությունը ստիպված եղավ նահանջել և փոխել իր դիրքը։ Լիրանանի պրեմինիստը Սամի Սոլը Հայտարարեց, որ Լիրանանը չի միանաթուրք-իրարյան պակտին², Դա, անշուշտ, Լիրանանի դեմոկրատական ուժերի հաղթանակն էր։ Անդրադառնալով այդ հարցին Սիրիայի և Լիրանանի կոմունիստական կուսակցությունների կենարունական կոմիտեների ընդլայնված պլենումը նշում էր, որ «...այդ նահանջը (Լիրանանի կառավարության — Ն. Հ.) ժողովրդական դիմադրական շարժման կարևոր հաղթանակն է։ Այդ հաղթանակը Լիրանանի ժողովուրդը ձեռք բերեց շնորհիվ իր ազգային միասնության, ինչպես նաև շնորհիվ արարական մյուս երկրների ժողովուրդների համագործակցության Լիրանանի ժողովրդի հետ»³։ Այդ պլենումում առաջ բաշխեց նաև ազգային կառավարությունը ստեղծելու պահանջը, որովհետեւ միայն այդպիսի կառավարությունը, ինչպես նշված էր պլենումի կողմից ընդունված որոշման մեջ, կարող էր ամուր ու հաստատ քաղաքականություն վարել թուրք-իրարյան և նրա բնույթի բոլոր ռազմական խմբավորումների դեմ։ Բացի դրանից այդպիսի կառավարության խընդիրները պետք է լինեին դեմոկրատական ազատությունների առահօղումը, պայքարը երկրի անկախության և արարական երկրների միջև համագործակցության ամրապնդման համար⁴։

1 «Արարատ», 8 յայիսի 1955 թ.

2 23.V.1955 «النور»

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Լիրանանը շմիացավ թաղդատի պակախն։ Սակայն նա շմիացավ նաև այդ պակախի դեմ ուղղված արաբական մյուս երկրոների պայքարին։ Նա այդ կարևոր հարցում, այսինքն արաբական ժողովուրդների հակախմակերիալիստական պայքարի այդ կարևոր էտապում, ոչեզոք դիրք գրավեց։ Նրա ոչեզոքությունը խարիսում էր արաբական միասնականությունը և ի նպաստ արևմտյան իմպերիալիստների էր։

Լիրանանի դիրքը թաղդատի պակախի նկատմամբ, նրա կառավարության պրոիմպերիալիստական, պրոարևմտյան տենդենցիների ակնհայտ ուժեղացման մասին էին խոսում։ Այդ տենդենցիներն ավելի ուժեղ ու ընդդժված երևան եկան 1956 թ. Եգիպտոսի դեմ սանձազերծած անզլո-ֆրանս-խորայելլան եռյակ ագրեսիայի ժամանակ։ Չնայած Լիրանանի ժողովրդական զանգվածների պահանջին լիրանանի կառավարությունը շխսեց իր դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ, ինչպես ուս արեցին մի շաբթ արաբական երկրներ։ Նա իսկ մնաց Եգիպտոսին ուժեղ պաշտպանություն և աշակցություն ցույց տալու վերաբերյալ դեմոկրատական ուժերի պահանջների հանդեպ։

Լիրանանի կառավարության պրոիմպերիալիստական և հատկապես պրոամերիկյան քաղաքականության փայլում վկայությունը հանդիսացավ նրա կողմից ու էլյունհառների դոկտրինային ընդունումը։

* * *

«Էլյունհառների դոկտրինան» լույս աշխարհ եկավ Եղիպտոսի դեմ անզլո-ֆրանս-խորայելլան ագրեսիայի ձախողումից հետո։ Այդ ագրեսիայի տապալումը բոլորովին նոր իրադրություն և ուժերի փոխհարաբերություն ստեղծեց Մերձավոր ու Միջին արևելքում։ Եղիպտոսի հաղթանակը ուժեղացրեց աղքային-ազատագրական շարժումը Արաբական արևելքում։ Այդ շարժման բարձրացող ալիքը, արաբական ժողովուրդների պայքարը հանուն ազատության և ազգային անկախության հարցականի տակ էր դնում իմպերիալիզմի և պաղութատիրության դիրքերը Արաբական արևելքում։ Եվ ահա իմպերիա-

Հիսուների համար այդ ծանր կացության ժամանակ ողբությունը փրկելու նպատակով հրապարակ մտան Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Ամերիկյան իմպերիալիստներին, ինչ խոսք, ձեռնոտու էր անզիխական և ֆրանսիական իմպերիալիստների դիրքի թուլացումը Մերձավոր ու Միջին արևելքում։ Սուկայն դադութատիրության դիրքերի հետագա թուլացումը և ազգային-ազատագրական շարժումների հետագա ուժեղացումը շէր մտնում նրանց պլանների մեջ, որովհետև, ինչպես նշեցինք, ազգային-ազատագրական շարժումների հետագա աճը հարցականի տակ էր դնում իմպերիալիստների, այդ թվում նաև ամերիկյան իմպերիալիստների տիրապետությունն ընդհանրապես։ Օգովելով Անգլիայի և Ֆրանսիայի թուլացումից, ԱՄՆ-ը ձգուում էր զրավել նրանց տեղը և իր վրա վերցնել միշազգային ժանդարմի պարտականությունները։ Ռւսակի ամերիկյան իմպերիալիստները հրապարակ նետեցին ովակուումիք և «կոմունիզմի սպառնալիքի» հին ու ձնձկված ստեսությունները։ Համաձայն այդ ստեսությունների Անգլիայի և Ֆրանսիայի ազգեցության թուլացման հետևանքով իրր Մերձավոր ու Միջին արևելքում առաջացել է ովակուում՝ պարապ տարածություն և որ նոր անկախություն ձեռքբ բերած երկրների գոյությանը սպառնում են։ Սովորական Միությունը և միշազգային կոմունիզմը, Ամերիկյան իմպերիալիստները գտնում էին, որ իրենց վրա պատմական պատասխանատվություն է ընկած՝ լցնել այդ ովակուումը և Մերձավոր ու Միջին արևելքը «փրկել» կոմունիզմի սպառնալիքից։ Հարցի այսպիսի մոտեցման մեջ պարզուուշ երեսում է զաղութատիրության իդեոլոգիան, իդեոլոգիա, որը ժողովուրդներին բաժանում է բարձր ու ցածր ռասաների և գտնուամ, որ վերջիններս առանց առաջինների զեկավարության շեն կարող գոյություն ունենալ։ Այսպիսի մեկնակետուննեալով և հետապնդելով իմպերիալիստական նպատակներ ԱՄՆ-ի պրեզիդենտ Էլզենհաուերը 1957 թ. հռմվարի 5-ին ԱՄՆ-ի կոնգրեսին դիմեց մի ուղերձով, որտեղ շարագրված էին ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական նպատակները Մերձավոր արևելքում։ Կոնգրեսը 1957 թ. մարտի 5-ին և 7-ին այդ ուղերձի հիման վրա ընդունեց մի բանաձև, որը պրեզի-

դենաւի կողմից՝ ստորագրվեց 1957 թ. մարտի 9-ին։ Հենց այդ բանաձևն էլ, որ կոչվում էր «Միջին արևելքի զրության մասին», հանդիսանում է ռեյզենհասութիւնը գոկտրինան։ Կոնգրեսի բանաձևը պրեզիդենտին իրավունք էր տալիս ըստ իր հայցողության ԱՄՆ-ի ռազմական ուժերը օգտագործել Մերձավոր ու Միջին արևելքի այս կամ այն երկրի տանկախությունն ու տեսչութիւնականությունն ապահովերաւ համար¹։ Բայց որում այդ բանաձևն ի նկատի ուներ, որ այդ երկրների անկախությունը պետք է ապահովել և միջազգային կոմունիզմի կողմից վերահսկող երկրի կամ երկրների ազբեսիայից²։ Մյուս կողմից բանաձևը պրեզիդենտին իրավունք էր վերապահում Մերձավար ու Միջին արևելքի երկրներին ռազմական ու տնտեսական օգնություն ցույց տալ, որի համար կոնգրեսը հատկացրեց 200 մլն. դոլար³, Սա է ռեյզենհասութիւնը գոկտրինայից էությունը։

Դժվար չէ նկատել, որ այդ «գոկտրինան» բացահայտ ռազմական ինտերվենցիայի իրավունք էր տալիս ԱՄՆ-ին։ Ամերիկյան իմպերիալիստները ըստ իրենց հայեցողության կարող էին հայտարարել, որ այս կամ այն արարական երկրին «սպառնում է» կոմաւնիզմը և միջամտել նրա ներքին գործերին՝ ընդհանուր մինչև զենքի օգտագործումը։

Իսկ ինչ վերաբերում է տնտեսական ու գնությանը, ապա դա լոկ մի վարագույր էր, որի օգնությամբ ամերիկյան իմպերիալիստները փորձում էին թաքցնել իրենց ինկական ծրագրերը և արարական ժողովուրդների աշխատ երևալ որպես բարերար։ ԱՄՆ-ի խոստացած ու գնության գումարը, ինչպես նշվեց, կազմում էր 200 մլն. դոլար։ Հարկ է նշել, որ ամերիկյան և անդիքական նաևթային ընկերությունների Մերձավոր արևելքի նավթի շահագործումից ստացած մաքուր շահույթները միայն 1955 թ. կազմել են 1 միլիարդ 900 միլիոն դոլար։ Ինչպես տեսնում ենք, ամերիկյան իմպերիալիստները

1 А. Кунине, Доктрина Эйзенхауэра, М., 1957, стр. 47.

2 О. Туганова, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, стр. 97.

3 Նույն տեղամաս։

4 «СССР и Арабские страны», стр. 291.

արարական երկրներին էին «վերադարձնում» նրանց ազգային հարստության թալանից ստացված մի աննշան մասը:

1957 թ. հունվարի 13-ին հրապարակվեց *SASSU*-ի հայտարարությունը՝ «Էլզենհաուերի դոկտրինային վերաբերյալ Այդ հայտարարության մեջ մերկացվում էր «Էլզենհաուերի դոկտրինային իմաստերիալիստական բնույթը և ցույց տրվում, որ նույն մի նոր սպառնալիք է Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների համար: *SASSU*-ը դրաբարտություն համարելով ամերիկյան խմբերի հայտարարությալիստաների պնդումը՝ «սովետական սպառնալիքի» վերաբերյալ, նշում էր. «Այդ գրապարտչական պնդումները ոչ ոքի չեն խարի: Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդները չեն մոռացել, որ Սովետական Միությունը միշտ հանդես է եկել և հանդես է գալիս ժողովուրդների ինքնորոշման պաշտպանությամբ, նրանց կողմից իրենց ազգային անկախությունը նվաճելու և ամրապնդելու պաշտպանությամբ¹, Սովետական կառավարությունը դեմ է, նշված էր *SASSU*-ի հայտարարության մեջ, ամեն տեսակի «գոկտրինաների», որոնք պաշտպանում և քողարկում են զաղութափությունը:

Սովետական Միության վճռական ու պարզորոշ դիրքը մեծապես օգնեց արարական աշխատավորական մասսաներին և դեմոկրատական ուժերին ճիշտ ըմբռնելու «Էլզենհաուերի դոկտրինային էությունը և ակտիվացնելու իրենց պայքարը նրա դեմ: ²

Թուրքական որոշ պատմաբաններ ճիշտ չեն պատմաանում «Էլզենհաուերի դոկտրինային էությունը և նրա հանդես գալու պատճառները: Նրանք փաստորեն պաշտպանում են ամերիկյան կառավարության պաշտուական տեսակետը այդ հարցում: Այսպես, օրինակ, Զ. Հաներշին համաձայն է «վակակումիւն» տեսության հետ: Նրա կարծիքով այդ ուշակուտամբը կամ արևմուտքը պետք է լցներ կամ Սովետական Միությունը²: Այդ պատճենությունը էլ, նշում է նա, տանհրաժեշտ էր այն-

¹ «ССР и Арабские страны», стр. 292.

² J. Vanegej, The Middle East in world politics, Calcutta, 1960, p. 307.

պիսի քաղաքականություն վարել, որ Միացյալ Նահանգների ռազմական հզորությունը դներ արաբական երկրների տնօրինության տակ՝ սովետական ներթափանցմանը դիմադրելու համարը¹:

Խսկ Զ. Մառլուուն այն տեսակետն է զարգացնում, որ «Էլզինսկաուերի դոկտրինայի» միակ նպատակը պայքարն էր կոմունիզմի դեմ²:

Այս հեղինակները տարված լինելով ամերիկյան իմպարիալիզմի քաղաքականությունն արդարացնելու և պաշտպանելու ցանկությամբ, չեն ուզում տեսնել «Էլզինսկաուերի դոկտրինայի» իմպերիալիստական քնույթը, Նրանք ուշն նկատում են ամերիկյան իմպերիալիզմը հանդես էր գալիս միջազգային ժանդարմի դերում, փորձում այդ «գոկարինայի» օգնությամբ միջամտել արաբական երկրների ներքին գործերին և ամրապնդել իր տնտեսական ու քաղաքական դիրքերը Մերձավոր ու Միջին արևելքում:

Սակայն այն, ինչ պարզ էր բոլորուական որոշ հեղինակների, միանգամայն պարզ ու հասկանալի էր արաբական աշխատավորական մասսաներին:

«Էլզինսկաուերի դոկտրինան» խոր զայրույթ առաջացրեց արաբական բոլոր երկրների ժողովրդական մասսաների մոտ: Նրա դեմ հանդես եկան նաև մի շարք արաբական երկրների կառավարություններ: 1957 թ. հունվարի 18—19-ը Կահիրեաում տեղի ունեցավ Եգիպտոսի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի և Հորդանանի պետությունների և կառավարությունների ղեկավարների խորհրդակցությունը, Խորհրդակցությունն ընդունեց կոմմտմիկե, որտեղ ասված էր, որ այդ պետությունները մերժում են «վակուումի» տեսությունը և երրեք շեն դառնա որևէ օտար պետության ազդեցության որորուց³: Փետրվարի 24—27-ը Կահիրեաում տեղի ունեցավ այդ տեսությունների նոր խորհրդակցությունը, Նրանք այս անգամ ավելի վճռականորեն հանդես եկան «Էլզինսկաուերի դոկտրինայի»

1 Նույն անդամ, էլ 307—308.

2 J. Marlowe, Arab nationalism and British imperialism, London, 1961, p. 148.

3 О. Туганова, Политика США и Англии..., стр. 101.

դեմ և հայտարարեցին, որ «արարական աշխարհի պաշտպանությունը պետք է իրականացվի իրենց՝ արարական երկրների կողմից հօգուտ իսկական անվտանգության, և օտարերկրյա դաշինքների սիստեմից գուրսաւ¹:

«Էլզենհառտի դոկտրինայիշ նկատմամբ բոլորովին այլ զիրք բռնեց կիրանանի կառավարությունը: Նա սկզբից ևեթիր համաձայնությունը հայտնեց այդ գոգոկտրինայիշ և նրա նպատակների հետ: Կիրանանի արտաքին գործերի մինիստր Շարլ Մալիթը, որին իր պրոամերիկյան հայտացքների համար կիրանանի գեմոկրատական ուժերը համարում էին կիրանանի ամերիկյան արտաքին գործերի մինիստր, 1957 թ. հունվարի սկզբներին հայտարարեց. «Էլզենհառտը համաձայն է Այզընհառտի ծրագրին: Մենք պատրաստ ենք գործակցելու Միացյալ Նահանգների հետ»²: Մի փոքր անց նման հայտարարությամբ հանդես եկավ պրեմյեր-մինիստր Սամի Սոլզը: Նա նշեց, որ կիրանանը դրական մոտեցում ունի «Էլզենհառտի դոկտրինայիշ նկատմամբ»³, Տարբեր առիթներով իր համակրանքն ու համաձայնությունը այդ գոգոկտրինայիշ հետ հայտնեց նաև կիրանանի պրեզիդենտ Թամիլ Շամունը: «Երբ երեսն եկավ էլզենհառտի պլանը, — զրում է Թամալ Զումրատը, — անմիջապես նրա վրա բարձրացան Շամունն ու իր մարդիկ, որպես ներքին գժվարին փակուղուց դուրս գալու փրկության տախտակիհանք: Այդ դոկտրինան կիրանանում իր բացահայտ պաշտպանները գտավ հանձին ֆալանգիստների, դովմի սուրբների, դաշնակցականների և մի շարք քաղաքական խմբավորումների և գործիչների: Նրանք ուժ ու ջանք չեն խնայում գովարաններու ամերիկյան իմպերիալիզմը, նրան ներկայացնելով որպես կիրանանի «լավագույն բարեկամիյա: Կիրանանում սկսվեց հակակոմունիստական սանձարձակ կամպանիա, «Էլզենհառտի դոկտրինայիշն կապվելու քաղաքականության ամենավատ արդյունքներից մեկը, — զրում

¹ О. Туганова, Политика США и Англии..., стр. 103.

² «Արարտ», 13 Հունվարի 1957 թ.:

³ «Մ. Ն. Հառաջ», 3 Փետրվարի 1957 թ.:

⁴ .75 جنبلاط...، ص

էր «Ալ-Ախրարը», — ոմիջազգային կոմունիզմի» դեմ պարքարելու և սոցիալիստական մեծ լազերի, սոցիալիզմի մեծ երկրի, կիրանանի ամենաանկեղծ բարեկամի, աշխարհի խաղաղության և ժողովուրդների աղատության մեծագույն պաշտպանի՝ Սովետական Միության դեմ վարվող թշնամական քառարականությունն է»¹.

Ինչպես նշվեց «Էլյզենհաստերի դոկտրինային» նկատմամբ բոլորովին այլ դիրք բռնեցին կիրանանի աշխատավորական մասսաները, գեմոկրատական դորժիները և քաղաքական պարտիաների ու կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը, նրանք բացեիրաց հանդես եկան այդ սղութրինային դեմ և դատապարտեցին կիրանանի կառավարության դիրքը այդ հարցում, իրենց բողոքն էին հայտնում թերթերը, ժողովրդի տարրեր խավերը և առաջադիմ դորժիները: «Ալ-Յառամա թերթը գրում էր, որ Էլյզենհաստերը փորձում է արարական ժողովրդին հավատացնել, որ կոմունիստական վտանգ գոյություն ունի, ևմինչդեռ նման կարծիք մը բնավ համապատասխան չէ իրողության: Որպէսէն իրական վտանգը, որ կապանա Միջին արևելքի կուգա Արևելութենք, և Աղ-Դիարք-ը նշում էր, որ ԱՄՆ-ը փորձում է բռնի դիմել Մերձավոր արևելքում իր հաղթանակն ապահովելու համար: Իսկ «Թելեգրաֆ»-ը մատնացույց էր անում, որ «Այզընհառերի ծրագիրը վտանգ մըն է: Միջին արևելքի երկրներու անկախության համար»²:

Կիրանանի պրոգրեսիվ թերթերը մերկացնում էին ամերիկյան ոգնության իմաստը, նշելով, որ այդ օգնությունը ստացողը պարտավոր է հետեւել ամերիկյան քաղաքականությանը: Մուհամմեդ Սուլեյմանը «Բեյրութ» թերթում գրում էր, «պետք է լավ իմանանք, որ Միացյալ Նահանգներու կատարելիք տնտեսական օժանդակություններն ընդունելով (նթե նույնիսկ սահմանված ըլլա, որ առանց որևէ պայմանի տրվի) ստացող երկիրը բարոյապես կպարտադրվի հետեւելու օժանդակությունը կատարող երկրին որդեգրած քաղաքա-

1 19.I.1958 «Ալլահ»

2 Մերերումը ըստ «Մ. Ն. Հառաջ», 22 հունվարի 1957 թ.,
230

կանությանը¹: Նա հիշեցնում էր արարական այն հին առածքը, որ բառության հացը ուստողը նրա սուրբ կգործածեաւ:

«Էլզենհառւերի դոկտրինային և կիրանանի կառավարության քաղաքականության դեմ հանդես եկան կիրանանի խաղաղության կողմանակիցները, նրանք հրապարակեցին կիրանանի ժողովության դոկտրինան և դիմակազերծում նրա թաքում նպաստակները: Կիրանանի խաղաղության կողմանակիցները կոչ էին անում կիրանանի բռլոր կուսակցություններին, արհմիություններին և աղջային գործիչներին կանգնել ոժողովրդի: Կողքին, ընդում այս ծրագրին, որ կհանդիսանա վտանգ մը մեր քաղաքական անկախության և աղջային տընտեսության, ինչպես նաև Արարական արևելքի և ամբողջ աշխարհի խաղաղության համարը²:

Աշխատավորներից, մտավորականներից, ուսանողներից և այլ խավերից բաղկացած քաղմաթիվ պատվիրակություններ էին այցելուամ պառզամնեսի անդամներին, քաղաքական գործիչներին և զանազան թերթերի խմբագրություններին իրենց բողոքը հայտնելու ոչյօնհառւերի դոկտրինային դեմ: Նրանք միաժամանակ պահանջում էին երկրի կառավարությունից ընդունել այդ ոգություններ և կանգնել արարական աղջային քաղաքականության ուղղու վրա:

Ի նշան բողոքի ընդդեմ ոչյօնհառւերի դոկտրինային և կիրանանի կառավարության դիրքի 1957 թ. հունվարի 28-ին դառադու հայտարարեց Տրիսուլիի աշակերտությունը³: Հունվարի 29-ին Մեզուավար գյուղի արար և հայ զանազան կաղմակերպությունների միացյալ ժողովը ընդունեց մի որոշում, որը կառավարությունից պահանջում էր ովհուականորեն դիրքորոշվել կիրանանի աղջային գերիշխանությունը բնաբարուղ այս ծրագրին դիմաց⁴: Փետրվարի 9-ին ոչյօնհառւերի դոկտրինան դատապարտող մի հայտարարություն հրապա-

1 Մեջքերումը բառ «Արարատ», 18 հունվարի 1957 թ..

2 «Մ. Ն. Հառաջ», 27 հունվարի 1957 թ..

3 Նույն տեղում, 3 փետրվարի 1957 թ..

4 Նույն տեղում:

րակեցին Լիբանանի փաստաբանները։ Այդ հայտարարությունը ստորագրել էին Լիբանանի 80 հայտնի իրավաբաններ, այդ թվում Ա. Հառուտը, Է. Նախմը, Ն. Մութբանը, Հ. Շամպանը, Մ. Խաթթապը, Ն. Թուրուարզյանը և ուրիշներ։

Նման բանաձեռքը էին ընդունում և իրենց բողոքն ու դժգությունը հայտնում Տրիպոլիի, Զահլեի, Սալտայի, Բեքաայի և այլ վայրերի տարբեր խավերի ներկայացուցիչները։

Հանդես գալով տէլքնհառուերի դոկտրինային դեմ Լիբանի դեմոկրատական ուժերը աշքի առաջ ունեին հետևյալ նկատառությունները։ Նախ, նա սպառնում էր երկրի անկախությանը և Լիբանանը բոլոր թելերով կապում ամերիկյան իմպերիալիզմի հետ։ Երկրորդ, նա Լիբանանը մեկուացնում էր արարական մյուս երկրներից և հատկապես Եգիպտոսից ու Սիրիայից, որոնք վճռականորեն հանդես էին գալիս այդ ռուկտրինային և ընդհանրապես արևմտյան իմպերիալիզմի հետ որևէ ձևով դաշինքի մեջ մտնելու գաղափարի դեմ։ Եվ, վերջապես, տէլքնհառուերի դոկտրինային ընդունումը և հակակոմունիզմի քաղաքականության որդեգրումը վատթարացնում էր Լիբանանի հարաբերությունները Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ, որը թե՛ տընտեսական և թե՛ քաղաքական առումով վնասակար էր Լիբանի ազգային շահերին։

Սակայն Լիբանանի կառավարությունը անտեսելով երկրի ժողովրդական լայն խավերի և դեմոկրատական ուժերի այս դիրքը 1957 թ. մարտին բանակցություններ սկսեց ԱՄՆ-ի պրեզիդենտի հատուկ առաքյալ Ջեյմս Ռիչարդսոնի հետ, որը Լիբանան և արարական մյուս երկրները այցելեց տէլքնհառուերի դոկտրինան։ Գործնականում ապահովելու համար

Նախքան Ռիչարդսոնի Լիբանան ժամանելը երկրում բողոքի լայն շարժում սկսվեց նրա այցելության դեմ։ Տարբեր վայրերում տարածվեցին թուցիկներ, տեղի ունեցան աշխատավորական մասսաների և ուսանողների ցուցեր և այլ ելույթներ։ Նրա ժամանման օրը՝ 1957 թ. մարտի 14-ին, Լիբանանի ոստիկանությունը ձեռք առավ խիստ միջոցառում-

ներ: «Հախենալով ժողովրդի ցասումից ռատիկանությունը սեղմ գոտիով շրջապատեց Ռիշարդոսին և նրան ուղեկցող անձանց, Բեյրութում, Տրիպոլիում և Սալույում տեղի ունեցած բազմաթիվ ձերբակալություններ¹:

1957 թ. մարտի 16-ին Բեյրութում ստորագրվեց ամերիկա-լիբանանյան համաձայնագիրը, որով լիբանանը միացավ «էջղենհառւերի դոկտրինային» Նա հանդիսացավ առաջին արարական երկիրը, որը ընդունեց այդ «գոկտրինան»:

Ամերիկա-լիբանանյան համաձայնագիրը նախատեսում էր «Համագործակցություն» լիբանանի և ԱՄՆ-ի միջև քաղաքական, ռազմական և տնտեսական հարցերի շուրջը: Համաձայնագրի 4-րդ կետը երկու կողմերին պարտավորեցնում էր անհաջող պայքար մզել կոմունիզմի դեմ, որը, իր սպառնում է աշխարհի խաղաղությանը և պետությունների ազգային անկախությանը², իսկ 6-րդ կետում ասված էր, որ Լիբանանն ու ԱՄՆ-ը միասին պիտի աշխատեն լուծելու այդ շրջանի մեջ լարվածություն ստեղծող հարցերը³:

Ամերիկա-լիբանանյան համաձայնագրով ԱՄՆ-ը իրավունք էր ստանում ռազմական կամաց արտաքին ագրեսիայից⁴, ԱՄՆ-ը միաժամանակ պարտավորվում էր տնտեսական ու ռազմական օգնություն ցույց տալ լիբանանին: Դրա համար նախատեսվում էր 20 մլն. դոլար⁵:

Այսպիսով, լիբանանի կառավարությունը, ոտնահարելով երկրի գերիշխանության սկզբունքները, լայն հետաքություններ տվեց ամերիկյան իմպերիալիզմին միջամտելու լիբանանի ներքին գործերին, Այդ համաձայնագրով ԱՄՆ-ը ուժեղացրեց իր գիրքերը և ազգեցությունը լիբանանում:

Ընդունելով «էջղենհառւերի դոկտրինան» լիբանանը, ինչպես նշում է արաբ պատմաբան Ամին Սահողը, «... դուրս եկավ արարական ազատագրված պետությունների խմբից և

1 «Մ. Ն. Հառաջ», 17 մարտի 1957 թ.:

2 Նույն տեղում, 24 մարտի 1957 թ.:

3 Նույն տեղում:

4 «Политика США на Арабском Востоке», стр. 179.

5 «The Middle East», London, 1961, p. 218.

ընկավ պակտերի իմպերիալիստական քաղաքականության ուղղժիրը¹:

Երբ համաձայնագրի բովանդակությունը հայտնի դարձավ Լիբանանի հասարակայնությանը, նրա գեմոկրատական շրջանակները խոր դժգոհություն հայտնեցին և դատապարտեցին լիբանանի կառավարության վարդագիծը: Հանդեմ գալով հայտարարություններով լիբանանի նախկին պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրին, նախկին վարչապետ Արդալլա Յաֆին, արտաքին գործերի նախկին մինիստր Համիդ Ֆրանջինն և շատ ուրիշներ նշում էին, որ ամերիկա-լիբանանյան համաձայնագիրը ոտնակոխում է 1943 թ. Ազգային պակտը, չի համապատասխանում լիբանանի ազգային շահերին և սեպէ խրում լիբանանի և մյուս արաբական երկրների միջև: Բիշարա ալ-Խուրին, որը հայտնի էր իր պրոամերիկյան հայացքներով և իր պրեզիդենտության ժամանակ թիվ բան շարեց լիբանանը պրոարևմտյան քաղաքականության հումով տանելու համար, նույնիսկ նա նշում էր, որ ոնման համաձայնություն մը կանգատե լիբանանը արաբական աշխարհն, զայն կտկարացնե քաղաքականապես, տնտեսապես ու բարյապես, կոպառնա անոր ազգային միությանը և վտանգի տակ կդնե անոր անկախությունը²:

Այդ համաձայնագրի դատապարամամբ հանդես եկան լիբանանի քաղմաթիվ քաղաքական կոսակցությունները Կոմունիստական կուսակցությունը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ շարադրված էին նրա տեսակետները լիբանանի արտօարին քաղաքականության վերաբերյալ: Կոմիտասակցությունը պահանջում էր հրաժարվել ոչյգինհառերի գոկարինայից և ընդհանրապես իմաստիտլիստական պլաններին ու ըլուներին հարելու քաղաքականությունից: Նա նշում էր, որ լիբանանի կառավարության այժմյան քաղաքականությունը չի համապատասխանում լիբանանի ազգային շահերին: Այդ ազգային շահերին, նշված էր հայտարարության

¹ Амин Сайд, Восстания арабов в XX в., стр. 163.

² «Մ. Ն. Հառազ», 24 մարտի 1957 թ.,

մեջ, ամենից լավ համապատասխանում է շեղոքության և ազգային անկախության քաղաքականությունը¹:

«Նաշշաղես կուսակցության նախագահ՝ Աղնան Հարիմնիր կուսակցության անունից հայտարարեց, որ ամերիկա-լիբանանյան համաձայնադիրը հակասում է միջարաբական ազահավության պակտին և թանգումգի կոնֆերանսի որոշումներին։ Նա նշեց, որ «Լիբանանի խաղաղասեր երկիր մընէ, որ շուպեր գառնալ որևէ երկրի սաղմագիտական խարիսխսը՝ վորխան ափ մը դուրաբիւ»²։

Բուռն ու փոթորկալից անցան լիբանանի պառլամենտի նիստերը, որտեղ քննարկվում էր ամերիկա-լիբանանյան համաձայնադրի հարցը, Պառլամենտի նիստերը տեղի ունեցան 1957 թ. ապրիլի 4—6-ը։ Նիստի սկզբում լիբանանի արտաքին քաղաքականության վերաբերյալ կառավարական հայտարարությամբ հանդես եկավ պրեմյեր-մինիստր Սամի Սոլեզը։ Նա պաշտպանեց ամերիկա-լիբանանյան համաձայնադրի հիմնական կնտերը և «էլզենհաումբի գոկտրինային» լիբանանի հարելու։ Նա չափազանց երկար խոսեց «կոմունիզմի վտանդիւ մասին և նշեց, որ պայթարը կոմունիզմի գեմ հանդիսանում է լիբանանի կառավարության քաղաքականության եարևոր սկզբունքներից մեկը»³։

Պառլամենտի մի շարք անդամներ դատապարտեցին թե՛ ամերիկա-լիբանանյան համաձայնադիրը և թե Սամի Սոլեզի կառավարական հայտարարությունը, Արդալիա Հաջը հայտարարեց, որ լիբանանին սպառնացող ոչ մի կոմունիստական վտանդ չկատ։ Նու իր ելույթում նշեց, որ ընդհակառակը, Սովութական Միությունը միշտ էլ օգնության ձեռք է մեկնել արարական երկրներին, որ սեթե ըրլային կոմունիստական ազգարարությունները ու սպառնալիքները՝ ուղղված իմպերիալիստաներուն, ոչ մեկ անկախ արար երկիր գոյություն պիտի սահնար այսօրք⁴, Պառլամենտի մեկ ուրիշ անդամ՝ Հա-

1 «Մ. Ն. Հառաջ», 25 ապրիլի 1957 թ.։

2 Նույն տեղում, 24 մարտի 1957 թ.։

3 Նույն տեղում, 7 ապրիլի 1957 թ., «Արարատ», 6 ապրիլի 1957 թ.։

4 «Մ. Ն. Հառաջ», 7 ապրիլի 1957 թ.։

շիմ Հուաելինին հայտարարեց. «կղատապարտեմ կառավարությունը, որ պայքար հայտարարեց միջազգային կոմունիզմի դեմ: Որո՞ւ հետ պիտի շարունակենք մեր առևտրական հարաբերությունները, Ամերիկայի՝ հետ, թե արևմտյաններում, որոնք կմերժեն ներածել մեր արտադրություններին»¹: Լիբանանի հայտնի պետական ու քաղաքական գործիչ Ռաշիդ Քարամեն ուշագենհաստի դոկտրինանան համարեց Բաղդատի պակտի տարբերակը: Նա այդ դոկտրինային կիրանանի միանալը համեմատեց Իրաքի Բաղդատի պակտի մեջ մտնելու հետ, նշելով, որ երկուսն էլ հարված հասցրին արարական միասնականությանն ու ապահովությանը²:

Կառավարության քաղաքականության քննադատությամբ և «Ելզենհառերի դոկտրինայի» ու ամերիկա-լիբանանյան համաձայնագրի դատապարտմամբ հանդես եկան նաև պառլամենտի անդամներ Արդալլա Յաֆին, Համիդ Ֆրանջիին և Ահմեդ Ասադը, Սակայն պառլամենտի անդամների մեծ մասը պաշտպանում էր կիրանանի կառավարության արտաքին քաղաքականությունը և ամերիկա-լիբանանյան համաձայնագիրը, եվ Սամի Սոլիր համոզված լինելով նրանց աշակցությանը, պահանջեց վստահության քվե իր արտաքին քաղաքականության համար, որը նշանակում էր հավանություն տալ «Ելզենհառերի դոկտրինային» և ամերիկա-լիբանանյան համաձայնագրին: Համաձայն լինելով կառավարության արտաքին քաղաքականության հետ և առ ի բողոք ընդդեմ այդ քաղաքականության կիրանանի պառլամենտի անդամներ, նախկին պրեմյեր-մինիստրներ Ռաշիդ Քարամեն և Արդալլա Յաֆին, պառլամենտի նախկին նախագահներ Ահմեդ Ասադը և Սարրի Համադն, արտաքին գործերի նախկին մինիստր Համիդ Ֆրանջիին, Արդալլա Հաջը և Թամիլ Ասադը քվեարկությունից առաջ հրաժարվեցին իրնեց պառլամենտական մանդատներից և հեռացան դահլիճից:

Լիբանանի պառլամենտը 30 ձայնով վստահություն հայտնեց կտորավարության արտաքին քաղաքականությանը

1 «Մ. Ն. Հառաչ», 7 ապրիլ 1957 թ.

2 նույն տեղում:

և դրանով նաև ամերիկա-լիբանանյան համաձայնագրին ու
ոչ էլենհաստերի դոկտրինային և լիբանանի միանալուն:

Թեև լիբանանի կառավարությունը և պառլամենտը հաս-
տատեցին ոչ լիբանհաստերի դոկտրինային և լիբանանի միանա-
լը, սակայն դա չէր նշանակում, որ Լիբանանի ժողովրդական
մասսաները և դեմոկրատական ուժերը հաշտվեցին կատար-
ված փաստի հետ և դադարեցրին պայքարը Բնավ, ոչ Ընդ-
հակառակը, նրանք ուժեղացնում են պայքարը կառավարու-
թյան հակառագային արտաքին քաղաքականության դեմ:
Այժմ լիբանանի կառավարության բացահայտ պրոամերիկ-
յան քաղաքականությունից իրենց դժգոհությունն են հայտ-
նում նաև կոմպրադորսական և խոշոր ֆինանսական բուր-
ժուադիայի որոշ շրջաններ, Զպետք է մոռանալ, որ Բեյրութը
Միրճավոր ու Միջին արևելքի առևտորի, Ֆինանսական ու
բանկային գործունեության խոշորագույն կենտրոններից մեկն
է: Լիբանանի կոմպրադորսական և ֆինանսական բուրժուա-
զիան հիմնականում սպասարկում է արարական երկրներին
և նրա շահույթները զիսավորապես ստացվում են այդ երկըր-
ների հետ կատարված առևտորից ու ֆինանսական օպերացիա-
ներից: Ուստի բուրժուազիայի որոշակի շրջաններ շահագըր-
զընված են, որ լավ հարաբերություններ գոյություն ունենան
լիբանանի և արարական երկրների միջև: Մինչդեռ լիբա-
նանի կառավարության հարումը ոչ լիբանհաստերի դոկտրինա-
յին և նրա կողմից պրոամերիկյան քաղաքականության որ-
դեգործը հասցրին լիբանանի մեկուսացմանը և հարաբերու-
թյունների սրմանը արարական մի շարք երկրների և, հատ-
կապես, Սիրիայի ու Եգիպտոսի հետ, որոնք դատապարտում
էին լիբանանի կառավարության հակարարական արտաքին
քաղաքականությունը: Բացի այդ, ինչպես նշել ենք, լիբանա-
նի տնտեսության սրմաներից մեկը տուրիզմն էր: Նրանից
ստացված եկամուտները այն աղբյուրներից մեկն էր, որի
օգնությամբ լիբանանը ծածկում էր արևմտյան տերություն-
ների հետ ունեցած իր արտաքին առևտորի դեֆիցիտը:
Սակայն տուրիստները հիմնականում գալիս էին հարևան ա-
րարական երկրներից և տուրիզմի գործը մեծապես կախված
էր այն բանից, թե ինչպիսի հարաբերություններ գոյություն

ռւնեն Լիբանանի և արաբական մյուս երկրների միջև Լիբանանի քաղաքական նոր կուրսը բացասարար էր անդրադառնում նաև տուրիզմի գործի զարգացման հեռանկարների վրա: Լիբանանի կոմպրագորական և ֆինանսական բուրժուազիայի որոշ շրջաններ վախ էին հայտնում, որ հարաբերությունների վատթարացումը լիբանանի և Հարևան արաբական երկրների միջև կվնասի իրենց տնտեսական շահերին: Ահա սա էր Լիբանանի կառավարության բացահայտ պրոամերիկյան քաղաքական կուրսից կոմպրագորական և ֆինանսական բուրժուազիայի այդ շրջանների դժուհության պատճառը:

Լիբանանում աստիճանաբար տեղի է ունենում օպերիցիան ուժերի միավորում: Նրա մեջ մտնում են սոցիալիստական առաջադիմական և «նաշգագիւղ» կուսակցությունները, քաղաքական կուսակցությունների Ազգային համագումարը, Ռաշիդ Քարամեի խումբը, ինչպես նաև առանձին քաղաքական գործիչներ Նրանք ստեղծում են Ազգային միացյալ ճակատ, որը, ինչպես նշված էր նրա ծրագրում, ձգտելու էր «լեգալության շրջանակներում» փոխել Լիբանանի արտաքին քաղաքականությունը¹, 1957 թ. ապրիլի սկզբներին Ազգային ճակատը հրապարակեց մի հայտարարություն՝ ուղղված Լիբանանի ժողովրդին: Այդ հայտարարության մեջ շարադրված էին այն հիմնական սկզբունքները, որի վրա պետք է խարսխվեր Լիբանանի կառավարության քաղաքականությունը և որի համար պայքարելու էր Ազգային ճակատը:

Ահա այդ սկզբունքները.

Բոլոր միջոցներով պահպանել Լիբանանի անկախությունը և գերիշխանությունը, հավատարիմ մնալ 1943 թ. Ազգային Ուխտին, վարել շեղոք քաղաքականություն և ոչ մի պետության շտալ առանձնաշնորհյալ դիրք, սերտորեն համագործակցել արաբական երկրների հետ և վարել արաբական քաղաքականություն, շրնդունել որևէ օտար օգնություն, որը կարող է սահմանափակել Լիբանանի ազատությունը և վտանգի տակ դնել նրա անկախությունն ու գերիշխանությունը, ընդդիմանալ բոլոր իմպերիալիստական և սիոնիստական ծրագրերին, պահպանել Լիբանանի դիմո-

¹ «Современный Ливан», стр. 129.

իրատական, հանրապետական և պառամենուական վարչաձեռք և այլն¹: Կիրանանի կոմունիստական կուսակցությունը հավանություն տվեց և պաշտպանեց Ազգային ճակատի այս պահանջները: Ազգային ճակատը փորձեց իր այս գլխավոր պահանջները հանձնել պրեզիդենտ Շամունին, սակայն վերջինս շրաբեհաճեց ընդունել նրա պատվիրակությանը: Ազգային ճակատը բողոքեց պրեզիդենտի այդ բայլի դեմ և որոշեց ընթացք շտալ նրանից եկող հրավերներին և ներկա շղոնվել այն հանդեսներին և ընդունելություններին, որոնց ներկա կդանվեր պրեզիդենտը²:

Ազգային ճակատի ստեղծումը դրական երևոյթ էր: Նա նպաստեց երկրի դեմոկրատական ու հայրենասիրական ուժերի միավորմանը և Շամունի ուժիմի դեմ մղվող պայքարում բարձրացրեց նրանց հաղթանակի շանսերը: Այդպիսի ճակատի ստեղծումը համապատասխանում էր կիրանանի ազգային շահերին: «Ազգային բարձրագույն շահերը պահանջում են, — դրում էր «ԱՀ-Ախրար» թերթը, — որ... բոլոր հայրենասիրական ուժերը միանան աղատելու և փրկելու երկիրը այս քաղաքականության անեծքից, «էլզենհառերի» գոկորինային», Բաղդատի պակտի ցեխից և հաստատ ընթանալու անկուտանության, չեղոքության, խաղաղության, գերիշխանության, կայունության, հանդարտության և ազգային եղբայրության երթում³: Թերթը մատնանշում էր, որ կիրանանի հայրենասիրական ուժերն ավելի ուժեղ են, քան թե իմապերիալիստները և նրանց դորժակալները: Նա միանգամայն ճիշտ նշում էր, որ միայն հայրենասիրական ուժերի միավորումով և միացյալ ճակատի ստեղծումով է հնարավոր կիրանանն աղատել «էլզենհառերի գոկորինայից» և ամերիկյան ամեն տեսակի սօդնություններից»⁴:

Կիրանանի ընդդիմադիր ուժերը և Ազգային ճակատը վճռեցին կառավարությանը ճակատամարտ տակ պառամեն-

1 «Մ. Ն. Հառաջ», 7 ապրիլի 1957 թ.

2 Նոյն անգում:

3 27.IV.1958 ԱՀ ՀՀ Սահմանադրության 27

4 Նոյն անգում:

տական ընտրությունների ժամանակ, որոնք նշանակված էին 1957 թ. հունիսին, Փաստորին ընտրական կամպանիայի և ընտրությունների ժամանակ իրար բախվեցին երկու հակառագիր ուժեր՝ աղջային անկախությունը և իմադերիալիզմի շահերը պաշտպանող ուժերը: Աղջային ճակատի կոչով 1957 թ. մայիսի 12-ին թեյրութում տեղի ունեցավ մի հսկայական միտինգ, որին մասնակցեց մոտ 75000 մարդ՝ բանվորներ, գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, մտավորականներ և այլն: Միտինգի էին եկել քրիստոնյան ու իսլամը, արարն ու հայը, բոլոր հայրենասեր ուժերը, անկախ աղջային պատկանելությունից և դավանանքից:

Կառավարությունը ամեն կերպ ձգտում էր խափանել այդ միտինգը: Նա թեյրութիւն գուները փակեց երկրի տարբեր վայրերից եկող պատվիրակությունների առջև, որի հետևանքով մոտ 30000 մարդ չկարողացավ մասնակցել միտինգին¹: Բայց այդ սատիկանական և զինվորական ուժերը դիրք էին բռնել դեպի միտինգի վայրը տանող ճանապարհների վրա:

Այս միտինգի նպատակն էր ցույց տալ կառավարությանը, որ կիրանանի ամենալայն ժողովրդական մասսաները դեմ են նրա ներքին ու արտաքին քաղաքականությանը և դատապարտում են նրա պրոամերիկյան կողմնորոշումը և «էյ-զեն-ճառերի դոկտրինան»: Միտինգի մասնակիցները կրում էին «Կեցցե՛ աղջային միասնականությունը լիբանանցիների միջև», «Կեցցե՛ միջնամայնքային եղբայրությունը», «Կեցցե՛ դրական շեղոքությունը», «Կորչի էյզեն-ճառերի դոկտրինան», «Կորչին օտար ռազմական պակտերը», «Կեցցե՛ հայ և արար եղբայրակցությունը», «Կեցցեն մեր հայ եղբայրները լուգում գները»²:

Այդ պատմական միտինգին մասնակցում էին նաև հայ զանգվածները: Թեյրութիւնը Մեր նշանաբանն է Հառաջա թերթը այդ կապակցությամբ հետեւալն էր գրում: Ավելի քան 3000 թեյրութահայերու փառահեղ մուտքը որոտընդուստ ժամանա-

1 «Մ. Ն. Հառաջա, 19 մայիսի 1957 թ.».

2 Նույն տեղում:

րություններով ողջումնվեցան ներկաներում կողմեւ Հայկական պատվիրակությունը բարձրացուցած էր լայն պաստառ մը, որում վրա գրված էր «Կեցցե հայ և արար եղբայրակցությունը»¹:

Միտինգում ելույթ ունեցան կիրանանի ականավոր քաղաքական գործիչներ Համբիդ Ֆրանչիին, Ֆիլիպ Բաբլան, Սահր Սալամը, Արդալյա Յաֆիին և ուրիշներ:

Նրանք նշում էին, որ կիրանանի ժողովրդի ցանկությունն է միշտ կիրանանը տեսնել անկախ: Կիրանանը իմակերիալիստների ձեռքին գործիք չպետք է հանդիսանա արարական եղբայրական երկրների և կոմունիզմի դեմ նրանց մղած պայքարում: Միաժամանակ նրանք պահանջում էին պահպանել միշհամայնքային համերաշխառությունը: Սահր Սալամը իր ելույթում հայտարարեց. «Ժողովրդական այս ամբիոննեն կղզուշացնեմ կառավարողները, որ չխաղան կրակի հետ, կազդարարենմ լիրանանցիներուն, որ ըլլան արթում համայնքային անհամաձայնություն սերմանողներուն դեմ: Կհրավիրեմ ձեր բոլորը մնալու հավատարիմ 1943-ի Ազգային Պակտին, փրկելու երկրին գերիշխանությունը և պահպանելու շարքերուն միասնականությունը: Եվ այն ատեն կիրանանը իմպերիալիզմին համար ոչ կայթ և ոչ ալ անցքի ճամբա պիտի դառնաա²:

Միտինգի մասնակիցները հավանություն տվեցին Ազգային ճակատի որոշումներին, այն է. պահպանել կիրանանի անկախությունն ու գերիշխանությունը, հավատարիմ մնալ 1943 թ. Ազգային Պակտին, հարաբերությունները արարական քույր երկրների հետ հիմնել սերտ ու անկեղծ համագործակցության վրա, հողակել կիրանանի շեղոքությունը, շթույլատրել լիրանանյան հողի վրա ռազմական բազաների կառուցումը և շմիանալ ռազմական թլուկներին, շրնդումնել որևէ օտար օգնություն, որը տրվում է որոշակի պայմաններով և կաշկանդում է կիրանանի ազատությունը, պահպանել դեմոկրատական հանրապետական վարչաձևը, պաշտպանել

1 «Մ. Ն. Հառաք», 19 մայիսի 1957 թ.

2 Խոյն տեղում:

Հանրային աղատությունները և դատապարտել ձնշումի, սարսափի և հալածանքի միջոցառումները, որ կգործադրե կառավարությունը, պայքարել իրեն հլու հնազանդ պառամենտական մեծամասնություն ստեղծելու կառավարական փորձերի դեմ և այլն¹:

Սակայն կիրանանի կառավարությունը ոչ մի մտադրություն չուներ փոխելու իր քաղաքականությունը: Նա շարունակում էր մեալ լծված ամերիկյան իմպերիալիստական կառքին, Ռատի և երկրի դեմոկրատական ուժերը ոչ միայն շնորհարեցնում պայքարը, այլ ընդհակառակը, է՛լ ավելի են ուժեղացնում այն: Նրանք պահանջում են, որ կառավարությունը հեռանա իշխանությունից և կազմվի նոր կառավարություն, որը վարի շեզոք քաղաքականություն, հարգի սահմանադրությունը, դեմոկրատական ազատությունները և նորմալ պայմաններ ստեղծի պառակմենտական ընտրությունների անցկացման համար: Այս ինդիբների իրականացման համար Ազգային ճակատի կոչով մայիսի վերջերին ընդհանուր գործադրուկ սկսվեց կիրանանի կարսոր շրջաններում: Գործադրուկի էին բռնկված թելրութը, Տրիպոլին, Սալյան, Սուրբ, Նարաթիեն, Բաալբեքը, Հերմելը և այլ շրջաններ: Չորս օր անընդհատ փակ մնացին գործարանները, արհեստանոցները, խանութները և այլ ձեռնարկություններ: Գործադրուկին զուգընթաց տեղի էին ունենում ցույցեր:

Կիրանանի կառավարությունը որոշեց արյան մեջ խեղդել ժողովրդական այդ ելույթը: 1957 թ. մայիսի 30-ին նա ցուցարարների դեմ նետեց սատիկանական ուժեր և զրահապատ մեթենաներ, որոնք զնդակոծեցին ցուցարարների շարքերը: Նրանց այդ գործողությունների հետևանքով սպանվեց 10 և վիրավորվեց 130 մարդ: Բացի այդ ձերբակալվեց նաև 410 մարդ²: Ցուցարարների զնդակոծումը ցնցեց ամբողջ երկիրը: Բողոքի մեջ ելույթներ տեղի ունեցան Տրիպոլիում, Սալյանում, Բաալբեքում և այլ վայրերում: Կառավարության գործողությունները դատապարտեցին նաև կիրանանի երկու

1 «Մ. Ն. Հառաջ», 19 մայիսի 1957 թ.

2 Նույն տեղում, 2 հունիսի 1957 թ.:

կարևոր համայնքների ղեկավարները՝ մարոնիթների սպատրի-
արքը և կիրանանի մյունիթին, «Ալ-Ախրարը» մայիսի 30-ի ղեպ-
քերը համարում էր հերոսության ու պայքարի հիանալի էջեր։
Նա իրավամբ դանում էր, որ այդ գեղքերի ժամանակ ոչ յզեն-
շառուիրի դոկարինան ստացավ մահացու հարվածներ։
Գնահատելով կառավարության գործողությունները «Ալ-Ախ-
րարը» գրում էր, որ մայիսի 30-ի իր արարքով կառավարու-
թյանը ցույց տվեց, որ նա մեկուացված է ժողովրդից, որ
նա նպատակադրված է նրկիրը վերջնականացնես ենթարկել
իմպերիալիզմին և էջենհառությունը ծրագրին, որը այս արյու-
նահեղման և ազատությունների կաշկանգման հիմնական
պատճառն է։

Կառավարության վայրագ գործողությունները շվախնց-
րին ժողովրդական մասսաներին և շկոտրեցին ընդդիմադիր-
ութենքի ովայքարը մինչև վերջը շարունակելու կամքը։ Հունի-
սի 1-ին Ազգային ճակատը հայտարարեց, որ ժողովուրդը լի-
չ վճռականությամբ շարունակելու պայքարը հանուն ազա-
տության և ազահովության պահպանման։

Կառավարող շրջանների համար ստեղծվեց ծանր դրու-
թյուն։ Հանդիպելով աշխատավորական մասսաների և ղե-
մուկրատական ուժերի անկոտրում դիմադրությանը, նրանք
հարկադրված եղան նահանջել։ Հունիսի 2-ին բանակցություն-
ներ տև. ոյն ունեցան բանակի ընդհանուր հրամանատար գենե-
րալ Եինարի և Ազգային ճակատի ներկայացուցիչների միջև։
Վերշիններս պահանջեցին դադարեցնել բռնություններն ու
նեշուանները և ապահովել պառակամենտական ընտրությունների
ազատությունը։ Գեներալ Եինարը ընդունեց այդ պահանջնե-
րը և իր զինվորական պատվի վրա խոսք տվեց ապահովել
ընտրությունների ազատությունը։

Մեկ օր անց՝ հունիսի 3-ին պրեզիդենտ Շամունի նախա-
գահությամբ տեղի ունեցավ կառավարության նիստը, որտեղ
ընդունվեցին Ազգային ճակատի մի շարք պահանջները։ Կա-
ռավարությունը համաձայնվեց, որ բանակը հսկողություն

սահմանի ընտրությունների վրա, նա համաձայնվեց Ազգային ճակատի առաջադրած երկու թեկնածուներին՝ Ֆուլուֆ Հիթթին և Մուհամեդ Ալի Բեյումին որպես պետական մինիստրներ մտցնել կառավարության կազմի մեջ, Կառավարությունն ընդունեց Ազգային ճակատի առաջարկը՝ ստեղծել ընտրություններին հսկող վերաբնիշ մի մարմին, նվազը վերջապես, կառավարությունը համաձայնվեց նաև ազատել մայիսի 30-ին և նրանից հետո ձերբակալվածներին, հետ վնացնել ձերբակալման նոր հրամանագրերը և դադարեցնել կամայական միջոցառումները¹:

Ընտրությունները տեղի ունեցան հունիսին՝ չորս էտապով: Չնայած կառավարության վերոհիշյալ խոստումներին, նա չապահովեց ընտրական ազատությունը: Տեղի ունեցան զեղծարարություններ, գործադրվեցին բռնություն և մնշում: Ամին Սահիդ նշում է, որ դա ոչ թե պառլամենտական ընտրություն էր, այլ համընդհանուր կեղծարարություն², Պիտական անվտանգության օրգանները քմահան կերպով ձերբակալեցին Ազգային ճակատի թեկնածուների օգտին աշխատող շատ անձանց և քիչատուփերի վրա նշանակված շատ հսկիչների: Կառավարությունը օգտագործեց նաև դաշնակների զինված բանդաներին, որոնք սրարրարուսարար գնդացրային կրակ բացին իրենց ընտրական պարտականությունը կատարող անկուսակցական քաղաքացիներու վրա, սպանելով երեք անմեղ երիտասարդներ և վիրավորելով ուրիշները³: Ընտրական ցուցակներից ջնջված էին այն ընտրողների անունները, որոնք հայտնի էին, որ չեն քվեարկի հօգուստ կառավարական ցուցակի, ունտրողներու ցանկեն անուններու ջնջումը, — դրում էր «Աս-Սիլասա» թերթը, — հայ ընդդիմադիրներու մոտ հասավ աննախընթաց համեմատության. ընդդիմադիր հայ քվեարկողներու 70 առ հարյուրին անունները ջնջված էին նախապես: Հայ քվեները շքացնելու կառավարական ծրագիրը շրավականացավ անուններու ջնջումով և գործի լծեց դաշ-

1 «Մ. Ն. Հառաջ», 9 Հունիսի 1957 թ.

2 Амин Сайд, стр. 163.

3 «Մ. Ն. Հառաջ», 16 Հունիսի 1957 թ.

խակ խմբակը՝ ստեղծելու համար սարսափի մթնոլորտ։ Դաշնակ տեսորիստներու խմբակ մը ինքնաշարժով անցավ հայ ընդդիմագիրներու ընտրական գրասենյակի առջևն և ուղղակի կրակեց ընտրողներուն վրա։¹ Ընտրություններին միջամտեցին նաև ամերիկյան իմպերիալիստները՝ փորձելով ազդել ընտրությունների ելքի վրա։ Ընտրությունների նախօրյակին թէրությում ամերիկյան դեսպանը հայտարարեց, թէ աղետավոր կլիներ, եթե կառավարական ցուցակը պարտվեր Այդ օրերին կիրանան ժամանեց հատուկ մի բարձր աստիճանավոր՝ հսկելու համար «էլեկտրական գույք» գույքին այսով նախատեսնվող ծրագրերի իրականացմանը։ Ընտրությունների ժամանակ կիրանան հասան «էլեկտրական գույքին այսով նախատեսնվող ամերիկյան զենքեր ու ռազմամթերք, որոնք զրվեցին կիրանանի կառավարության տրամադրության տակ»²։ Եվ վերջապես, ընտրությունների ամբողջ ընթացքին կիրանանի ափերի մոտ նավարկում էր ամերիկյան ճ-ռդ նավատորմը³։ Այս բոլորը կառավարությանը հնարավորություն տվեց պառկամենտական ընտրություններում ապահովել իր կողմնակիցների «հաղթանակը»։ 66 դեպուտատներից 44-ը կամ 2/3-ը նրա կողմնակիցներն էին։

Թեև կառավարությանը հաջողվեց «հաղթանակ» ձեռք բերել, սակայն նրան չհաջողվեց ձախողել շատ ազգային, բնդիմադիր գործիչների ընտրությունը պառկամենտում։ Կիրանանի պառկամենտում ընտրվեցին երկրում հայտնի շատ քաղաքական գործիչներ, որոնք հանդես էին գալիս Շաման-Սոլցի կառավարության քաղաքականության դեմ։

Կառավարությունը ցանկանում էր պառկամենտական ընտրությունները վերածել յուրօրինակ հանրաքվեի հօգուտ իր քաղաքականության։ Սակայն այդ բանը նրան չհաջողվեց։ Ժողովրդական մասսաները բողոքում էին կառավարության քաղաքականության, ընտրությունների ժամանակ լայն տա-

1 Մեջքերումն ըստ «Մ. Ն. Հառաչ», 16 Հունիսի 1957 թ.։

2 «The Middle East», 1961, p. 218.

3 «Современный Ливан», стр. 130.

բածում գտած զեղծարարություններ։ և տիրապետող սար-
սափի մթնոլորտի դեմ։

Մյուս կողմից Ազգային ճակատին և դեմոկրատական ու-
ժերին ևս շնչառողվեց հասնել իրենց կարևոր խնդիրների իրա-
դորժմանը։ Թեև պառամենատի կազմում անցան մի շարք
ընդդիմադիր գործիշննոր, սակայն դեմոկրատական ուժերին
շնչառողվեց հասնել այնպիսի պառամենատի ընտրության, որն
արտահայտեր ժողովրդի կամքը և հնարավորությունը աւար-
տեղալ միջոցներով՝ փոխել կառավարությունն ու նրա քա-
ղաքականությունը։ Հայտնի է, որ զա հանդիրանում էր Ազ-
գային ճակատի կարևոր պահանջներից մեկը։ Երկրի զե-
մոկրատական ուժերը սկսում էին հասկանալ, որ խաղաղ, այ-
սինքն ոլեգար միջոցներով անհնար է փոխել կառավարու-
թյան քաղաքականությունը և կիրանանը ազատել ամերիկ-
յան ինպերիալիզմի նիրաններից։ Այդ խնդրի իրականացման
համար պահանջվում էին այլ, ոչ լեզալ միջոցներ։

ԳԼՈՒԽ ԶԱՐՏՐՈՐԴ

1958 ԹԱՎԱԿԱՆԻ ԱՊԱՄԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1958 թվականը կիրանանը դիմավորեց ներքաղաքական լարված իրադրության մեջ, Դա, ինչպես նշվեց նախորդ դիմում, կիրանանի կառավարության բացահայտ պրոիմակեցիալիստական և հակաարարական քաղաքականության, ոչ զենառութիւնի դոկտրինային միանալու և կոմունիզմի դեմ պայքարի դիմը որդեգրեթելու հետևանք էր կիրանանի կառավարող շրջանների հակաադպային քաղաքականությունը հանդիցրեց ապրդիցիոն ուժերի միավորմանը և նրանց պայքարի ուժեղացմանը: 1957 թ. վերջերին և 1958 թ. սկզբներին ավարտից կիրանանի տարրեր քաղաքական ու դասակարգային ուժերի սահմանադատումը: Մի կողմում խմբավորվեցին կիրանանի հետադիմական ուժերը, որոնք իրենց բախտը կապել էին օտարերկրյա խմբերի պայմանագրի հետ: Այդ ուժերի շահներն էր ներկայացնում Շամուն-Սոլոհի կառավարությունը, որի թիկունքում կանգնած էին ֆալանգիստները, զովմի սուրբիները և դաշնակ զեկավարները: Իսկ մյուս կողմում խմբավորվեցին երկրի գնմոկրատական հակաիմակերիալիստական ուժերը: Այդ ուժերը միատարր չէին: Նրա մեջ մտնում էին բանվորները, զյուղացիները, արհեստավորները, մտավորականները, ազգային արդյունաբերական բուրժուազիան, ինչ-

պես նաև կոմպրագորական բուրժուազիայի և ֆեոդալ-կալվածատերերի որոշ շրջանները, նրանց միավորող հակախմահրիմալիզմն էր և արարական ազգայինական քաղաքականություն վարելու պահանջը:

Ընդդիմադիր ուժերի միատարր շինելու պատճառով էլ առաջացան տարրեր խմբավորումներ, Արդեն նշվել է, որ գոյություն ուներ միացյալ Ազգային ճակատ, Ազգային ճակատի մեջ մտնում էին Առաջադիմական սոցիալիստական, ռազմագեց, Բասս, Ազգային կոչ (արար ազգայինականներ), սահմանադրական բլոկ (Թիշարա ալ-Խուրիի մարոնիթ հետեւորդներ) կուսակցությունները¹, Բացի դրանից առանձին ընդդիմադիր խումբ գոյաւթյուն ուներ Տրիալուիում, որը զեկավարում էր Ռաշիդ Քարամեն, Այդ խումբը շեր մտնում Միացյալ ճակատի մեջ, թեև լրիվ պաշտպանում էր նրա ծրագիրը:

Եռտուվ կազմավորվեց նաև մեկ այլ ընդդիմադիր խումբ՝ քաղաքական կուսակցությունների կազմակերպությունների և անձնավորությունների համագումարը, որին զեկավարում էր նախկին պրեմյեր-մինիստր Հուանին:

Եվ վերջապես քաղաքական արենա դուրս եկավ նաև մեկ ուրիշ ընդդիմադիր խումբ, այսպես կոչված ունիտար ուժը, որը հիմնականում բաղկացած էր կիրանանի խոշոր բուժուազիայի ներկայացուցիչներից, ինչպես օրինակ, Հանրի Ֆարանց, Գարրիել Մուրը, Ժորժ Նակկաշը, Յուառլի Սալեմը, Հասան Թվելինին, Շարլ Հելուն, Յուառլի Հիթթին և ուրիշներ. Այս խումբը արտահայտում էր բուրժուազիայի այն շըրջանների շահերն ու քաղաքական տրամադրությունները, որոնք սկզբունքորեն դեմ չէին Արևմուտքի հետ կիրանանի մերձեցմանը, սակայն դեմ էին Շամունի կառավարության բացահայտ պրոիմպերիալիստական քաղաքականությանը, որը վտանգի տակ մեր դնում երկրի անկախությունը, Բացի այդ, այս խումբը հաշվի էր առնում նաև ժողովրդական լայն մասսաների հակախմահրիալիստական տրամադրությունները և երկրի անկախությունն ու գերիշխանությունը պահպանելու նրանց վճռականությունը. Ուստի նա փորձում էր կառավա-

¹ F. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961, p. 50.

բության և ժողովրդական մասսաների ու մյուս դեմոկրատական ուժերի միջն ռեզորդ ուժից, այսինքն, որոշ խմատով միջնորդի դեր կատարել. մի կողմից ստիպել Շամունին փոխել իր բացահայտ պրոամերիկյան, պրոիմպերիալիստական կուրսը, իսկ մյուս կողմից հասնել ազգային-ազատագրական պայքարի, ընդհանրապես իմպերիալիզմի դեմ ուղղված ժողովրդական մասսաների պայքարի թուլացմանը:

Դրաբյունը երկրում ավելի սրբից, երբ հայտնի գարձավ, որ Շամունը պատրաստվում է փոփոխություն մտցնել երկրի սահմանադրության մեջ պրեզիդենտի պաստում երկրորդ անգամ ընտրվելու իրավունք ձեռք բերելու նպատակով։ Նա ուրուրդ ուժից պատվիրակությանը ընդունելով, հայտարարեց, որ ինքը վերատեսության կենթարկի սահմանադրությունը, եթե երկրում չգտնվի մեկը, որ իրեն հաշորգելով ապահովի իր քաղաքականության շարունակությունը¹:

Սահմանադրությունը վերանայելու պրեզիդենտի մտադրությունը և նրա այս հայտարարությունը խոր վրագովմունք առաջացրեց երկրի ներտում։ Սահմանադրությունը վերանայելու հարցը ձևական հարց չէր, Դա ուղղակի առնչություն ուներ կիրանանի կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության հետ։ Խնդրի էությունը կայանում էր հետեւյալում։ Շամունի վերընտրությունը նշանակում էր վեցտարի շարունակել այժմյան կառավարության պրոիմպերիալիստական և հակաազգային ու հակաարարական քաղաքականությունը։ Պարզ է, որ զրա հետ չէին կարող հաշտվել երկրի դեմոկրատական ուժերը։ Նրանք պահանջում էին ոչ մի փոփոխության չենթարկել սահմանադրությունը, ընդգծելով, որ կիրանանի ժողովրդի ուղածը պրեզիդենտի քաղաքականության փոփոխությունն է և ոչ թե նրա շարունակությունը։

Ենրորդ ուժից պատվիրակությունը պրեզիդենտի հետ ունեցած իր հանդիպման մասին տվյալ պաշտոնական դեկուցագրում անդրադառնալով պրեզիդենտի այն հայտարարությանը, թե ինքը սահմանադրությունը վերատեսության կեն-

1 Կիրանանի սահմանադրությունն արգելում է պրեզիդենտի անընդեմ ընտրությունը երկու ժամանակաշրջանի համար,

2 «Մ. Ն. Հառաջ, 5 հունվարի 1958 թ.»

թարկի, եթև շգտնվի մեկը, որ շարունակի իր քաղաքականությունը, իրավացիորեն նշում էր. «Դժվար է հավատալ, որ 1400000 լիբանանցիներու մեջ անկարելի է գտնել նեկանձու մը, որ պիտի կարենա ապահովել ազգային քաղաքականության մը շարունակությունը»¹: «Թելեզրաֆե թերթը Շամունի վերոհիշյալ հայտարարությունը համեմատում էր կյուղովիկու 14-ի «Պետությունը ես եմ» հայտարարության հետ և գտնում, որ Շամունի հայտարարությունը նվազ համեստ է, քան Ֆրանսիայի թագավորի այդ ֆրազը»:

Լիբանանի տառենք քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ քննարկում են սահմանադրությունը փոփոխության ենթարկելու հարցը, որոշում իրենց դիրքը այդ խնդրի կապակցությամբ և հանդես գալիս համապատասխան հայտարարություններով: Հայա՞մ Վաթթանիյա կուսակցությանը իր հրապարակած հայտարարության մեջ դեմ դուրս գալով սահմանադրությունը փոփոխության ենթարկելու Շամունի պլաններին, նշում էր, որ «Հանրապետության այժմու նախագահը կպահանջն շարունակել այն քաղաքականությունը, որ Լիբանանին կորսնցնել ավագ իր ազգային ուխտը»²:

1958 թ. հունվարի 27-ին տեղի ունեցավ Ազգային ճակատի մամուլի ասուլիսը, որի ժամանակ Շամունի վերընտրության հարցի կապակցությամբ Ազգային նուկատի անունից հայտարարությամբ հանդիս եկավ Արդարադատչին, նա նշեց, որ Շամունը ոտնակոխեց Ազգային Պակտը: Նրա արտաքին քաղաքականությունը աղետարեր է և լիբանանը դարձել է լրակաների և իրեն դրացի քույր երկրների դեմ դավագրողների որչ: Նա հայտարարեց, որ Ազգային ճակատը դեմ է սահմանադրությունը փոփոխելուն և Շամունի վերընտրությանը, որովհետև նախագահի թեկնածուն պետք է լինի անկեղծ և անկաշառ ազգային, որ հետապնդի լիբանանյան, արարական անկախ քաղաքականություն՝ հիմնված լիբանանի Ազգային Պակտի վրա և մերժի վարել այնպիսի քաղաքականություն, որ կհահանգվի օտարների կամ օտարամոտ

1 «Մ. Ն. Հառաջը, 5 հունվարի 1958 թ.»

2 Նույն տեղում, 12 հունվարի 1958 թ.»

տարբերի կողմից: Ազգային հակատի հայտարարության մեջ նաև ասված էր, որ կիրանանի ժողովրդի առջև կանգնած է մի երկրնարանք. ընտրություն կատարել պրեզիդենտ Շամունի և կիրանանի միջև։ Նա կոչ էր անում անվարան ընտրել երկրորդ՝ այսինքն կիրանանը¹:

Շամունի պլանները դատապարտող որոշում ընդունեց նաև Ազգային համագումարը։ Նրա նիստը տեղի ունեցավ 1958 թ. մարտի 27-ին Հանրի Ֆարանի բնակարանում։ Այդ նիստին մասնակցում էին տարբեր քաղաքական հոսանքներ և ուղղություններ ներկայացնող 80 դորժիներ։ Ազգային համագումարի ընդունած որոշման մեջ ասված էր. «Ստորադրությունները կորոշենք միացնել մեր ճիզնը ու մեկտեղել մեր ուժերը ընդդիմանալու համար նախագահական մանդատի վերանորոգմանը, որ կհական ժողովրդի կամքին և կլուանգել այս հայրենիքի ապագան»²։

Սահմանադրությունը փոփոխելու գեմ արտահայտվեցին կիրանանի երկու կարևոր համայնքների՝ մարոնիթների և մուսուլմանների զեկավարները—պատրիարք Մեսուշին և հանրապետության մյութին՝ շեյխ Մուհամեդ Ալայան, Պատրիարք Մեսուշին հայտարարեց, որ ոչ մի ձեռք շպիտի կանի սահմանադրությանը, որ նրա փոփոխումը կնշանակե երկիրը նետել արկածախնդրության գիրկը³։

Հանրապետության մյութին՝ շեյխ Մուհամեդ Ալայան 1958 թ. ապրիլի 10-ին կազմակերպեց մի ճաշկերույթ, որին ներկա էին առևննի, շիի և գրուզ համայնքները ներկայացնող 300 անձնավորություններ, ականավոր քաղաքական գործիչներ։ Այդ հավաքույթին ելույթ ունեցավ մյութին, ինչպես նաև Մարուք Սաադը, Ռաշիդ Քարամեն, Սաիր Սալամը, Արդալլա Ջաֆին և ուրիշներ։ Նրանք բոլորն էլ դատապարտեցին սահմանադրությունը փոփոխելու և պրեզիդենտին վերընտրելու փորձերը։ Դրա հետ միասին նրանք ողջունեցին դատարիարք Մեսուշինին նրա ազգային կեցվածքի համար։ Խոյամ

1 «Մ. Ն. Հառաջը, 2 փետրվարի 1958 թ.».

2 Նույն տեղում, 30 մարտի 1958 թ.».

3 Նույն տեղում։

Համայնքի անունից նրանք արտահայտվեցին հօգուտ իսլամ-քրիստոնյա միասնականության¹,

Այս ելույթներին, հայտարարություններին և որոշումներին զուգընթաց երկրում ծայր են առնում բողոքի լայն, մասսայական շարժումները. Հատկապես մեծ ցուցեր տեղի ունեցան Տրիպոլիում 1958 թ. մարտի 21-ին, որին մասնակցում էր մի քանի հազար մարդ Յուցարարները բացականշում էին, որ իրենք թույլ չեն տա սահմանադրության վերանայումը և պրեզիդենտի վերընտրությունը²:

Սակայն Շամունը բոլորովին էլ մտադիր չէր հրաժարվել իր ծրագրերից: Նա սկսում է մորիլիկացնել իր կողմնակիցներին, ձգուելով ամեն գնով հասնել իր վերընտրությանը, 1958 թ. մարտին, պառկամեննտում Շամունի կողմնակիցները արդեն բացահայտ կամպանիա սկսեցին հօգուտ նրա վերընտրուման: Այսուհետեւ նա սկսում է զինել իր կողմնակիցներին՝ ֆալանգիստներին, զովմի սուրբներին և դաշնակներին, նըրանց բաժանելով Յ հազար հրացան և ատրճանակՅ: Դրա հետ միասին Շամունը իր կողմնակիցների հետ միասին փորձում է համայնքային երկպառակություններ առաջացնել, քրիստոնյաներին և մուսուլմաններին լարել միմյանց դեմ, աշխատելով պառակտել ժողովրդական մասսաների շարքերը և շատել դեմոկրատիայի ուժերը:

Համայնքային երկպառակություն և թշնամություն առաջացնելու կառավարության փորձերը խոր զայրույթ առաջացրին կիրանանի ժողովրդի՝ թե՛ քրիստոնյայի և թե՛ մուսուլմանի մոտ: Տարբեր համայնքների ղեկավարները հանդես եկան այդ քաղաքականության դատապարտմամբ և քրիստոնյա-մուսուլմանական միասնականության պահպանման կողմերով: Երկրի տարբեր վայրերից օրինակ, Թեյլիից, Շուֆից, Քըֆերմաթիից, Հասրայայիից, Շառուայալից, Բարաշիիի և այլ շրջաններից թերթերի խմբագրությունները ստանում էին բազմաթիվ բողոքագրեր, Բողոքագրերը ուղարկում էին քրիստոն-

1 «Մ. Ն. Հառաշ», 13 ապրիլի 1958 թ.,

2 Նույն տեղում, 23 մարտի 1958 թ.,

3 Ա Լ Ե Խ Ա Լ Յ ..., ստ. 8.

յաները, մուսուլմանները և դրուզները: Նրանք դատապարտում էին կառավարության վարած թայֆայականության քաղաքականությունը և դգուշացնում, որ նա շատ աղետարեր հետեւանքներ կարող է ունենալ: Ժողովրդական մասսաների համար անընդունելի էր դավանական գժտություններն ու թշնամանքը: Լիբանանի ժողովուրդը՝ քրիստոնյան, իսլամը և դրուզը ցանկանում էին իրար հետ ապրել հաշտ ու խաղաղ եվ միթե այդ ցանկության լավագույն արտահայտությունը չէր այն, որ Տրիպոլիում, որը հանդիսանում է մուսուլմանական խոշոր ու ազգեցիկ կենտրոն, 1958 թ. մարտի 21-ին տեղի ունեցած ցույցի ժամանակ ցուցարարները կրում էին «Կեցցն պատրիարք Մեռլին» լոգում գրել¹:

Սակայն Շամումը չէր ցանկանում ոշեղվել իր ընտրած կուրսից: Ինտրիգները, դավագրությունները և խժոժությունները երկրի ներսում շարունակվում են, Դրա զոհը դարձավ «Թելեգրաֆ» թերթի խմբագիր և տնօրին, լիբանանի հայտնի հասարակական ու ազգային գործիչ Նասիր Մեթնին: 1958 թ. մայիսի 7-ին, երբ նա վերադառնում էր տուն, բանդիտները հարձակվեցին և սպանեցին նրան²: Դա քաղաքական ակտ էր: Շամունականները գաղտագողի սպանեցին Մեթնին, որը համարձակորեն հանդես էր գալիս Շամումի ռեժիմի և նրա պրոտերիկյան քաղաքականության դեմ: Նա դեմ էր Շամումի վերընտրությանը:

Մեթնին սպանության մեջ լիբանանի դեմոկրատական ուժերը մեղադրեցին կառավարությանը և անձամբ իրեն՝ Շամումին, նրան համարելով ազգի դավաճան, որը երկիրը հանձնեց իմպերիալիզմի ձեռքք³: Այդ սպանությունը հանդիսացավ վերջին կաթիլը, որ լցորեց լիբանանի ժողովրդի համբերության բաժակը: Եվ այն զայրությը, որ կուտակվել էր լիբանանի ժողովրդի և դեմոկրատական ուժերի մոտ ընդդեմ Շամումի ռեժիմի և ամերիկյան իմպերիալիզմի, այդ

¹ Փ. Ն. Հառաջ, 13 ապրիլի 1958 թ.:

² Նույն տեղում:

³ 10.V.1958 «النور»

⁴ Амин Санд. Восстания евров в XX в., стр. 165.

զայրութը պոռթկաց ու դուրս հորդեց. Լիրանանում սկսվեց ապստամբություն:

Ապստամբության բնույթի և նրա պատճառների մասին բուժության պատճագրության մեջ կան տարրեր տեսակետներ, երբեմն նույնիսկ իրարամերժ և միմյանց ուղղակի հակասող:

Ապստամբության սկզբում ԱՄՆ-ի պետական քարտուղար Դալենի նախաձեռնությամբ այն տեսակետը տարածվեց, որ դա միշտպային կոմոմիլիոմի «քայլայիշ» գործունեության հետեանք է: Սակայն այդ տեսակետը երկար կյանք չունեցավ, որովհետեւ կոմունիզմի ամենակատաղի հակառակորդներն անգամ չեին կարող թնկուց մեկ փաստ բերել, որը վկայեր ուղղությունական դաշտության մասին: Ուստի հրապարակ նետվեց մեկ այլ տեսակետու, որ ապստամբությունը հրահրել են նասերը և նրա կողմնակիցները: Զ. Մառլուուն ուղղակի այդպես էլ գրում է. «Ապստամբությունը հրահրվեց և նրան աջակցություն ու պաշտպանություն ցույց տրվեց Արարական Միացյալ Հանրապետության կողմից՝ նպատակ ունենալով տապալել Լիրանանի կառավարությունը և իշխանության զլուի դնել մի այնպիսի կառավարություն, որը Լիրանանը միացնի ԱՄՀ-ին»¹: Այդ տեսակետը պաշտպանում է նաև Ֆահրիմ Քուրեյնը իր «Ճնաժամամբ Լիրանանում աշխատության մեջ, նշելով, որ արարական աշխարհում զլիսավոր դեր կատարելու նասերի ձգտումները կարենոր դեր խաղացին Լիրանանի ճգնաժամի առաջացման գործում»²: Սակայն ի տարրերություն Զ. Մառլուուն, որը ապստամբության միակ պատճառը համարում է նասերի գործողությունները, Յ. Քուրեյնը տեսնում է նաև այլ պատճառներ, ինչպես օրինակ, կաշառակերությունը, պերսոնալիզմը, 1957 թ. ընտրությունները կեղծելը, Շամունի փորձերը վերընտրվելու պրե-

¹ J. Marlowe, Arab nationalism and British imperialism, p. 171.

² Fahim Qubain, Crisis in Lebanon, p. 44.

պիոյնամբ պաստամ և այլն, թայց այնուամենայնիվ իրենց ընդհանուր գնաճատականի մեջ թե՛ Մառլում և թե՛ Քութելիքը պաշտպանում են միենույն սխալ տեսակետը։ Լիբանանի 1958 թ. ապստամբության պատճառը նասերի գործողությունները չէին, ԱՄՀ-ը չի միշտամել լիբանանի ներքին գործերին և չի հրահրել ժողովրդական մասսաներին Եամունի ռեժիմի դեմ։ Այդ բանը, ինչպես ցույց կտրվի սարեւ, հաստատեցին նաև ՄԱԿ-ի դիտորդները։ Վերոհիշյալ երկու հեղինակներն էլ չեն փորձում գտնել ապօստամբության ներքին պատճառները և ապստամբության ծառումը փորձում են բացատրել որպես արտաքին ազդակների ներգործության հետևանք։ Նրանց սխալ ելակետը և օրյեկտիվ փաստերի հետ հաշվի չնստելը նրանց սխալ եղակացությունների է հանդեցնում։

Լիբանանի 1958 թ. ապստամբության պատճառների բացահայտման հարցում ավելի լայն տարածում է գտնել մեկ ուրիշ տեսակետ։ Դա այսպես կոչված արարիզմն է, որ իրը լիբանանի մուտուման արարները գտնվում էին ճնշված վիճակում, զլիավոր դերը պատկանում էր քրիստոնյաներին, այդ պատճառով էլ մուտուման արարները, ըստ այդ տեսությանը, դժուն իրենց վիճակից և ձգտելով միանալ արարական մյուս պիտություններին, ապստամբվեցին։ Այդպես է, օրինակ, զրում կննդիելը, նա նշում է, որ գլխավոր հարցը ռարարիզմի հարցն էր։ Լիբանանում շատ մուտումաններ ու մի արդարացում չէին տեսնում իրենց երկրի անջատ գոյության համար, որը նրանք համարում էին ֆրանսիական նախկին մանդատային իշխանությունների կողմից արհեստականութեն ստեղծված մի երկիր։¹ Ուստի, նշում է նա, լիբանանի մուտուման արարները պահանջում էին միանալ Սիրիային և նրա միջոցով ԱՄՀ-ին։

Այս սխալ տեսակետը, քրիստոնյա և մուտուման արարների փոխհարաբերությունը որպես ապստամբության պատճառ, մի քիչ այլ կերպ՝ իր արտացոլումն է գտնել նաև Քամալ Զամբլատի ռծշմարտությունը լիբանանի հեղափոխության

¹ E. Lengye1, The Changing Middle East, p. 190.

մասին» գրքում, Նա գրում է, որ «կիրանանի վերջին հեղափոխության պատճառներից մեկը Շամունի կողմից քրիստոնյա համայնքային գաղափարի առաջ քաշումն էր, հակառակ, որ երկրի մեծամասնությունը գարձել է մահմեդականաւուն»¹

Այս տեխսակենտրը նույնպես չի համապատասխանում իրականությանը և չի բացահայտում ապստամբության հսկական պատճառները։ Արարիզմն, արարական երկրների հետ մերձենալու տեսնդնցները միշտ էլ եղել են, ինչպես որ եղել են նաև քրիստոնյա համայնքը վեր դասելու, նրա տիրապետոց դիրքն ապահովելու տրամադրությունները։ Սակայն այդ տեսնդնցներն ու տրամադրությունները երբեք միս ու արյուն չեն ստացել և լուրջ կերպով չեն անդրադարձել քրիստոնյաների ու մուտուզմանների հարաբերությունների վրա։

Ապստամբության պատճառները պետք է փնտրել կիրանականի կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության մեջ, իշխանության զլուկի անցնելուց հետո Շամունը սիստեմատիկարար ուժնահարում էր զեմոկիրատական ազատությունները և անտեսում աշխատավորական մասսաների շահերը։ Հենվելով ռեակցիոն տարրերի վրա նա փորձում էր միշտ համայնքային երկառակություններ հրահրել։ Նա երկըրի դռնները լայնորեն բացեց օտարերկրյա կապիտալի առջև։ որի հետևանքով ազգային արդյունաբերությունը և ամբողջ տնտեսությունը ընկած ծանր դրության մեջ, Շամունը և կիրանանի կառավարությունը կոպիտ կերպով ուժնակոյն արին 1943 թ. Ազգային Պակտը, որտեղ շարադրված էին միշտ համայնքային հարաբերությունների և կիրանանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբումքները։ Կիրանանի կառավարությունը հրաժարվեց չնզոքության քաղաքականությունից, իրեն կապեց ուշակենակուերի գոկտրինային հետ և սկսեց վարել բացահայտ պրոիմակերիալիստական քաղաքականություն։ Այդ քաղաքականությունից դժգոհ էին աշխատավորական մասսաները և բոլոր դեմոկրատական ուժերը, անկախ այն բանից նրանք քրիստոնյա էին, թե մուտուզման։

1958 թ. ապստամբության պատճառը կիրանանի կառավարության հակագործակին, հակաարարական և պրոիմպերիալիստական քաղաքականությունն էր:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում կիրանանի կուսակցությունների հայտարարությունը, որը ստորագրել էին Սոցիալիստական Առաջադիմական, Սահմանադրական Միություն, Նազգադի կուսակցությունները, կիրանանի կուսակցությունների Ազգային համագումարը և այլն: Հայտարարության մեջ ասված էր, որ իրենք հանդիս են գալիք ընդդեմ այն թելի, որ կիրանանը կապում է Բաղդատի պակտին և ուշադիմակառակի դոկտրինային», ընդդեմ հայրենասերների գեմ կատարվող բռնությունների ու ներքին ճնշման¹, նվազեցնել կիրանանը փրկեն ստեղծված ժանր դրությունից կիրանանի «հասարակության ղեկավարները,— ասված էր հայտարարության մեջ,— որոշել են անհրաժեշտ գոնել համագործակցել միմյանց հետք²: Այդ համագործակցության նպատակն էր փոփոխել կիրանանի արտաքին ու ներքին քաղաքականությունը, ապահովել կիրանանի անկախությունը, գերիշխանությունը, ազգային միասնությունը, ևլերացնել սահմանադրությանը հակասող անբնական դրությունը և այն անձերին, ովքեր իրենց քաղաքականությամբ կիրանանը հասցրին այսպիսի ամոթալի վիճակից³:

Ապստամբության ականավոր ղեկավարներից մեկը՝ Սահր Սալամը, որը ղեկավարում էր ապստամբական շարժումը թերությում, իրանական «Թեյհան» թերթի թղթակցի հետ ունեցած դրույցում հայտարարեց, որ ապստամբության գլխավոր պատճառը այն է, որ կիրանանի կառավարությունը չցանկացավ շեղոր քաղաքականություն վարել: «Մենք կոմունիստներ շենք,— հայտարարեց Սալամը— բայց միաժամանակ մենք շենք ցանկանում միանալ Արևմուտքինք⁴: Ինչպես տեսնում ենք, Սահր Սալամը այդ պատճառների մեջ չի մտցնում մու-

1 4.IV.1958. «Ալոյ»

2 Նույն աեղում:

3 Նույն աեղում:

4 «Կենքան», Երևան, 6 յուլի 1958 թ.

սուլմանների գժգոհություն, ԱՄՀ-ին միանալու և նման հարցեր։ Հետաքրքիր է այստեղ մեջ բերել Զ. Բարնեջի կարծիքը։ Նա այն հազվագյուտ ուսումնասիրողներից է, որ ճիշտ պատասխան է տալիս ապստամբության պատճառների վերաբերյալ։ Զ. Բարնեջին նշում է, որ կիրանանում ապստամբություն բռնկվեց, որովհետև տերկրի ճնշող մասը մերժում էր պրեզիդենտ Շամունի ամբողջովին պրոարևմտյան դիրքը¹։ Այս հարցին անդրադարձել է նաև Հովհաննես իր «Արարական ազգային ազատագրական դարթոնքը» գրքույկում։ Նա ճիշտ կերպով 1958 թ. ընդվզումի պատճառը համարում է այն, որ «կիրանանի մեջ Շամուն և իր անմիջական գործակիցները՝ Շարլ Մալիք և Սամի Սոլիս, կիրանանի արտաքին քաղաքականության տված գին իմպերիալիզմի հակաարարական նպատակներուն համապատասխան ուղղություն», իսկ ներքին քաղաքականությունը վերակազմակերպած էին իմպերիալիզմի տիրապետությունը դյուրացնող հիմքերու վրա»²։

Իսկ ինչ վերաբերում է 1958 թ. ապստամբության բնույթի գնահատմանը, ապա բուրժուական հեղինակների մեծ մասը ոչի ուղղում տեսնելու նրա ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական բնույթը։ Այդ հեղինակները անտեսելով փաստերը դա համարում են պայքար մուսուլմանների և քրիստոնյաների միջև։ Զ. Մառլուում ուղղակի գրում է, որ «երկպառակությունը շամունականների և նաև կերականների (ինչպես ընդունված է անվանել ընդդիմադիր խմբերին) միջև կրոնական հողի վրա էր»³, Այդ նույն սխալ տեսակետին է նաև Զորշթառնի համալսարանի պրոֆեսոր Հ. Շարաբին։ Նա «Միջին Արևելքի կառավարությունները և քաղաքական գործիչները XX դարում» իր աշխատության մեջ անդրադառնալով 1958 թ. ապստամբության պատճառներին և բնույթին, նշում է։ «մուսուլմանական դժգոհությունը հանգեցրեց ընդհատակյա գիմադրության կազմակերպմանը, իսկ 1958 թ. փետրվա-

¹ J. Barneji, The Middle East in world politics, p. 125.

² Հովհաննես Արարական ազգային-ազատագրական դարթություն, Պելրութ, 1959, էջ 52.

³ J. Marlowe... p. 170.

բին հիմնված սիրիա-և զիապտական միությունից հետո՝
ապստամբական շարժման¹,

իմպերիալիստական մամուլը՝ «Թայմս»-ը, «Նյու Յունիկա-ը
և մյուսները խեղաթյուրելով փաստերը, կիրանանի ժողովր-
դական մասսաների հոյակապ ելույթը նույնպես փորձում էին
ներկայացնել որպես քրիստոնյա-մտւառվմանական պատե-
րազմ։

Իրականում 1958 թ. ապստամբությունը ոչ մի կրոնա-
կան գումավորում չի ունեցել և նեղ համայնքային նպատակ-
ներ չեւ հետապնդել։ Այդ ապստամբությունը կիրանանի ողջ
ժողովրդի և դեմոկրատական ուժերի ազգային-ազատագրա-
կան պայքարի լավագույն ու հերոսական էջն է։ Նա ուներ
ընդունված հակաիմպերիալիստական բնույթ և նրա նպատակն
էր փոխել կիրանանի արտաքին քաղաքական կուրսը, երկիրը
փրկել իմպերիալիզմի ճիրաններից և համընթաց քայլել արա-
րական ազատագրված երկրների հետ, որոնք ակտիվ հակա-
իմպերիալիստական պայքար էին մղում։ Իսկ ամերիկյան
զորքերի ափ իշխելուց հետո կիրանանի 1958 թ. ապստամբու-
թյան հակաիմպերիալիստական բնույթն ավելի շեշտվեց և
նրա գլխավոր նպատակներից մեկը դարձավ կիրանանի ազա-
տագրել ամերիկյան իմպերիալիզմի օկուպացումից։ Սիրիայի
կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Խա-
լեդ Բեկդաշը նշել է, որ «ամերիկյան իմպերիալիստները ու-
ղեցին կիրանանը դարձնել Միջին արևելքի մեջ իրենց իմպե-
րիալիստական խաղիսխը՝ նման Խարայելի և Թուրքիո, Համ-
բերությունը հատավ լիրանանցի սրաբ ժողովրդին, միացուց
իր շարքերը ազգային լայն ճակատի մը մեջ ու սոտքի կանգնե-
ցավ պաշտպանելու համար իր ազգային արժանապատվու-
թյունը, երկիրը փրկեթ համար իմպերիալիստական միջա-
մտութենեն և հաստատելու ազգային դեմոկրատական իշխա-
նություն մը»²։

Այդ պայքարում ուս-ուսի տված ընթանում էին քրիս-
տոնյան ու մուսուլմանը։ Նրանց հարվածն ուղղված էր ռեակ-

¹ H. Sharabi, Governments and politics of the Middle East in the twentieth century, New York, 1962, p. 146.

² «Մ. Ն. Հառաչ», 10 օգոստոսի 1958 թ.։

ցիոն ուժերի դեմ, որոնց շարքերուամ կային թե քրիստոնյաներ և թե մոռուզմաններ, կիրանանի ներքին ուժերի սահմանազատումը տեղի էր ունեցել ոչ թե ըստ կրոնական պատկանելության, այլ երկրի առջև կանգնած կարևոր խնդիրների ըմբռնման տեսանկյունից։ Այդ տեսակետի ճշտությունը հաստատվում է Հետևյալ փաստերով։

1. Եամունի քաղաքականության դեմ և ապստամբության պաշտպանությամբ հանդես էին գալիս կիրանանի երկու ամենազդեցիկ կրոնական համայնքների ղեկավարները՝ քրիստոնյա մարոնիթ համայնքի պատրիարք Պոլ Մեռուշին և մուսուլմանական համայնքի ղեկավար, կիրանանի մյութթի Ալայան ու ամբողջ մոռուզմանական խորհուրդը։

2. Եամունին հիմնականում պաշտպանում էին ֆալանգիստները (քրիստոնյա-մարոնիթներ), դաշնակ ղեկավարները և նացիոնալ-սոցիալական՝ ղողմի սուպիների կուսակցությունը, որի շարքերում կային թե քրիստոնյաներ և թե մոռուզմաններ։ Թայց խնդիրը միայն դրա մեջ չէ։ Հայոնի է, որ նացիոնալ-սոցիալական կուսակցությունը հանդես էր գալիս Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի և Պաղեստինի միավորման, «Մեծ Սիրիայի» ստեղծման պահանջով։ Դա, ըստ նրանց, լինելու էր մի արաբական մոռուզմանական պետություն։ Եթե 1958 թ. ապստամբությունը իրոք քրիստոնյա-մոռուզմանական պատերազմ լիներ, ինչպես փորձում են ցուց տալ որոշ հեղինակներ, ապա այդ կուսակցությունը չպետք է մշանար ֆալանգիստներին և դաշնակներին ու պաշտպաններ Եամունին։ Մանավանդ պետք է ի նկատի ունենանք, որ որոշ հեղինակներ Եամունին ամբաստանում էին կիրանանում «քրիստոնյաների հայրենիք» ստեղծելու, քրիստոնյաներին մենաշնորհ ու արտոնյալ դիրքեր ապահովելու մեջ, մի բան, որը պետք է բացասար ղողմի սուրիների աջակցությունը Եամունին։

Մյուս կողմից վերցնենք Ազգային ճակատի կազմը։ Ինչպես նշել ենք նրա մեջ մտնում էին Առաջադիմական Սոցիալիստական (հիմնականում բաղկացած ղրուզներից), «Նաշշաղե» (մտապահմանական կուսակցություն, որ ստեղծվել էր ի հակադրություն ֆալանգիստների), Սահմանադրական Միու-

թյուն (քրիստոնյա-մարոնիթներ) և այլ կուսակցություններ ու ուժերը: Այլ կերպ ասած ընդդիմադիր ճակատում, որը զեկավարում էր Լիբանանի ժողովրդական մասսաների պայքարը Շամունի և նրա պրոփիմպերի հալիստական քաղաքականության դեմ, միավորվել էին քրիստոնյա և մուսուլման հայրենացները: Այդ ճակատի կազմավորման գործում կրոնական սկզբունքը ոչ մի գեր չէր խաղում: Լիբանանի կոմունիստական կոակցությունը գտնվելով ընդհատակի պայմաններում, հնարավորություն չուներ մտնել Միացյալ ճակատի մեջ: Սակայն նա պաշտպանում էր նրա ծրագիրը և գործողությունները, լիբանանի կոմունիստական կուսակցությունը արտահայտում էր լիբանանի քրիստոնյա, մուառվման և դրուզ քանվորների և գյուղացիների շահերը: Եվ Միացյալ ճակատին նրա պաշտպանելը դարձյալ խոսում էր այն մասին, որ ուժերի սահմանադատումը տեղի էր ունեցել ոչ թե ըստ կրոնական պատկանելության, այլ ըստ քաղաքական մոտիվների: Այդ տեսակետը հաստատվում է նաև նրանով, որ հայերի ճնշող մեծամասնությունը՝ կոմունիստները, հնչակյանները, ուամկավարները և անկախականները կանգնած էին արար հայրենասիրների կողքին և պայքարում էին Շամունի, ֆալանգիստների, դովմի սուրբիների և դաշնակ շեֆերի հակաազգային, հակաարարական քաղաքականության դեմ:

3. Եվ վերջապես 1958 թ. ապստամբությունը որպես քրիստոնյա-մուսուլմանական պատերազմ ներկայացնելու ռահակետիք լավագույն հերոսմն է հանդիսանում այն պատմական իրողությունը, որ այդ ապստամբության ժամանակ արար և քրիստոնյա հայրենասեր ուժերը զենքը ձեռքերին կովտմ էին արար և քրիստոնյա հետադիմական ուժերի դեմ:

1958 թ. ապստամբության ժամանակ բարիկադների թե՛ այս և թե՛ այն կողմում կային քրիստոնյաներ ու մուսուլմաններ և այդ ընտրությունը նրանք կատարել էին ոչ թե ըստ կրոնական պատկանելության, այլ համաձայն իրենց սոցիալ-դասակարգային շահերի և քաղաքական-ազգային խնդիրների ըմբռնման:

Ալ-Թեկիգրաֆ» թերթի խմբագիր Նասիր Մեթնիի սպանությունը ալեկոծեց ողջ դեմոկրատական կիրանանը, Այդ ռազազորժության համար ընդդիմադիր ուժերը պատասխանատու համարեցին կիրանանի կառավարությանը¹ և հրապարակեցին համագույնախան հայտարարություններ։ Կիրանանի ականավոր քաղաքական գործիչներ՝ Սահր Սալամը, Քամալ Զոմբլատը, Ահմեդ Ասադը, Մաարուֆ Սաադը, Արդալիա Ֆաֆին, Հուսեյն Ռավեյին, Ռաշիդ Քարամեն, Սարի Համադեն հրապարակեցին մի կոչ, որտեղ նրանք դատասկարտում էին կառավարության գործողությունների և նաև նաև Մեթնիի սպանության համար։ Դիմելով կիրանանի ժողովը դիմումինը նրանք կոչ էին անում «հայտարարել ընդհանուր գործադրությունը շրջաններում մեջ, պատասխանատվությունը ձգելով իշխանավորներուն վրա, որոնք վերջ դրին ողջ շամիտ իշխանության, ոտնակոխեցին կիրանանի մեջ գոյություն ունեցող բարոյական և ազգային ամեննեն սուլքը և նվիրական արժեքները»²։ Իրենց հայտարարությունների մեջ Շամունի և կիրանանի կառավարության արարքները դատապարտեցին նաև կուսակցությունների, կազմակերպությունների և անձնավորությունների համագումարը և սերրորդ ուժը, նշելով, որ այդպիսի անարգ սպանություններով կառավարությունը ձգտում է ստեղծել վախի ու սարսափի մթնուրուտ, որը կսպանա լիրանանցինների հայրենիքի միասնականությանը և գոյությանը։

Նասիր Մեթնիի ռճրագործ սպանության կապակցությամբ կառավարության դեմ բուռն հարձակումներ տեղի ունեցան պառամենտի 1958 թ. մայիսի 8-ի նիստում։

Նասիր Մեթնիի թաղումը, որ տեղի ունեցավ մայիսի 9-ին, վերածվեց համազգային հուղարկավորության։ Թաղմանը մասնակցում էին մոտ 50000 սպակիրներ։ Դա ոչ թե սո-

¹ E. Lengyel, The Changing Middle East, p. 89.

² «Մ. Ն. Հառաջը, 9 մայիսի 1958 թ.»

վլորական թաղում էր, այլ քաղաքական ելույթ՝ ուղղված իմպերիալիզմի և նրա ներքին դրժակալների դեմ։ Միաժամանակ դա վկայում էր, որ մթնոլորտը շիկացած է և վրա են հասնելու վճռական դեպքեր։

Այդ նույն օրը՝ մայիսի 9-ին Լիբանանի Ազգային ճակարտ որոշեց ամբողջ երկրով մեկ հայտարարել ընդհանուր գործադրություն և ապահանջեց Շամումի անհապաղ հրաժարումն իր պաշտոնից և մինչև նոր պրեզիդենտի ընտրությունը ստեղծել «փրկության» կարինեալ։¹

Ի պատասխան այդ կոչի Լիբանանում սկսվեց ընդհանուր գործադրություն, որն այնուհետև վերածվեց զինված ապօստամբության։ Ապստամբության հիմնական ուժը բանվորները, գյուղացիները, արհեստավորները և մանր առևտրականներն էին։ Ապստամբության իրենց ակտիվ մասնակցությունը բերին կոմունիստները լիբանանի կոմունիստական կուսակցության քարտուղար Նիքոլա Շավին նշել է, որ կոմկուաը ապստամբությանը մասնակցեց հենց սկզբից։ Նրանք լիբանանի բոլոր մասներում կանգնեցին բարիկադների վրա, որոշ շրջաններում ղեկավարելով ապստամբությունը, իսկ որոշ շրջաններում էլ մասնակցելով ղեկավարությանը², Սակայն ապստամբության ընդհանուր ղեկավարությունը գտնվում էր ազգային բուրժուազիայի ձեռքում։ Նրան աշակցություն էին ցույց տալիս նաև որոշ ֆեոդալ-կալվածատերեր, հատկապես հարավում, ինչպես նաև կոմպրագորական բուրժուազիայի որոշ մասը, Բայց կոմպրագորական բուրժուազիայի մի զգալի մասը ոչ միայն չէր պաշտպանում ապստամբությունը, այլ ընդհակառակը, թշնամաբար էր վերաբերվում նրան։

Կառավարական ուժերը, Շամումի կողմնակիցները, դրանք հիմնականում ֆալանգիստները, ողովմի սուրբները և դաշնակներն էին, կոմպրագորական բուրժուազիայի և կալվածատերերի որոշ, ամենահետադիմական շրջանները։ Ռազմական տեսակետից նրանց հիմնական ուժը ժանդարմերիան

1 F. Qubain, Crisis in Lebanon, p. 71.

2 Նույն տեղում, p. 70.

և ոստիկանությունն էր, ինչպես նաև ֆալանգիստների, զովմի սուրբիների և դաշնակիների զինված բանդաները:

Լիբանանի բանակը, եթե շմիացալ ապստամբներին, ապա չպաշտպանեց նաև Շամունին և նրա կողմնակիցներին, նա հիմնականում շեզոք դիրք գրավեց: Բանակի ընդհանուր հրամանատար գեներալ Ֆուադ Հայտարքը, որ բանակը կոչված է Լիբանանը պաշտպանել արտաքին հարձակումներից, իսկ ներկա ապստամբությունը դա ներքին քաղաքական վեճ է և բանակի խնդրի մեջ չի մտնում պաշտպանել կողմերից մեկին¹:

Սակայն Շամունը և նրա կողմնակիցները հենվում են նաև դրսի և առաջին հերթին ամերիկյան իմպերիալիստների օգնության վրա: Ամերիկացիները տրանսպորտային ինքնաթիւներով շտապ կարգով լիբանան փոխադրեցին և կառավարության տրամադրության տակ դրին մեծ քանակությամբ դենք, ուղղմամթերք, արտասվարեր ուսւմբեր և այլն²: Հետագայում նրանք Շամունին հանձնեցին նաև տանկերը: Լիբանանի ափերի մոտ էին նավարկում ամերիկյան Յ-րդ նավատորմի նավերը: Շամունին տրամադրելով զենք և ուղղմական հանդիրձանք ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ներկայացուցիչ Ջոզեֆ Ռիվը հայտարարեց, որ զենքի տրամադրումը և ընդհանրապես ամերիկա-լիբանանյան համագործակցությունը հիմնված է 1957 թ. մարտի 16-ի ամերիկա-լիբանանյան համաձայնագրի վրա: Այլ կերպ ասած, այդ օգնությունը ցույց էր տրվում ըստ «էլյօնհառուերի դոկտրինայի»:

Բացի ամերիկյան ռազմական ու քաղաքական օգնությունից Շամունը և լիբանանի կառավարությունը օգնություն էին ստանում նաև Իրաքից և Հորդանանից: Այդ երկրներում տեղի էր ռամենում ալյապես կոչված «կամավավորների» հավաքագրում, որոնք այնուհետև ուղարկվում էին լիբանան: Այդ «կամավավորները», իրաքյան և Հորդանանյան զորքերն ու սպաները, այդ թվում նաև օդալուները, շամունականների հետ միասին կռվում էին լիբանանի ապստամբ ժողովրդի դեմ:

¹ E. Lengye... p. 191.

² «Политика США на Арабском Востоке», стр. 185.

Բացի այդ իրաքն ու Հորդանանը Շամունին օգնություն էին ցույց տալիս նաև զենքով ու փողով։

Ահա այս ուժերն էին կիրանանում իրար դեմ դիմաց կանգնել, որոնք մոտ 6 ամիս՝ 1958 թ. մայիսից մինչև հոկտեմբեր պայքար էին մղում միմյանց դեմ։

Ապստամբության դրույթը բարձրացվեց Տրիպոլիում։ Մայիսի 2-ին, երրորդ թուակ տեղի էր ունենում Նասիր Մեթնիի հուշարկավորությունը, Տրիպոլիում մոտ 1000 մարդ, դուրս դալով Մանսուքի մզկիթից բռղոքի ցույց կազմակերպեցին։ Նրանց միացան նաև ուրիշները։ Ցուցարարները կրում էին հակամայիսերի հայութական լողումքներ, ինչպես, «Կորչի էլ-գենհառութիւն» դոկտրինան», «Կորչի Բաղդատի պակտը», «Կորչի իմպերիալիզմը», «Կորչի Շամունը», «Կորչեն ժողովրդի դավանանները» և այլն¹։ Ցույցը ձնշելու համար ժողովրդական մասսաների դեմ նետվեցին անվտանգության ուժերը։ Սակայն ցուցարարները չնահանջեցին և իսկական մարտ տեղի ունեցավ կառավարական ուժերի և ապստամբների միջև, որի հետևանքով վիրավորվեց 40 մարդ²։ Այդ մարտերը շարունակվեցին հետագա օրերին։ Հատկապես համառ մարտեր տեղի ունեցան նավահանգստի շրջանում։ Այդուղի ժողովրդի և կառավարական ուժերի միջև, ինչպես նշում է «Աննուր» թերթը, տեղի ունեցավ իսկական ճակատամարտ, որը տեղի երկու ժամ։ Այդ ճակատամարտի հետևանքով ժողովրդը դարձավ դրության տերը³։ Ապստամբները հրկիցեցին ԱՄՆ-ի ինֆորմացիոն բյուրոյի և նացիոնալ-սոցիալական կուսակցության՝ դովմի սուրիներին պատկանող շենքերը, բնակարանները և գույքը։

Ապստամբները կենտրոնացան հիմնականում քաղաքի հին մասում, նրանք փորեցին խրամատներ և կառուցեցին բարիկադներ։ Ստեղծվեց «Ժողովրդական զվարդիա», Հրկիցում և ոչնչացվում էին այն վաճառականների և առևտրական-

1 «Политика США на Арабском Востоке», стр. 187.

2 Аль-Хилю... стр. 9.

3 Fahim Qubain... p. 72.

4 19.V.1958. «النور»

ների խանութիւնները, որոնք հրաժարվում էին միանալ ապստամբությանը:

Տրիպոլիում ապստամբությունը ղեկավարում էր Ռաշիդ Քարամեն: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց 8 մարզուց բաղկացած կենտրոնական հրամանատարություն, որը լուծում էր բոլոր քաղաքական և կազմակերպչական հարցերը: Ստեղծվեցին նաև գործադիր մարմին, հեղափոխական դատարաններ և այլն¹: Փաստորեն Տրիպոլիում, ինչպես նաև երկրի այլ վայրերում, որոնք գտնվում էին ապստամբների տիրապետության ներքո, ստեղծվում են նոր կառավարական ու պետական մարմիններ:

Ապստամբությունը Տրիպոլիում ճնշելու համար կառավարությունը ապստամբների դեմ նետեց խոշոր ռազմական ուժեր, այդ թվում նաև տանկերը ու ինքնաթիռները: Նա պաշարեց հին քաղաքը և նավահանգիստը՝ Ալ-Մինան, փորձեց քաղաքը կտրել շրջաններից, սովոր մատնել բնակչությանը: Կառավարական զորքերը² մինչև հունիսի սկիզբները 12 անգամ փորձեցին մտնել Տրիպոլիի զանազան թաղամասերը և ճնշել ապստամբությունը³: Սակայն այդ բոլոր փորձերը՝ թե ռազմական և թե՝ սովոր միշտոցվ կոտրել ապստամբների կամքը և ճնշել ապստամբությունը, ապարդյուն անցան: Ապստամբները չեին նահանջում: Նրանք խրամատների մեջ դնում էին վառողի տակառներ և դիմամիս՝ արգելելու համար տանկերի և զրահամեթենաների մուտքը քաղաքի թաղամասերը⁴: Ապստամբները մզում էին արյունալի մարտեր և ստիպում կառավարական ուժերին նահանջել:

Ապստամբական շարժումը համեմատաբար ուշ սկսվեց թերութում: Դա պետք է բացատրել նրանով, որ այնտեղ էին գտնվում գլխավոր կառավարական մարմինները և այնտեղ կենտրոնացված էին մեծ թվով կառավարական ռազմական

¹ F a h i m Q u b a i n... p. 75.

² Կառավարական զորքեր ասելով պետք է հասկանալ ոստիկանությունը և ժանդարմերիան:

³ «Մ. Խ. Հառաջ», 8 հունիսի 1958 թ.:

⁴ 19.V.1958, «النور»

ուժերը Բացի այդ, ի նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ Բեյրութում էին գտնվում Շամպանին պաշտպանող հետադիմական կուսակցությունների՝ ֆալանգիստների, Նացիոնալ-սոցիալական կուսակցության և դաշնակների զիսավոր ուժերը։ Շամպանականներն այստեղ ավելի պատրաստված էին պայքարելու ժողովրդական ուժերի դեմ, քան այլ վայրերում։

Հուզումները Բեյրութում մկավեցին մայիսի 12-ին, երբ այսակ Տրիպոլիում տեղի ունեցած արյունահեղությունների լուրբը Աղջային ճակատը, կուսակցությունների, կաղմակերպությունների և անձնավորությունների Համագումարը և կոմունիստական կուսակցությունը կոչ արեցին ժողովրդին շարունակել ընդհանուր գործադուլը, որը մայիսի 12-ին Բեյրութում դարձավ համընդհանուր, Գործադուլին զուգընթաց տեղի ունեցան ցուցեր ի պաշտպանություն Տրիպոլիի հերոսական մարտիկների։ Ցուցերն առանձնապես կազմակերպված ու ուժեղ էին Բաստա, Թարիք Զադիդ, Մըսայթիք և այլ թաղամասերի մեջ։ Ցուցարարները կրում էին «Կորչեն էջեննառուերի դոկտրինան և նրա գործակալները» լոգումքը։ Նրանք հրկիցնեցին ամերիկյան ինֆորմացիոն բյուրոյի շենքը։ Հենց այդ օրն էլ ընդհարումներ տեղի ունեցան ցուցարարների և կառավարական ուժերի միջև, որի հետևանքով զոհվեց 10 մարդ¹, Բեյրութում կատաղի մարտեր տեղի ունեցան մայիսի 16-ին։ Ազստամբները հարձակվեցին Ռաս Բեյրութի և ժանդարմերիայի զորանոցների վրա։ Երկու կողմից էլ տեղի ունեցավ ուժեղ փոխհրաձգություն, գործի դրվեցին գնդացիրներ, ոռմբեր և այլն², Բեյրութում ապստամբների հենակետը դարձավ Բաստա թաղամասը։ Այստեղ կանգնեցվեցին բարիկադներ և փորվեցին խրամատներ։ Թարիկադներ կանգնեցվեցին նաև Թարիք Զադիդ, Մըսայթիք և այլ թաղամասերում։

Բեյրութում օր շկար, որ արյունալի ընդհարումներ և մարտեր տեղի շունենալին, որի հետևանքով ամեն օր զոհվում էին տասնյակներով մարդիկ։

1 -Մ. Ն. Հառաջ, 13 մայիսի 1958 թ.։

2 17.V.1958, «النور»

Ապստամբությունը Բեյրութում զեկավարում էր Սահը
Սալամը:

Սկզբնական շրջանում ապստամբները Բեյրութում մեծ
դժվարություններ էին կրում: Զկային բավարար քանակու-
թյամբ գենդեր և պայթուցիկ նյութեր Սակայն նրանք շվճատ-
վեցին և ստեղծեցին արհեստանոցներ, որտեղ արտադրում
էին պայթուցիկներ, Բացի այդ նրանց օգնության եկավ Քա-
մալ Զունթատը, որը Շուֆի շրջանից Բեյրութի ապստամբ-
ներին ուղարկեց գնդացիրներ, նոնակներ և ականանետներ¹:

Կառավարական և Բեյրութի ապստամբական ուժերի միջև
կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ Հունիսի 14—15-ը:
Կառավարությունը որոշել էր վճռական գրոհ միջոցով
ճնշել ապստամբների զիմադրությունը, վերացնել այդ օշա-
խը Բեյրութում և դրանով իսկ լուրջ հարված հասցնել
ապստամբ ուժերին ամրագց կիրանանում: Ամրագց երկու օր
կատաղի փողոցային մարտեր էին գնում, Ըստ որում կառա-
վարությունը ապստամբների զեմ նետեց տանկեր, Սակայն
Շամունին շհաշողվեց հասնել իր նպատակին, Ապստամբները
շղիչեցին իրենց զիրքերը: Ընդհակառակը, նրանք անցան
հարձակման, այրեցին պրեմյեր-մինիստր Սամի Սոլիմի բնա-
կարանը, գնդակոծեցին պրեզիդնտական պալատը և Բեյրու-
թի բանտերից մեկը²: Դա զդալիորեն բարելավեց ապստամբ-
ների վիճակը և մեծ թափ հաղորդեց ապստամբական շարժ-
մանը ամրագց երկրում:

Կիրանանի 1958 թվականի ապստամբական շարժման
մյուս կարևոր կենտրոնը Շուֆի շրջանն էր: Թերևս սա
ապստամբության ամենակազմակերպված կենտրոնն էր: Այս-
տեղ հակահմարերիալիստական պայքարը զեկավարում էր
Առաջադիմական սոցիալիստական կուսակցության լիդեր Քա-
մալ Զունթատը: Նա ստեղծեց իր ուղարկան ուժերը, ոստի-
կանությունը, արդարադատությունը և այլ վարչական օրդան-
ներ, որոնք գտնվում էին Մոլխարա գյուղում:

1958 թ. մայիսի 13-ին Զունթատի զորքերը հարձակվե-

1 Գահիմ Չաբատ... թ. 74.

2 Նույն սեղում:

շին թելտ էդ-Դին գյուղի վրա, որտեղ գտնվում է պրեզիդենտի հոչակավոր պալատը: Նրանց հաջողվեց գրավել գյուղի մեծ մասը, բայց պալատը գրավել չհաջողվեց: Զումրլատը իր փոքր կրկնեց նաև հաջորդ օրը՝ սակայն դարձյալ անհաջող¹: Շամունի կողմնակիցները թելրութից ստանալով թարմ ուժեր հետ մղեցին ապստամբների բոլոր գրուները: Սակայն դա շխանգարեց ապստամբության հետագա ժամանակ Շուֆի շրջանում: Մայիսի 18-ին Զումրլատի զորքերը գրավեցին Ռատլում գյուղը, հունիսի 9—10-ը, 36 ժամյա կատաղի մարտերից հետո Ֆրայդիս գյուղը, հունիսի 10-ին Ալ-Բարուկ, իսկ 11-ին՝ Այն Զահլիթա գյուղերը²: Զումրլատի զորքերի ձեռքն անցավ մեծ քանակությամբ ռազմավարությամբ:

Սակայն այս շրջանում վճռական ճակատամարտը դեռևս առցելուն էր Ապստամբ ուժերը ձգտում էին գրավել Շիմլան, Այնար և Քարը Շմուկ գյուղերը: Այդ գյուղերին տիրապետելը նրանց հնարավորությունն կտար հսկողություն սահմանել թելրութի օգանակայանի վրա և փաստորեն նրանց առջև կրացվեր հանապարհը դեպի թելրութ:

Այդ խնդրի իրավորման համար 1958 թ. հունիսի 30-ին Զումրլատի զորքերն անցան հարձակման: Հուլիսի 2-ին նրանք գրավեցին Քարը Շմուկ գյուղը, ինչպես նաև նրա շրջակա սարերը, որոնք տիրապետող դիրք ունեին թելրութի օգանակայանի նկատմամբ: Այնուհետև նրանք շրջապատեցին Շիմլան գյուղը: Փաստորեն թելրութի գլխին մեծ վտանգ էր կախվել: Կառավարությունը ապստամբների դեմ նետեց խոշոր ռազմական ուժեր՝ 1200 զինվոր, 20 հրետանի, 4 դաշտային հրետանի, մեծ քանակությամբ զրահապատ մեքենաներ և տանկեր: Նրանց գործողությունները օդից պաշտպանում էին 6 ռազմական ինքնաթիւներ³: Սկսվեց մի իսկական ճակատամարտ, որը տևեց 4 օր: Այնար գյուղը երեք անգամ ձեռքից ձեռք անցավ: Ուժեղ գնդակոծության ենթարկվեց Շմուկ գյուղը: Կառավարական ուժերին մեծ զոհների և մեծ նիգերի շնոր-

¹ Բահիտ Ղաբալա..., թ. 76.

² Խույն տեղում, էջ 77:

³ Խույն տեղում, էջ 78:

Հիւլ հաջողվեց ստիպել Զունրլատի զորքերին նահանջել: Այդ ճակատամարտում կառավարական ուժերը կորցրին 300 սպանված և վիրավոր, այդ թվում 17 իրաքցի, 32 հորդանացի, 55 բահրեյնցի և մեկ բրիտանական սպա, որը ծպովածէր արարի զգեստով¹:

Բեյրութը գրավելու իր փորձի ձախողումը Զունրլատը բացատրում է նրանով, որ Բեյրութում գտնվող օպոզիցիոն ուժերը իրեն անհրաժեշտ օգնություն ցույց շտվին և շակտիվացրին իրենց զործությումները շամունականների դեմ:

Բացի Բեյրութից, Տրիպոլիից և Շուֆից ապստամբական ուժեղ շարժումներ էին ծավալվել նաև երկրի մյուս վայրերում՝ Սուրում, Կանում, Բաալբեկում, Ջորթայում, Հերմելում, Սայդայում, Մարջայունում, Բինտ Ջբեյլում և այլ վայրերում²: Հերմելում ապստամբությունը ղեկավարում էր Սարրի Համադեն, պառկամենտի նախկին նախագահը: Այստեղ ստեղծվեց զինված ջոկատ բաղկացած 1000 հոգուց, որը իշխանությունը Հերմելում վերցրեց իր ձեռքը: Այսուհետև մայսի 21-ին ապստամբները ղրավեցին Բաալբեկ քաղաքը³: Սայդան նույնպես անցավ ապստամբների ձեռքը: Նրանք ստեղծեցին տեղական զանազան կոմիտեներ, որոնք զբաղվում էին ֆինանսական, ներքին ապահովության և այլ հարցերով: Այստեղ ապստամբության ղեկավարն էր Մաարուֆ Սաադը⁴:

Ուժեղ և արյունալի բախումներ էին տեղի ունենում էիրանանի հյուսիսում գտնվող Աքբար լեռնային շրջանում⁵: Ապստամբության կենտրոնը դարձավ Զդորթա քաղաքը: Աքբարում ստեղծվեց ապստամբական ջոկատ, որի շարքերում կար 1500 մարդ: Այս ջոկատը ղրավեց Տրիպոլիի հյուսիսում գտնվող Հալբա քաղաքը⁶: Մեծ հաջողությունների հասան

¹ F a h i m Q u b a i n . . . , p. 78.

² 19.V.1958, «النور»

³ Նոյն տեղում,

⁴ F a h i m Q u b a i n . . . , p. 75.

⁵ «Մ. Ն. Հառաջ», 18 մայիսի 1958 թ.:

⁶ Аль-Хилю... стр. 10.

ապստամբները նաև երկրի մյուս վայրերում։ Նրանք մի քանի տեղից պայթեցրին «Իրաք պետրոլիում» ընկերությանը պատկանող նավթախողովակները¹։

Ապստամբները կազմակերպեցին նաև իրենց ռադիոհաղորդամունքը։ Այդ օրերին կիրանանում գործում էր ընդդիմադիր ուժերի երեք ռադիոկայան՝ «Ազատ Լիբանան» (Տրիպոլիում), «Զահ» և «Արաբական Զայն» (Բեյրութում)²։ Դրանցից ամենաուժեղը «Նաշրադ» կուսակցության հիմնած «Արաբական Զայն» ռադիոկայանն էր։ Նա իր հաջորդումները տևելիս էր ամեն որ 9 ժամ՝ արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն և հայերեն լեզուներով³։

Ապստամբության հաջողության ու նրա ծավալման մասին էր խոսում այն փաստը, որ 1958 թ. հունիսի կեսերին ապստամբների վերահսկողության տակ էր գտնվում ամբողջ կիրանանի տերիտորիայի $\frac{2}{3}$ -ը։ Իսկ ապստամբների զինված ուժերի թիվը հասնում էր 10—12 հազարի⁴։

1958 թ. ապստամբությունը ազգային մեծ ճոկատամարտ էր, որին մասնակցում էին ազգային բոլոր հոսանքները, բոլոր ազգությունների ներկայացուցիչները։ Այդ ազգային մեծ ճակատամարտին ակտիվորեն մասնակցեցին և արար Հայրենասիրական ուժերի կողքին կանգնեցին հայ աշխատավորական մասսաները և բոլոր դեմոկրատական հոսանքները՝ կոմոմիսատները, հնչակները, ռամկավարները և անկախականները։ Նրանց նման դիրքորոշման պատճառը այն էր, որ կիրանանի ազգային անկախության համար մղվող պայքարը լիբանանահայերը համարում էին արդարացի պայքար և նրան աջակցություն ցույց տալը որպես իրենց սուրբ պարտականություն։ «Մեր նշանաբանն է Հառաջ շարաթաթերթը «Հայ» և արար միասնական ճակատ կիրանանի ազգային մեծ մարտնչումին մեջ հոգվածում նշում էր. «Կիրանանահայերը կանգնած են պայքարի դիրքերում վրա, որով-

1 «Մ. Ն. Հառաջ», 13 մայիսի 1958 թ.

2 Խույն տեղում, 29 հունիսի 1958 թ.։

3 Գահ Չ սա 1 ո... թ. 80

4 «Современный Ливан», стр. 131—132.

հետև նախ և առաջ կդիտակցին, թե իրրև հարազար քաղաքացիները լիբանանյան հայրենիքին, կոչված նն պաշտպանելու անոր անկախությունն ու ազատությունը՝ ընդգեմ իմպերիալիստներու և անոնց մանկավիկներու դավադրությանց և բազմապիսի ոտնձգություններուն Անոնք կոչված են իրենց արար հղայրներուն հետ կողք-կողքի պաշտպանելու կիրանանը իմպերիալիստական զինյալ միջամտության դեմ՝ անհրաժեշտության մը պարագային այրելով հողը ներխուժող գաղութարարներուն ոտքերուն տակաւ՝ եզ իրոք, կիրանանուաստոեղմիկեց արար և հայ ժողովրդական մասսաների և դեմոկրատական ուժերի միասնական ճակատու Նրանք միավորում են իրենց ուժերը, ամենուրեք գումարում միասնական ժողովներ, որտեղ որոշում են իրենց շանքերը միացնել օտարերկրյա իմպերիալիստների և ներքին հետադիմության դեմ մղվող պայքարում։ Այսպես, ապստամբության օրերին Բեյրութի Մասլախ և նոր Հաճըն թաղերի արար և հայ բնակիչների ներկայացուցիչները գումարում են համատեղ ժողով, որտեղ որոշում են ուշք շդարձնել զանազան թշնամական ըուրերին, որոնց նպատակն է երկպառակություն սերմանել արարների և հայերի միջև, համախմբել շանքերը և միասին պայքարի դուրս գալ հանուն կիրանանի ազատության։ Հետո հրապարակվեց մի հայտարարություն, որտեղ մասնավորապես ասված էր. «Այսօր, երբ կիրանան կդիմագրավե պատմական ժանր փորձության մը, մեր պարտականությունն է, ավելի քան երրեք, ամբապնդել արար և հայ եղբայրական կապերը, արգելու հանդիսանալու համար շարակամ մարդոց այն ճիգերում, որոնք կմիտին թշնամություն սերմանել այս զույգ հարանվանություններու միջև։

Կոչ կընենք մեր թաղեցիներու գիտակցության, զանոնք հրավիրելով միության և եղբայրության, պաշտպանելու համար կիրանանի անկախությունն ու ազգային գերիշխանությունը՝ մեր ներքին գործերին ներս կատարվելիք ամեն օտար միջամտության դեմ, Կեցցե կիրանանը, Կեցցե հայ և արար

եղբայրությունը՝ Արար և Հայ դեմոկրատական մասսաների կողմից իրենց ազգային պարտքը դիտակցելու շնորհիվ տապալվեցին արար և Հայ թշնամություն առաջացնելու բոլոր փորձերը և ամենուր արարներն ու Հայերը միասնական հակատով հանդես եկան իմպերիալիզմի և ներքին հետադիմության դեմ Բացառություն կազմեցին դաշնակները, Հայ ժողովրդի կողմից վաղուց մերժված այդ բախտախնդիրները նրանք դարձան զորքիք Շամունի ձեռքին ու թե՛ արարական և թե՛ Հայկական թաղերի մեջ տեսորի ու սարսափի մթնոլորտ ստեղծեցին, թափելով բազմաթիվ արար և Հայ հայրենասերների արյամբ², Շամունը ամեն կերպ հովանավորում էր դաշնակներին, դինում նրանց և օգտագործում արար ու Հայ դեմոկրատական ուժերի դեմ, Հ. Աղրաշյանը «Արարական ազգային ազատագրական զարթոնքը» գրքույկում նշում է, որ «օրվան իշխանավորները կացությանը դիմագրավելու Համար, անզորության մատնված իրենց ոստիկանական ուժերուն և ոստիկան-զորքերու կողքին, Թուրքիային ու Իրաֆեն զրկված զենքերով զինեցին հետադիմական կազմակերպությունները—զովմիները, քաթայեպները և դաշնակները»³, Նըրանց հրահանգվեց զինված հարձակումներ զործել ապստամբական կենտրոնների վրա, նենգափոխել այդ ապստամբության իսկական էռությունը, այն ներկայացնել որպես կրոնական, իսլամ-քրիստոնյա կողմէ և դրանով իսկ պատրվակ ստեղծել օտար միջամտության համար⁴,

Դաշնակները ինչպես միշտ, այնպես էլ 1958 թ. ազգային մեծ ճակատամարտի օրերին փորձում էին իրենց ներկայացնել որպես Հայ ժողովրդի իսկական ներկայացուցիչներ: Նրանք հանդգնում էին Հանդես գալ ամբողջ լիբանանահայության անունից: Սակայն այդ կեղծիքը մերկացվեց ինչպես Հայ, այնպես էլ արար դեմոկրատների կողմից: Այստեղ Հատ-

1 -Մ. Ն. Հառաք», 7 հունիսի 1958 թ.,

2 26.X.1958. «الأخبار»

3 Հ. Գ. Ա. Պ. աշեան, Արարական ազգային ազատագրական զարթոնքը, էջ 54,

4 Նույն տեղում:

կապես պետք է նշել արար դեմոկրատների ժառարկությունները, որոնք սիստեմատիկարար արաբական հանրույին կարծիքը ժանոթացնում էին լիբանանահայ զանազան քաղաքական հոսանքների հետ և մերկացնում դաշնակցության ռեակցիոն էությունը: Լիբանանյան հայտնի ժուռնալիստ Նասիր Նըմըր «Աշ-Շարք» արարական օրաթերթում հանդես եկավ հատուկ հոգվածով ուղղված դաշնակցության դեմ: Նա դաշնակներին համարելով Շամոնի գործակիցներ և իմպերիալիզմի գործակալներ, որոնք պայքարում են ազգային հեղափոխության դեմ, գրում էր. «Դաշնակները, որոնք կհավակնին խոսել հայ ժողովրդին անունով, իսկության մեջ ուրիշ բան չեն, եթե ոչ ավազակախումբ մը, որ սկզբեն իսկ իր ամբողջ գործունեությունը դրած է ի սպաս իմպերիալիզմին, բռնատիրության և նեխավածության: Անոնք մեկուսացած են հայ ժողովրդենք¹: «Ալ-Ախրար»-ը բացատրում էր լիբանանի ժողովրդական մասսաներին, որ խոր տարակարծություն գոյություն ունի մի կողմից դաշնակների և մյուս կողմից հայ մնացած քաղաքական ուժերի միջև և որ «այդ տարակարծությունը մասնակի ու պարզ տարակարծություն չէ, ինչպես սովոր ենք անվանել «հնակ-դաշնակ» անհամաձայնություն, այլ նա ազգային քաղաքականության տարակարծություն է»²: Թերթը նշում էր, որ այդ պայքարը հիմնականում գնում էր հետեւյալ հարցի շուրջը: Արարական արևելքում ապրող հայերը ո՞ւմ կողքին պետք է կանգնեն, ազգային ազատագրական շարժումների՝, թե այդ երկրների ներսում գտնվող իմպերիալիզմի գործակալների կողքին: «Հայ հայրենասերները, — նշում էր «Ալ-Ախրար»-ը, — կոմունիստները, հնակյանները, ռամկավարները և անկուսակցականների հոծ զանգվածները վճռականորեն կանգնած են իրենց արար եղբայրների կողքին, որոնք կպայքարեն հանուն իրենց անկախության և ազգատագրության»³, ի հակադրություն հայ հայրենասերների այս խմբի, ողաշնակները ձգտել են շարունակում են ձգտել հայ

1 Տե՛ս «Մ. Ն. Հառաջ», 19 Հոկտեմբերի 1958 թ.:

2 26.Խ.1958, «Ալ-Ախրար»

3 Նույն տեղում:

ժողովուրդը տանել իմպերիալիստների և նրանց գործակալների հետեւից և որպես պահեստի ուժ տրամադրել նրանց»¹:

Սակայն լիբանանահայությունը, ինչպես լիբանանի ազգային աղատագրական պայքարի նախորդ էտապներում, այնպես էլ այժմ, 1958 թ. հակահմապերիալիստական ապօտամբության ժամանակ, շնորհ դաշնակցության հետեւից: Նա կանգնեց արար հայրենասերների հետ միասին միԱնույն պատճեշի վրա և զենքը ձեռքին պաշտպանեց լիբանանի անկախությունն ու աղատությունը: Հայերը անօրինակ հերոսության դրվագներ արձանագրեցին Բեյրութում, Բեյրութի Հանրն, Զարշափուկ, Խալիլ Բեղմի, Մասլախ և Կարանտինա թաղերը, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով, միացան զինված ապօտամբությանը և արար ապօտամբ ուժերի հետ միասին հերոսական պայքար մղեցին շամունականների և իմպերիալիստական ուժերի դեմ: «Հպարտությամբ պետք է նշել, — գրում էր «Մ. Ն. Հառաջա-ը, — որ հատկապես վերջին շրջանի հակահմապետական դեպքերի ժամանակ Խալիլ Բեղմի, Հանրն և Զարշափուկ թաղերի քաղաքական և մարտական կեցվածքը զգալիորեն հարվածեց հակահմապետական դավադրության դիրքերը և իսլամ-քրիստոնեական կրոնական պառակտումներ առաջացնելու ձգտող դավերը»²: Սակայն հայերը միայն Բեյրութում չեր, որ մասնակցում էին հակախմապերիալիստական պայքարին, նրանք 1958 թ. լիբանանի ապօտամբությանը իրենց ակտիվ մասնակցությունը բերին նաև Տրիպոլիտայ³, Շուֆի շրջանում⁴ և այլ վայրերում:

Բեյրութից բազմաթիվ հայ երիտասարդներ մեկնեցին Շուֆի շրջանը և միացան ապօտամբներին: Այդ կապակցությամբ Շուֆի ապօտամբների ղեկավար Քամալ Զումբլատը նշում է. «Իմ շարքերում մեջ ունեի Բեյրութին եկած հայ երիտասարդներ, որոնք կուլի առաջին գծի վրա քաջարար մարտընչեցին պաշտպանելու համար լիբանանի անկախությունը»:

¹ 26.X.1958, «Հայագործություն»

² «Մ. Ն. Հառաջա», 26 Հոկտեմբերի 1958 թ.:

³ Նույն տեղում:

⁴ 26.X.1958, «Հայագործություն»

և գերիշխանությունը. անոնք նույնքան լավ լիրանանցիներ են, որքան դյուրզի, շիա, սյունի կամ մարոնի լիրանանցիները¹. Հայերի դերը 1958 թ. ապստամբության ժամանակ բարձր է զնահատել նաև Տրիպոլիի ապստամբական ուժերի առաջնորդ Ռաշիդ Քարամենի. Դիմելով հայերին նա ասել է. «Մենք և դուք եղայրներ ենք. կովեցանք պատնեշներու ետին, միասնաբար արյուն թափեցինք մեր հայրենիքի անկախության համար. Պիտի շարունակենք մնալ եղայրներ ու պայքարել կիրանանի անկախության զորացման ու վերելթին համար»²:

Դրանով կիրանանի հայերը մի անգամ ևս պատցուցեցին, որ իրենք այդ երկրի արժանավոր զավակներն են և պատրաստ են հանուն կիրանանի անկախության ու ազատության թափել իրենց արյունը, Մասնակցելով 1958 թ. ապստամբությանը, նրանք կատարեցին իրենց հայրենասիրական և քաղաքացիական պարտքը:

Արար դեմոկրատական ուժերի հետ միասին կիրանանի հայերի մասնակցությունը 1958 թ. հակաիմպերիալիստական ապստամբությանը մեծ նշանակություն ունեցավ,

Առաջին. դա ընդլայնեց հակաիմպերիալիստական ճակատը, բազմապատկեց դեմոկրատական ուժերը և դրանով իսկ նպաստեց ապստամբության հաղթական ելքին:

Երկրորդ, հայերի մասնակցությունը ապստամբությանը նպաստեց իսլամ-քրիստոնյա երկպառակություն ստեղծելու և այդ հիման վրա ապստամբական ուժերը շլատելու իմպերիալիստների և շամոնականների փորձերի ձախողմանը:

Եվ, վերջապես, երրորդ, նա էլ ավելի ամրապնդեց արար և հայ բարեկամությունը, որն այժմ շաղախվեց երկու ժողովուրդների լավագույն զավակների արյամբ:

* * *

Ապստամբության համաժողովրդական բնույթը, նրա ծավալումն ու թափը, ինչպես նաև բանակի շեզոք դիրք գրա-

1 «Զարթոնք», Բեյրութ, 21 սեպտեմբերի 1958 թ.

2 «Արարատ», 18 նոյեմբերի 1958 թ.

վելը ծանր, կարելի է ասել, հուսահատ դրության մեջ դրին Եամուն-Սոլիկ կառավարությանը և նրա կողմնակիցներին։ Նրանք ապստամբության առաջին օրերից սերտ կապերի մեջ մտան արևմտյան իմապերիալիստական տերությունների հետ, նրանցից ստանում էին զենք և այլ օգնություն։ Պրեզիդենտ Եամունը անընդհատ տեսակցություններ էր ունենում ԱՄՆ-ի, Անգղիայի և Ֆրանսիայի դեսպանների հետ։ Վերոհիշյալ երկրների, և առաջին հերթին ԱՄՆ-ի կառավարությունը բազմիցս հայտարարեցին, որ իրենք պատրաստ են ռազմական օժանդակություն ցույց տալ Եամունին ԱՄՆ-ի պետական քարտուղար Դալեմը 1958 թ. մայիսի 15-ին սենատի լիդերներին տեղյակ պահեց, որ Միացյալ Նահանգները պատրաստ են կիրանան ափ հանել ամերիկյան ռազմական ուժները¹։ Սակայն այդպիսի բացահայտ միջամտության համար հարկավոր էր թեկուղ որևէ ձևական պատրվակությունը և 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին դիմեց մի բողոքով, որ իր Արարական Միացյալ Հանրապետությունը միջամտում է կիրանանի ներքին գործերին, որ կիրանանում աեղի ունեցող քաղաքացիական կոիվը հրահրվել է նրա կողմից։ Եամունի այս քայլի նպատակն էր կիրանանում տեղի ունեցող իրադարձություններին տալ միջազգային բնույթ և դրանով իսկ հարավորություններին միջամտել կիրանանի ներքին գործերին։ Եամունը հույս ուներ ամերիկյան սվինների օգնությամբ պահպանել իր իշխանությունը։

Կիրանանի կառավարության այս քայլը դատապարտեց կիրանանի ամբողջ ժողովուրդը։ Ազգային ճակատը, կուսակցությունների, կազմակերպությունների և անձնավորությունների համագումարը, Առաջադիմական Սոցիալիստական ռնազագեց, Թիթրիհադադ ադ Դուստուրը, Շայ'ա Վաթանիյա, կուսակցությունները, հանրապետության մյուֆթին, դրուզների կրոնապետը, խաղաղության կողմնակիցները և այլն, հանդիս եկան Անվտանգության խորհրդին Եամունի ներկա-

¹ «СССР и Арабские страны», стр. 502.

յացրած բողոքի դեմ, Նրանք հերքում էին ԱՄՀ-ի կողմից Հիբանանի ներքին գործերին միջամտելու վերաբերյալ կառավարության հերյուրանքը։ 1958 թ. մայիսի 30-ին հանդես գալով պրես-կոնֆերանսում մարոնիթների պատրիարք Մեռուշին հայտարարեց, որ Արարական Միացյալ Հանրապետությունը չի միջամտել կիբանանի ներքին գործերին։ Նա դատապարտելով Անվտանգության խորհրդին ներկայացրած կիբանանի բողոքը, նշեց, որ ներկա վիճակի պատասխանատուն հանդիսանում են կառավարությունը և նրա գործած ոճիրները։ Նա նշեց, որ կիբանանը պետք է հետևի չեզոք քաղաքականության, Վերջում պատրիարքը պահանջեց, որ Շամունը հեռանա երկրից, իշխանությունը հանձնվի գններալ Շիհարին և ստեղծվի ազգային կառավարություն¹։

Ազգային ճակատը հեռազիր ուղարկեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Դագ Համմարշելդին, պնդելով մերժել ԱՄՀ-ի դեմ ներկայացված բողոքը որպես անհիմն ու զրագարացական։ Այդ հարցին անդրադապակ նաև Արարական լիգան և որոշում ընդունեց Անվտանգության խորհրդից հետ վերցնել ԱՄՀ-ի դեմ ներկայացված բողոքը և կոչ ուղղեց լիբանանյան բոլոր հատվածներին վերջ տալ խոռվություններին ու արյունահղությանը²։ Սակայն կիբանանի կառավարությունը արհամարհեց թե երկրի ժողովրդական մասսաների ու դնմուկրատական ուժերի և թե Արարական լիգայի, այսինքն արարական երկրների կարծիքն ու պահանջը։ Նա իր բողոքը հետ շվերցրեց։

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կիբանանի կառավարության բողոքի քննարկմանը ձեռնամուխ եղավ 1958 թ. հունիսի 6-ին։ Հանդես գալով առաջին նիստում կիբանանի արտաքին գործերի մինիստր Շարլ Մալիքը դարձյալ շարումնակում էր պնդել կիբանանի ներքին գործերին ԱՄՀ-ի միջամտության վրա։ Պատասխանելով նրան, ԱՄՀ-ի ներկայացուցիչ Ռամար Լութֆին ցույց տվեց, որ ԱՄՀ-ի դեմ ներկայացված ամբաւտանության նպատակն է լիբանանյան հարցը ներքին հարցից

1 «Մ. Ն. Հառաջ», 1 հունիսի 1958 թ.,

2 Նույն տեղում, 3 հունիսի 1958 թ.։

վերածել միջազգային հարցի և առիթ տալ օտար միջամտության¹:

Լիբանանի տեսակետի պաշտպանությամբ հանդես եկան ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, ինչպես նաև Իրաքի ներկայացուցիչ Ֆադիլ Զամալին:

Լիբանանյան ճգնաժամի հենց սկզբից Սովետական Միությունը ուշի-ուշով հետևում էր դեպքերի զարգացմանը, նպատակ ունենալով թուլլ շտալ իմպերիալիստական պետություններին միջամտելու Լիբանանի ներքին գործերին: 1958 թ. մայիսի 18-ին ՏԱՍՍ-ը հանդես եկավ հայտարարությամբ ԱՄՆ-ի և մյուս արևմտյան տերությունների կողմից Լիբանանի ներքին գործերին միջամտելու վտանգի վերաբերյալ: Այդ հայտարարության մեջ ասված էր. «Իմպերիալիստները Լիբանանը ընտրել են իրենց ինտրիգանների և վտանգավոր պրովոկացիաների նոր օրինեկությունը կատարելով Լիբանանում հաստատել դադության ոճիմ և հարվածել ամբողջ Արարական արևելքի ազգային-ազատագրական շարժմանը»²: Հայտարարության մեջ ասված էր նաև, որ Սովետական Միությունը գըտնում է, որ բոլոր հարցերը, որոնք վերաբերում են Լիբանանի պետությանը, ուստի Լիբանանի ժողովրդի ներքին գործն է և ուրիշ ոչ մի պետություն իրավունք չունի միջամտելու նրա ներքին գործերին:

Հանդեմ գալով Անվտանգության խորհրդում, Սովետական Միության ներկայացուցիչ Ա. Ա. Սորոկնը նշեց, որ Շ. Մալիքի ելույթը ու ոքի համոզեց և շնչիմնավորեց Լիբանանի կառավարության բողոքը: Նա միաժամանակ նշեց, որ Լիբանանի կառավարության բողոքը ի վիճակի վիճնելով իր սեփական ուժերով հաղթահարել ներքին ճգնաժամը, Անվտանգության խորհրդին դիմելով փորձում է այդ հարցին տալ միջազգային բնույթ և ձեռք բերել արևմտյան որոշ տերությունների օժանդակությունը³: Նա հայտարարեց, որ Սովետական Միությունը գեմ է Լիբանանի ներքին գործերին միջամտելուն և այդ նպատակների համար Անվտանգության խորհրդումը շպետք է

1 «Մ. Խ. «Հայոց», 8 հունիսի 1958 թ.

2 «СССР и Арабские страны», стр. 499.

3 Նույն աեղում, էջ 504.

օգտագործել: «Խսկ ինչ վերաբերում է լիբանանյան կառավարության զանգատին, նշեց սովետական ներկայացուցիչը, ապա Անվտանգության խորհուրդը պետք է մերժի այդ գանգատը, որպես անհիմնեց¹:

Անվտանգության խորհուրդը 1958 թ. հունիսի 11-ի նիստում շվեդական պատվիրակության առաջարկությամբ որոշ շուրջ ընդունեց Լիբանան ուղարկել ՄԱԿ-ի դիտորդների մի խումբ և հանձնարարել գլխավոր քարտուղարին այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել:

Դրանով իսկ ձախողվեցին արևմտյան իմպերիալիստների պլանները՝ Անվտանգության խորհրդի կողմից պաշտոնական սանկցիա ստանալ ուղարկան միջամտություն կատարել Լիբանանի ներքին գործիքներին:

ՄԱԿ-ի դիտորդների խումբը, որը եղավ Լիբանանում և լիբանանա-սիրիական սահմանագլխում, մանրազնին ուսումնասիրեց ու ծանոթացավ գրության հետ, նա երկու զեկուցագիր ներկայացրեց և երկուսի մեջ էլ ժխտում էր Արաբական Միացյալ Հանրապետության կողմից լիբանանի ներքին գործիքներին միջամտելու փաստը: Առաջին զեկուցագիրը ներկայացվեց 1958 թ. հունիսի 3-ին, թե՛ զեկուցագրում և թե՛ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Դագ Համմարշելդի ելույթում նշվում էր, որ լիբանանյան այս տագնապն ունի ներքին բնույթ և ԱՄՀ-ի կողմից ոչ մի միջամտություն չի կատարված: Իսկ ինչ վերաբերում էր ապստամբների կողմից օգտագործվող զենքին, որ նրանք իրը եզրակացնեցին, որ ժողովրդական ուժերի կողմից օգտագործվող զենքերը անգիտական, ֆրանսիական և կամ իտալական արտադրության են², ՄԱԿ-ի դիտորդներն իրնոց այս տեսակետը կրկին հաստատեցին նաև օգոստոսի 1-ին ներկայացրած իրենց երկրորդ զեկուցագրում:

Անվտանգության խորհրդի որոշումը և ՄԱԿ-ի դիտորդների զեկուցագիրը շառհացը Եամսնին և արևմտյան տերություններին, իմպերիալիստական տերությունները լիբանանի

1. «СССР и Арабские страны», стр. 505.

2. «Մ. Ն. Հառաջ», 7 հունիսի 1958 թ.:

ժողովրդական ապստամբությունը ձնշելու և արարական ազգային ազատազրական շարժմանը մահացու հարված հասցնելու համար վճռեցին դիմել բացահայտ ռազմական միջամտության ։ Սակայն նրանք գտնում էին, որ ավելի նպատակաշարմար կլինի, եթե ուազմական միջամտությունը սկսողը լինի ուազմական բլոկների մեջ մտնող մերժավոր արևելյան օրեւէ պետություն։ Այդ պատիվը՝ տրվեց Իրաքին, 1958 թ. հունիսի 14-ին Ստամբուլում նշանակվեց Բաղդատի պակտի նիստ, որը պաշտոնապես պետք է Իրաքին լիազորեր տօգնության գնալու կիրանանի կառավարությանը, այսինքն դիմել ազրեսիայի։ Իրաքի արտաքին գործերի մինիստր Ֆադիլ Զամալին հայտարարեց, որ իրենց ճակատագիրը կապված է կիրանանի ներկա կառավարողների ճակատագրի հետ։

Բաղդատի պակտի երկրների կողմից կիրանանի դեմ ագրեսիա նախապատրաստելը հայտնի դարձավ կիրանանի հասարակայնությանը։ Դա պատճառ հանդիսացավ բողոքի նոր ալիքի, Քաղաքական կուսակցությունները և գործիչները իրենց վրդովմունքն էին հայտնում իմպերիալիստների դավերի դեմ։ Հունիսի 9-ին հրապարակվեց կիրանանի Ազգային կուսակցությունների, կազմակերպությունների և անձնավորությունների համագումարի հայտարարությունը, որտեղ ասված էր, որ իմպերիալիզմը ծնումդ տվեց Բաղդատի պակտին Արարական արևելքում իր դիրքերն ամրապնդելու և հարկ նշած դեպքում այն որպես գործիք իր իմպերիալիստական ծրագրերն իրականացնելու նպատակով օգտագործելու համար։ Այս պահին, — ասված էր հայտարարության մեջ, — երբ նուրի Սահդը և Զելալ Բայարը պատրաստակամություն կհայտնեն ծառայելու իմպերիալիստներու արյունը, անկախությունը ու ազգային գերիշխանությունը, ազգային կուսակցություններու, մարմիններու և անձնավորություններու համա-

խմբումը կզգուշացնե բոլոր անկեղծ լիբանանցիները իրենց դեմ նյութվող այս դավադրության դեմք¹,

Սակայն Բաղդատի պակտի Հուլիսի 14-ին նշանակված նիստը տեղի չունեցավ, Այդ օրը հրաժրում տեղի ունեցավ Հեղափոխություն, որը տապալեց միապետությունը և երկրում հաստատեց Հանրապետություն։ Բաղդատի պակտը մնաց առանց Բաղդատի Հուլիսի 14-ի հեղափոխությունը մի ժամը հարված էր իմպերիալիստներին և նրանց դիրքերին Մերձավոր ու Միջին արևելքում, նա ժամը հարված էր նաև արարական ռեակցիոն ուժերին, այդ թվում նաև շամունականներին։ Վերջիններս զրկվեցին իրենց կարևոր հենարաններից մեկից իրաքի հեղափոխությունը առ ու սարսափի մեջ դրեց Շամունին և նրա կողմնակիցներին։

Հուլիսի 14-ի առավոտյան խումապի մատնված Շամունը հանդիպում է ունենում ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանների հետ և պահանջում անհապաղ ուղղմական միջամբություն։ Նա պնդում է, որ այդ միջամբությունը տեղի ունենա առաջիկա 48 ժամվա ընթացքում, հակառակ դեպքում ամեն ինչ ուշ կլինի՝ ինքը կսպանվի, իսկ Լիբանանը կդառնա Եգիպտոսի արքանյակը²։

Ամերիկյան իմպերիալիստները որոշեցին անցնել վճռական գործողությունների, Նրանք զինված ազգեսիա սկսեցին Լիբանանի դեմ։ 1958 թ. Հուլիսի 15-ին ամերիկյան ծովային հետևակը ափ իջավ Բեյրութի Սեն-Ժորժ ծոցում, իր այդ ազգեսիան ԱՄՆ-ի կառավարությունը փորձում էր արդարացնել նրանով, որ իրեն օգնության պահանջով զիմել է Լիբանանի պրեզիդենտ Շամունը։ Հուլիսի 15-ին Սպիտակ սոււնը հրապարակեց մի հայտարարություն, որի մեջ ասված էր, որ Միացյալ Նահանգներն իրենց զորքերը լիբանան են ուղարկել ամերիկյան քաղաքացիների կյանքը պաշտպանելու և ոգեռելու լիբանանի կառավարությանը, Այնուհետև հայտարարությունը նշում էր, որ շայդ զորքերի ուղարկումը շի հանդիսանում պատերազմական ակտու, Այդ ուժերը ցույց են տա-

1 Ա. Ն. Հառաք, 12 Հուլիսի 1958 թ.։

2 Fahim Qubain... p. 115.

ի իս Միացյալ Նահանգների Հոգատարությունը կիրանանի անկախության և ամբողջականության նկատմամբ, որը մենք համարում ենք կենսականորեն կարևոր մեր ազգային շահերի և ամրող աշխարհի խաղաղության համար»:

Այս հայտարարությունը թաքցնում է ամերիկյան իմպերիալիստների իսկական նպատակները:

Ամերիկյան ազգեսիխան, որի մասին նախօրոք տեղյակ էին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները, նպատակ ուներ զրուավիդ կանգնել Եամունին և ճնշել ապստամբությունը կիրանանում: Բացի այդ նա, ինչպես նաև Հուկիսի 17-ին Անգլիայի կողմից Հորդանան գեսանտ հանելը, նպատակ ունեին խեղգել հեղափոխությունը Իրաքում և այնտեղ վերսկանդնել հին կարգերը Այլ կերպ ասած, ԱՄՆ-ի և Անգլիայի ձեռնարկած ռազմական միջոցառումները նպատակ ունեին հարված հասցնել ազգային-ազատագրական շարժումներին արարական երկրներում և պահպանել իրենց տնտեսական ու քաղաքական գիրքերը Մերձավոր ու Միջին արևելքում:

Ամերիկյան ինտերվենցիան բացահայտ ազգեսիխան էր և կիրանանի անկախության ու գերիշխանության կոպիտ խախտում: Դրանով ամերիկյան իմպերիալիստները ունակուի արեցին միջազգային բոլոր նորմերը և պետությունների գերիշխանության գաղափարը:

Ամերիկյան ինտերվենցիան, ամերիկյան զորքերի ափ հանելը նշանակում էր կիրանանի օկուպացիա:

Կիրանանի օկուպացումից հետո է՛լ ավելի շեշտվեց ազգային-ազատագրական պայքարի հակաիմպերիալիստական բնույթը: Եթե մինչ այդ կիրանանի ապստամբ ուժերի զիսավոր խնդիրն էր փոխել կառավարությունը, դուա հետ միասին երկրի արտաքին քաղաքական կուրսը, վարել դրական շեղոքության քաղաքականություն, ապա այժմ նրանց զիսավոր պահանջը դարձավ օտարերկրյա զորքերի դուրս բերումը, կիրանանը ամերիկյան օկուպացումից աղատադրելը և նրա անկախության վերահաստատումը:

Ամերիկյան ռազմական ինտերվենցիան շտեսնված վըրդուկմունք առաջացրեց կիրանանում: Ապստամբության զեկավարներ Սահիբ Սալամը և Ռաշիդ Քարամեն անմիջապես հան-

դես նկան հայտարարությամբ, որտեղ նրանք բողոքում էին
 ամերիկյան զորքերի կողմից կիրանանի օկուպացման դեմ:
 Ամերիկյան զորքերի ներխուժման կապակցությամբ կիրա-
 նանի պառամենտի նախագահ Աղիլ Օսելյանը բողոքի հե-
 ռագիր ուղարկեց Անվտանգության խորհրդին, Բեյրութում
 ամերիկյան դեսպանին իր բողոքը հայտնեց կիրանանի զին-
 ված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ֆուադ Շիհա-
 րը, «Առ-Մայ ալ-Ամմ» թերթի հաղորդման համաձայն, նա
 Միացյալ Նահանգներից պահանջեց, որ նրանք 24 ժամվա-
 ընթացքում իրենց զորքերը դուրս բերեն կիրանանից¹, կիրա-
 նանի քաղաքական գործիչները, առաջադեմ մամուլը և կազ-
 մակերպությունները ձաղկում էին ամերիկյան իմաստիա-
 լիստներին և նրանց ռազմական ինտերվենցիան, Պառամեն-
 տի անդամ Թաքի էդ-Դինը «Թիեզմաքաֆա-ում» գրում էր, որ
 ամերիկյան և անգլիական նավթային մանուպուլիաները հանուն
 իրենց շահերի զոհաբերեցին կիրանանի անկախությունը: Նա
 իրավացիորեն նշում էր, որ ամերիկյան զորքերի ափ հանելը
 կիրանան, հանդիսանում է կիրանանի լրիվ օկուպացում և
 իրենից ներկայացնում է դավագրություն, որի նպատակն է
 ճնշել ազգային-ազատագրական շարժումները կիրանանում
 և իրաքում², «Ալ-Մայադ» թերթը դիմելով Շամունին, զգու-
 շացնում էր, որ պիտի կորչեն թե ամերիկյան Ե-րդ նավատոր-
 մը, թե դավաճանները և պիտի մնա կիրանանը: Իսկ «Աթ-
 Թայարը» գրում էր. «Զէինք սպասեր, որ մեր անկախության
 թվականնեն 15 տարիներ ետք, ոտնակոխվեր մեր անկախու-
 թյունը՝ մեր անկախությունը պաշտպանելու պատրվակին
 տակէ»³:

Բեյրութի, Տրիպոլիի և կիրանանի այլ վայրերի բնակչու-
 թյունը ժողովներ էր գումարում և բողոքի բանաձևեր ընդու-
 նում, Այդ բողոքագրերի հիմնական բովանդակությունը ամե-

1 «Մ. Ն. Հառաջ», 27 Հունիսի 1958 թ.

2 16.VII.1958. «الرأي العام»، دمشق

3 16.VII.1958. «التلغراف»

4 Տե՛ս «Մ. Ն. Հառաջ», 20 Հունիսի 1958 թ.

բիկլան դորբերի անհապաղ դուրսքերման պահանջը և կիրա-
նանի անկախության պաշտպանումն էր:

Մի շարք վայրերում՝ թեյրութի թաստա թաղամասում,
նավահանգստում և ալլն, ընդհարումներ տեղի ունեցան
ապստամբների և ամերիկյան օկուպացիոն զորքերի միջև
Թանալ Զունըլատը իտալական «Կոռրյերա դելլա սերա» թեր-
թին տված ինտերվյուէի ժամանակ հայտարարեց, որ «Եթե
ամերիկացիները չհեռանան, ապա մենք նրանց դեմ կկովենք»¹:

Ամերիկյան զինվորները կիրանանում իրենց պահում էին
որպես իսկական օկուպանտներ, Նրանք կատարում էին սպա-
նություններ, կողոպուտ, բռնարարում աղջիկներին, կանանց
և այլն, Սիրիական «ԱՀ-Հոմհուրա թերթը հաղորդում էր, որ
ամերիկյան մի տանկ, որի ղեկի մոտ նստած էր հարրած ամե-
րիկյան տանկիստը, ճղմեց փողոցում խաղացող երկու երե-
խաների²; Այդ նույն թերթի հաղորդման համաձայն, ամերիկ-
յան հարրած զինվորների մի խումբ մտնում է Ռայյակ օդա-
նավակայանի մոտ գտնվող մի լիրանանցու տուն, բռնարա-
րում տանը գտնվող երկու աղջիկներին, թալանում բոլոր ար-
ժերավոր իրերը և հետո տոմեց հրցենում: Երբ հարևանները
փորձում են հրդեհը մարել և աղջիկներին փրկել, ամերիկյան
զինվորները կրակում են նրանց վրա: Վերջիններս շեն վախե-
նում ե պատասխան կրակով փախուստի են մատնում ամե-
րիկյան հրառակներին³: Ամերիկյան տանկիստները «զվար-
ճանալու» նպատակով թեյրութում տանկերով հետապնդում
են իրանանյան մի ավտոմեքենա, Այդ տանկերից մեկը հաս-
նում է ավտոմեքենային և նրան վարորդի հետ միասին
ճղմում⁴, Այսպիսի դեպքերը թիւ չեին: Դրանք գալիս էին ապա-
ցուցելու, որ ամերիկյան իմադերիալիստները իրենց համարում
էին նվաճողներ և կիրանանի վրա նայում որպես իրենց գա-
ղութիւն Ամերիկյան հրոսակների այս արարքները է՛լ ավելի
վրդովեցրին կիրանանի ժողովրդական մասսաներին, եվ

¹ -Կորրերա լեռա սերա, Միլան, 25 սուլա 1958 թ.

² 25. VII. 1958. «الجور»، دمشق

³ Նույն տեղում, 25 Հունիսի 1958 թ.:

⁴ 28. VII. 1958. «المدار»، دمشق

նրանք ամերիկյան զինվորների համար ստեղծեցին առաջնորդության և անհանգույրժողականության մթնոլորտ:

Ամերիկյան իմպերիալիստների ազգեսիվ ակտը դատապարտեցին նաև համաշխարհային առաջադիմական ուժերն ու կազմակերպւթյունները, ամբողջ պրոգրեսիվ մարդկությունը: Հանուն կիրանանի և Հորդանանի շահերի պաշտպանության իր խորհրդական ձայնը բարձրացրեց Սովհատական Միությունը, Հունիսի 15-ին հրավիրվեց Անվտանգության խորհրդի նիստը հրավիրվեց ԱՄՆ-ի կառավարության պահանջով: Դա, անշուշտ, խորամանել քայլ էր ԱՄՆ-ի կողմից: Մի կողմից նա ռազմական ինտերվենցիա սկսեց կիրանանի դեմ, իսկ մյուս կողմից, հենց նույն օրը, նա պահանջեց հրավիրել Անվտանգության խորհրդի նիստ, որտեղ նա խորհրդի անդամներին տանըյակ պահեց, որ կիրանանի կառավարության շինողանքով՝ ամերիկյան կառավարությունը գործեր է ուղարկել կիրանան: Դրանով ամերիկյան կառավարությունը փորձում էր շփոթության մեջ զցել համաշխարհային հասարակայնությանը և նըրան համոզել, որ ինքը «պաշտպանում է» միջազգային նորմերը և «չի անտեսում» միջազգային կազմակերպությունները, որտեղ վրա դրված են խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու խնդիրները:

Ամերիկյան դիվանագիտության այդ մանյուվրները համոզիլ կերպով մերկացրեց սովետական ներկայացուցիչ Ա. Ա. Սորոլկը: Նա նշեց, որ ԱՄՆ-ը դիմել է բացահայտ ազգեսիայի և այդ ազգեսիան չի կարող արդարացնել այն հանգամանքը, որ կիրանանի պրեզիդենտ Շամունը հատուկ խընդրանքով դիմել է ԱՄՆ-ին: Ա. Սորոլկն ընդգծեց, որ Շամունի շինողանքը հրահրված էր իր՝ ԱՄՆ-ի կողմից: Սովետական ներկայացուցիչը ցույց է տալիս, որ կիրանան զորքեր ուղարկելը ազգեսիա է արարական բոլոր ժողովուրդների դեմ: Դա ՄԱԿ-ի կանոնադրության խախտում է, որն արգելում է ռազմական ուժի կիրառումը արտաքին քաղաքականության բնագավառում: Վերջում Ա. Սորոլկը Սովետական կա-

սավարության անունից մտցրեց բանաձեկի նախագիծ, որը ԱՄՆ-ի գործողությունները համարելով ուղմական միջամտություն կիրանանի ներքին գործերին, սպառնալիք աշխարհի խաղաղությանը և ՄԱԿ-ի կանոնադրության խախտում, կոչ էր «անում ԱՄՆ-ի կառավարությանը դադարեցնել ուղմական միջամտությունը արարական պետությունների ներքին գործերին և անհապաղ իր զորքերը դուրս բերել կիրանանի տերիտորիայից»¹:

Հուլիսի 16-ին հրապարակվեց Սովետական կառավարության հայտարարությունը Մերձավոր ու Միջին արևելքում ամերիկան ազբեսորների գործողությունների հետևանքով ստեղծված դրության մասին։ Այդ հայտարարության մեջ ասված էր. «կիրանան ԱՄՆ-ի կատարած ուղմական ինտերվենցիայի իսկական պատճառը ԱՄՆ-ի և արևմտյան մյուս տերությունների նավթային մտնության հարցի ձգտումն է պահպանել իրենց գաղութային տիրապետությունը Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, ինչպես նաև Արարական արևելքում նրանց քաղաքականության ակնհայտ սնանկացումը, Բաղդատի պակտի և Դալես-Էլյզենհաուերի տիրահռչակ դոկտրինայի փլուզումը»²։ Սովետական կառավարությունը պահանջեց, որ ԱՄՆ-ը իր զորքերը դուրս բերի կիրանանից, նշելով, որ ինքը անտարբեր չի մնա իր սահմանների մոտ ստեղծված պատերազմի վտանգի հանդեպ և իրեն իրավունք է վերապահում ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ, որտեղ կպահանջին խաղաղության և անվտանգության պահպանման շահերը»³։

Անվտանգության խորհրդում կիրանանի հարցի քննարկումը տևեց մինչև հուլիսի 18-ը Այդ օրը տեղի ունեցավ սովետական բանաձեկի քվեարկումը։ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և խորհրդի մյուս 5 անդամները քվեարկեցին սովետական բանաձեկի գեմ, իսկ ճապոնիան և Եվրոպիան ձեռնպահ մնացին։ Դրանով Անվտանգության խորհրդումը մերժեց սո-

¹ «СССР и Арабские страны», стр. 516.

² Նույն տեղում, էջ 517։

³ Նույն տեղում, էջ 520։

վետական բանաձևը, որը առաջարկում էր գաղաքարեցնել միշամտությունը արարական երկրների ներքին գործերին և ամերիկյան դորքերն անհապաղ դուրս բերել կիրանանից, Սովետական ներկայացուցիչ Ա. Սորոլկը քվեարկությունից հետո հանդես գալով նշեց, որ Անվտանգության խորհուրդը շկատարեց ՄԱԿ-ի կանոնադրությամբ նրա վրա դրվող պարտականությունները, որ ռայսորվա քվեարկությունը սև բիծ է Անվտանգության Խորհրդի վրա, իսկ այս օրը սև օր կլինի Միավորված Ազգերի Կազմակերպության համար։

Թեև Անվտանգության խորհուրդը մերժեց սովետական բանաձևը, սակայն Սովետական Միությունը լիուզացրեց իր շանքերը։ Նա հանդես եկավ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ սեսիա հրավիրելու առաջարկությամբ, որը պետք է քննարկեր ամերիկյան զորքերը կիրանանից և անզիւական զորքերը Հորդանանից դուրս բերելու հարցը։ Արևմտյան տերությունները ի վիճակի շեղան հանդես գալ այդ առաջարկի դեմ և 1958 թ. օգոստոսի 8-ին հրավիրվեց Գլխավոր Ասամբլեայի արտակարգ նիստ, որը տևեց մինչև օգոստոսի 21-ը։ Սեսիայում պարզորոշ իրար հակառակվեցին երկու գիծ, երկու քաղաքականություն։ Մեկը Սովետական Միության, սոցիալիստական, ինչպես նաև Ասիայի ու Աֆրիկայի խաղաղասեր երկրների քաղաքականությունը, իսկ մյուս՝ իմպերիալիստական տերությունների։ Առաջինները պահանջում էին ամերիկյան և անզիւական զորքերի դուրս բերումը կիրանանից և Հորդանանից, իսկ իմպերիալիստական տերությունները, և առաջին հերթին, ԱՄՆ-ն ու Անգլիան շհամարձակվելով բացահայտորեն հանդես գալ այդ պահանջում էին ամերիկյան արևելքում խաղաղության պահպանման համար ՄԱԿ-ի զորքերք ստեղծելու իրենց պլանը։ Դա կիրանանի և Հորդանանի օկուպացումը երկարածելու մի փորձ էր, այս անգամ, այսպես կոչված «միջազգային զինված ուժերի» օդնությամբ։ Ուստի պատահական չէ, որ ՄԱԿ-ի անդամ երկը ների մեծ մասը, այդ թվում նաև Սովետական Միությունը, սոցիալիստական և արարական երկրները այդ պլանի դեմ

1 «СССР и Арабские страны», стр. 822.

զուրս նկան։ Արաբական 10 պետություններ ներկայացրին քանաձնի իրենց նախագիծը, որը պահանջում էր հրաժարվել աղքատայից, շմիջամտել մյուս երկրների ներքին գործերին և ամերիկյան ու անգլիական զորքերը դուրս բերել կիրանանից ու Հորդանանից¹, Բանաձնը հանձնարարում էր ՄԱԿ-ի պլիատվոր քարտուղարին հետևել այս որոշման կատարմանը և ոչ ուշ, բան սեպտեմբերի 30-ը զեկուցագիր ներկայացնել այդ հարցի կապակցությամբ։

ԱՄՆ-ը և Անգլիան տեսնելով, որ արաբական երկրների այս բանաձնը վայելում է ՄԱԿ-ի անդամ պետությունների մնացող մեծամասնության աշակցությունը և որպեսզի վերջնականապես իրենց շմերկացնեն համաշխարհային կարծիքի առջև, հրաժարվեցին կիրանան և Հորդանան ռՄԱԿ-ի գինված ուժերը ուղարկելու իրենց պլանից։

1958 թ. օգոստոսի 21-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ սեսիան ընդունեց արաբական 10 երկրների բանաձնը։ Դա մի լուրջ հարված էր իմաստելիստական տերություններին։

Այս հարցի քննարկումը Անվտանգության խորհրդում և Գլխավոր Ասամբլեայի արտակարգ սեսիայում ցուց տվեց, որ արաբական երկրներն իրենց հակաիմագերիալիստական պայքարում միայնուկ չեն։ Կիրանանի և Հորդանանի ժողովուրդները տեսան, որ սոցիալիստական երկրները և աշխարհի մյուս խաղաղասեր երկրները պատրաստ են պաշտպանելու իրենց արդար դատը։ Դա, անշուշտ, մեծ նեցուկ էր այն պայքարում, որ նրանք մղում էին հանուն իրենց անկախության և ազատության։

Կիրանանի ընդդիմագիր ուժերի կարևոր պահանջներից մեկը, ինչպես արդեն նշել ենք, Շամունի հրաժարականն էր պրեզիդիումի պոստից։ Շամունը շհրաժարվեց։ Սակայն սեպտեմբերի 23-ին լրանում էր նրա լիազորությունների ժամկետը և բոլորի համար պարզ էր, որ նրա վերընտրության մասին խոսք լինել չի կարող։

1 «СССР и Арабские страны», стр. 829.

Պրեզիդենտի նոր թեկնածուի հարցը դարձավ ներքաղաքական կարևոր հարցերից մեկը: Ընեակցիոն ուժերը և շամունականները ձգտում էին թույլ լուսալ այդ պաշտոնի գրավումը ազգային-ազատազրական շարժման որևէ ներկայացուցչի կողմից: Նրանք աշխատում էին պրեզիդենտ ընտրել այնպիսի մեկին, որին ընդունելի լինենց հրենց համար և հիմնականում վարեր նախկին քաղաքականությունը: Այդ բանին էին ձգտում նաև ամերիկացիները: Այդ ուղղությամբ հսկալական աշխատանք ծավալեց ամերիկյան դեսպան Մաթկլինսկի, որը բացահայտ միջամտում էր կիրանանի ներքին գործնքին: Նրանք կանգ առան Ռայմոն Էղդեի թեկնածության վրա, որը ապստամբության ժամանակ բռնել էր «Հաշտվողական» դիրք:

Բայց կիրանանի ընդդիմագիր ուժերը դիմ էին այդ թեկնածությանը: Նրանք պաշտպանում էին բանակի գլխավոր հրամանատար Ֆուադ Շիհարի թեկնածությունը, նվ կիբանանի պառկամենտը 1958 թ. Հուլիսի 31-ին 48 ձայնով ընդդեմ 7-ի, հանրապետության պրեզիդենտ ընտրեց Ֆուադ Շիհարին¹: Դեմ քվեարկողների թվում էին Սամի Սոլիք, Քաթչան Համադիեն, Ալբեր Մհայրերը, դաշնակցական Մովսես Տեր-Գալստյանը, Խաչիկ Պապիկյանը և ուրիշներ²:

Նոր պրեզիդենտի ընտրության կապակցությամբ Ազգային ճակատը հրապարակեց հայտարարություն, որտեղ ողջունելով գեներալ Շիհարի ընտրությունը, միաժամանակ նշում էր, որ դա բավարար չէ լիբանանյան ճգնաժամը լուծելու համար: Աղջային ճակատը շեշտում էր, որ ներկա ճգնաժամը միայն պրեզիդենտի աթոռին նստած անձի փոփոխության հարց չէ: Ներկա տագնապը համազգային է³: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը և ելնելով լիբանանյան ճգնաժամը շուտափույթ լուծելու խնդրից Ազգային ճակատը հետևյալ պահանջները ներկայացրեց:

1. Ամերիկյան զորքերը անհապաղ և առանց պալմանի հեռացնել կիրանանի տերիտորիայից:

1. E. Lengyel... p. 195.

2. «Մ. Ն. Հակաբ», Յ պլուտոսի 1958 թ.,

3. Նույն տեղում:

Հ. ԳԵՂԱՐԱԼ Շիհարը անմիջապես պետք է ստանձնի պրե-
դիդենտի իր նոր պաշտոնը:

Այս կետն առաջադրվել էր այն կապակցությամբ, որ
Հուլիսի 31-ին Շիհարի պրեզիդենտ ընտրվելուց հետո Քամիլ
Շամունը հայտարարեց, որ ինքը նույնիսկ մեկ օր շուտ վայր
չի դնի պրեզիդենտի իր տիազորությունները, որոնք լրանում
էին սեպտեմբերի 23-ին: Այդ ձգձգումը կատարվում էր զի-
տավորությունը Ռեակցիոն ուժերը ցանկանում էին օգոստոսին
այդ ժամանակաշրջանը և իրենց դիրքերն ամրապնդել:

3. Ազգային ճակատը պահանջում էր ստեղծել ազգային
կառավարություն, որը հավատարիմ լինի 1943 թ. Ազգային
Պակտին, վերականգնի և պահպանի կիրանանի ազգային
անկախությունն ու գերիշխանությունը, երկիրը ձերբազատի
ու էլեկտրականությունը դոկտրինայից և վարի շեղոք քաղաքականու-
թյուն, սերտ համագործակցություն հաստատի արարական
երկրների հետ, հարգի ժողովրդի դեմոկրատական ազատու-
թյունները, նպաստի երկրի տնտեսության վերականգնմանը
ու ժողովրդի կինսամակարդակի բարձրացմանը և այլն: Սա
պայքարի նոր ծրագիր էր, որ առաջ քաշվեց ամերիկյան դոր-
քերի ուղղմական միջամտությունից և գեներալ Շիհարի պրե-
զիդենտ ընտրվելուց հետո ստեղծված նոր պայմաններում:
Այդ ծրագիրը կիրանանի ժողովրդական մասսաների ամենա-
լայն պաշտպանությունը գտավ:

Այս սկզբումքները փաստորեն ընդունելի էին նաև Շի-
հարի համար: Դա պարզ երևում է նրա այն հայտարարու-
թյունից, որ նա արեց պրեզիդենտ ընտրվելուց հետո: Նա
նշեց, որ ինքը պայքարելու է ազգային միասնականությունը
վերականգնելու և ազատ արտաքին ու անկեղծ արարական
քաղաքականություն վարելու համար: Նա իր կարևոր խնդիր-
ներից մեկը համարեց ամերիկյան զորքերի դուրս բերումը
կիրանանից: ոչնորհիվ ազգային միասնականության մենք
պիտի կարողանանք իրականացնել մեր ազգային բոլոր բաղ-
ձանքները և առաջին հերթին՝ օտար ուժերու անհապաղ հե-
ռացումը մեր երկրենեա²:

1 «Մ. Ն. Հառաջ», 3 օգոստոսի 1958 թ.

2 Նույն տեղում, 10 օգոստոսի 1958 թ.

Սակայն ազգային այս կարևոր խնդիրների կենսագործմանը խանգարում էր ներքին ռեակցիան՝ ֆալանգիստները, ղովմի սուրբները, դաշնակցականները և Շամպւնի մյուս կողմանիցները։ Շամպւնի խումբն ամեն կերպ ձգտում էր մնացած ժամանակն օգտագործել իր դիրքերն ամրապնդելու համար։ Ղովմի սուրբները կտմ նացիոնալ-սոցիալական կուսակցությունը թեև հանդիսանում էր Շամպւնի հենարաններից մեկը, սակայն ձևականորեն արգելված էր դեռևս 1949 թվականին։ Շամպւնը Ասադ Աշքարին իրավունք տվեց վերականգնել նացիոնալ-սոցիալական կուսակցությունը, Բանդիտների այդ խումբը լեզվալիղացիայի ենթարկվեց։ Այնուհետև Շամպւնը իր կողմնակիցներից ստեղծեց նոր կուսակցություն՝ Ազատ Հայրենասերների կուսակցությունը¹։

Շամպւնականներն էլ ավելի սանձարձակ դարձան, երբ հայտնի դարձավ, որ Եփչարը մտադիր է նոր կառավարություն կազմելը հանձնել Լիբանանի 1958 թ. ապստամբության ականավոր ղեկավարներից մեկին՝ Ռաշիդ Քարամեին։ Շամպւնի ցուցումով և ամերիկյան իմպերիալիստների հավանությամբ ֆալանգիստները, ղովմի սուրբները և դաշնակները սկսեցին դիմել ամեն տեսակի ոճրագործությունների։ Նրանք զանազան պայթուցիկ նյութեր էին գնում տարբեր շենքերում ու ձեռնարկություններում, միասնական ուժերով հարձակվում էին արարական ու հայկական այն թաղամասերի վրա, որոնք ապստամբության դրոշ էին բարձրացրել, սպանում էին անմեղ քաղաքացիներին և այլն։ Այս խժոժություններով ներքին ռեակցիան երկու նպատակ էր հետապնդում՝ պատրվակ ստեղծել ամերիկյան զորքերի դուրս բերումը ձգձգելու համար, և ճնշում գործադրել Եփչարի ու ընդդիմադիր ուժերի վրա և ստիպել նրանց նահանջել։ Նրանք ձգտում էին հասնել այն բանին, որ Ռաշիդ Քարամեն կառավարություն չկազմի և կամ ժայրահեղ դեպքում իրենք այդ կառավարության մեջ ինչքան հնարավոր է շատ ներկայացուցիլներ ունենան։

1 «Политика США на Арабском Востоке», стр. 189.

Սակայն ներքին ռեակցիան միայն սրանով շրավարարվեց: 1958 թ. սեպտեմբերի 17-ին, այսինքն Շամունի կողմից իր պրեզիդենտական լիազորությունները վայր դնելուց ընդամենը 6 օր առաջ, Լիբանանում բացահայտվեց մի դավադրություն, որի նպատակն էր ձերբակալել Ֆուադ Շիհարին և Ազգային ճակատի մի շարք զեկավարների ու սպանել նրանցից մի քանիսին¹: Դրանից հետո Շամունի իշխանությունը կամ պետք է երկարաձգվեր կամ պրեզիդենտի լիազորությունները պետք է հանձնվեին դավադրությունն անմիջականորեն իրականացնող զնդապետ Ֆուադ Լահուդի եղբորը՝ Մելիմ Լահուդին: Գնդապետ Ֆուադ Լահուդը ձերբակալվեց: Նա խոստովանեց, որ գավադրությունը նախապատրաստելու նպատակով ինքը կիրանանում և արտասահմանում բազմաթիվ տեսակցություններ է ունեցել տարբեր դիմուրական և քաղաքական գործիչների, այդ թվում Սամի Սոլիմի կողմնակից Մուհամմեդ Մադանիի և Շամունի կողմնակից Ադիլ Համադանիի հետ²: Այսուհետեւ նա ցուցում է տալիս, որ իրենց դավադրությանը օգնություն էին խոստացել զովմի սուրբները և ամերիկյան կառավարությունը: Ըստ որում, վերջինս խոստացել էր դավադրությունից անմիջապես հետո ճանաչել նոր իշխանությունը³:

Դավադրությունը ձախողվեց շնորհիվ կիրանանի ժողովրդի և զեմուկրատական ուժերի զգոնության և վճռական դործողությունների:

1958 թ. սեպտեմբերի 23-ին Շամունը վայր դրեց իր լիազորությունները և պրեզիդենտի իրավումներն ստանձնեց Ֆուադ Շիհարը: Մեկ օր անց՝ սեպտեմբերի 24-ին Ռաշիդ Քարամենի կազմեց իր կարինետը: Ռաշիդ Քարամենի առաջին կարինետի մեջ բացի իրենից ապստամբության ուրիշ ոչ մի լիդեր չմտավ: Կառավարությունը բաղկացած էր 7 մինիստրներից, որոնցից շորսը պատկանում էին Համաձայնողականներին, իսկ Յ-ը օպոզիցիայի այն շրջաններին, որոնք ճիշտ է, դեմ էին Շամունի ռեժիմին, սակայն նրա դեմ մղվող պարարում ակտիվ մասնակցություն չէին բերել: Բայց այնուամեն-

1 «Մ. Ն. Հառաջ», 21 սեպտեմբերի 1958 թ.:

2 Խույն տեղում:

3 Խույն տեղում:

մեի կառավարությունն անընդունելի էր: Ֆուադ Շիհարի և
Ռաշիդ Քարամեի Հայտարարություններից նրանց համար
պարզ դարձավ, որ Լիբանանի նոր կառավարությունը մտա-
դիր չէ շարունակել իր նախորդի քաղաքականությունը, որ նա
վարելու է զրական շեղոփության քաղաքականություն: Ել ներ-
քին ուսակցիան ամերիկյան իմպերիալիստների օգնությամբ
ու օժանդակությամբ սկսեց բացահայտ ճնշում գործադրել
Ռաշիդ Քարամեի վրա, նպատակ ունենալով հասնել նրա
հրաժարականին կամ այն բանին, որ նրա կառավարության
կազմի մեջ մտցնեն Շամունի կողմնակիցներին: Ղովմի սու-
րիները, դաշնակները և Շամունի մյուս կողմնակիցները դի-
մում են զանազան պրովոկացիաների, ընդհուպ մինչև զին-
ված ընդհարումը բանակի հետ: Ստեղծված ծանր կացու-
թյունից փորձեց օգտվել և Ռաշիդ Քարամեի վրա ճնշում
գործադրել ամերիկյան դեսպան Մաքլինտոնկը: Նա 1958 թ.
սեպտեմբերի 30-ին ամերիկյան դեսպանատում հրավիրեց
Ռաշիդ Քարամեին և ֆալանգիստների ղեկավար Պյեր Ժայե-
լին՝ նրանց առաջարկելով իր միջնորդությունը: Ըստ որում
Մաքլինտոնկը «համաձայնվում» էր ճանաչել Ռաշիդ Քարա-
մեի կառավարությունը, պայմանով, որ նրա մեջ մտնեն նաև
Շամունի և ֆալանգայի ներկայացուցիչները: Ռաշիդ Քարա-
մեն մերժեց Մաքլինտոնկի առաջարկությունները և շղնաց
ամերիկյան դեսպանատում: Նա, ինչպես նաև Ֆուադ Շիհա-
րը, ամերիկյան դեսպանի դորժողությունները համարեցին
միջամտություն Լիբանանի ներքին գործերին և անհամատե-
ղելի նրա գերիշխանության սկզբումքի հետ: Լիբանանի հա-
սարակայնությունը, առաջադիմական կազմակերպություն-
ներն ու մամուլը միահամուռ դատապարտեցին ամե-
րիկյան իմպերիալիստների և ներքին ուսակցիայի արարքները:
Ազգային ճակատն իր պաշտոնական հայտարարության մեջ
ամերիկյան դեսպանի գործողությունները համարում էր դի-
վանագիտական տարրական կանոնների խախտում և գտնում,

¹ «Политика США на Арабском Востоке», стр. 192.

որ նրա շոշափիած հարցերը վերաբերում են միայն հանրապետության պրեզիդենտին, կառավարությանը և կիրանանի ժողովրդին։ Հայտարարության մեջ այնուհետև ասվում էր. «Ազգային հեղափոխության գլխավոր նպատակներն մեկն էր վերջ տալ օտար ամեն միշտառության»¹։

Այնուհետև Շամաւնի կողմնակիցները փորձեցին ընդհանուր գործադուլ և կարգակերպել երկրում։ Ֆալանգիստները, դաշնակները և դովմի սուրբները բռնի ստիպում էին փակել խանութիւնները, արհեստանոցները և այլն։ Եվ շնայած դրան, նրանց չհաջողվեց գործադուլը համընդհանուր դարձնել։ Տոկտեմբերի 5—7-ը դինված ընդհանուրումներ տեղի ունեցան Շամաւնի ստեղծած և Ազատ Հայրենասերներին կուսակցության անդամների և բանակի զինվորների միջև։ Ներքին կարգ ու կանոնը պահպանելու և լարվածությանը վերջ տալու պատրիվակի տակ Հոկտեմբերի 9-ին ամերիկյան զորքերը կրկին մտան Բեյրութ։

Ներքին ռեակցիայի և ամերիկյան իմպերիալիստների այս ճնշումներն ունեցան իրենց հետևանքները։ Ռաշիդ Քարամեի առաջին կարինետը հրաժարական տվեց։ Ռաշիդ Քարամեն Հոկտեմբերի 15-ին կողմնեց նոր կառավարություն, հետևյալ կազմով։ Ռաշիդ Քարամե—պրեմյեր-մինիստր, ազգային պաշտպանության, ազգային տնտեսության, ֆինանսների և ինֆորմացիայի մինիստր, Հուսեյն Ռավիլինի—արտաքին գործերի, արդարադատության և պլանավորման մինիստր, Պյեր Ժմայել—պրեմյեր-մինիստրի տեղակալ, Հանրային շինարարության, կրթության, առողջապահության և գյուղատնտեսության մինիստր և Ռայմոն Էդուարդ Ներքին գործերի, սոցիալական ապահովագրության և փոստի մինիստր²։ Այս կառավարությունը ստացավ ռազմակադրական կոմպոմիսի կառավարությունը անունը։ Ինչպես երևում է նրա կազմից, ներքին ռեակցիան և ամերիկյան իմպերիալիստները հասան որոշ հաջողությունների։ Պյեր Ժմայելը հանդիսանում էր ֆալանգիների կուսակցության ղեկավարը, այն կուսակցության, որը

1 «Մ. Ն. Հառաջ», 5 Հոկտեմբերի 1958 թ.։

2 Նույն տեղում, 19 Հոկտեմբերի 1958 թ.։

1958 թ. ապստամբության ժամանակ հանդիսանում էր Շամունի կարևոր հենարաններից մեկը: Խակ Ռայմոն էղդեն՝ ռմիջին ուժերի ներկայացուցիչն էր, այն ուժերի, որոնք փաստորեն ձգում էին պահպանել Հին ռեժիմը, Սակայն ՇՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ կոմպրոմիսի կառավարության ստեղծումը շպետք է բացատրել միայն ներքին ռեակցիոն ուժերի և ամերիկյան իմպերիալիստների գործադրած ճնշումով: Այստեղ պետք է ի նկատի ռմեննալ նաև հետեւյալ հանգամանքը: Ապստամբությունը, որը իսկական ժողովրդական ապստամբություն էր, ղեկավարում էր ազգային բուրժուազիան: Նա իր սոցիալ-դասակարգային բնույթի պատճառով ընդունակ չէր մինչև վերջ վճռական պայքար մղել Ազգային բուրժուազիան փաստորեն փորձեց այդ ապստամբության խնդիրները նեղացնել և ապստամբական շարժումը հիմնականում ուղղել Շամունի և նրա կողմնակիցների դեմ: Ճիշտ է, նա հակաիմպերիալիստական լողունզներից չհրաժարվեց, սակայն վախեցավ ժողովրդական շարժման թափից: Նա վախենում էր, որ հակաիմպերիալիստական ապստամբությունը կվերանդի սոցիալական հեղափոխության՝ ուղղված հենց իրենց բուրժուազիայի և ֆեոդալ շեյխների դեմ: Ազգային բուրժուազիան կարող էր դիմագրավել ամերիկյան իմպերիալիստների և շամունականների ճնշմանը, եթե լայն թափ հաղորդեր ժողովրդական շարժմանը: Սակայն նա իր սոցիալ-դասակարգային բնույթի պատճառով այդ թայլին շղիմեց: Բացի այդ, նա հասել էր իր կարևոր նպատակներից մեկին՝ Շամունի հեռացմանը իշխանությունից: Ահա այս բոլոր պատճառները միասին հանգեցրին ռկոմպրոմիսային կարինետից ստեղծմանը: Այդ կոմպրոմիսային տենդենցների լավագույն արտահայտությունը հանդիսացավ նաև Ֆուադ Շիհարի և այլ քաղաքական գործիչների կողմից հրապարակ նետված ռու հաղթողներ, ոչ պարտվածները լողումը:

Սակայն ներքին ռեակցիայի և ամերիկյան իմպերիալիստների այս բոլոր մանյուվրները չեին կարող ապստամբական ուժերի ուշագրությունը շեղել ամերիկյան զորքերը կիրանանից հեռացնելու հարցից: Նրանք շարունակում էին պնդել այդ պահանջի վրա, մատնանշելով, որ այժմ, երբ

ընտրվել է նոր պրեզիդենտ և կազմվել է նոր կառավարություն, ոչ մի հիմք չկա ամերիկյան զորքերի հետագա ներկայության համար: 1958 թ. Հոկտեմբերի սկզբներին Ֆուադ Շիհարը հանդիպում ունեցավ ամերիկյան դեսպանի հետ և նորից պահանջեց, որ ամերիկյան զորքերը հեռանան կիրանանից¹, Վերջի ի վերջո ամերիկյան զորքերը, որոնց թիվը հասնում էր 17 հազարի, 102 օր կիրանանում մնալուց հետո կիրանանի ժողովրդի և բոլոր առաջադիմական ու գեմովրատական ուժերի նշանակությունը ամերիկյան ներքո, հարկադրված եղան հեռանալ այնտեղից: 1958 թ. Հոկտեմբերի 25-ին ամերիկյան զինվորների վերջին խումբը հեռացավ կիրանանից:

Երկրի հասարակայնությունը մեծ գոհունակությամբ ընդունեց ամերիկյան օկուպացիոն զորքերի էվակուացիան, Եվդա հասկանալի է: Այդ հաղթանակը կիրանանի ժողովուրդը ձիոք բերեց 4-ամյա համառ պայքարից հետո:

Ամերիկյան ազրեսիան իր նպատակին չհասավ: Նա չկարողացավ պահպանել Շամոնի իշխանությունը և կամ իշխանության գլուխ դնել այնպիսի մարդկանց, որոնք կշարունակեին հին ուժիմի քաղաքականությունը: Սայդայում ապրուամբության զեկավարներից մեկը «Բնյարութ ալ-Մասա» թերթում իրավացիորեն նշում էր, որ «կիրանանից ամերիկյան զորքերի էվակուացիան ակնառու ցույց տվեց, որ նման ազրեսիան այսուհետև հաջողություն չի ունենալու, որ միշաղդային ավազակությունը և թալանը դատապարտված են խորտակման, իսկ իմաստիալիզմի դարաշրջանն անցել է»²:

Կիրանանի կառավարության առաջին քայլերից մեկը եղավ «Էլզենհասուերի դոկտրինայից» հրաժարվելը: Ամերիկյան թղթակիցներից մեկին Ռաշիդ Քարամեն հայտարարեց, որ ինքը սկզբից գեմ է եղել այդ դոկտրինային և ամրող կիրանանը արդեն մերժել է այն³: Հետագայում Ռաշիդ Քարամեն, ինչպես նաև արտաքին գործերի մինիստր Հուսեյն Ռավել-

¹ 6.X.1958, «التلغراف»

² 27.X.1958, «بيروت المساء» بيروت»

³ «Մ. Ն. Հառաջ», 5 Հոկտեմբերի 1958 թ.:

համարում ռէյզենհառի գոկտրինայիշ հետո՝ Դրանից հետո կիրանանի կառավարությունը, բնականաբար, կատարից հաջորդ քայլը. նա հրաժարվեց բլոկներին միանալու քաղաքականությունից և կանգնեց դրական չեզորության քաղաքականության վրա: Նա վերականգնեց իր դիվանագիտական հարաբերությունները Արաբական Միացյալ Հանրապետության հետ և ընդհանրապես բարելավեց իր հարաբերություններն արաբական երկրների հետ:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև ներքին քաղաքականության մեջ Ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին դեմոկրատական ու առաջադիմական ուժերի գործունեության համար:

Կիրանանի դեմոկրատական ուժերը, ժողովրդական մասսաները հաղթանակով դուրս եկան այդ ապստամբությունից շնորհիվ իրենց շարքերի միասնության: Այդ հաջողությանը նպաստեց նաև տարրեր ազգությունների և կրոնական համայնքների համերաշխությունն ու համատեղ պայքարը: Այդ գործում իր որոշակի դերը խաղաց հայերի դիրքը, նրանց բարեկամությունն ու համատեղ պայքարը արաբ աշխատավորական մասսաների հետ:

Եվ վերջապես այդ հաղթանակին նպաստեց Սովետական Միության, սոցիալիստական երկրների և Ասիայի ու Աֆրիկայի խաղաղասեր երկրների գիրքը, նրանց քաղաքական ու բարոյական աշակեցությունը:

Մեծ է 1958 թ. ապստամբության պատմական նշանակությունը: Այդ նշանակությունը կայանում է նրանում, որ

1. Սանր հարված հասցվեց միշազգային և առաջին հերթին ամերիկյան իմպերիալիզմին, որը ձգտում էր կիրանանը դարձնել իր գաղութը: Դրանով լուրջ հարված հասցվեց իմպերիալիստական պլաններին նաև ամրող Արաբական արևելքում:

2. Նա երկիրն ազատագրեց ռէյզենհառի գոկտրինակից, որի հետևանքով թուլացավ կիրանանի կախվածությունը

¹ «Политика США на Арабском Востоке», стр. 192.

Արևմուտքից և ամբապնդվեց նրա անկախությունն ու գերիշխանությունը:

3. Այդ ապստամբության հետևանքով կիրանանը կրկին վերադարձավ շեղոքության բաղաքականությանը, որը ավելի է համապատասխանում կիրանանի և արարական բոլոր երկրների ազգային շահերին:

4. Նա նպաստեց կիրանանի հարաբերությունների բարելավմանը արարական երկրների հետ, որն իր հերթին բարերար ազդեցություն ունեցավ Արարական արևելքի դրության կայունացման վրա:

1958 թ. ապստամբությունը կիրանանում արարական ընդհանուր ազգային-ազատագրական շարժման բազկացուցիչ մասն էր և նրա ամենափայլում էջերից մեկը: 1943 թ. դեպքերից հետո նա երկրորդ խոշոր հարվածն էր, որ հասցվեց արևմույան իմակերիալիստներին:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

1939—1958 թվականներին կիրանանում ժավալված հակաիմպերիալիստական պայքարի արդյունքը եղավ կիրանանի անկախության նվաճումը և այդ անկախության պահպանումը։ Չնայած իմպերիալիստական պետությունների բազմաթիվ փորձերին, նրանց շնչառողմեց կիրանանը ներգրավել որևէ ռազմական խմբավորման մեջ և ստիպել նրան հրաժարվելու բլոկներին շմիանալու և շեղոքությունն պահպանելու քաղաքականությունից։ Սակայն պետք է նշել, որ շեղոքությունը կիրանանի ղեկավար շրջանները յուրովի ևն հասկանում, նրանց շեղոքությունը տարբերվում է ԱՄՀ-ի, Ալժիրի, Սիրիայի, Մալիի և այլ երկրների շեղոքությունից։ Այդ տարբերությունը կայանում է նրանում, որ կիրանանի կառավարությունը կողմնակից շէ դրական շեղոքության, այլ ոլիրանանյան», որի տակ հասկացվում է ոչ թի ակտիվ գործողություն, այլ պասսիվություն։

Այդ յուրահատուկ «լիրանանյան» շեղոքության մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կիրանանը շմտնելով արևմտյան ռազմական խմբավորմանը մեջ, սակայն սերտ քաղաքական և տնտեսական հարաբերություններ է պահպանում արևմտյան տերությունների հետ։

Ընդդեմով «լիրանանյան» շեղոքության այս թերի կողմերը, դրա հետ միասին, հանում ճշմարտության պետք է ասել, որ բլոկներին շմիանալու, իր տերիտորիայում օտարերկրյա ռազմական բազաներ թույլ շտալու կիրանանի կառավարության քաղաքականությունը ժառանյում է քաղաքական դրության կայունացմանը Մերձավոր արևելքում և որոշակի

խալընդուռ է արարական աշխարհում արևմտյան տերություն-ների իմպերիալիստական ծրագրերի իրականացման ճանապարհին:

Դրանով պետք է բացատրել այն ճնշումը, որ գործադրում են լիբանանյան ներքին հետադիմական ուժերը և օտարերկրյա իմպերիալիստները լիբանանի կառավարության վրա, ձգտելով շեղել նրան բլոկներին լմիանալու քաջադարձականությունից: Այդ նպատակով 1961 թ. դեկտեմբերի 31-ին լիբանանում պետական հեղաշրջման փորձ կատարվեց: Ղովմի սուրբ ուսակցիոն կուսակցություն անդամները, իրենց կողմբ ունենալով լիբանանյան բանակի փորձաթիվ ուժեր, փորձեցին գրավել պաշտպանության մինիստրության շենքը, ուղիոն, փոստը, հեռախոսը և այլ կարևոր կետեր: Սակայն նրանք ոչ մի հաջողություն չունեցան: Լիբանանյան բանակը համարիմ մնաց կառավարությանը և հեշտությամբ ճնշեց այդ սեակցիոն դավադրությունը: Պետական հեղաշրջում կատարելու իրենց փորձը ղովմի սուրբիները կատարեցին Անգլիայի զիտությամբ ու թելադրանքով:

Անգլիան կրկին հրապարակ էր նետել «Մեծ Սիրիայի» ծրագիրը և նրա կարծիքով Եհվարին տապալելը և ղովմի սուրբիների կողմից իշխանությունը գրավելը կարևոր քայլ էր հանդիսանալու այդ ծրագրի իրավությամբ:

1958 թ. ապստամբությունից հետո ընկած ժամանակաշրջանում, որպես դրական երևույթ, պետք է նշել այն հանգամանքը, որ լիբանանը ավելի սերտորեն է կապվում արաբական ընդհանուր քաղաքականության հետ և իր լուման ներդնում արաբական ընդհանուր խնդիրների լուծման գործում: Լիբանանի արտաքին քաղաքականության մեջ նկատվող այս դրական տեսդենցը նույնպես դուր չի գալիս ներքին որոշ շրջաններին, ինչպես նաև արտաքին որոշ ուժերին: Եվ 1964 թ. պրեզիդենտական ընտրությունների ժամանակ իրար բախվեցին երկու հակադիր ուժեր: Մի կողմից լիբանանի սեակցիոն շրջանները, որոնք ձգտում էին պրեզիդենտ Եհվարի փոխարեն ընտրել այնպիսի մարդ, որը արմատապես փոխեր լիբանանի արտաքին քաղաքական կուսակցությունը վերադառնար այն կուրսին, որը մինչև 1958 թ. ապստամբությունը վարում

էր Շամումը, իսկ մյուս կողմից դեմոկրատական ու առաջա-
դիմական ուժերը: Այս վերջինները ձգտում էին պահպանել
Լիբանանի շեղոքությունը, շթողնել, որ նա միանա իմպարիա-
լիստական խմբավորումներին և ավելի ակտիվ մասնակցի
արարական հարցերի լուծմանը: Ընտրություններում հաղթա-
նակ տարան այս քաղաքականության կողմնակիցները: Նոր
պրեզիդենտ Շարլ Հելու հիմնականում տանում է իր նախոր-
դի՝ Ֆուադ Շիշարի քաղաքականությունը:

Եթե մենք կարող ենք խոսել այն առողջ ու դրական տես-
դեցների մասին, որոնք արտաքին քաղաքականության ընա-
դավառում հանգես եկան 1958 թ. ապստամբությունից հե-
տո, ապա այդ նույնը չենք կարող ասել ներքին քաղաքակա-
նության մասին, լիբանանի ներքին կյանքում 1958 թ. ապրո-
ւամբությունից հետո էական ոչ մի տեղաշարժ չկատարվեց:
Առաջվա պես լիբանանի կառավարությունը կողմնակից է
«ազատ անտեսության» կոնցեպցիային: Լիբանանի դռները
բաց են օտարերկրյա կապիտայի և մոնոպոլիաների առջև:
Լիբանանի առջև կանգնած տնտեսական կարևոր խնդիրները
չեն լուծվում, իսկ աշխատավորական մասսաների վիճակը
շարունակում է մեալ ժանրու: Ահա թե ինչու լիբանանի դեմո-
կրատական ուժերը այժմ պայքար են ժավակել ստեղծելու
իսկապես անկախ և առողջ հիմքերի վրա դրված ազգային
անտեսություն՝ իր արքրեր նյուղերով և առաջին հերթին դարել
տալ արդյունաբերության զարգացմանը:

Լիբանանի հակաիմպերիալիստական և դեմոկրատական
ուժերի առջև դեռևս կանգնած են լուրջ ու դժվարին խնդիրները
Ներկա էտապում նրանք պայքարում են լիբանանի անկախու-
թյան ամրապնդման համար, նեռվաղութատիրության և իմ-
պերիալիստական զանազան ծրագրերի դեմ: Նրանք ամենօր-
յա անդուլ պայքար են մղում հանում դեմոկրատիայի, սո-
ցիալական առաջադիմության, ազգային անկախ տնտեսու-
թյան ստեղծման և աշխատավորական զանգվածների դրու-
թյան բարելավման համար: Կասկած չի կարող լինել, որ նը-
րանք, միավորվելով մեկ միասնական ճակատի մեջ, վերջ է
մերժ հաշողության իհասնեն լիբանանի համար կենսակա-
նութեն անհրաժեշտ այդ խնդիրների լուծման գործում:

РЕЗЮМЕ

Специального исследования, посвященного истории национально-освободительного движения в Ливане (1939—1958 гг.) нет ни в западно-европейской и арабской, ни в советской историографии. Между тем разработка этой проблемы имеет важное значение как с точки зрения изучения новейшей истории Ливана, так и краха колониальной системы на Арабском Востоке.

Автор в своей работе рассматривает вопросы социально-экономического положения в Ливане, ликвидации французского мандата и создания независимой Ливанской республики, антиимпериалистической борьбы народных масс за укрепление независимости Ливана и т. д. Кроме того, показано участие национальных меньшинств, в частности армян, в социально-экономической жизни и в антиимпериалистической борьбе Ливана. Армяне играют значительную роль в общественно-политической жизни Ливана и нельзя игнорировать их позицию по тому или иному вопросу. По этому поводу Халед Бекдаш отмечает, что «разрешение какой-либо арабской национальной проблемы, которая не учитывает интересы армянского народа в Сирии и Ливане, неизбежно обречена на провал».

Некоторые буржуазные авторы в своих исследованиях неправильно освещают ряд вопросов национально-освободительного движения в Ливане, особенно игнорируют активную роль народных масс в борьбе за завоевание национальной независимости Ливана. Эта ошибочная точка зрения нашла отражение в работах «Ближний Восток в международных отношениях» Дж. Ленцовского,

«50 лет современной Сирии и Ливана» Дж. Хаддада, «Сирия и Ливан» Н. Зиадеха, «Сирия и Ливан под французским мандатом» С. Лонгрига, «Современная история Ближнего Востока» У. Иеля и т. д. Буржуазная историография неправильно оценивает также роль империализма в экономической и политической жизни Ливана (Юсуф Сайег, Р. Эмерсон, А. Миллс, А. Майер), характер восстания 1958 г. (Дж. Марлоу, Дж. Банерджи, Фаним Кубейн) и ряд других вопросов.

Ливан экономически слабо развитая страна. Его экономика опирается на четыре столпа — торговлю, туризм, сельское хозяйство и промышленность. При этом торговля, туризм и вся система обслуживания играют более важную роль в экономике Ливана, чем сельское хозяйство или промышленность. Это является одной из особенностей экономики Ливана. Другая особенность ливанской экономики заключается в том, что Ливан, в отличие от других арабских стран, проводит политику «открытых дверей», политику так называемого «экономического либерализма». Такая политика выгодна торговко-компрадорской буржуазии и иностранным монополистическим компаниям и противоречит национальным интересам Ливана. В экономике Ливана прочные позиции занимает иностранный капитал. До конца второй мировой войны здесь господствовал французский капитал. После войны усилились позиции английского и американского капитала, а в последние годы — западногерманского и японского. Иностранный капитал установил свой контроль над промышленностью, торговлей, банками и всей системой обслуживания и препятствует созданию независимой национальной экономики Ливана.

Освобождение Ливана не только от политических, но и экономических оков империализма, создание национальной экономики, улучшение положения трудящихся масс, развитие страны по пути независимости и демократии является одним из главных требований антиимпериалистических сил Ливана.

В работе подробно освещаются вопросы ликвидации французского мандата и завоевания независимости Ливана. Франция уже в июне 1941 г. была вынуждена признать независимость Сирии и Ливана. Однако, как показали последующие события, это носило формальный характер, так как Франция не была намерена отказы-

ваться от своих прав. На этой почве усилилась антиимпериалистическая борьба в Ливане, которая дошла до своей кульминации в ноябре 1943 г., когда почти вся страна оказалась охваченной восстанием. Французские колонизаторы вынуждены были отступить. Франция официально отказалась от мандата и признала независимость Ливана. Однако "после этого, пользуясь присутствием своих и английских войск на территории Ливана и Сирии, Франция пыталась оказывать давление на ливанское правительство с тем, чтобы заключить с ним договор, обеспечивающий Франции господствующее военное, политическое и экономическое положение в Ливане. Правительство Ливана отказалось заключить такой договор и потребовало от Франции и Англии вывода своих войск с территории Ливана. Вопрос эвакуации иностранных войск в начале февраля 1946 г. был обсужден на Совете Безопасности ООН. В защиту интересов Ливана выступили Советский Союз и другие миролюбивые страны. Франция и Англия в конце концов были вынуждены в 1946 г. вывести свои войска из Сирии и Ливана. Это было крупной победой антиимпериалистических сил, которая имела большое историческое значение для Ливана.

С 1946 г. начинается новый этап в антиимпериалистической борьбе Ливана, основным содержанием которой было сохранение и упрочение независимости страны. Империалистические государства, вынужденные признать политическую самостоятельность Ливана, тем не менее не отказались от планов держать его в экономической и политической зависимости. Они после второй мировой войны выдвигали разные доктрины, с помощью которых стремились подавить национально-освободительное движение на Арабском Востоке и усилить свои военно-политические, экономические и финансовые позиции в арабских странах, в том числе и Ливане. В этом направлении особую активность и заинтересованность проявляют Англия и США. Для осуществления своих империалистических целей они пытались использовать план «Великой Сирии», доктрину Трумэна, план создания средневосточного командования, Багдадский пакт, доктрину Эйзенхауэра и т. д. В исследовании подробно рассматриваются все эти вопросы с точки зрения национально-освободительной борьбы в Ливане, показывается отношение различных политических сил к этим проблемам и борьба

демократических сил за сохранение независимости Ливана. Особенно нужно подчеркнуть провал попытки сирийской национальной партии — «аль-хизб аль-кауми ас-сури» — совершивший государственный переворот в Ливане в 1949 г., который должен был явиться важным шагом на пути осуществления империалистического плана «Великой Сирии».

В антиимпериалистической борьбе Ливана исключительна роль коммунистической партии Ливана. Она и ее армянская секция развернули огромную работу среди населения Ливана, организовали борьбу трудящихся масс и вместе с другими демократическими силами добивались достижения взаимопонимания и дружественных отношений между мусульманскими и христианскими общинами Ливана. Последнее обстоятельство имело важное значение, так как западные империалисты в осуществлении своих колониальных планов и с целью раскола антиимпериалистического фронта Ливана всегда стремились разжигать религиозные чувства и натравливать одну общину на другую.

Коммунистическая партия Ливана проделала большую работу и по разоблачению происков Англии, Франции, США и Турции на Арабском Востоке и в Ливане. Они в осуществление своих империалистических целей угрожали Ливану и другим арабским странам миной «коммунистической» и «советской» опасностью. Именно эта нелепая выдумка лежала в основе сколачивания военно-политических блоков на Ближнем и Среднем Востоке. Однако патриотические силы как Ливана, так и других арабских стран прекрасно понимали, что планы экономической «помощи» и «защиты» арабских стран от «коммунистической» и «советской» угрозы всего лишь западия, с помощью которой США, Англия и другие пытались установить свое господство над арабскими странами, имеющими важное стратегическое значение и богатыми природными ресурсами. С другой стороны, они надеялись, что с осуществлением своих планов им удастся вбить клин между Ливаном и Советским Союзом и другими социалистическими странами.

Вот почему демократические и патриотические силы Ливана заняли резко отрицательную позицию в отношении планов создания военно-политических блоков и доктрины Трумэна и Эйзенхауэра.

Что касается ливанского правительства и правящей компрадорско-феодальной верхушки, то они, после политики колебаний, с середины 50-х годов, в особенности при режиме Камиля Шамуна—Сами Сольха, откровенно перешли к защите интересов западных империалистов. Политика сближения с Англией и США, которую проводил Шамун, противоречила национальным интересам Ливана и других арабских стран. В области внутренней политики ливанское правительство осуществляло ряд реакционных мероприятий, ограничивающих демократические права ливанского народа, и перешло на позицию антикоммунизма. А что касается внешней политики, то правительство Шамуна—Сольха все больше и больше подчиняло Ливан диктату американских империалистов. Оно приняло доктрину Эйзенхауэра, сблизилось с реакционными странами Ближнего Востока — с Турцией и Ираком, не сотрудничало с прогрессивными силами арабского мира, отказывалось поддерживать антиимпериалистическую борьбу арабских стран и фактически осудило Ливан на изоляцию от арабских прогрессивных сил. Политика Шамуна—Сольха поставило под угрозу независимость Ливана и создала очень напряженные отношения внутри страны. Атмосфера накалилась до предела. Прогрессивные силы Ливана не могли примириться с антинародной и проимпериалистической политикой правительства и усилили борьбу против него. В Ливане происходит перегруппировка сил. На одной стороне были прогрессивные и патриотические силы — рабочие, крестьяне, подавляющая часть ремесленников, интеллигенции, а также национальной буржуазии. К ним примыкали и отдельные феодальные элементы, и представители финансовой буржуазии. Они стремились избавить страну от режима Шамуна—Сольха, отказаться от проимпериалистического внешнеполитического курса, поддерживать прогрессивные силы арабского мира и упрочить независимость Ливана.

На другой стороне сгруппировались все реакционные силы, в частности, представители верхушки компрадорской буржуазии и феодалов, которые были сторонниками сближения с западным империализмом и продолжения проамериканской политики Шамуна. Интересы и точки зрения обеих сторон были непримиримыми, и в мае

демократический план за окончание независимости Ливана. Особенно нужно подчеркнуть провал попытки сирийской национальной партии — «аль-хизб аль-кауми ас-сурис» — совершить государственный переворот в Ливане в 1949 г., который должен был явиться важным шагом на пути осуществления империалистического плана «Великой Сирии».

В антиимпериалистической борьбе Ливана исключительна роль коммунистической партии Ливана. Она и ее армянская секция развернули огромную работу среди населения Ливана, организовали борьбу трудящихся масс и вместе с другими демократическими силами добивались достижения взаимопонимания и дружественных отношений между мусульманскими и христианскими общинами Ливана. Последнее обстоятельство имело важное значение, так как западные империалисты в осуществлении своих колониальных планов и с целью раскола антиимпериалистического фронта Ливана всегда стремились разжигать религиозные чувства и натравливать одну общину на другую.

Коммунистическая партия Ливана проделала большую работу и по разоблачению проников Англии, Франции, США и Турции на Арабском Востоке и в Ливане. Они в осуществление своих империалистических целей угрожали Ливану и другим арабским странам мнимой «коммунистической» и «советской» опасностью. Именно эта нелепая выдумка лежала в основе сколачивания военно-политических блоков на Ближнем и Среднем Востоке. Однако патриотические силы как Ливана, так и других арабских стран прекрасно понимали, что планы экономической «помощи» и «защиты» арабских стран от «коммунистической» и «советской» угрозы всего лишь западня, с помощью которой США, Англия и другие пытались установить свое господство над арабскими странами, имеющими важное стратегическое значение и богатыми природными ресурсами. С другой стороны, они надеялись, что с осуществлением своих планов им удастся вбить клин между Ливаном и Советским Союзом и другими социалистическими странами.

Вот почему демократические и патриотические силы Ливана заняли резко отрицательную позицию в отношении планов создания военно-политических блоков и доктрины Трумэна и Эйзенхаузера.

Что касается ливанского правительства и правящей компрадорско-феодальной верхушки, то они, после политики колебаний, с середины 50-х годов, в особенности при режиме Камиля Шамуна—Сами Сольха, откровенно перешли к защите интересов западных империалистов. Политика сближения с Англией и США, которую проводил Шамун, противоречила национальным интересам Ливана и других арабских стран. В области внутренней политики ливанское правительство осуществило ряд реакционных мероприятий, ограничивающих демократические права ливанского народа, и перешло на позицию антикоммунизма. А что касается внешней политики, то правительство Шамуна—Сольха все больше и больше подчиняло Ливан диктату американских империалистов. Оно приняло доктрину Эйзенхауэра, сблизилось с реакционными странами Ближнего Востока — с Турцией и Ираком, не сотрудничало с прогрессивными силами арабского мира, отказывалось поддерживать антиимпериалистическую борьбу арабских стран и фактически осудило Ливан на изоляцию от арабских прогрессивных сил. Политика Шамуна—Сольха поставило под угрозу независимость Ливана и создала очень напряженные отношения внутри страны. Атмосфера накалилась до предела. Прогрессивные силы Ливана не могли примириться с антинародной и проимпериалистической политикой правительства и усилили борьбу против него. В Ливане происходит перегруппировка сил. На одной стороне были прогрессивные и патриотические силы — рабочие, крестьяне, подавляющая часть ремесленников, интеллигенции, а также национальной буржуазии. К ним примыкали и отдельные феодальные элементы, и представители финансовой буржуазии. Они стремились избавить страну от режима Шамуна—Сольха, отказаться от проимпериалистического внешнеполитического курса, поддерживать прогрессивные силы арабского мира и упрочить независимость Ливана.

На другой стороне сгруппировались все реакционные силы, в частности, представители верхушки компрадорской буржуазии и феодалов, которые были сторонниками сближения с западным империализмом и продолжения проамериканской политики Шамуна. Интересы и точки зрения обеих сторон были непримиримыми, и в мае

1958 года началось восстание, длившееся почти 6 месяцев.

О причинах и характере этого восстания существуют различные, причем противоречивые мнения. Еще в начале восстания по инициативе государственного секретаря США Дж. Ф. Даллеса некоторое распространение получила версия о том, что оно явилось результатом «подрывной деятельности коммунистов». Однако эта «точка зрения» продержалась недолго, потому что даже самые ярые противники коммунизма не могли привести ни одного факта, свидетельствующего о «коммунистическом заговоре» в Ливане.

О возникновении и причинах восстания, кроме вышеуказанной, существует и другая «точка зрения», считающая, что восстание инспирировали сторонники Насера. Эту «точку зрения» защищают Дж. Марлоу, Фаим Кубейн и другие. Так, например, Дж. Марлоу в своей книге «Арабский национализм и британский империализм» пишет, что «восстание было инспирировано и получило поддержку ОАР — с целью свергнуть правительство Ливана и поставить у власти такое правительство, которое объединило бы Ливан с ОАР» (стр. 71).

Это мнение является ошибочным и не подтверждается фактами. Наблюдатели ООН, тщательно проверив факты на месте, официально заявили, что ОАР не вмешивалась во внутренние дела Ливана и тем более не подстрекала ливанский народ к восстанию.

Причины восстания лежали во внутренней и внешней политике правительства Ливана, а именно — антинациональной, антиарабской и проимпериалистической политике Шамуна—Сольха.

Что касается характера восстания, то некоторые буржуазные историки пытаются представить восстание как религиозную войну между мусульманами и христианами. Эта антинаучная концепция нашла отражение в работах Е. Ленгиеля «Изменяющийся Средний Восток», Дж. Марлоу «Арабский национализм и британский империализм», Г. Шараби «Правительства и политические деятели Ближнего Востока в XX в.» и т. д. Изучение материалов, касающихся восстания, убедительно показывает, что оно не имело религиозной окраски. Среди восставших были и христиане, и мусульмане. Они принимали участие в восстании не по религиозному признаку, а по

политическим мотивам. Восстание 1958 г. явилось национально-освободительной борьбой, целью которой было изменить внешнеполитический курс Ливана, вырвать страну из когтей империализма, упрочить независимость Ливана и идти в одном ряду с теми арабскими странами, которые вели активную антиимпериалистическую борьбу. С июля 1958 г., после интервенции американских войск, одной из важных задач стало освобождение Ливана от американской оккупации.

В работе подробно освещается ход восстания в разных районах Ливана — в Бейруте, Триполи, Сайде, Шуфе, Захле, Бекаа, Суре и т. д. и показывается участие в нем различных политических сил и партий. Значительное место уделяется показу участия армян Ливана в восстании. Армянские народные массы и все демократические силы, как на предыдущих этапах национально-освободительного движения, так и сейчас, стояли рядом с арабскими прогрессивными силами и многие из них погибли на баррикадах за независимость Ливана.

Восстание 1958 г. и американская интервенция были в центре внимания мировой общественности. Осуждая действия американских империалистов, в защиту восставших выступили прогрессивные арабские силы и миролюбивые страны мира. В этом вопросе принципиальную и решающую позицию занял и Советский Союз. Он исходил из того, что восстание 1958 г. является внутренним делом Ливана и никто не имеет права вмешиваться в него. Советское правительство, считая борьбу ливанского народа справедливой, требовало от США вывода войск из Ливана. Этот вопрос специально обсуждался на чрезвычайной сессии Генеральной Ассамблеи ООН, которая в принятой резолюции считала необходимым эвакуировать американские войска. В результате США были вынуждены в октябре 1958 г. вывести свои войска из Ливана. Эвакуация американских войск и падение Шамуна явились важным достижением демократических сил Ливана.

Восстание 1958 г. имеет историческое значение. Оно провалило планы по превращению Ливана в американскую колонию, избавило страну от доктрины Эйзенхауэра, провозгласило политику нейтралитета, как главную линию внешнеполитического курса Ливана и укрепило независимость страны. Благодаря этому улучшились отношения Ливана с соседними арабскими странами, что,

в свою очередь, имело благоприятное влияние на стабилизацию положения на Арабском Востоке.

Перед антиимпериалистическими силами Ливана и ныне стоят очень трудные и серьезные задачи. На нынешнем этапе они ведут борьбу против неоколониализма и различных империалистических планов. Они неустанно ведут борьбу за демократию и социальный прогресс, за создание независимой национальной экономики и улучшение положения трудящихся масс.

THE NATIONAL-LIBERATION STRUGGLE
IN LEBANON
(1939—1958)

by N. H. Movhannessian

S u m m a r y

There exist no special studies on the history of the national liberation movement in Lebanon (1939—1958) in West-European, Arab or Soviet historiography. On the other hand, this issue is of cardinal importance not only in the study of the modern history of Lebanon, but also in that of the collapse of the colonial system in the Arab East.

The present edition deals with the social and economic conditions in Lebanon, the abolition of the French mandate and the establishment of the independent Republic of Lebanon as well as the anti-imperialist struggle of the Lebanese people at large in favour of promoting the independence of the country and other national problems. Besides, the participation of national minorities, the Armenians in particular, in the social and economic life and the anti-imperialist struggle of Lebanon is likewise highlighted. The Armenians play a definite role in

the social and political life of Lebanon and their stand on one issue or another cannot be overlooked. This is what Khaled Bagdash says on this occasion: „The solution of any Arab national problem without due regard for the interests of the Armenian communities in Lebanon and Syria, is doomed to failure“.

A number of bourgeois authors give misleading interpretations to a series of problems of the national-liberation movement in Lebanon, ignoring especially the role of the masses in achieving the national independence of the country. This erroneous point of view is traceable in „The Middle East in World Affairs“ by J. Lenczowski, „Fifty Years of Modern Syria and Lebanon“ by G. Hadid, „Syria and Lebanon“ by N. Ziadeh, „Syria and Lebanon under French Mandate“ by S. Longrigg, „The Near East. A Modern History“ by W. Yale and others. Bourgeois historiography also gives a false estimation of the role of imperialism in the economic and political life of Lebanon (Yusif Sayigh, R. Emerson, A. Mills, A. Meyer), the nature of the 1958 uprising (J. Marlowe, J. Banerji, Fahim Qubain) and a number of other issues.

Lebanon is an underdeveloped country. The pivotal points of its economy are trade, tourism, agriculture and industry. Of these four the former two are the more prominent in the country's economy. This is one of the characteristic features of Lebanese economy. Another characteristic of the country's economy is to be sought in the policy of „open doors“ or the so-called „economic liberalism“ which is not typical of other Arab states. A similar policy is beneficial to the trading-comprador bourgeoisie and foreign monopolist companies, but is detrimental to national interests. Foreign capital has struck deep roots in Lebanese economy. French capital had priority up to World War II. The post-war years saw a consolidation of British and American capital with the addition, in recent years, of West-German and Japanese investments.

Foreign capital has taken hold of the economy, trade, the banks and all the public service network and prevents the country from setting up a national economy of its own.

The anti-imperialist forces in Lebanon demand the country's liberation from the political and economic fetters of imperialism, the establishment of a national economy, the betterment of the conditions of the workingmen and an advancement of the country along the road to independence and democracy.

The present study descants on issues related to the abolition of the French mandate and the achievement of Lebanon's independence. In June 1941 France was forced to acknowledge the independence of Syria and Lebanon. Later, however, it became evident that this recognition was formal in essence since France did not intend to relinquish her rights. Those desingns intensified the anti-imperialist struggle within the country which culminated in a nation-wide uprising in November 1943. The French colonisers had to give way. France officially gave up the mandate and recognised the independence of Lebanon. But subsequently, availing of the presence of her own and British troops in Lebanon and Syria, France again resorted to bearing pressure on the Lebanese government for the conclusion of a treaty that would provide for French military, political and economic supremacy in Lebanon. The government of the country refused to sign a similar treaty and demanded the withdrawal of French and British troops from Lebanese territory. The question of evacuating foreign troops was discussed at the UN Security Council at the beginning of February, 1946. The Soviet Union and other peace-loving countries voiced their support of Lebanese interests. Subsequently France and Britain had to withdraw their troops from Syria and Lebanon in 1946. This was a colossal achievement of the anti-imperialist forces in Lebanon and was bound to be of historic importance.

1946 opens a new page in the anti-imperialist struggle of Lebanon, its main trend being the maintenance and consolidation of the country's independence. Compelled to recognise the political independence of Lebanon, the imperialist states would, nevertheless, stick to their plans of making the country economically and politically dependent. Shortly after the conclusion of World War II the western powers set forth one plan and doctrine after another with the aim of stifling the national-liberation movement of the Arab East and fortifying their military, political, economic and financial positions in the Arab countries, including Lebanon. Britain and the USA have been particularly active in this respect. To achieve their imperialist aims they sought to make use of the „Greater Syria“ plan, the Truman doctrine, the plan of founding a Middle-East Command, the Baghdad Pact, the Eisenhower doctrine and the like. The present study elucidates all the foregoing issues, viewed from the angle of the national-liberation struggle in Lebanon. Here the attitude of various political alignments to these problems and the struggle of democratic forces for the maintenance of Lebanese independence are also revealed. The attempt of the national-socialist party to effect a coup d'etat in Lebanon in 1949 has deserved particular mention. It was to be a significant step in carrying out the imperialist plan of „Greater Syria“.

The significant role in the anti-imperialist struggle of Lebanon is played by the Lebanese Communist Party. The Party and its Armenian branch have developed large-scale activities with the Lebanese, organised the struggle of the working masses and, together with other democratic forces, have achieved mutual understanding and friendly relations between the Moslem and Christian communities of Lebanon. The latter was of paramount importance as the western imperialists have always been out kindling religious hatred and setting one community against the

other with the double purpose of furthering their colonial ambitions and splitting the anti-Imperialist front of Lebanon.

At the same time the Lebanese Communist Party has been ardently exposing the intrigues of Britain, France, USA and Turkey in the Arab East and Lebanon. To bring their Imperialist ends to a head they were high in their cries about an alleged "communist" or "Soviet" menace to the Arab East and Lebanon. It was precisely this preposterous tale that was to serve as a foundation for the creation of military-political blocs in the Near and Middle East. The patriotically-minded forces of Lebanon and those of other Arab countries fully realised, however, that the plans of economic "help" to and "defence" of Arab countries against the "Communist" or "Soviet" danger were but snares with which the USA, Britain and other powers tried to exercise sovereignty over the Arab countries. On the other hand, the realisation of their designs would also have meant driving a wedge between Lebanon and the Soviet Union and other Socialist countries.

That accounts for the diametrically opposite line taken by the democratic and patriotic forces of Lebanon in respect to the plans of setting up military-political blocs and the doctrines of Truman and Eisenhower.

As to the Lebanese government and the ruling comprador-feudal clique, their wavering ended in an open subscription to the interests of western imperialists, especially in the mid-fifties under Kamil Shamun-Sami Solh. The policy of rapprochement with Britain and the USA, endorsed by Shamun, was at variance with the national interests of Lebanon and other Arab countries. The domestic policy of the Lebanese government now entrenched in positions of anti-communism resulted in a number of reactionary measures that curtailed the democratic rights of the Lebanese people. As to foreign policy the government of Shamun-Solh subjugated Lebanon more

and more to the dictate of American imperialists. It adopted the „doctrine of Eisenhower”, established closer contact with the reactionary forces of the Near East, i. e. Turkey and Iraq, refused to back up the anti-imperialist struggle of the Arab countries and virtually took up an insular position with regard to Arab progressive forces. An imminent danger hung over Lebanon's independence in consequence of the Shamun-Solh political line which also culminated in tension within the country. The progressive forces could no longer abide the anti-popular policy of the government and launched a wide-scale fight against it. A re-grouping of forces took shape in the country. One side was made up of progressive and patriotic forces, striving to get the country rid of the Shamun-Solh regime, abandon the pro-imperialist foreign policy, back up the progressive forces of the Arab world and consolidate the country's independence.

The other side comprised all the reactionary forces and, especially the representatives of the ruling comprador bourgeoisie and feudal clique, plumping for a rapprochement with western imperialism and the continuation of the pro-American policy of Shamun. The interests and the points of view of both sides were irreconcilable and they resulted in the 1958 uprising that lasted over six months.

Divergent are the views on the nature and motives of this uprising. At the very start of it the then secretary of the state department J. F. Dulles initiated a version according to which the rebellion was to be put down to „subversive communist activities”. Yet this „point of view” was short-lived, for even the most avowed foes of communism could not produce a single fact that would testify to a „communist conspiracy” in Lebanon.

A second „point of view” on the origin and causes of the uprising considered that the latter was sponsored by the supporters of Nasser, the president of the United

Arab Republic. This "point of view" was upheld by J. Marlowe, Fahim Qubain and others. Thus, for instance, in his book "Arab Nationalism and British Imperialism" J. Marlowe writes: "The rebellion had been fomented, and was being supported and sustained, by the United Arab Republic from over the Syrian border; it has its object the overthrow of the Lebanese government and the putting into power of a government which would incorporate Lebanon into the UAR" (p. 171).

This view is erroneous and is not substantiated. After a scrutinious examination of the facts on the spot UN observers stated that UAR had not interfered in the internal affairs of the Lebanon, nor had it incited this uprising.

The reasons of the uprising were to be sought in the domestic and foreign policies of the Lebanese government. The main reason was the anti-national, anti-Arab and pro-imperialist policy of Shamun-Sohi.

As to the nature of the uprising itself, some bourgeois historians have attempted to present the uprising as a religious war between Moslems and Christians. This unscientific concept is held in "The Changing Middle East" by E. Lengyel, "Arab Nationalism and British Imperialism" by J. Marlowe, "Governments and Politics of the Middle East in the 20th Century" by H. Sharabi and others. An examination of the facts relating to the uprising convincingly prove that it was of no religious origin. The uprising of 1958 was not a religious war, but a national-liberation struggle, whose aim was to change the foreign policy of Lebanon, rid the country of the claws of imperialism, strengthen the independence of Lebanon and align it with those Arab countries that were waging a relentless anti-imperialist struggle. Whereas beginning from July 1958, following the intervention of American troops, one of its main tasks was to rid Lebanon from American occupation. The present work deals at length with the stages of the uprising in the different

etc. Moreover, the share of the various political forces and parties in the uprising has also been brought to light in the book. A salient feature of this uprising the author shows is the participation of the Lebanese Armenians. The bulk of the Armenian community along with all the democratic forces stood now, as in the previous stages of the national-liberation movement, side by side with the Arab progressive forces, and many of them laid their heads on the barricades for the independence of Lebanon.

The 1958 uprising and the American intervention were in the focus of world attention. The progressive Arab forces and the peace-loving countries of the world denounced the actions of the American imperialists. The Soviet Union's resolute position on the issue was one of principle. It proceeded from the fact that the 1958 uprising was an internal affair of Lebanon and no one was entitled to interfere with it. The Soviet government considered the struggle of the Lebanese people just and demanded the withdrawal of US troops from Lebanon. The matter was brought before the General Assembly of the United Nations, which adopted a resolution stipulating for the withdrawal of American troops. As a result the USA had to take its armed forces out of the country in October 1958. The evacuation of American troops and the down-fall of Shamun were major gains of the democratic forces of Lebanon.

The 1958 uprising was of historic significance. It upset the plans of turning Lebanon into an American colony and rid the country of the „Eisenhower doctrine”, declared neutrality as the guiding principle of the country's foreign policy and promoted the independence of Lebanon. This led to an improvement of relations with neighbouring Arab countries, which in turn proved beneficial in stabilising the political situation in the Arab East.

The anti-imperialist forces of the Lebanon are still confronted with very difficult and serious tasks. Actually they have embarked on a struggle against neo-colonialism and various imperialist backstage machinations. They wage a continuous struggle for democracy and social progress, for an independent national economy and the improvement of the standards of the working people.

ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱԽ

Հ ե ն ի չ. Ի., Ձեկուցում Արևելքի ժողովուրդների կոմիսիատական կուզմակերպությունների Համառուսաստանյան 2-րդ համագումարում, 22 նոյեմբերի 1919 թ., Երևան, է. 30.

«Սովորական Միության կոմիսիատական Պարտիայի քրագիրը ընդունված ՄՄԿ 22-րդ համագումարի կողմից», Երևան, Հայպետհրատ, 1961.

«Заявление совещания представителей коммунистических и рабочих партий, состоявшегося в Москве в ноябре 1960 г.», — «Программные документы борьбы за мир, демократию и социализм». Госполитиздат, М., 1961.

ՓԱՏՎԱԳՐԸՐ ԵՎ ՆՅՈՒՐԸՐ

«Аграрный вопрос и национально-освободительное движение. Материалы обмена мнениями марксистов-аграрников, состоявшегося в июне—сентябре 1960 г. в Гаване и Бухаресте», М., 1963.

«Документы внешней политики СССР», т. VI, М., 1962.

Ключников Ю., Сбанин А., Международная политика новейшего времени в договорах, потах, декларациях, ч. 3. От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской революции, вып. 2. Акты дипломатии иностранных государств. М., 1929.

«Раздел Азиатской Турции. По секретным документам б. министерства иностранных дел», под ред. Е. А. Адамова, М., 1924.

«СССР и Арабские страны. 1917—1960. Документы и материалы», М., 1961.

„Constitutions, electoral laws, treaties of states in the Near and Middle East”, by H. Davis, Durham, 1953.

- Diplomacy in the Near and Middle East. A documentary record: 1914—1956*, by J. Hurewitz, vol. II, New York, 1956.
- Documents on British foreign policy. 1919—1939*, 1st series, vol. IV, London, 1952.
- Industrial census of Lebanon. 1955*, vol. II, Beirut, 1958.
- The Middle East*, London, 1961.
- The Middle East and North Africa. 1964—1965*, London.
- The New Industrial Yearbook for the year 1960*, New York, 1961.
- Point IV in Lebanon. A joint technical cooperation program*, Beirut, 1955.
- United Nations. Economic developments in the Middle East. 1945 to 1954*, New York, 1955.
- United Nations. Economic developments in the Middle East. 1959—1961*, New York, 1962.
- United Nations. Statistical Yearbook*, New York, 1961.
- Who's who in Egypt and Near East*, Cairo, 1953.

ԱՐԵՆԱԾԱՑՄ, ԽՅՈՒԹԵՐ

ԱՅԼՄ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենարունական արխիվ (ЦГАОРСС СССР) ф. 4459, оп. 1с, д. 234, л. 85; д. 1374, лл. 54, 73; д. 1824, лл. 33, 38, 52, 66, 193; д. 3108, л. 128; д. 4271, лл. 22, 29, 129, 224; д. 4272, лл. 94, 215; д. 5439, лл. 112, 169, 175, 186, д. 5440, лл. 172, 174—175; д. 6700, лл. 1, 56, 60; д. 8088, лл. 8, 9; д. 11425, л. 257; оп. 2с, д. 1313, л. 73.

ԱԿՈՒՐԱԿԱՆԻՐՊՐԵՊՈՆՆԵՐ, ՀՈՒԵՐ, ՀՈՎԿԱՆՆԵՐ

- Ա պ ա շ ե մ ն շ ., Արարական ազգային պատագրական գարբոնքը, Բեյրութ, 1959.
- Գ ա պ ա շ ր յ ա մ ն ., Սփյուռքայ գաղթօջախները այսօր, Երևան, 1962.
- Ա մ ն Ս ա ն դ ., Восстания арабов в XX веке, пер. с арабского, М., 1964.
- Վ ե լ ե ր ս Ժ ., Крестьяне Сирии и Ливана, сокращ. пер. с французского, М., 1952.
- Д ե Գ ո լ լ ь Շ ա ր լ ь , Военные мемуары, пер. с французского, т. I, М., 1957, т. 2, М., 1962.
- Ե մ ե լ յ ա ն օ վ ., Арендные отношения в современном Ливане,— «Ученые записки института народов Азии АН СССР», т. XXII, М., 1960.
- Կ ա տ ի ն Վ ., По Ливану, М., 1961.
- Կ ո ն ի ն Ա ., Доктрина Эйзенхауэра, М., 1957.

parts of the Lebanon—Beirut, Tripoli, Saida, Shuf, Zahle etc. Moreover, the share of the various political forces and parties in the uprising has also been brought to light in the book. A salient feature of this uprising the author shows is the participation of the Lebanese Armenians. The bulk of the Armenian community along with all the democratic forces stood now, as in the previous stages of the national-liberation movement, side by side with the Arab progressive forces, and many of them laid their heads on the barricades for the independence of Lebanon.

The 1958 uprising and the American intervention were in the focus of world attention. The progressive Arab forces and the peace-loving countries of the world denounced the actions of the American imperialists. The Soviet Union's resolute position on the issue was one of principle. It proceeded from the fact that the 1958 uprising was an internal affair of Lebanon and no one was entitled to interfere with it. The Soviet government considered the struggle of the Lebanese people just and demanded the withdrawal of US troops from Lebanon. The matter was brought before the General Assembly of the United Nations, which adopted a resolution stipulating for the withdrawal of American troops. As a result the USA had to take its armed forces out of the country in October 1958. The evacuation of American troops and the down-fall of Shamun were major gains of the democratic forces of Lebanon.

The 1958 uprising was of historic significance. It upset the plans of turning Lebanon into an American colony and rid the country of the "Eisenhower doctrine", declared neutrality as the guiding principle of the country's foreign policy and promoted the independence of Lebanon. This led to an improvement of relations with neighbouring Arab countries, which in turn proved beneficial in stabilising the political situation in the Arab East.

The anti-imperialist forces of the Lebanon are still confronted with very difficult and serious tasks. Actually they have embarked on a struggle against neo-colonialism and various imperialist backstage machinations. They wage a continuous struggle for democracy and social progress, for an independent national economy and the improvement of the standards of the working people.

ԴՐԱԿԱՆԱՐԴԱՆՆ ՅԱՆ

Հ ե ն ի ն Վ., Հեկուցում Արևելքի ժողովուրդների կոմունիստական կուզմականական պահանջումների Համառուսանայան 2-րդ համագումարում, 22 նոյեմբերի 1919 թ., Երևան, հ. 30.

*Սովետական Միության կոմունիստական Պարտիայի գրագիրը ընդունված ՍՄԿՊ 22-րդ համագումարի կողմից», Երևան, Հայպետհրատ, 1961:

«Заявление совещания представителей коммунистических и рабочих партий, состоявшегося в Москве в ноябре 1960 г.», — «Программные документы борьбы за мир, демократию и социализм», Госполитиздат, М., 1961.

ՓԱՏԱՔԱՐԵՐ ԵՎ ԽԵՂԻՔԵՐ

«Аграрный вопрос и национально-освободительное движение. Материалы обмена мнениями марксистов-аграриев, состоявшегося в июне—сентябре 1960 г. в Гаване и Бухаресте», М., 1963.

«Документы внешней политики СССР», т. VI, М., 1962.

Ключников Ю., Сбакин А., Международная политика новейшего времени в договорах, нотах, декларациях, ч. 3. От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской революции, вып. 2. Акты дипломатии иностранных государств, М., 1929.

«Раздел Азнатской Турции. По секретным документам б. министерства иностранных дел», под ред. Е. А. Адамова, М., 1924.

«СССР и Арабские страны. 1917—1960. Документы и материалы», М., 1961.

«Constitutions, electoral laws, treaties of states in the Near and Middle East», by H. Davis, Durham, 1953.

- Diplomacy in the Near and Middle East. A documentary record: 1914—1956*, by J. Hurewitz, vol. II, New York, 1956.
- Documents on British foreign policy. 1919—1939*, 1st series, vol. IV, London, 1952.
- Industrial census of Lebanon. 1955*, vol. II, Beirut, 1958.
- The Middle East*, London, 1961.
- The Middle East and North Africa. 1964—1965*, London.
- The New Industrial Yearbook for the year 1960*, New York, 1961.
- Point IV in Lebanon. A joint technical cooperation program*, Beirut, 1955.
- United Nations. Economic developments in the Middle East. 1945 to 1954*, New York, 1955.
- United Nations. Economic developments in the Middle East. 1959—1961*, New York, 1962.
- United Nations. Statistical Yearbook*, New York, 1961.
- Who's who in Egypt and Near East*, Cairo, 1953.

ԱՐԵՆԱԼԱՅԻ ՆՅՈՒԹԵՐ

ԱՍՀՄ Հականմարելիքին հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական արխիվ (ЦГАОРСС СССР) գ. 4459, օպ. 1c, ձ. 234, լ. 85; ձ. 1374, լլ. 54, 73; ձ. 1824, լլ. 33, 38, 52, 66, 193; ձ. 3108, լ. 128; ձ. 4271, լլ. 22, 29, 129, 224; ձ. 4272, լլ. 94, 215; ձ. 5439, լլ. 112, 169, 175, 186, ձ. 5440, լլ. 172, 174—175; ձ. 6700, լլ. 1, 56, 60; ձ. 8088, լլ. 8, 9; ձ. 11425, լ. 257; օպ. 2c, ձ. 1313, լ. 73.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱԽԵՐ. ՀՈԴԿԱԾՆԵՐ

- Ա զ ա շ ե ա ն Ե ., Արարական ազգային ազատագրական դարբունք, Բեյրութ, 1959.
- Գ ա զ ա ր է ա ն Ս ., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962.
- Ա մ ի ն Ս ա մ դ ., Восстания арабов в XX веке, пер. с арабского, М., 1964.
- Վ ե լ ե ր Ժ ., Крестьяне Сирии и Ливана, сокращ. пер. с французского, М., 1952.
- Д ե Գ ո լ լ ь Շ ա ր լ ь , Военные мемуары, пер. с французского, т. I, М., 1957, т. 2, М., 1962.
- Ե մ ե լ յ ա ն օ վ ., Арендные отношения в современном Ливане,— «Ученые записки института народов Азии АН СССР», т. XXII, М., 1960.
- Կ ա տ ի ն Վ ., По Ливану, М., 1961.
- Կ ո ն ի ն Ա ., Доктрина Эйзенхауэра, М., 1957.

- Луцкий В., Арабские страны, М., 1947.
- Марунов Ю., Потемкин Ю., Арабо-турецкие отношения на современном этапе. 1946—1960, М., 1961.
- Мухаммед Маджзуб, Трагедия демократии и арабского национализма в Ливане, пер. с арабского М., 1959.
- «Политика США на Арабском Востоке», М., 1961.
- «Советско-арабские дружественные отношения», М., 1961.
- «Современный Ливан» (Справочник), М., 1963.
- Туганова О., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960.
- Юсуф Хаттар аль-Хилю, Экономика Ливана, сокращ. пер. с арабского, М., 1959.
- Abouchidid E., 30 years of Lebanon and Syria. 1917—1947, Beirut, 1948.
- Asfour E., Industrial development in Lebanon.— „Middle East Economic Papers”, Beirut, 1955.
- Badr A., The national income of Lebanon,— „Middle East Economic Papers”, Beirut, 1956.
- Banerji J., The Middle East in world politics, Calcutta, 1960.
- Beaujeu-Garnier, L’Economie du Moyen-Orient, Paris, 1951.
- Burg N., Technical assistance in the Middle East,— „Tensions in the Middle East”, Baltimore, 1948.
- Campbell J., Defence of Middle East. Problems of American policy, New York, 1958.
- Caplain M., Le Moyen-Orient, Paris, 1956.
- Charles Malik, The Near East between East and West.— „The Near East and the great powers”, Massachusetts, 1951.
- Emerson R., From Empire to nation, Cambridge, 1960.
- Fahim Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961.
- Haddad G., Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950.
- Hakim G., Land tenure reform,— „Middle East Economic Papers”, Beirut, 1954.
- Hitti Ph., History of Syria including Lebanon and Palestine, London, 1951.
- Hitti Ph., Lebanon in history, London, 1957.
- Hoskins H., The Middle East problem area in world politics, New York, 1956.
- Hourani A., Syria and Lebanon, London, 1946.
- Khalil Totah, Dynamite in the Middle East, New York, 1955.
- Landau R., France and the Arab.— „Behind the Headlines”, Toronto, 1954, № VII, vol. XIII.

- Laqueur W., Communism and nationalism in the Middle East,
 London, 1957.
 Lenczowski G., The Middle East in world affairs, New York,
 1957.
 Lengyel E., The changing Middle East, New York, 1960.
 Longrigg S., Syria and Lebanon under French mandate, London,
 1958.
 Marlowe J., Arab nationalism and British imperialism, London,
 1961.
 Meyer A., Entrepreneurship: the missing link in arab states?—
 „Middle East Economic Papers”, Beirut, 1954.
 Meyer A., Middle Eastern capitalism, Cambridge, 1959.
 Mills A., Economic change in Lebanon,— „Middle East Economic
 Papers”, Beirut, 1956.
 Mills A., Private enterprise in Lebanon, Beirut, 1959.
 Mohammed Shaff Agwan, The United States and the arab
 world, Aligarh, 1955.
 Musa Dib, The arab bloc in the United Nations, Amsterdam,
 1954.
 Raja Hammeh, The fiscal system of Lebanon, Beirut, 1961.
 Roosevelt K., Arabs, oil and history, New York, 1949.
 Seton-Williams M., Britain and the arab states, London, 1948.
 Sharabi H., Governments and politics of the Middle East in the
 20th century, New York, 1962.
 Talha Yaffi, A case for central banking reform in Lebanon,—
 „Middle East Economic Papers”, Beirut, 1958.
 Yale W., The Near East. A modern history, Michigan, 1955.
 Yusif Sayigh, Entrepreneurs of Lebanon, Cambridge, 1962.
 Yusif Sayigh, Lebanon: special economic problems arising from
 special structure,— „Middle East Economic Papers”, Beirut, 1957.
 Ziadeh N., Syria and Lebanon, London, 1959.

ادیب فرحت، لبنان وسوریا، بیروت.

Ազիր Յաքուբ, Կիրական & Սիրիա, Թերթութ,

١٧» ١٩٤٣—١٩٤٧ اربع سنوات من العهد الوطني»
 دمشق، ١٩٤٧.

«17 օգոստոսի 1943—1947, Ազգային դարաշրջանի շուրջ տարիներ», Դա-
 շակոս, 1947,

البرت بدر، محاضرات في الاقتصاد اللبناني، القاهرة، ١٩٥٥.

Ա լ բ ե ր մ թ ա զ ր, Դասախոսություններ Արքանական անտեսական մա-
սին, Կահիրէ, 1955.

عثمان كمال حداد، حرفة رشيد عالي الكيلاني، صيدا،
Ա լ բ ե ր մ թ ա զ ր Հ ա զ ա զ, Բաշիդ Ալի ալ-Գաջանիի շարժումը,
Սալյան:

فاضل الجمالي، من واقع السياسة العراقية، بيروت، ١٩٥٦.

Ֆ ա զ ա լ Ք ա ն ջ ա լ ի, Իրազի քաղաքականությունից, Թեյրութ, 1956.

كمال جنبلاط، حقيقة الثورة اللبنانية، بيروت، ١٩٥٩.

Թ ա զ ա լ Ք ա ն ջ ա լ ա տ, Ծագարառություններ Հիրանակայտն հեղափոխական
ժամկեն, Թեյրութ, 1959.

«لبنان في عهد الاستقلال»، بيروت، ١٩٤٧.

«Արքանական անկախության դարձութանական», Թեյրութ, 1947.

منير نقى الدين، ولادة الاستقلال، بيروت، ١٩٥٣.

Մ ա ճ ի ր թ ա կ ի է դ դ դ ի ն, Անկախության ծննդղը, Թեյրութ, 1953.

منير نقى الدين، الجلاء، بيروت، ١٩٥٦.

Մ ա ճ ի ր թ ա կ ի է դ դ դ ի ն, Եվակուացիա, Թեյրութ, 1956.

نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى
الجلاء، القاهرة، ١٩٥٤.

Ն ա չ ի ր ա լ ի ր մ ա ն ա զ ի, Դասախոսություններ Սիրիայի վերաբեր-
յալ—օկուպացումից մինչև էվակուացիան, Կահիրէ, 1954.

- «Ազգական Քեյրութիւն», 1965
 «Արմատաց, Քեյրութիւն, 1948, 1949, 1951—1957, 1962
 «Հայոց լուրջի Զայեն, Քեյրութիւն, 1942—1947
 «ՄԵՐ Եղանակած է Հայութ, Քեյրութիւն, 1957, 1958, 1960, 1962
 «Бюллетень иностранной коммерческой информации научно-исследовательского конъюнктурного института министерства внешней торговли СССР (БИКИ), М., 1952, 1953, 1952.
 «Известия», 1927.
 «Новое Время», М., 1953.
 „Le Commerce du Levant“, Beyrouth, 1962.
 „Le économie du Moyen-Orient“, Paris, 1951.
 „L'Jour“, Beyrouth, 1945, 1951.
 „Journal of Commerce“, 1950.
 „Le Moyen-Orient“, Paris, 1951.
 „Newsweek“, Paris, 1960.
 „L'Orient“, Beyrouth, 1945, 1951—1953.
 „Le Soir“, Beyrouth, 1951.
 „The Times“, London, 1941, 1960.
 „New York Herald Tribune“, 1951.

«الاتحاد اللبناني» (=ԱԼ-ԻՄՊԵՐԻԱԿԱՆ աԼ-ԼԱՐԵԱՆԻՒԹՅԱՆ), Քեյրութիւն, 1951

«الآخر» (=ԱԼ-ԱՇՐԱՔ), Քեյրութիւն, 1952

«البيرق» (=ԱԼ-ԲԱՋՐԱԿԱՆ), Քեյրութիւն, 1951

«البلد» (=ԱԼ-ԲԱԼԱԳԱՆ), Դամասկոս, 1950

«بيروت» (=ԲԵՐԵՐՈՒԹՅՈՒՆ) 1945, 1951

«التلغراف» (=ԱԼ-ԲԵԼԵԳՐԱՖԻՑ), Քեյրութիւն, 1950, 1952, 1958, 1959

«الجمهور» (=ԱԼ-ՋԱՄԻԴՀՈՒՐ), Դամասկոս, 1958

«الأخبار» (=ԱԼ-ԱԺԱՐԱՔ), Քեյրութիւն, 1957, 1958, 1962

«الرأي العلم» (=ԱՐ-ԲԱՋ աԼ-ԱԼՄ), Դամասկոս, 1958

«رقيب الأحوال» (=ԲԻՎԱԿԻՐ աԼ-ԱՀԱՎԱԼ), Քեյրութիւն, 1945

«الشرق» (=ԱԼ-ԾԱՐԿԱՆ), Քեյրութիւն, 1950, 1951

«الصرخة» (=ԱՆ-ՍԱՐԺԱՆ), Քեյրութիւն, 1951, 1952

- «صوت الشعب» (*Սառը աշ-Շաար*), Բեյրութ, 1945
- «صوت الفيحاء» (*Սառը աշ-Ֆայհա*), Տրիполի, 1948
- «الطيار» (*Աթ-Բայար*), Բեյրութ, 1951
- «العمل» (*Աշ-Ամալ*), Բեյրութ, 1952
- «كل شئ» (*Թուզ Շալ*), Բեյրութ, 1951
- «المنار» (*Աշ-Մանար*), Դամասկոս, 1958
- «الاتباع» (*Աշ-Աթբաւ*), Բեյրութ, 1952
- «الندا» (*Ան-Նիդա*), Բեյրութ, 1958
- «النهار» (*Ան-Նաար*), Բեյրութ, 1945, 1950
- «النور» (*Ան-Նուր*), Դամասկոս, 1955, 1958
- «الهدف» (*Ան-Հագաֆ*), Բեյրութ, 1945, 1951, 1952

ԱՆԳԱՄԱՆ ԱՆ ԱՅ ԱՆԿ

- Արգալլահ — 167, 168
 Արգալլա Հայ — 235, 263
 Արգալա Տաֆի — 159, 172, 186,
 234, 236, 241, 250, 251, 262
 Արգել Համբեղ Թարմակ — 120,
 129, 143
 Արգել Ռահման Աղզըմ — 212
 Արու Զառող — 149
 Արուշղիդ Ե. — 76, 86, 89, 90,
 106
 Ազիր Յարշաբ — 15, 101, 102
 Ազիր Յերզիկ — 141, 197
 Ազիլ Համազանի — 293
 Ազիլ Օսկիրան — 120, 217, 218,
 284
 Ազեան Հարիմ — 89, 235
 Ալբեր Մշակրիք — 290
 Ալբեր Բազր — 10, 11, 33, 39,
 56, 60, 61
 Ալֆրեդ Նահկազ — 106, 107, 172
 Ալյան ալ-Ասադ — 66, 68, 226,
 262
 Ալյան Դառլը — 133
 Ալյան ալ-Հուսեյն — 117
 Աղբաշլան Հ. — 26, 81, 133, 178,
 258, 273
 Ալին ան-Սաադ — 118
 Ալին Սահիդ — 233, 234, 244
 Ալուր Թարիք — 108
 Անվար Խաթիք — 221
 Անտուան Թարիք — 71, 117
 Անտուան Սաադ — 89, 90, 176—
 180
 Անթա — 23
 Ազրոյան Ա. — 27, 56
 Ասադ Աշբար — 292
 Ասկէլի — 56
 Ասթուր Ե. — 28, 59
 Արիզամ — 56
 Արուան — 56, 68
 Բարիզ Բակի Էղ-Դին — 85
 Բայրութ Հ. — 205
 Բահերզի Ջ. — 13, 103, 227, 304
 Բարինձի Ժ. — 258
 Բարիումյան — 27
 Բեյնե — 140, 141
 Բերեն Ն. — 182
 Բիզո Ժ. — 152, 153
 Բիշարա ալ-Խուրի — 64, 73, 74,
 87, 92, 106, 109, 110, 120,
 131, 134, 161, 185, 189, 190,
 200, 234, 248
 Գարրիկ Մուր — 248
 Գասպարյան Գ. — 27
 Գասպարյան Ս. — 17
 Գը Գոլլ, Շարլ — 100, 103—107,
 115, 135
 Դադ Համմարչիկ — 275, 280
 Դալիս Ջ. Յ. — 254, 277, 287,
 308

- Դենք — 98, 100, 101
 Դամիկ Մ. — 68
 Ել Վ. — 89, 180, 181, 304
 Եմելյանով Վ. — 40, 43
 Ենիքոմուշյան — 133
 Երիցյան Պ. — 163

 Էլիաս ալ-Խուրի — 71
 Էմերասին Ռ. — 8, 304
 Էմիլ Բուստանի — 68
 Էմիլ Հզգի — 85, 117, 120, 122—
 124, 131
 Էմիլ Լահով — 138, 232
 Էրենբերգ Պ. — 9, 10, 86, 88,
 224—237, 239, 240, 243,
 247, 256, 264, 265, 267,
 287, 291, 297, 298, 305—
 307, 309
 Էռուի Կ. — 83

 Բալչա Յաֆի — 35
 Բակի Հայ-Դին — 284
 Բաղուրյան — 133, 134
 Բրադ — 108
 Բունիուս Ֆրեյս — 85

 Ժորժ Աբրիլ — 159, 172, 178
 Ժորժ Հաննա — 209, 221
 Ժորժ Նահկաշ — 248
 Ժորժ Քարամե — 68

 Իդեն Անտոնի — 167

 Լանդու Ռ. — 102
 Լաբյոր Վ. — 66, 76—78
 Լեբերժե Ա. — 184, 197
 Լեբբ — 58
 Լենդիկ է. — 56, 65, 110, 255,
 262, 264, 308
 Լենիկ Վ. Ի. — 95
 Լենցովսկի Զ. — 7, 104, 303
 Լիբբի Ռ. — 206
 Լիբբլտոն Օ. — 104

 Լուսպալիկոս ԽIV — 250
 Լուգրիդ Ս. — 8, 304
 Լուցիկ Վ. — 15

 Խալբան Մ. — 222
 Խալեն Բակալ — 96, 99, 163,
 164, 259, 303
 Խալիկ Շիհար — 191
 Խալիկ Արու Ջուանի — 141
 Խալիկ Տոտա — 84

 Կաղոպան — 152, 153
 Կապիկ Մ. — 10, 11, 53, 55
 Կառարջյան — 26, 56
 Կատրին Վ. — 59
 Կատրու Ժ. — 101, 105, 114, 129,
 131, 136
 Կիտա Պ. — 18
 Կլյունեիկով Յ. — 16
 Կոմիկս Ա. — 216, 231, 243

 Հարիր Արու Եահյա — 123, 149,
 159
 Համիդ Ֆրահեմիկ — 64, 151—153,
 177, 178, 224, 226, 241
 Հարզարի. — 38
 Հանավի Է. — 85
 Հանրի Ֆրանս — 56, 68, 135,
 146, 211, 248, 251
 Հայիմ Լեյն — 163
 Հայիմ Հուսեյնի — 225, 238
 Հասան Թվեյնի — 248
 Հասան Կուրեյթիլ — 162
 Հաւորանի Ա. — 98, 100, 114
 Հելլ Ժ. — 114, 115, 120, 122,
 124, 129, 130
 Հիմակի Ռ. — 60, 61, 67
 Հոսկինս Հ. — 204
 Հուսեյն Արու Մուրթադա — 71
 Հուսեյն Իրին Ալի — 168
 Հուսեյն Ռազեյնի — 182, 221, 245,
 262, 295, 297
 Հուրիկը Ժ. — 204

Մարիկ Ա. — 10, 25, 26, 28, 304

Մահմեդյան Ի. — 27

Մաշիք Արսլան — 123

Մատուռու Զ. — 9, 12, 13, 228,
224, 255, 258, 301, 308

Մատուռ Է. — 56

Մատուռ Հ. — 61, 108, 112, 132,
167

Մարուճյան Յ. — 225

Մարուժ Սահակ — 251, 262, 270

Մարզիք — 202

Մարզիկնատկ — 290, 294

Մեռչիք — 251, 253, 260, 278

Միթիկհասպիք — 97

Միլլա Ա. — 9, 33, 34, 38, 39,
57, 304

Մուհամմեդ Արայի — 251, 260

Մուհամմեդ Ալի Բեյջուլլ — 244

Մուհամմեդ Մազմանի — 293

Մուհամմեդ Մարգար — 14, 63,
64, 73, 157

Մուհամմեդ Մաֆի Ազգանի — 181

Մուհամմեդ Մուլեյման — 230

Մուհիմ Բակի Էղ-Դին — 15, 109,
113, 117, 126, 127

Մուսաս Դիբ — 103, 137, 152, 153

Մուսասաֆա Արիս — 71, 96, 142

Մուսովիիք — 89

Տակուալ Մարաֆ — 155

Տուսութ Խաթթար ալ-Հելու — 18,
32, 33, 35, 36, 41, 51, 53—
55, 61, 63, 181, 198, 253,
265

Տուսութ Խաթթար — 186, 188

Տուսութ Հիբբի — 244, 248

Տուսութ Մալեմ — 248

Տուսութ Մայզը — 8, 18, 26, 58,
57, 304

Նախմ Է. — 232

Նահան Փաշա — 102

Նահիկ Մայթրան — 232

Նամարյան Գ. — 27

Նաշիք ալ-Արմանազի — 97, 103,
158

Նասեր — 254, 255, 308

Նասիր Մերթիք — 221, 252, 262,
263

Նասիր Նըմըր — 274

Նիկոլա Ջանցիկ — 7, 8, 29, 102,
106, 107, 122, 124, 125, 140,
145, 167, 304

Նիկոլա Շավի — 96, 163, 175, 263

Նիմէկ Թարեթ — 90

Նորվու — 154

Նուհադ Բուհադ — 85

Նուրի Սահա — 109, 281

Շագալ Ռ. — 71

Շամլյան Հ. — 119, 232

Շարարի Հ. — 63, 85, 258, 259,
308

Շարլ Հելու — 212, 248, 302

Շարլ Մալիք — 184, 185, 229,
258, 273, 279

Շատինյան Ի. — 130

Շուքեյրի — 167

Չերլիլ Ռ. — 104

Պաշյան Ժ. — 27

Պաղիկյան Խ. — 290

Պիտեր — 183, 184, 188, 198

Պյեր Էղդիք — 56, 65, 85

Պյեր Ժմալել — 89, 220, 294, 295

Պույումկին Յ. — 225

Քելալ Բալար — 281

Քորչ Հաղպաղ — 7, 161, 304

Քորչ Հաբիդ — 44

Բայթուն Էղդիք — 85, 290, 295, 296

Բաշիք Ալի ալ-Գալլանի — 100,
108

Ռաշիդ Թարամե — 236, 238, 245,
251, 252, 266, 275, 283,
292—294, 295, 297
Ռիադ — 154
Ռիազ Առլէ — 20—25, 46, 106
109—114, 120, 123, 126,
131, 134, 137, 139, 172, 178,
179
Ռիչարդոս Ք. — 232, 233
Ռիզ Ք. — 264
Ռոբերտոն — 199, 200—202

Սարանին Ա. — 18
Սարքի Համազ — 68, 123, 188,
236, 262, 270
Սահր Սալամ — 125, 241, 251,
257, 262, 268, 283
Սահր Սըրել — 168
Սալիմ Իդրիս — 208
Սամի Առլէ — 186, 223, 229, 235,
236, 245, 247, 258, 268,
277, 290, 293, 307, 308
Սարհայան — 27
Սավայա Ա. — 42, 47
Սելիմ Բագւա — 120
Սելիմ Լահուզի — 293
Սեսոն-Վիլլիամս Մ. — 138, 129,
145
Սոքիրս Է. — 103, 109
Ստետիփիկում — 156
Սքաֆ Ժ. — 68
Սորոկ Ա. — 279, 286, 288
Սուրբեյան — 134

Վելերս Ժ. — 43—44
Վեյգան — 97
Վիշինսկի Ա. — 155

Տեր-Գալուստյան Մ. — 117, 118
Տրումին Հ. — 25, 181—189, 192
193, 195, 198, 219, 305,
306
Տուզանև Օ. Է. — 216, 228, 231

Ումար Լուբֆի — 278
Ուսման Թամալ Հաղաղ — 107,
108

Փոլադյան — 27


Թաթշան Համազիկ — 290
Թամալ Զունըլատ — 13, 28, 31,
74, 83, 159, 169, 189, 207,
221, 229, 255, 256, 262,
268—270, 275, 285
Թամիլ Արու Զառուդի — 68
Թամիլ Ասազ — 236
Թամիլ Աբըլ — 68
Թամիլ Ծամոն — 74, 85, 90,
120, 180, 220—232, 229,
239, 243, 245, 247—256,
258, 260—263, 265, 267,
268, 273, 274, 277, 278, 280,
282—284, 286, 289, 291—
297, 303, 307—309
Թելիյիկ — 73
Թհմիլ Ք. — 216
Թիւսի — 129

Օլոռոպ Մ. — 202, 205

Յազիլ ալ-Ջամալի — 219, 279,
281
Յահիմ Թուրքին — 13, 56, 69,
110, 248, 254, 255, 263,
265—267, 304, 308
Յարիս ալ-Խուրի — 152
Յարամալլա ալ-Հելու — 80, 112,
131, 142, 143
Յերլոնց — 200
Յիլիս Բագւա — 86, 241
Յիլիս Հիբբի — 11, 22, 57, 73,
74, 161
Յոււադ ալ-Խուրի — 68
Յոււադ Լահուզ — 293
Յոււադ Կազան — 163

ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ԹՐԱՑՈՒՆ

Առաջարան	5
Դրույն առաջին	
Հիրանանի սոցիալ-տնտեսական վիճակը (1946—1958 թթ.)	17
Դրույն երկրորդ	
Ֆրանքիական մանգաւոյի վերացումը և Հիրանանի անկախ հանրապետության ստեղծումը (1939—1946 թթ.)	34
Դրույն երրորդ	
Հիրանանի Հակախմզերի լիստական ուժերի պայքարը երկրի անկախության ամրապնդման համար	165
Դրույն չորրորդ	
1958թ. սպառամբությունը և նրա պատմական նշանակությունը	247
Վերջարան	300
Резюме	303
Summary	311
Դրականության բանի	320
Անվանացուել	327



ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
НИКОЛАЙ ОГАНЕСОВИЧ ОГАНЕСЯН
ԱԶԳԱՅԻՆ-ՌԴԱՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՅԹԱՐՔ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ
(1939—1958)

Տպագրված է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտուրյան
սեկտորի գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր՝ Հ. Դ. ԽԵԾԻԿՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ս. Ա. Աճառասայան
Կազմը՝ Ն. Հ. Խանջանյանի
Տեխ. խմբագիր՝ Է. Ս. Ավետյան
Սրբագրիչ՝ Ա. Հ. Զոլախյան

ԱՅ 03305 ԽՀԿ 1040, Հրատ. 2755, պատվեր 115, տպաքանակ 2000
Հանձնված է արտադրության 27/XII 1966 թ., ստորագրված է տպագրության 25/XII 1967 թ., տպագր. 20,75 մամուլ, պայմ. 17 մամ., Հրատ.
14,94 մամուլ, թուղթ № 1, 84×108^{1/32}, Գիր 1 ռ. 04 կ.

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հրատարակության
տպաքան, Երևան, Բարեկամության 24